Հայրենիք



ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄԱՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		Էջ
1.	Մայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ-ի ողջույնի հեռագիրը Մոսկվայի 800-ամյակի տոնակատարության առթիվ	3
2.	Մոսկվայի 800-ամյակը	4
3.	Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.— 1812 թվի հայրենական պատերազմին հայերի մասնակցության վերաբերող փաստաթղթեր	17
4.	Եփրեմ Կաթողիկոսի կոնդակը	36
5.	Մայր Աթոռ	40
6.	Սրիշև վարդապետ Հարությունյան	43
7.	Հայաստանյայց Եկեղեցին Սփյուռքի մեջ	45
8.	Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Պատրիարք Ամենապատիվ Ալեքսի Սրբազանը Գուրջիի Հայոց եկեղեցին կայցելե	49
9.	Հ. ԱՐԱՄՅԱՆ.— Ս. Մեսրոպի շիրմին առջև	54
10.	ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ.— Իմ հուշերից	55
11.	Գարեգին Լևոնյան	62
12.	Համաշխարհային Հայկական Կոնգրեսը	64
13.	Շարունակվում է հայրենադարձ հայերի 1947 թվի բարավանների ժամանումը Հայրենիք	70
14.	Օտարները հայերի և Հայաստանի մասին	73
15.	Սովետական Հայաստանում	75
16.	Գաղութահայ կյանք	83
17.	Նամակ խմբագրության	95

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀՈԴՎԱԾՆԵՐ ԹԵ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԹԵ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՍԿԱՆԱԿԱՆ ՍՍՌ

ԷՋՄԻԱԾԻՆ, «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magasine „Etchmiadzin", Armenia, USSR

ԳՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՐԱԴԱՐԱՆ

Պատվեր № 86

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ. և Հրատ. վարչության № 2 տպարան, Երևան

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑ Զ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-Ի ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ 800-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ՄՈՍԿՎԱ

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ

ՄՈՍԿՎԱՅԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍՈՎԵՏԻՆ

Գերազոյն Սովետական Միության հերոս մայրաքաղաք Մոսկվայի փառապանծ 800-ամյակի առթիվ հնադարյան Ս. Էջմիածնից մեր սրտագին ու ջերմ ողջույններն ենք հղում:

Թանգ ու հարազատ է Մոսկվան Սովետական քաղաքացիներիս եվ ամբողջի դեմոկրատական ժողովրդների սրտին:

Մենք ջերմեռանդ աղոթքներ ենք վերառաքում Ամենաբարձրյալին՝ պատմական հինավուշց քաղաքի, համամարդկային կոչումների ու քաղաքակրթության խոշորագույն կենտրոնի եվ ժողովուրդների միջեվ տեվական խաղաղության մշտարթուն պաշտպանի Ի՛լ ավելի ծաղիմման, բարգավաճման ու հզորացման համար, ի փառս ՍՍՌՄ եղբայրական ժողովուրդների եվ համայն խաղաղասեր մարդկության:

ԳԵՎՈՐԳ Զ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

6 սեպտեմբեր 1547 թ.
Ս. Էջմիածին

Սովետական հզոր ու անծայրածիր երկրի, եղբայրական միասնական մի ընտանիքում համախմբված, բազմամիլիոն ժողովուրդները ջերմ սիրով և մեծ խանդավառությամբ սեպտեմբերի 7-ին տոնեցին Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության փառապանծ ու հոյակերտ մայրաքաղաք Մոսկվայի 800-ամյակը։

Ամբողջ աշխարհում դժվար է նշել մի այլ քաղաք, որը ոչ միայն իր երկրի պատմության, այլ և համաշխարհային պատմության մեջ այնպիսի խոշոր ավանդ ներդրած լինի, ինչպես Մոսկվան։ Աշխարհում առաջին սոցիալիստական պետության մայրաքաղաք Մոսկվային էր վիճակված բացառիկ դեր խաղալ և՛ ռուս ժողովրդի, և՛ համայն մարդկության պատմական ճակատագրում։ Մոսկվայի ութդարյան փառապսակ պատմությունը հազար ու բյուր թելերով միահյուսված է Ռուսաստանի և համաշխարհային պատմության հետ։

Մոսկվայի պատմությունը — դա ռուսական պատմության հայելին է, ուր բյուրեղային վճիտությամբ արտացոլված ենք տեսնում ռուս մեծ ժողովրդի դարավոր պատմությունը։ Ռուսական պատմագրության նշանակալից մեծ ու փոքր դեպքերը գրեթե անխզելիորեն կապված են Մոսկվայի փայլուն անվան հետ։ Իր հիմնադրման օրից սկսած դարեր շարունակ Մոսկվան հանդիսացել է ռուս ժողովրդի ազգային միավորման, ազգահավաքի և ռուսական ազգային պետության կազմավորման խոշոր ու անբաղդատելի դարբնոցը։ Դարեր շարունակ ռուս ժողովուրդը, Մոսկվայի շուրջը համախմբվելով, անձնազոհ կերպով պաշտպանել է ռուսական հողերը՝ դաժան մարտեր մղելով օտարերկրյա զավթիչների— թաթարա-մոնղոլական հորդաների, լեհա-շվեդական ինտերվենտների և Նապոլեոնի բանակների դեմ։ Մոսկվան է եղել, որ միշտ գլխավորել է ռուս ժողովրդի անհնարին ազատագրական պայքարը ընդդեմ օտարերկրյա նվաճողների։ Շատ արհավիրքներ ու փոթորիկներ են անցել Մոսկվայի գլխով. քանիցս նա զգեստավորվել է հրդեհի ալ բոցերով, ավերվել, մոխրակույտերի վերածվել, բայց միշտ էլ հրդեհի բոցերում մկրտվելուց հետո մոխրակույտերի տակից փյունիկի նման հառել է նա առնական ու հզոր, շանթահար եղած հաստաբուն կաղնու նման նոր ու թարմ ոստեր արձակելով։ Իզուր են անցել օտարերկրյա նվաճողների բոլոր փորձերը՝ տիրելու Մոսկվային, քաղաքների այս չքնաղ թագուհուն։ Արևելքից ու արևմուտքից իրենց արյունոտ թաթը դեպի նրան են մեկնել բազմաթիվ արյունռուշտ թշնամիներ, բայց ամեն անգամ էլ ռուս քաջարի ժողովրդի հզոր հարվածների տակ, թե՛ Մոսկվայի պատերի տակ, և թե՛ նրա մերձավոր ու հեռավոր մատույցներում, թշնամու հորդաները հողմացրիվ են եղել և ջարդված ու կորազուրկ ետ ընկրկել անգարձ։ Մոսկվայի պատմությունը օտարերկրյա զավթիչների դեմ ռուս ժողովրդի մղած հերոսական պայքարի դաժան ճակատամարտերի դիմա-

մության փայլուն դրվագներից է հյուսված։ Ռուսական պատմության բոլոր խաչուղիներում իր ողջ հասակով մեկ ծառանում է Մոսկվան՝ հաղթանակի դափնեպսակը ճակատին ու փայլում է նա պայծառ ուղեցույց աստղի նման ռուսական պատմության լուսաշող հորիզոնի վրա։ Դարեր շարունակ ռուսական պատմության նավի դեկը իր առնական ձեռքերում ամուր պահած, Մոսկվան կյանքի օվկիանում դիմադրավելով բոլոր մրրիկները և հաղթահարելով խութերն ու ծանծաղուտները անվարան կերպով առաջ է տարել այդ նավը դեպի ռուս ժողովրդի երջանկաբեր նավահանգիստը։

Փառավոր պատմական ուղի է անցել Մոսկվան իր ութդարյա գոյության ընթացքում։ Թերթում ենք Մոսկվայի պատմության փառահեղ էջերը և մեր աչքերի առջև մեկը մյուսի հետևից վերակենդանանում են անցյալի նշանավոր դեմքերն ու դեպքերը.—ահա ռուս իշխան Յուրիյ Դոլգորուկովը ամեհի նժույգը հեծած ուշադրությամբ զննում է ընական ամրություն ներկայացնող այն բարձր բլուրը, որը առևտրական կարևոր անցուղիների վրա գտնվելով, շրջափակված էր Մոսկվա գետով ու նրա վտակ Նեգլինայայով։ Ահա հենց այստեղ էլ իշխան Յուրիյ Դոլգորուկովը հիմք դրեց Մոսկվա բերդաքաղաքին, որին վիճակված էր ռուսական հողերի միավորման նախաձեռնողը հանդիսանալ։

Մոսկվայի ռուսական պետության մայրաքաղաք դառնալու պատմությունը սերտ կերպով կապված է ռուս ժողովրդի պատմության ամենաանհաղթ անցքերից մեկի— թաթար-մոնղոլական արշավանքների հետ։

Մանր ու մղձավանջային օրեր էին սկսվել ռուս ժողովրդի համար։ Ռուսական հողերը անվերջ ոտնակոխ էին լինում արևելքից Ռուսաստան ներխուժած թաթար-մոնղոլական հորդաների կողմից, որոնք դեպի արևմուտք շարժվելով անխնա կողոպտում, սվերում ու հրկիզում էին ռուսական շեն գյուղերն ու քաղաքները, մահ սփռելով իրենց շուրջը։ Ռուսական լայնածավալ հարթությունը տրորվում էր թաթար-մոնղոլական հորդաների նժույգների սմբակների տակ։ Մոսկվան ևս զերծ չմնաց ավերումից։ 1238 թվին, երբ Բատիյ խանի հորդաները արշավեցին Ռուսաստանի վրա, Մոսկվան էլ ավերի ու հրկիզման մատնվեց թաթար-մոնղոլական հրոսակախմբերի կողմից։

Սակայն, ռուս ժողովուրդը շուտով վերականգնել սկսեց իր ուժերը ու Մոսկվան դարձավ այն կենտրոնը, որի շուրջը նա ենռանդուն կերպով համախմբվել սկսեց։ Կարճ ժամանակամիջոցում իր վերքերը բուժելով ու վերակառուցվելով, Մոսկվան կարողացավ գլխավորել օտարերկրյա զավթիչների դեմ մղվող երկարատև ու դաժան պայքարը։

1328 թվին Իվան Կալիտան մեծ-իշխանական աթոռը Վլադիմիրից տեղափոխեց Մոսկվա ու այդ պահից էլ նա դարձավ ռուսական պետության մայրաքաղաքը։

Մոսկվայի կողմից գլխավորվող ռուս ժողովրդի դարավոր պայքարը արևելյան նվաճողների դեմ պսակվեց հաջողությամբ. ողջ պատվար կանգնելով թաթար-մոնղոլական հորդաների ներխուժման դեմ, ռուս ժողովուրդը կորզելուն չարդեց նրանց, ռուսական հողերը ընդմիշտ ազատելով վերջիններիս ավազակաբարո ասպատակություններից։ Թաթար-մոնղոլական հորդաների չախչախումը սկսվեց Կուլիկովոյան դաշտի պատմական նշանավոր շարդով։ 1380 թվականին իշխան Դիմիտրիյ Դոնսկոյի դրուժինաները Մոսկվայի հնավուրց Կրեմլի պարիսպներից դուրս ելնելով Կուլիկովոյի դաշտում ճակատամարտի բռնվեցին Մամայ խանի հրոսակախմբերի հետ և Նեպրիադվայի ափերին կորզելուն չախչախեցին նրանց։ Կուլիկովոյի փառավոր հաղթանակը ընդմիշտ հոգմացրիվ արեց արևելյան ահարկու թշնամու անպարտելիությունի առասպելը և Ռուսաստանը անվիճելիորեն Մոսկվան ճանաչեց որպես իր կենտրոնը։ Կուլիկովոյի հաղթական ճակատամարտից մի դար հետո, 1480 թվականին, Մոսկվայի իշխան Իվան Երրորդը վերջնականապես ազատագրեց Ռուսաստանը թաթար-մոնղոլական դաժան լծից և Մոսկվան դարձավ ռուսական անկախ պետության մայրաքաղաքը։ Իսկ Իվան Չորրորդ Ահեղի օրոք ստեղծվեց ուժեղ ու կենտրոնացված ռուսական պետությունը՝ Մոսկվայի գլխավորությամբ։

Սակայն թաթար-մոնղոլական ծանր լուծը թոթափելուց հետո էլ ռուսները հանգիստ չունեցան. շուտով արևելյան թշնամիներին փոխարինեցին արևմտյան թշնամիները։ Հաճախ էր Ռուսաստանն ազատագրվել արևելյան թշնամիներից, երբ 16-րդ և 17-րդ դարերի սահմանագլխին նրա վրա արշավել սկսեցին լեհերն ու շվեդները։ Այս անգամ դարձյալ Մոսկվան էր, որ ռուսական ազատագրական շարժման կենտրոնը, սիրտը ու կամքը հանդիսացավ։ Երկու անմահ հայրենասերների՝ Կուզմա Մինինի և Դիմիտրիյ Պոժարսկու անպարտելի դրոշի տակ համախմբված քաջարի աշխարհազորայինները 1612 թվին Մոսկվայի փողոցներում ի-

ինց սրերը խաչաձևեցին օտարերկրյա ինտերվենտների սրերի հետ ու մաքրեցին հայրենի երկիրը նրանցից։

Պետրոս Մեծի օրոք չնայած մայրաքաղաքը դարձավ Պետերբուրգը, բայց Մոսկվան դրանից հետո էլ չկորցրեց իր վաղեմի նշանակությունը. ռուսական պատմության ամենահետաքրքիր դրվագներից մեկը դարձյալ կապված է նրա անվան հետ. 1812 թվի հայրենական առաջին պատերազմի օրերին, երբ Նապոլեոնի 600 հազարանոց բանակը Ռուսաստան ներխուժեց, Մոսկվայի մատույցներում էր, որ սկսեցին ծավալվել ռուսական բանակի վճռական մարտերը։ Բորոդինոյի հռչակավոր ճակատամարտը ընդմիշտ վերջակետ դրեց Նապոլեոնի աշխարհակալական ցնորքներին և ազատագրեց նրա երկաթե կրնկի տակ հեծող եվրոպական ժողովուրդներին։ Մոսկվայի 1812 թվի հրդեհը ազատության ալ դրոշ հանդիսացավ, իր շուրջը համախմբելով ժողովրդական զանգվածներին. պատերազմը համաժողովրդական բնույթ ընդունեց և Նապոլեոնի «անպարտելի» համարվող բանակները, Մոսկվայի անանցնելի պաշիսպներին հանդիպելով, ստիպված եղան ժողովրդական վրիժառուների՝ պարտիզանների եղանների հալածների տակ նահանջի ճամբան բռնել։ Բայց Մոսկվայի հրդեհի բոցերի հրացոլքով լուսավորված նահանջի ուղիները ծածկվեցին Նապոլեոնի, պարտության մատնված, ջախջախված ու խելակորույս փախուստի ճամբան բռնած, բանակների մնացորդների զինվորների դիերով։ Պարտիզանների եղանները գործում էին սվինների փոխարեն, ամենուրեք մահ սփռելով օտարերկրյա զավթիչների նահանջի ճանապարհներին։

Սակայն Մոսկվան ո՛չ միայն օտարերկրյա զավթիչների դեմ մղվող պայքարի կենտրոն է հանդիսացել, այլ և ներքին։ Մոսկվայի ժողովուրդը շերմ կերպով արձագանքել է երկրում ծավալվող գյուղացիական շարժումներին՝ ուղղված ճորտատիրական կարգերի դեմ։ Բոյարների։ կալվածատերերի և ընդհանրապես ճորտատիրական կարգերի դեմ ուղղված ժողովրդական հուզումներն անպակաս էին Մոսկվայում։ Հակաֆեոդալական շարժումը Մոսկվայում հատկապես մեծ թափ է ընդունում 17-րդ դարի կիսում։

Բայց Մոսկվան ոչ միայն օտար զավթիչների ու ներքին թշնամիների դեմ մղվող պայքարի կենտրոն է հանդիսացել, այլ և նա եղել է Ռուսաստանի ռևոլյուցիոն շարժման խոշորագույն օջախ։ Ռուսական ռևոլյուցիոն շարժման տարեգրության մեջ Մոսկվան առաջնակարգ տեղ է գրավում։ Մոսկվան անխնա պայքար է ծավալել դարական ինքնակալության և բուրժուա-կալվածատիրական կարգերի դեմ։ Դեռևս 70 տարի առաջ ցարական գատարանի դահլիճից ողջ Ռուսաստանով մեկ հնչեցին Մոսկվայի քաջարի Պյոտր Ալեքսեևի հետևյալ մարգարեական խոսքերը. «Կբարձրանա միլիոնավոր բանվոր մարդկանց մկանուտ ձեռքը և զինվորների սվիններով պաշտպանվող բռնակալության լուծը հողմացրիվ կլինի»։

Փառապանծ էջեր է արձանագրել Մոսկվան 1905 թվի ռևոլյուցիայի պատմության տարեգրքում։ Պետերբուրգի բանվորների հետ միասին Մոսկվայի բանվորները ընթանում էին ռևոլյուցիոն շարժման ավանգարդում։ 1905 թվին Մոսկվայում կռվվում է բանվոր դասակարգի ազատագրական պայքարի նոր ու հզոր զենքը—կազմակերպվում է ռանվորական դեպուտատների Սովետը։ որը բոլշևիկների ղեկավարությամբ գլխավորում է 1905 թվի Մոսկվայի զինված ապստամբությունը։ Դեկտեմբերի 9-ին Մոսկվայի փողոցներում բարձրանում են առաջին բարրիկադները, որոնց վրա հպարտորեն ծածանվել են սկսում ռևոլյուցիայի ալ դրոշները։ ցարական կառավարությունը հրետանին ու զորքերը շարժում է դեպի Մոսկվա. դաժան ու անհավասար մարտեր են տեղի ունենում Մոսկվայի բանվորական մարտական դրուժինաների և ցարական կառավարության մինչ առամները զինված ոստիկանության, կազակների ու զորքերի միջև։ Անձնուրաց հերոսության ու անվեհերության փայլուն էջեր են արձանագրում Մոսկվայի բանվորները 1905 թվի ռևոլյուցիայի տարեգրքում։ Մոսկվայի օրինակին հետևելով բազմաթիվ այլ քաղաքներ ու շրջաններ ևս ներգրավվում են ցարիզմի դեմ մղվող զինված պայքարի մեջ. ուրի են հնչում ցարական Ռուսաստանի հալածված ժողովուրդները։ Սակայն ցարական կառավարությունը կարողանում է օտար քաղաքներից Մոսկվա նետված զորամասերի միջոցով ճնշել բանվորական զինված ապստամբությունը։

1914 թվի համաշխարհային պատերազմի ընթացքում ցարական կառավարությունը պարտություն պարտության հետևից էր կրում։ Տնտեսական քայքայումը, պատերազմական ճիգերը, օտարերկրյա կապիտալիստների տիրությունը ռուսական արդյունաբերության մեջ երկիրը հասցրել էին կործանման դուռը։ Վերահաս վտանգից—օտարերկրյա իմպերիալիստների ձեռքը մատնվելուց, ստրկական շղթաներ կրելուց երկիրը

փրկել կարող էր միայն ռևոլուցիան։ Բոլշևիկների պարտիան այդ օրերին գլխավորում էր դարիզմի տապալման համար աշխատավորների կողմից մղվող պայքարը։

1917 թվի փետրվարի 27-ին (մարտ 12) տեղի է ունենում բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիան։ Բոլշևիկյան պարտիան պայքարի է ելնում «ողջ իշխանությունը Սովետներին» նշանաբանի տակ։ Մոսկվայի բանվոր դասակարգը, ռևոլուցիոն Պետրոգրադի հետ միասին, համախմբվում է բոլշևիկյան դրոշի տակ ու պայքար ծավալում ողջ իշխանությունը Սովետների ձեռքում կենտրոնացնելու համար։Հակառևոլուցիոն ուժերը, զորաժողովի ենթարկելով իրենց բոլոր ճիգերը, աշխատում են Մոսկվան դարձնել հակառևոլուցիայի կենտրոն. սակայն Մոսկվայի պրոլետարիատը արժանի հակահարված է հասցնում այդ մտադրություններին։

Իսկ երբ Պետրոգրադում Ավրորա հածանավի թնդանոթների որոտը ազդարարում է ողջ աշխարհի մարդկության պատմության նոր ու փառավոր դարաշրջանի այգեբացը, Մոսկվայի ռևոլուցիոն ջոկատները գրավում են կառավարական հիմնարկները, փոստը, հեռախոսակայանը, հեռագրատունը։ Քաղաքի մեծ մասում իշխանությունն անցնում է Ռազմա-ռևոլուցիոն կոմիտեին։ Հակառևոլուցիան գրոհի է նետում իր բոլոր ուժերը։ Յոթնօրյա համառ մարտերից հետո նոյեմբերի 3-ին (16) Մոսկվայում հաստատվում է Սովետների իշխանություն։ Հնավուրց Կրեմլի աշտարակների վրա հպարտորեն ծածանվել է սկսում սոցիալիստական ռևոլուցիայի հաղթական ալ դրոշը։

Սկսվում է Մոսկվայի տարեգրության ամենափառավոր ու հոյակապ էջը—սոցիալիստական դարաշրջանի տարեգրությունը։

Մոսկվան հանդիսացել է ոչ միայն ռուսական պետականության ու օտարերկրյա զավթիչների դեմ մղվող պայքարի կենտրոնը և ռևոլուցիոն շարժման ամենակարևորագույն օջախներից մեկը, այլ և ռուսական կուլտուրայի, գիտության, արվեստի ծաղկման, փթթման անզուգական օրրանը։ Ռուսական հանճարեղ մտքի տիտանների անունները սերտ կերպով կապված են Մոսկվայի անվան հետ։Մոսկվայում են աճել ու հասակ քաշել ռուսական գիտության ու արվեստի ականավոր ներկայացուցիչները, համաշխարհային համբավի տիրացած գիտնականները, գրողները, արվեստագետները։ Մոսկվան ռուսական ազգային կուլտուրայի փարոսն է հանդիսացել։ Մոսկվայում է հրատարակվել առաջին տպագիր ռուսերեն գիրքը՝ նշանավոր ռուս առաջին տպագրիչ Իվան Ֆեոդորովի ջանքերով։ Այստեղ է Պետրոս Մեծի օրոք լույս տեսել առաջին լրագիրը Ռուսաստանում։ Այստեղ է հիմնադրվել առաջին համալսարանը Ռուսաստանում. նրա հիմնադիրն է եղել ռուսական և համաշխարհային դիտության կորիֆեյ Միխայիլ Լոմոնոսովը։ Այս համալսարանում են սովորել մեծ ռևոլուցիոն դեմոկրատ Բելինսկին, որն իր ողջ ուժերը ի սպաս է դրել ժողովրդյան բարօրությունը և նշանավոր ռևոլուցիոնների ու դեմոկրատ Գերցենը։

Մոսկվայի համալսարանը գիտա-հետազոտական մտքի կենտրոն հանդիսանալով իր շուրջն է համախմբել ռուս նշանավոր գիտնականներին. նա իրավունք ունի հպարտ զգալու իրեն, քանի որ իր անվան հետ են կապված ռուս մեծ գիտնականներ Սեչենովի, Տիմիրյազևի, Պիրոգովի, Ստոլետովի, Ժուկովսկու և շատ ուրիշների փայլուն անունները։

Մոսկվայում են ապրել ու ստեղծագործել ռուսական պոեզիայի տիտան մեծ Պուշկինը, նրբազգաց քնարերգու Լերմոնտովը, անվանի գրող Գրիբոյեդովը, մեծանուն վիպասան Տոլստոյը, հանրահայտնի դրամատուրգ Օստրովսկին, մեծահամբավ գրողներ Չեխովն ու Գորկին։

Մոսկվան խոշորագույն կենտրոն է հանդիսացել ռուսական արվեստի բոլոր ճյուղերի համար։ Համաշխարհային կուլտուրայի գանձարանում իրենց ավանդն են ներդրել ռուս նշանավոր ճարտարապետներ Կազակովը և Բաժենովը՝ Մոսկվան զարդարելով իրենց անմահ ճարտարապետական կոթողներով։ Մոսկվայի անվան հետ են կապված ռուսական երաժշտության կորիֆեյներ Չայկովսկու, Տանեևի անունները։ Մոսկվայում են աշխատել ռուսական դեղարվեստի ականավոր ներկայացուցիչներ, վրձինի մեծ վարպետներ Բեպինը, Սուրիկովը, Պոլենովը, Վասնեցովը։ Ռուսական ամենաառաջավոր թատրոնի լավագույն ու տաղանդավոր ներկայացուցիչների անունները կապված են դարձյալ Մոսկվայի անվան հետ. թատրոնի մեծագույն բարեկարգիչներ Ստանիսլավսկին ու Նեմիրովիչ-Դանչենկոն այստեղ են հիմնադրում Գեղարվեստական թատրոնը։

Մոսկվան միաժամանակ հանդիսացել է նաև Ռուսաստանի խոշորագույն տնտեսական կենտրոններից մեկը. նա, հաղորդակցության բազմաթիվ ճանապարհներով կապված լինելով երկրի շատ վայրերի հետ, խոշոր դեր է խաղացել առևտրական ու արդյունաբերական կյանքում։ Մոսկվայի արդյունաբերությունը վերելք է սկսում ապրել 18-րդ

դարի երկրորդ կիսին. արդյունաբերական և առևտրական կյանքի զարգացմանը մեծ չափով նպաստում է երկաթուղիների կառուցումը. Մոսկվան վերածվում է երկաթուղագծերի կենտրոնական հանգույցի՝ կապվելով լայնարձակ երկրի ամենահեռավոր շրջանների հետ։ Սակայն Մոսկվայում տիրություն էին անում օտարերկրյա կապիտալիստները. արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը պատկանում էր նրանց։ Ցարական կառավարության օտարներին վաճառված մինիստրները արհեստական արգելքներ էին ստեղծում, որպեսզի Մոսկվայում չզարգանա ծանր արդյունաբերությունը, որը կարող էր նրան դուրս բերել օտարերկրյա կապիտալիստներից ունեցած կախման վիճակից։ Մոսկվայի արդյունաբերական ձեռնարկներում իշխում էին շահագործման ամենադաժան, կիսաճորտատիրական ձևերը։ Այդ ձեռնարկներում է կոփվում Մոսկվայի պրոլետարիատի անխորտակ կամքն ու պայքարի անվեհեր ոգին։ 19-րդ դարում Մոսկվան դառնում է աշխարհի ժամանակակից խոշորագույն քաղաքներից մեկը։

Մոսկվայի տարեգրության ամենապայծառ ու ամենափայլուն էջը սկսվում է նրա սովետական դարաշրջանի պատմությամբ։ Սովետական իշխանության երեսուն տարիների ընթացքում անճանաչելիորեն փոխվում է Մոսկվայի պատկերը. նշված ժամանակամիջոցում նրա կյանքում տեղի են ունենում սոցիալ-քաղաքական ու տնտեսական արմատական մեծ փոփոխություններ։

Սովետական Մոսկվայի պատմության նոր փուլն սկսվում է նրանով, որ 1918 թվի մարտի 11-ին այնտեղ է փոխադրվում սովետական կառավարությունը. և հետևաբար Մոսկվան դառնում է աշխարհի առաջին սոցիալիստական պետության մայրաքաղաքը։

Սակայն երիտասարդ սովետական պետության համար ծանր օրեր են սկսվում. արտաքին ու ներքին թշնամիները՝ ինտերվենտներն ու սպիտակ գվարդիականները ոչ մի ջանք չեն խնայում սովետական իշխանությունը արյան մեջ խեղդելու համար. թշնամիների դեմ պայքարի է ելնում ողջ սովետական ժողովուրդը. դաժան մարտերի բոցերի մեջ ծնվում ու կոփվում է հերոսական Կարմիր Բանակը. Մոսկվան վերածվում է սովետական իշխանության անառիկ բաստիոնի, որտեղից մեծ Լենինը անհողդողդ կերպով վարում էր սովետական ժողովրդի պայքարը ընդդեմ ինտերվենտների ու սպիտակ գվարդիականների։ Գերմարդկային ճիգեր էին գործադրում մոսկվացիները անպատմելի դժվարությունները հաղթահարելու համար. անհրաժեշտ էր Կարմիր Բանակն ապահովել ռազմամթերքով, սննդով ու հագուստով, բանվորներին փրկել սովից։ Ռազմաճակատի ու թիկունքի մատակարարման խնդիրները իրենց ողջ հասակով ծառացել էին Մոսկվայի բոլշևիկների առջև։ Հայր չկար, հարկ չկար, վառելանյութ չկար, իսկ թշնամիները արշավում էին ուկրաինայի միջնաբերդի՝ Մոսկվայի վրա։ Սակայն մոսկվացիները չընկճվեցին դժվարությունների առաջ, փա՜ռք նրանց աննկուն կամքին։ Հազարավոր մոսկվացիներ զենքը ձեռքերին ռազմաճակատներում մարտնչում էին հանուն սովետական իշխանության։ Քաղցած էին մոսկվացիները, սնվում էին օրական մեկ տրնջորդ ֆունտ հացով, մրսում էին նրանք, բայց բարձր էր նրանց ուսուցիչն մարտական ոգին։ Մոսկվայի բանվորները կարողանում են հաջողությամբ կարգավորել ռազմաճակատի մատակարարման գործը։

Սոցիալիստական ուսուցիչի մեծ առաջնորդներ Լենինի և Ստալինի ղեկավարությամբ երիտասարդ սովետական ռեսպուբլիկան ջախջախում է արտաքին ու ներքին թշնամիներին՝ ինտերվենտներին ու սպիտակ գվարդիականներին, պաշտպանելով Հոկտեմբերյան մեծ ուսուցիչի նվաճումները։

Այնուհետև Մոսկվայի աշխատավորները ձեռնամուխ են լինում տնտեսական փլուզումը հաղթահարելու գործին։

1922 թվի դեկտեմբերի 30-ին Մոսկվայում գումարվում է Սովետների առաջին Համամիութենական համագումարը, որտեղ մեծ Ստալինի ղեկավարման համաձայն ղեկլարացիա է ընդունվում Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության կազմելու մասին ու այդ պահից էլ Մոսկվան Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների մայրաքաղաք է հռչակվում։

1924 թվի հունվարին մեծ ու խորը վշտով է համակվում ողջ սովետական երկիրը—մահանում է սովետական պետության մեծ հիմնադիր, բոլշևիկյան պարտիայի ու սովետական ժողովրդի հանճարեղ առաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինը։ Մոսկվայի բանվորները ողջ երկրի պրոլետարիատի հետ միասին երդվում են առաջնորդի մահվանից հետո է՛լ ավելի խստացնել իրենց շարքերը Լենինյան դրոշի տակ։

1925 թվին բոլշևիկների պարտիայի ու պրոլետարիատի առաջնորդ Ստալինի ղեկավարությամբ սովետական ժողովուրդը ձեռնամուխ է լինում սոցիալիստական ինդուստրացման մեծ պլանի իրականացմանը։ Սկսվում է պայքար Ռուսաստանի դարավոր հետամնացության դեմ. առաջնահերթ

խնդիր էր հանդիսանում կապիտալիստական երկրներից ունեցած տնտեսական ու հոգևոր կախման շղթաների արագորեն ջախջախումը։ Մոսկվան վերածվում է կազմակերպչական հզոր կենտրոնի. այստեղ են մշակվում հոյակապ հնգամյա պլանները, որոնք կերպարանափոխում են հետամնաց Ռուսաստանի դեմքը, ագրարային երկրից ինդուստրիալ երկրի վերածելով նրան։ Լայնարձակ երկրի ժողովրդատնտեսության բոլոր ճյուղերը հազարավոր թելերով կապվում են Մոսկվայի հետ, որը վիթխարի ստեղծագործական աշխատանքի հունի մեջ է ներգրավում երկրի առկա բոլոր պոտենցիալ ուժերը։ Ժողովրդատնտեսության հախուռն վերելքին ու հսկայաթափ առաջխաղացմանը խոշոր խրթին են հանդիսանում աշխատանքի նոր, սոցիալիստական մեթոդները. ուժեղ թափով ծավալվում են սոցիալիստական մրցությունը, հարվածայնությունը, արտադրական պլանների կատարման ու գերակատարման համար մղվող անդուլ պայքարը. աշխատանքային խանդավառությունը համակում է աշխատավորական հոծ զանգվածներին. պատվի, փառքի, կենսական անհրաժեշտության գործ է դառնում ոչ միայն Ռուսաստանի հետամնացության արմատական վերացումը, այլ և կապիտալիստական երկրներին հասնելը և նրանցից անցնելը պատմական սեղմ ժամկետներում։

Հետամնաց Ռուսաստանի վերակառուցման, հսկայածավալ սոցիալիստական շինարարության հաղթարշավի առաջին շրջանում, նրա ավանգարդում հսկայաքայլ ընթանում էր դարձյալ Մոսկվան։ Ստալինյան հնգամյակների տարիներին աճում է մայրաքաղաքի արդյունաբերությունը և նա վերածվում է խոշոր ինդուստրիալ օջախի։ Հայրենական Պատերազմի նախօրյակին Մոսկվայի արդյունաբերության արտադրանքը 21 անգամ գերազանցում էր 1913 թվի արտադրանքին, իսկ մետաղամշակման գործարաններինը՝ 96 անգամ։ Պատերազմի նախօրյակին միայն Մոսկվան կրթեց երկու անգամ ավելի արտադրանք էր տալիս, քան ցարական ամբողջ Ռուսաստանը 1913 թվին։ Նախառևոլուցիոն Մոսկվային օշթային էին կոչում, նա արտադրում էր գլխավորապես գործվածքներ, թույլ էր զարգացած ծանր արդյունաբերությունը։ Սովետական տարիներին Մոսկվան վերածվում է ծանր ինդուստրիայի հզոր ու ամրակուռ ամրոցի և նրա բազմապիսի ու բազմաճյուղ ծանր արդյունաբերությունը կարևորագույն դեր է խաղում ողջ երկրի ինդուստրացման գործում։ Ստալինյան հնգամյակի տարիներին այստեղ վեր են խոյանում մի շարք գործարան-հսկաներ— ինչպես օրինակ աշխարհի ամենախոշորագույն ավտոգործարաններից մեկը հանդիսացող Ստալինի անվան ավտոգործարանը, իր տեխնիկայով ու մասշտաբով ամբողջ աշխարհում նմանատիպ արտադրության ասպարեզում առաջին տեղը գրավող Գնդավոր առանցքակալների գործարանը, բարդ ու ամենակատարյալ դազգահների արտադրությամբ ամբողջ սովետական երկրին հայտնի «Կարմիր պրոլետար» և Օրջոնիկիձեի անվան դազգահաշինական գործարանները, առաջնակարգ, ճշգրիտ գործիքներ արտադրող «Ֆիրեզեր» ու «Կալիբր» խոշորագույն գործարանները, էապես էլեկտրատեխնիկական արտադրության ամբողջական կոմբինատներ ներկայացնող «Էլեկտրագործարան» և «Դինամո» հսկա էլեկտրատեխնիկական գործարանները, բարձրորակ պողպատ արտադրող «Մանգաղ ու մուրճ» հզոր գործարանը, և այլ գործարաններ։ Մոսկվայի արդյունաբերության էլեկտրամատակարարումը կատարվում է բազմաթիվ էլեկտրակայանների միջոցով, որոնք միավորված են «Մոսէներգո»-ի սիստեմում. սա իր կարողությամբ աշխարհում առաջին տեղերից մեկին է դրավում։

Սովետական ժողովրդի նոր դիկտատները, օտարերկրյա բուրժուազիայի ստոր գործակալները փորձեր էին անում կասեցնելու երկրի ինդուստրացման հաղթարշավը, ձախողելու հնգամյա պլանների կենսագործումը. սակայն նրանց բոլոր փորձերն էլ դատապարտված էին անհաջողության։ Մոսկվայի աշխատավորությունը սովետական ողջ ժողովրդի հետ միասին, անշեղորեն ինդուստրացման ուղիով ընթանալով, արժանի հակահարված տվեց թշնամիների ստոր փորձերին, ընդմիշտ պարտության մատնելով նրանց։ Մոսկվան, սովետական երկրի ջահակիրը, ժամանակակից ծանր ինդուստրիայի խոշորագույն կենտրոնը դարձավ և այսօր հերոսական Լենինգրադի հետ միասին հանդիսանում է «երկրի ինդուստրացման զինանոցը»։

Խոշոր են Մոսկվայի նվաճումները քաղաքի սոցիալիստական վերակառուցման բնագավառում։ Նախառևոլուցիոն Մոսկվան կառուցվում էր անպլանային ձևով, տարերայնորեն։ Կեղտոտ, ծուռ ու մուռ և խավար կենտրոնական փողոցներ՝ աղնվականների և վաճառականների դղյակներով հանդերձ, աղքատ ծայրամասեր՝ օթևանատներով ու օղետներով խճողված, քաղաքային տրանսպորտի ծայր աստիճան հետամնացություն, ջրի սակավություն. ահա այսպիսի անմխ-

մեծ պատկեր ուներ նախասովետական Մոսկվան։

Սովետական իշխանության տարիներին կազմվում է Մոսկվայի սոցիալիստական վերակառուցման ստալինյան գլխավոր պլանը։ Քաղաքների զարգացման պատմությանն անհայտ է վերակառուցման նմանօրինակ խիզախ ու ընդարձակ մի պլան։ Մոսկվայի կազմակերպությունները չանք չեն խնայում այդ հոյակապ պլանի կենսագործման, Մոսկվան օրինակելի սոցիալիստական քաղաքի վերածման համար։ 1931 և 1935 թ. թ. որոշումների կենսագործումը մայրաքաղաքի աշխատավորության մարտական հրատապ խնդիրն է դառնում. միայն սոցիալիստական իրավակարգում հնարավոր էր ձեռնամուխ լինել նմանօրինակ վիթխարի արմատական վերապլանավորման ու վերակառուցման աշխատանքներին։ Զտեսնված արագությամբ փոխվում է ազնվականական-բուրժուական Մոսկվայի պատկերը, նրա հեքիաթային չքնաղ գեղեցկությունը կերկնապատկվում է ոչ միայն տարիների, այլ նույնիսկ ժամերի ընթացքում. բարեզարդ տեսք են ընդունում նոր կառուցված և լույսերի հեղեղով ողողված լայնարձակ պողոտաները ու փողոցները, արձանազարդ հրապարակները, հանդուստավետ այգիները ու պուրակները։ Քաղաքին վեհ տեսք հաղորդող հսկայածավալ բազմաթիվ նորակառույցների մեջ աչքի են զարնում մի շարք մոնումենտալ, հոյակերտ ճարտարապետական կառուցվածքներ, ինչպես օրինակ ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Տունը, «Մոսկվա» հյուրանոցը, Լենինի անվան ՍՍՌՄ Պետական գրադարանի նոր շենքը, Սովետական Բանակի կենտրոնական թատրոնը, Զայկովսկու անվան Համերգային դահլիճը և շատ շատերը։ Սովետական իշխանության տարիներին Մոսկվայում կառուցվում են բազմաթիվ բազմահարկ բնակելի տներ, հասարակական ու վարչական շենքեր, դպրոցներ, ինստիտուտներ, հիվանդանոցներ, մանկապարտեզներ, մանկամսուրներ և այլ կառուցվածքներ։ Վերակառուցվում ու ընդարձակվում են ջրմուղը, կոյուղին, կերպարանափոխվում է քաղաքային տրանսպորտը, էլեկտրիֆիկացվում մերձքաղաքային հաղորդակցությունը։ Միայն ստալինյան հնգամյակների ընթացքում կառուցվում և բնակության է հանձնվում վեց միլիոն քառակուսի մետրից ավելի նոր բնակելի տարածություն, որը կազմում է նախահեղափոխյան Մոսկվայի բնակելի տարածության մոտ կեսը. հարյուր հազարավոր մոսկվացիներ բոլոր հարմարություններով օժտված գեղեցիկ ընակարաններ են ստանում։ Մոսկվայի կառուցումների մեջ իր շքեղությամբ ու կատարելությամբ ուրույն տեղ է գրավում մետրոպոլիտենը. իր ստորերկրյա դահլիճ-պալատներով։ Մոսկվայի մետրոպոլիտենը, որի առաջին հերթը շահագործման հանձնվեց 1935 թվին, աշխարհում չունի իրեն հավասարը։ Հայրենական պատերազմի տարիներին անգամ շարունակվում էր նրա կառուցումը։ Մետրոյի ուղու երկարությունը ներկայումս հասնում է 40 կիլոմետրի և նա օրեկան տեղափոխում է երկու միլիոն ուղևոր։ Իսկ պատերազմի տարիներին Մոսկվայի մետրոպոլիտենը հուսալի ապաստարան էր ծառայում հարյուր հազարավոր երեխաների, կանանց ու ծերունիների համար։ Քաղաքին գեղեցիկ տեսք են հաղորդում հոյակապ կամուրջները։ Մոսկվա գետի ու Յաուզայի ափերը ավելի քան հիսուն կիլոմետր երկարությամբ գրանիտ ու լեռան են հագել։ Ստալինյան հնգամյակի տարիներին Մոսկվան հարստանում է նաև մի վիթխարի հիդրոտեխնիկական կառուցվածքով։ 1937 թվին ավարտվում է 128 կիլոմետր երկարություն ունեցող Մոսկվա-Վոլգա ջրանցքը, որը մայրաքաղաքը խորը ջրային ուղիով կապելով մայր Վոլգայի հետ, վերջինիս միջոցով էլ կապում է նրան Բալտիկ, Սպիտակ ու Կասպից ծովերի հետ։ Մոսկվա-Վոլգա ջրանցքը մայրաքաղաքը վերածում է ոչ միայն երեք ծովերի նավահանգստի, այլ և լուծում է Մոսկվայի ջրամատակարարման խնդիրը։

Մոսկվայի անվան հետ է կապված նաև ՍՍՌՄ-ի Ստալինյան Կոնստիտուցիայի մշակումը։ 1936 թվի դեկտեմբերին Մոսկվայում գումարված Սովետների արտակարգ 8-րդ համագումարը ընդունում է աշխարհում ամենադեմոկրատական կոնստիտուցիան։

1941 թվին ընդհատվում է սովետական ժողովրդի խաղաղ սոցիալիստական շինարարությունը։ Գերմանիայի 1941 թվի հունիսի 22-ի ուխտադրուժ հարձակումը ՍՍՌՄ-ի վրա, սովետական ժողովրդին հարկադրում է իր բոլոր աշխատանքները վերակառուցել ռազմաճակատի կարիքների բավարարման տեսանկյունով։ Սովետական Հայրենիքին սպառնացող արտաքին վտանգի հանդեպ սովետական ողջ ժողովուրդը զորաժողովի է ենթարկում ու լարում իր ֆիզիկական ու բարոյական բոլոր ուժերը։ 1941 թվի հուլիսի 3-ին ժողովուրդների մեծ առաջնորդ Ստալինն իր ռադիոելույթում ահազանգում է ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակման հետևանքով սովետական երկրին սպառ-

նացող տոնի վտանգի մասին և կոչ անում լարել բոլոր ուժերը՝ հանուն սոցիալիստական Հայրենիքի պաշտպանության։ Սովետական բազմամիլիոն հզոր ու անպարտելի ժողովուրդը, ոգեշնչված մեծ առաջնորդի անսասան հավատով վերջնական հաղթանակի ներկայությամբ, հուժկու պատվար է կանգնում իր սիրասուն Հայրենիքը ներխուժած թշնամու հորդաների առջև։ Բալտիկայի ափերից մինչ Խաղաղական, հյուսիսային բևեռից մինչ Կովկասյան սիգապանծ լեռները սովետական ողջ երկիրը վերածվում է հաղթանակի զենքերը կռող մի վիթխարի զինանոցի։ Ամեն ինչ ռազմաճակատի համար նշանաբանի տակ ոտքի է ելնում առնական սովետական ժողովուրդը. և այդ հաղթանակը կոփվում էր թե՛ հազարավոր կիլոմետրեր ձգվող ռազմաճակատներում տեղի ունեցող թեժ ու դաժան մարտերում, թե՛ դիշեր ցերեկ անդուլ աշխատանքի լծված բազում գործարաններում, թե՛ գիտա-հետազոտական լաբորատորիաներում և թե՛ կոլտնտեսային լայնածավալ դաշտերում։

Այդ օրերին Մոսկվան արագորեն վերածվում է ռազմական անառիկ միջնաբերդի՝ հանդիսանալով Կարմիր Բանակի կարևորագույն ճակատամարտ զինանոց։ Հարյուր հազարավոր մոսկվացիներ Կարմիր Բանակի շարքերն են մտնում. նրանք ռազմաճակատներում մարտիկների առաջին շարքերում ընթանալով հերոսական սխրագործությունների փայլուն օրինակներ են արձանագրում։ 120 հազարից ավելի մոսկվացիներ կամավոր կերպով մտնում են աշխարհազորայինների շարքերը. 500 հազար հոգի, դրլխավորապես կանայք, պաշտպանական ամրություններ էին կառուցում։ Ռումբերի տարափի, օդային տագնապի սառստուազդեցիկ սուլոցների տակ անդամ Մոսկվայի հերոս աշխատավորները շարունակում էին անվեհեր ու անձնուրաց կերպով կոփել հաղթանակի զենքը։

1941 թվի հոկտեմբերին ռազմաճակատն ընդհուպ մոտենում է Մոսկվային։ Մոսկվայի վրա են նետվում 35 հիտլերական ընտիր դիվիզիաներ. ֆաշիստական հրամանատարությունը փորձում էր ռազմաններին մեջ առնել Մոսկվան։ Մահացու վտանգ էր սպառնում մայրաքաղաքին։ Ոտքի է ելնում ու հուժկու հակադրոհի նախապատրաստվում ողջ Մոսկվան՝ ահարկու ու անպարտելի։ Կազմակերպվում են կոմունիստական ջոկատներ, ստեղծվում աշխարհազորայինների նոր զորամասեր։ 3-4 օրից նոր կազմակերպված համալրումները դրավում են պաշտպանական դիրքերը։ Հոկտեմբերի 19-ին Մոսկվայում պաշարողական վիճակ է հայտարարվում։

Իր պաշտպանության համար մղվող դաժան մարտերում սակայն մենակ չէր Մոսկվան. նրան օգնության է շտապում սովետական ողջ երկիրը. հայրենասիրական վսեմ գաղափարներով տոգորված և թշնամու հանդեպ ցասումնալից՝ մարդկային հեղեղը անվերջ դեպի Մոսկվայի մատույցներն էր հոսում Ուրալից, Սիբիրից, Հեռավոր Արևելքից, Միջին Ասիայից, Կովկասից։ Դեպի Մոսկվա ձգվող բոլոր տեսակի ուղիներով գիշեր ու ցերեկ անընդհատ շարժվում էին տանկերի, ականանետների, հրետանու, պարենի անվերջանալի շարասյունները։ Օրեցօր ավելի քան լարված բնույթ էին ընդունում Մոսկվայի համար մղվող մարտերը. գերմանական ֆաշիստների դեմ նրա նվիրական պատերի տակ արիաբար մարտնչում էին բազմազգ Սովետական Միության բոլոր ժողովրդների զավակները— ռուսները, ուկրաինացիները, բելոռուսները, հայերը, վրացիները, ազրբեջանցիները, ղազախները, ուզբեկները, թուրքմենները, տաջիկները, կիրգիզները, լիտվացիները, լատիշները, էստոնացիները, մոլդավացիները, կարելները և շատ ու շատ ուրիշներ։ Յուրաքանչյուր մարտիկի համար հավասարապես թանգ ու հարազատ էր Մոսկվան։ Եվ մայրաքաղաքի միլիոնավոր բաջարի պաշտպանները ամրակուռ պատնեշ են ստեղծում նրա շուրջը, որի պողպատյա կրծքին դարձնելով դաղազած թշնամին ջարդ ու փշուր է լինում։

Այդ օրերին ամբողջ աշխարհը շունչը պահած իր հայացքը բևեռել էր Մոսկվայի պատերի տակ ծավալվող պատմական խոշորագույն մարտերին ու ակնդետ սպասում էր նրա ելքին։ Այստեղ, հնավուրց Մոսկվայի պատերի տակ վճռվում էր հանուր մարդկության բախտը, աղատասեր ժողովրդների ապագան կոփվում էր այդ ահեղ մարտերում, որոնց ելքից էր կախված — կամ մնալ ֆաշիստական ստրկատիրության ճիրաններում ու հավետ տառապել նրա երկաթի գարշապարի տակ կամ ընդմիշտ ազատագրվել ֆաշիստական ժահահոտ դաշնագույն ժանտախտից։ Հիտլերյան ստահակներն ու Սովետական Միության խայտաբղետ թշնամիները ողջ աշխարհով մեկ փողահարում էին Մոսկվայի մոտալուտ անկման մասին։ Ֆաշիստական ճիվաղները Մոսկվայի վրա նետելով իրենց ամենարնտիր զորաբանակները, սին հույսեր էին տածում մայրաքաղաքի կայծակնային գրաված ավարտել պատերազմը։ Սակայն,իրենց զավթողական հաշիվների մեջ նրանք չարաչար սխալվեցին և տապալվեց հիտլերական բանակների հարձակումը։

Մոսկվայի մատույցներում տեղի ունեցող պատմական մեծ ու սքեղ ճակատամարտերում հերոսական Կարմիր Բանակը կործանիչ պարտության մատնեց թշնամու զորաբանակներին։ Փառապանծ մայրաքաղաքի պատերի տակ իրենց գերեզմանը գտան երեք հարյուր հազար հիտլերականներ։ Զյունե սավանով ծածկված մերձմոսկովյան դաշտերում Կարմիր Բանակն առաջինը հողմացրիվ արեց գերմանական բանակի «անպարտելիության» առասպելը, առասպել, որ հյուսվել էր եվրոպական մի շարք երկրներում նրա ձեռք բերած էժանագին «հաղթանակների» հետևանքով։

1942 թվի ամռանը ֆաշիստական հրամանատարությունը նոր հարձակում է ձեռնարկում, ձգտելով Մոսկվան կտրել իր ունեցած Վոլգայի ու Ուրալի թիկունքից և այսպիսով գրավել այն։ Սակայն, այս անգամ ևս, ինչպես միշտ, հզոր Կարմիր Բանակը, մեր էպոխայի ամենահանճարեղ զորավար ու ստրատեգ մեծ Ստալինի ղեկավարությամբ, ձախողում է թշնամու պլանները և ուժասպառ անելով նրան հերոս քաղաք Ստալինգրադում ու Կովկասյան լեռնամատույցներում, անցնում է վճռական հարձակման։ Թշնամին պարտություն պարտության հետևից կրելով գլորվում էր անվերջ դեպի Արևմուտք։ Սովետական հողը քայլ առ քայլ մաքրվում էր թշնամուց։ Սովետական Միության մայրաքաղաքում՝ կարմիր Մոսկվայում ուժգին որոտալ են սկսում հաղթանակի սալյուտները՝ ի պատիվ հաղթանակից հաղթանակ ընթացող քաջարի սովետական զորքերի։ Գիշերները Մոսկվայի երկնակամարը լուսավորվում էր հսկա հրավառություններից։

Սովետական զորքերը 1945 թվի գարնանը ընդհուպ մոտենում են թշնամու որջին՝ Բերլինին ու գրավում այն. այստեղ ևս մարտիկների առաջին շարքերում ընթանում էին մոսկվացիները։ Սովետական Միության հերոս՝ մոսկվացի Սամսոնովը, իր ստորաբաժանման գլուխն անցած, առաջինը սովետական դրոշ է պարզում պարտված Բեռլինում գերմանական Ռայխստագի շենքի վրա։

Հայրենական պատերազմի տարեգրքում փայլուն էջեր է արձանագրել Մոսկվան։ Անհնար է հոդվածի սեղմ էջերում, թեկուզ համառոտ կերպով, թվարկել այն բոլոր անմահ սխրագործությունները, որ կատարել են մոսկվացիները։ Այդ սխրագործությունների մեջ մեծ բաժին ունեն մոսկվացի կանայք, որոնք աչքի զարնող խոշոր դեր խաղացին ոչ միայն ռազմաճակատներում ու աշխատանքային ճակատում, այլև իրենց արյունի սպաս դրին հայրենիքի պաշտպանությանը. մոսկվացի դոնորները մոտ կես միլիոն լիտր սեփական արյուն տվին Կարմիր Բանակի վիրավոր զինվորների ու սպաների կյանքի փրկության համար։ Երբեք չեն մոռացվի պատերազմի սքեղ տարիներին մոսկվացիների կատարած անթիվ ու անհամար սխրագործությունները։ Այսօր Մոսկվայի միլիոնից ավելի մոսկվացի պաշտպանները իրենց կրծքների վրա հպարտությամբ կրում են զինվորական ու աշխատանքային փառքի «Մոսկվայի պաշտպանության համար» մեդալը, որի վրա պատկերված են Լենինի սրբազան դամբարանն ու Մոսկովյան Կրեմլը։

Մեծ Հայրենական Պատերազմի հաղթական ավարտից հետո Մոսկվայի աշխատավորությունը ողջ սովետական ժողովրդի հետ միասին ձեռնամուխ եղավ պատերազմի հասցրած վերքերը բուժելու և հետպատերազմյան հնգամյա պլանի կենսագործման աշխատանքներին։ Ժողովրդատնտեսության հնգամյա պլանում Մոսկվան առաջատար դեր է խաղում. բովանդակ երկրի նոր ձեռնարկություններին Մոսկվան է մատակարարում կատարելագործված մեքենաներ, դազգահներ, ճշգրիտ գործիքներ և այլ սարքավորում։ Մայրաքաղաքում խոշոր աշխատանքներ են ծավալվել նաև քաղաքային տնտեսության ոլորտում. կառուցվում են հարյուրավոր նոր տներ, սկսվել են առաջին ութ բազմահարկ շենքերի շինարարության նախապատրաստական աշխատանքները, շարունակվում է մետրոպոլիտենի չորրորդ հերթի շինարարությունը, ավարտվել է արդեն պատերազմի տարիներին սկսված Սարատով-Մոսկվա գազամուղի կառուցումը, բարելավվում է քաղաքային տրանսպորտը, օրեցօր աճում են կուլտուր-լուսավորական հիմնարկությունների քանակը, և այլն։ Այս բոլորի հետ միասին մոսկվացիները անշեղորեն բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունն ու արտադրանքի որակը՝ նոր տեխնիկայի յուրացման, առաջավոր տեխնոլոգիայի կիրառման ու արտադրության ռացիոնալ կազմակերպման շնորհիվ։

Մոսկվան հանդիսանում է սովետական մեծ պետության քաղաքական, տնտեսական ու կուլտուրական կենտրոնը։ Այստեղ է գտնվում Սովետական Միության կառավարությունը և Համամիութենական Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն։ Այստեղ հնավուրց Մեծ Կրեմլյան դահլիճներում են տեղի ունենում ՍՍՌՄ Գերագույն

Սովետի սեսիաները և բոլշևիկյան պարտիայի կոնֆերանսները, Պարտիայի ու սովետական պետության գործիչները ժողովրդի վստահությունը վայելելով այստեղ են վճռում սովետական պետության քաղաքական, տնտեսական ու կուլտուրական զարգացման կարևորագույն խնդիրները։ Այստեղ, սովետական պետականությունը խորհրդանշող Կրեմլում են տեղավորված պետական կարևորագույն հիմնարկությունները — ՍՍՌՄ Դեբագույն Սովետը, ՍՍՌՄ Մինիստրների Սովետը։ Կրեմլում է ապրել ու աշխատել սովետական պետության հայր Վլադիմիր Իլիչ Լենինը։ Կրեմլում է ապրում ու աշխատում Լենինի գործի մեծ շարունակող Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինը։ Այստեղից, Մոսկվայից է հանճարեղ ստրատեգ Ստալինը ղեկավարել սովետական անպարտելի ժողովրդի պայքարը ընդդեմ հիտլերյան ղավթիչների։ Մոսկվայից է մեծ Ստալինը ընթացք տալիս ՍՍՌՄ-ում կոմունիզմ կառուցող միլիոնավոր սովետական մարդկանց աշխատանքին։

Սոցիալիստական Մոսկվան իր մեջ մարմնավորում է ՍՍՌՄ-ի ժողովրդների մեծ բարեկամությունը։ Մեծ Ստալինը Մոսկվայի շուրջը համախմբել ու եղբայրական միասնական մի ընտանիքի մեջ է նեղգրավել Սովետական Միության բոլոր ժողովրդներին։ Բալտիկ ծովից մինչ Խաղաղական օվկիանոս, բևեռային սառույցներից մինչ Անդրկասպյան շիկացած ավազները տարածվում է լայնածավալ ու բնբռատատ սովետական երկիրը՝ իր հսկա գործարաններով, հարատատ հանքերով, բերրի դաշտերով, հոյակապ երկաթուղիներով, հզոր էլեկտրակայաններով, ջրատատ գետերով, անծայրածիր անտառներով, մրգաշատ այգիներով։ Եվ Մոսկվան այս ամենը միավորում է միասնական սոցիալիստական վիթխարի մի տնտեսության մեջ, ընթացք տալով միլիոնավոր մարդկանց կամքին ու աշխատանքին։ Ամենուրեք, և՛ հեռավոր Կուրիլյան կղզիներում, և՛ դաժան Արկտիկայում, և՛ Ղազախստանի ու Թուրքմենստանի ավազուտներում, և՛ արևավառ անդրկովկասյան ռեսպուբլիկաներում, և՛ ցրտաշունչ Սիբիրում, և՛ Միության գոհար Ուրալում, և՛ աշխարհի տանիք Պամիրում կարելի է հանդիպել բազմաթիվ բարեբորակ մոսկվացի բանվորների, ինժեներների, արտադրության հմուտ հրամանատարների, կազմակերպիչների, բազմավաստակ գիտնականների և զանազան մասնագիտություն ունեցող անձանց, որոնք եղբայրական օգնություն են ցույց տալիս կոմունիզմ կառուցող բազմազգ սովետական ժողովրդին։ Միաժամանակ սովետական երկրի բոլոր ծայրամասերից Մոսկվա է ժամանում ուսումնածավալ երիտասարդության մի հսկա բանակ, որի համար Մոսկվան գիտության, ստեղծագործության անսպառ շտեմարան է հանդիսանում։ Մոսկվան Սովետական Միության բոլոր ժողովուրդների համար ազգային կադրերի կոփման սրանչելի դարբնոց է հանդիսանում։

Մոսկվան սոցիալիստական կուլտուրայի ու գիտության կենտրոնը, լենինիզմի միջնարերդը և մարդկության ամենաառաջավոր գաղափարախոսության օջախն է հանդիսանում։ Մոսկվայում է գտնվում սովետական գիտության շտաբը — ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիան։ Դրանից զատ Մոսկվայում գոյություն ունեն նաև մի շարք նոր կազմակերպված ակադեմիաներ — ինչպես՝ օրինակ Լենինի անվան Գյուղատնտեսական գիտությունների Ակադեմիան, Բժշկական, Հրետանային, Մանկավարժական գիտությունների ակադեմիաները, Ճարտարապետության Ակադեմիան, Գեղարվեստների Ակադեմիան և մի շարք խոշորագույն այլ գիտա-հետազոտական հիմնարկություններ, որոնք սպասարկում են երկրի ժողովրդատնտեսության ու կուլտուրայի բոլոր բնագավառներին։ Մոսկվայի գիտնականներն աշխատում են բազմազան գիտական պրոբլեմների վճռման վրա և իրենց հայտնագործումներով ու գյուտերով նոր ուղիներ են հարթում համաշխարհային գիտության ու տեխնիկայի համար։ Սոցիալիստական շինարարության գործնական խնդիրների, ժողովրդի հետ սերտ կապված առաջատար գիտության մեծ քաղաք է հանդիսանում Մոսկվան։ Նա միաժամանակ ժողովրդական կրթության խոշորագույն կենտրոն է։ Մոսկվայի բարձրագույն, միջնակարգ ու այլ ուսումնական հիմնարկներում սովորում են մոտ մեկ միլիոն մարդ։ Մայրաքաղաքի հնագույն համալսարանում սովորում են 38 ազգությունների պատկանող ուսանող-ուսանողուհիներ։ Դպրոցաշինարարության, կահավորման ու հրեխաներին լրիվ ընդգրկելու ասպարեզում Մոսկվան աշխարհում առաջին տեղն է գրավում։ Մոսկվայում գործում են երկու հազարից ավելի դրագետներ, հարյուրավոր բանվորական ակումբներ, կուլտուրայի տներ։ Գիրքը, թերթը, ռադիոն մոսկվացիների անհրաժեշտ սեփականությունն են դարձել։

Մոսկվայում են կենտրոնացված նաև մեծ թվով գեղարվեստական թանգարաններ, որի մի են հավաքված ռուսական անցյալի վրձինի մեծ վարպետների ստեղծագործական կտավները, ինչպես նաև սովետական խորհրդ-

բազուն նկարիչների ու քանդակագործների երկերը։

Մոսկվան նշանավոր է նաև որպես բեմական արվեստի կենտրոն. այստեղ գործում են 37 թատրոն, որոնց թվում Մեծ թատրոնը, Փոքր թատրոնը, Մոսկվայի Գեղարվեստական թատրոնը հանդիսանում են սովետական ժողովրդի ազգային պարծանքը։ Սովետական թատերական արվեստի ծաղկումը հանրածանոթ փաստ է։ Մոսկվայի թատրոնների տաղանդավոր կոլեկտիվների ստեղծագործական աշխատանքի շնորհիվ թատերական արվեստը դրվել է մի նոր ու բարձր աստիճանի վրա, որի համար էլ իրավամբ սովետական թատերական արվեստը աշխարհում առաջին տեղն է գրավում։

Մոսկվան հանուր աշխարհին հայտնի է նաև որպես սովետական բարձրարվեստ երաժշտության խոշորագույն կենտրոն։ Մոսկվայում են կենտրոնացած սովետական ականավոր կոմպոզիտորներն ու վոկալ և գործիքային երաժշտության հանրահռչակ կատարողները։ Միության ժողովուրդների ազգային երաժշտական կադրերի պատրաստման իսկական դպրոց է հանդիսանում Մոսկվան. նա ստեղծագործական ներշնչման անսպառ աղբյուր է ներկայացնում իրենից. նա ամեն կերպ նպաստում, օժանդակում է եղբայրական ժողովուրդների ազգային երաժշտական կուլտուրայի զարգացմանը։

Խոշոր է Մոսկվայի դերը միջազգային քաղաքական կյանքում։ Մոսկվան մարմնավորում է ՍՍՌՄ-ի առաջատար դերը խաղաղության ու դեմոկրատիայի համար մղվող պայքարում՝ ընդդեմ իմպերիալիստական ռեակցիայի և պատերազմի հրձիգների։ Մոսկվայի անունը հանրածանոթ անուն է դարձել. երկրագնդի վրա գոյություն չունի ուրիշ մի այլ քաղաք, որի անունն այդչափ տարածված լինի։ Աշխարհի բոլոր մասերում հարյուրավոր լեզուներով հնչում է նրա անունը։ Մոսկվան դարձել է Սովետական Միության խորհրդանիշը, նա նույնացվում է Սովետական Միության հասկացողության հետ. երկրագնդի շատ ժողովուրդներ «Մոսկվա» բառի տակ հասկանում են Սովետական Միությունը։ Մեծ է Մոսկվայի համաշխարհային նշանակությունն ու հմայքը. նա գտնվում է ամբողջ մարդկության ուշադրության կենտրոնում, նա տեսանելի է աշխարհի բոլոր անկյուններից, նա հորիզոններ չի ճանաչում, անընդունելի է նրա հորիզոնները։ Հզոր ու վիթխարի նա հպարտորեն վեր է խոյացել երկրագնդի մեկ վեցերորդ մասի փարթամ կրծքի վրա։ Նրան են հասել իրենց սիրագորով հայացքները աշխարհի բազմամիլիոն աշխատավորները, ճնշված ու հալածված ժողովուրդները. նրանից են ակնկալում ու նրանից սպասում մարդկության փրկությունը։ Նրանք լիահույս են, որ հզոր Մոսկվան, խաղաղության ու դեմոկրատիայի այս անառիկ միջնաբերդը ի վիճակի է կանխելու համաշխարհային նոր սպանդի կազմակերպումը և սանձահարելու իմպերիալիստական նեխված մթնոլորտում սնված ու ոռվանշի մոլուցքով բռնված պատերազմի հրձիգներին։ Մոսկվային են հասել իրենց երկչոտ հայացքները նաև պրոգրեսիվ գաղափարների ամեն դույնի ու երանգի թշնամիները, իմպերիալիստական գիշատիչները, պոլլարոկրատիայի ստոր երկրպագուները, դեմոկրատիայի փետուրներով պճնազարդված ժողովրդյան թշնամիները։ Ահարեկված կոմունիզմի ուրվականից նրանք դավեր են նյութում Սովետական Միության՝ աշխարհի պրոգրեսիվ մարդկության հզոր հենարանի ու անդավաճան պաշտպանի դեմ։ Սակայն նրանց ստոր փորձերը մատնված են ձախողման. պրոգրեսիվ մարդկությունն, իր ավանգարդում ունենալով անպարտելի Սովետական Միությունը, չափչափիչ հարվածներ կհասցնի միջազգային ռեակցիայի ուժերին։ Մոսկվան կոմունիզմի դրոշը բարձր ծածանելով անվարան կերպով աշխատավորական զանգվածներին առաջնորդում է դեպի կոմունիզմի բարձունքները, դեպի մարդկության երջանկաբեր ապագան։ Նա աշխարհի մեկ վեցերորդի վրա բարձրացած վիթխարի փարոս է հանդիսանում, դեպի կոմունիզմի դաղափարները տանող ուղիները լուսավորող։

Մոսկվայի միջազգային մեծ նշանակության մասին է վկայում այն փաստը, որ նրա 800-ամյակի տոնակատարությունը չերմ արձագանք է գտել արտասահմանյան երկրներում։ Բացի ստացված ողջույնի հազարավոր հեռագրերից, նրա տոնակատարությանը մասնակցելու համար Մոսկվա էին ժամանել արտասահմանյան երեսուն պետությունների մայրաքաղաքների պատվիրակությունները։

Մոսկվայի 800-ամյակը նշվեց նաև արտասահմանյան շատ երկրներում. այդ երկրների մամուլը, ռադիոն լայնորեն նշելով պատմական նշանավոր տարեթիվը, մանրամասն տեղեկություններ էին հաղորդում 800 տարվա ընթացքում Մոսկվայի ունեցած պատմական զարգացման մասին։ Արտասահմանյան բազմաթիվ քաղաքներում Մոսկվայի 800-ամյակին նվիրված ճրեկույթներ ու ցուցահանդեսներ էին կազմակերպվել։

Մոսկվան խոշոր դեր է խաղացել հատկապես հայ ժողովրդի կյանքում։ Հայ ժողովուրդը անսահման երախտապարտ է իր հարազատ, իր փրկիչ Մոսկվային։

Ինչպես հայտնի է, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մղձավանջային օրեր ստեղծվեցին հայ բազմաչարչար ժողովրդի համար։ Նրա թուրքահայ հատվածը ենթարկվեց զանգվածային ջարդի ու տարագրման. արյան դետեր հոսեցին Հայաստանի ծաղկուն լեռնահովիտներում, հրկիզված գյուղերի ու քաղաքների հրդեհի բոցերի լեզվակները երկինքը լիզեցին։ Հայ ժողովրդի դարավոր թշնամի թուրք նվաճողները ամենայն ճշտությամբ կատարեցին գերմանացի մարդակերների մշակած ծրագիրը բազմադարյան կուլտուրայի տեր հայ ժողովրդի գլխովին բնաջնջման մասին։ Թուրքական յաթաղանից մազապուրծ ազատվածների մի մասը ապաստան գտավ Կովկասում, իսկ մի մասն էլ ցրվեց, փոշեց սփյուռքով մեկ։ Սակայն Կովկասահայ հատվածը և Կովկասում ապաստան գտած հայորդիները ևս զերծ չմնացին բնաջնջումից։ Դաշնակցական տխրահռչակ իշխանության օրերին թուրքական բանակը Կովկաս ներխուժելով արյուն ու ավեր սփռեց ամենուրեք. ահարկու վրտանգի տակ դրվեց մի բուռն հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը։ Մահվան անդունդի եզրին կանգնած հայ ժողովրդին փրկության ձեռք մեկնեց այդ օրերին միայն ու միայն ռուս մեծահոգի ու ազնիվ ժողովուրդը։ Կարմիր Մոսկվայից հնչեց փրկության այդ ձայնը։ Հայ աշխատավորությունը տապալելով դաշնակցական կառավարության անարդ լուծը, ռևոլյուցիայի ալ դրոշը պարզեց բրիլիական Մասսի ստորոտում։ Նորաստեղծ Սովետական Հայաստանի կառավարությունը եղբայրական օգնություն խնդրեց Մոսկվայից։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի հանճարեղ առաջնորդներ՝ անմահ Լենինը և մեծ Ստալինը չհապաղեցին այդ օգնությունը կազմակերպել։ Կասեցվեց թուրքական արշավանքը և հայ ժողովուրդը փրկվեց իր ֆիզիկական գոյությունը ոչնչացնող վերահաս վտանգից։

Այնուհետև սոցիալիստական ռևոլյուցիայի գլխավոր շտաբը հանդիսացող Մոսկվայի ղեկավարությամբ հայ ժողովուրդը ձեռք բերեց անկախություն, սկսեց ազատական պետական կյանքով, կերտել իր երջանիկ ապագան։ Այսօր Սովետական Հայաստանը վերածվել է ծաղկուն երկրի և սովետական ժողովուրդների եղբայրական բնականիքում իր արժանավայել տեղն է գրավում։ Տնտեսական ու կուլտուրական հզոր վերելք է տպրում ներկայումս Սովետական Հայաստանը. ծաղկում, փթթում են այստեղ գիտությունն ու արվեստը. նա վայելում է մեծագոր Սովետական Միության պաշտպանությունը ու եղբայրական ժողովրդների սերն ու համակրանքը։ Սովետական բոբբ արևի տակ միայն հայ ժողովուրդը հնարավորություն ստացավ իր դարավոր իղձերը իրականացնելու, իր հոգանիկ կյանքը կոկելու։ Հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական այս հախուռն վերելքի ողջ պատմությունը սերտորեն կապված է չքնաղ Մոսկվայի անվան հետ. արդի հայ իրականության մեջ ամենն քայլափոխում կարելի է հանդիպել Մոսկվայի ցուցարերած օժանդակությանը. մեծ ու նշանակալից է նրա ավանդը հայ նորագույն պատմության մեջ։

Հայ ժողովուրդը Մոսկվայի հետ կապված է եղել շատ վաղուցվանից. դեռևս պարսկա-թուրքական տիրապետության օրոք հայ ժողովուրդը իր հայացքը հառել է միշտ Մոսկվային, նրանից անկնկալելով իր ազատագրությունը. հայ ժողովրդի լավագույն ներկայացուցիչներն այստեղ են պաշտպանություն փնտռել պարսկա-տաճկական բռնակալների դեմ։ Մոսկվան հայ ժողովրդի կուլտուրական հնագույն օջախներից մեկը և ամենակարևորն է հանդիսացել. նա անգնահատելի դեր է խաղացել նորագույն ժամանակաշրջանի հայ կուլտուրական կյանքի զարգացման գործում. հայ գրականության, արվեստի, հասարակական կյանքի զարգացման պատմությունը շաղկապված է նրա անվան հետ։ Այստեղ՝ Մոսկվայում են հազարավոր դարձել ռուսական մեծ կուլտուրային հայ ժողովրդի զավակները, սնվել ռուս մեծ դեմոկրատների ռևոլյուցիոն-դեմոկրատական գաղափարներով։ Մոսկվան եղել է ու մնում է երկու՝ հայ և ռուս ժողովուրդների կուլտուրական կապերի կենտրոն, ինչպես նաև հայկական կուլտուրայի, գրականության, արվեստի զարգացման ազդակներից մեկը։ Հայ մտավորականության մի բանի սերունդներ իրենց կրթությունն ստացել ու շարունակում են ստանալ Մոսկվայում։ XIX դարում Մոսկվան հանդիսացել է ռուսահայ կուլտուրական վերածնման կենտրոն. անցյալ դարի 50-ական թվականներին նշանավոր հրապարակախոս Ստեփանոս Նազարյանը մեծ ռևոլյուցիոներ-դեմոկրատ Միրզայել Նալբանդյանի աշխատակցությամբ սկսում է Մոսկվայում հրատարակել «Հիսուսոփաստ» պարբերականը, որը խոշոր ազդեցություն է ունենում հայ մտավոր կյանքի վրա։ 1813 թվականին Մոսկվայում հիմնադրվում է Լազարյան ճեմարանը, որն իր հարյուրամյա գոյության ընթացքում կրթական մեծ օջախի

դեր է խաղում հայ ժողովրդի ուսանածորավ զավակների համար։ Մոսկվան հանդիսացել է նաև հրատարակչական կենտրոն. 1811 թվականից սկսած այստեղ են լույս ընծայվել բաղմաթիվ հայերեն գրքեր ու գրաշրջաններ։ Այստեղ են առաջին անգամ հայերեն լեզվով տպագրվել Պուշկինի, Լերմոնտովի (1843 թ.) երկերի թարգմանությունները։ Բաղմաթիվ ականավոր հայ գործիչներ իրենց կրթությունն ստացել են Մոսկվայի համալսարանում, Պետրովյան ակադեմիայում։ Մոսկվայում են ուսանել, աշխատել ու ականավոր դարձել XIX դարի ռուսահայ առաջատար հասարակական մտքի անվանի գործիչները՝ Ռ. Պատկանյանը, Մ. Նալբանդյանը, Ս. Նազարյանը, Ս. Շահազիզի, Ա. Մատուրյանը, Վ. Տերյանը և ուրիշներ։ Մոսկվայում, և հատկապես Լազարյան ճեմարանում են հռչակ ստացել նշանավոր գիտնականներ Մ. Էմինը, Զ. Մսերյանցը, Գ. Խալաթյանը, Կ. Կոստանյանը և ուրիշներ։ Ներկայումս մոսկովյան բաղմաթիվ կրթական հիմնարկներում հազարավոր հայ ուսանողներ են սովորում. նախկին Լազարյան ճեմարանը վերածվել է Սովետական Հայաստանի կուլտուրայի Տան, որին կից գործում են բարձր տիպի ստուդիաների— ռեժիսորական, կոմպոզիտորական, գեղանկարչական, քանդակագործական և խորեգրաֆիկ խմբերը, ուր մի քանի տասնյակ տալանդավոր հայ երիտասարդներ համապատասխան որակավորում են ստանում։ Սովետական Հայաստանի արվեստի ճակատում աշխատողներից շատ շատերը իրենց որակավորումն ստացել են Մոսկվայում. այստեղ է ստացել իր որակավորումը նաև Սովետական Միության տաղանդավոր կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը։

Եվ վերջապես Մոսկվայի անվան հետ է կապված հայ ժողովրդի տարագիր հատվածի վերադարձը իր սիրասուն Հայրենիքը— Սովետական Հայաստան։ 1945 թվի դեկտեմբերի 2-ին Մոսկվայի ռադիոկայանները ի լուր սփյուռքի հայության հաղորդեցին Սովետական Միության կառավարության որոշումը՝ սփյուռքում գրված հայերին Սովետական Հայաստան ներգաղթելու թույլտվության մասին։ Այսպիսով սկիզբ դրվեց հայ ժողովրդի ազգատավաքման, հայրենի օջախի շուրջը համախմբվելու, սովետական ծաղկուն հայրենիքում իր երջանիկ կյանքը կերտելու սրբազան գործին։

Հայ ժողովրդի օրհասական օրերին, երբ նրա կյանքը մահից էր կախված, օգնության ձեռք չկարկառեցին նրան տարիներ շարունակ բարեկամական խոստումներ անող ո՛չ Անգլիան, ո՛չ Ֆրանսիան և ո՛չ էլ Ամերիկան։ Հետագայում էլ նրանք իսպառ մոռացության մատնեցին հայ ժողովրդի արդարացի պահանջները իրենց հայրենի սրբազան հողի վրա համախմբվելու մասին։ Ու միայն Մոսկվան էր, որ օգնության ձեռք երկարեց կործանման անդնդի եզրին հասցված հայ ժողովրդին և այսօր էլ ձեռնամուխ է եղել նրա աստանդական հատվածներին իր Սովետական Հայրենիքում կենտրոնանալու համար հնարավորություններ ստեղծելու գործին։

Սփյուռքի հայությունը խորը երախտագիտական զգացմունքներով է համակված հանդեպ Սովետական մեծ Միության, հանդեպ նրա չնաշխարհիկ մայրաքաղաք Մոսկվայի։ Չնայած թշնամիների բանսարկություններին, դավերին, բանբասանքներին ու զրպարտանքներին, սփյուռքի հայությունը անվարան կերպով շարունակում է ընթանալ իր ընտրած միակ ճիշտ ու երջանկաբեր ուղիով։ Հայ ժողովրդին դեպի երջանկության դագաթները տանող այդ ուղին լուսավորված է Մոսկվայի վիթխարի ուղեցույց փարոսի կենսաշող ճառագայթներով։

Բյուր ողջո՛ւյն սպիտակափառ Արարատի ստորոտից հերոսական Մոսկվային։

Փա՜ռք հզոր Սովետական Միության պանծալի մայրաքաղաքին։



Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1812 ԹՎԻ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Հայ ժողովրդի մասնակցությունը 1812 թվի Հայրենական առաջին պատերազմին մեր պատմագրության կողմից գրեթե ուսումնասիրված չէ։ Մեր պատմագիտության մեջ տակավին բացակայում են այդ ժամանակաշրջանում պարսկա-տաճկական բռնակալ լծի տակ հեծող, ազատատենչ հայ ժողովրդի բռնած դիրքին վերաբերող ուսումնասիրությունները։ Անտարակույս, հայ ժողովուրդը, որ դարեր ի վեր բարեկամական սերտ կապեր էր ստեղծել ռուս մեծ ու ազնիվ ժողովրդի հետ, իր ազատագրությունը նրանից ակնկալելով, չէր կարող անտարբեր դրտնրվել համաշխարհային պատմական խոշոր նշանակություն ունեցող մի այնպիսի դեպքի հանդեպ, ինչպիսին էր աշխարհակալ Նապոլեոնի արշավանքը Ռուսաստանի վրա։ Հայ ժողովուրդը չէր կարող սառնասիրտ կերպով դիտել կյանքի ու մահվան այն մեծ գոտեմարտը, որ ռուս ազատասեր ու արիասիրտ ժողովուրդը մղում էր իր երկիրը ներխուժած և հոխորտանքի մոլուցքով բռնված թշնամու դեմ։ Հրդեհի բոցերով բռնված Մոսկվայի մատույցներում վճռվում էր ոչ միայն Ռուսաստանի բախտը, ռուս ժողովրդի անկախության, ինքնուրույնության խնդիրը, այլ և բազմաթիվ երկրների ու ժողովուրդների ազատության ու փրկության խնդիրը։ Ռուսաստանին էր վիճակված Նապոլեոնի աշխարհակալական ձգտումները սանձահարելը։ Եվ պիտի ասել Ռուսաստանը պատվով կատարեց ու ավարտեց այդ մեծ գործը։ Օտար զավթիչների դեմ մղվող պատերազմը համաժողովրդական լայն բնույթ էր ընդունել, ռուս հերոս ժողովուրդը եղանելով դինված պայքարի էր ելել հանուն հայրենիքի պաշտպանության. պարտիզանական ջոկատները հանգիստ ու դադար չէին տալիս թշնամու կանոնավոր զորքերին և իրենց խիզախ հարձակումներով ուժասպառ էին անում նրանց։

1812 թվի պատմական այդ օրերին աշխարհը իր հայացքը բևեռել էր Ռուսաստանում ծավալվող դեպքերին։ Հայ ժողովուրդը ևս իր սիրադորով հայացքը ուղղել էր մեծ Ռուսաստանին, որի հաղթանակը իր համար կենսական կարևոր նշանակություն ուներ։ Սուլթանական Թուրքիայի և շահական Պարսկաստանի ծանր լծի տակ տառապող հայ ժողովուրդը վաղուց ի վեր սպասում էր իր ազատագրությանը, որին հասնելու համար նա իր հույսը դրել էր միայն ու միայն մեծ Ռուսաստանի վրա, նրանից ակնկալելով իր դարավոր իղձերի ու բաղձանքների իրականացումը։

Ցանկանալով որոշ չափով օգնած լինել հայ ժողովրդի պատմությամբ զբաղվողներին, տպատության ենք հանձնում ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվում մեր կողմից հայտաբերված մի քանի փաստաթղթեր, որոնք վերաբերում են հայ ժողովրդի մասնակցությանը 1812 թվի Հայրենական առաջին պատերազմին և այդ պատերազմի հանդեպ ցուցաբերած նրա վերաբերմունքին։ Սակայն, նախքան այդ փաստաթղթերին անցնելը, մենք ցանկանում ենք մի փոքր շեղում կատարել մեր նյութից ու ծանրանալ մի քանի պատմական իրողությունների վրա, որոնք նախապատրաստել էին հայ ժողովրդի մասնակցությունը 1812 թվի Հայրենական պատերազմին։

Որ հայ ժողովուրդը իր քաղաքական իդեալների իրականացումը կապում էր մեծ Ռուսաստանի հետ, այդ մասին են վկայում դեռևս 1699 թվին Անդեղակոթում տեղի ունեցած ժողովի որոշումները, ապա Իսրա-

յել Օրիի, Ղարաբաղի մելիքների և Գանձասարի Ազուանից կաթողիկոսի խնդրագրերն ու վարած բանակցությունները ռուսաց արքունիքի հետ։ Ռուսաց կայսր Պետրոս Մեծը դեռևս 1724 թվի նոյեմբեր 10-ին հրապարակած իր հրովարտակով ստանձնել էր հայ ժողովրդի հովանավորությունը։ Ահա այդ հրովարտակի հայերեն թարգմանությունը, որը պահվում է ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվում.—

Աստուծոյ ողորմութեամբն

Մեք Պետրոս Առաջին, կայսր և ինքնակալ ամենայն Ռուսաց

և այլն, և այլն, և այլն։

Պատուականագոյն Պատրիարքին Եսայեայ, և պատուելի իշխաշոց՝ Աւանին և Միրզին և այլ ամենայն պատուելի իշխաշոց և կառավարչացն, և ամենայն պատուելի հայոց ժողովուրդեանն, Մեր կայսերական ողորմութիւն ու շնորհաւորութիւն։

Յայտնեմք ի ձեռն այսու մերով ողորմութեան գրովս, որ մեք ի ձեռն ի ձէնչ առաքեցելոյ Անտոն քահանային և քէվխայ Զալապուն, ամենախոնարհ մատուցմունքն ընկալաք, որովք և զբովանդակապէսն պատմեցեալ եղեն զխնդիրն Ձեր, որ մեք զՁեզ հանդիպած աղգաւ Ձերով ի ներքոյ մերոյ բարձրագոյն կայսերականի խնամոցն ընկալնուցումք և վասն բնակութեան և արձակ ապահով կենցաղավարութիւն Ձերոյ, մեր նոր ստացեալ պարսից յերկրի տեղեացն, որք են շուրջ ընդ Կասպիական ծովուն, զպատշաճաւոր տեղս տալն հրամայեցաք, յորում և դուք հանգիստ կենցաղավարեցէք, և զքրիստոնէական հաւատն Ձեր, առանց արգելման ըստ Ձերոյ օրէնի պաշտել կարողանայցէք, զի մեք զպատուական ժողովուրդն հայոց ի ներքոյ յատուկ ողորմութեան մերոյ ունիմք վասն որոյ մեք առ այս,-զխնդիրն Ձեր ամենայնիւ ողորմածութեամբ ընդունեցաք, և զրպիտանի հրամանս առաքեցաք ի մէջ առն մեր նոր ստացեալ պարսից երկրի կառավարիչն զի նոքա զձեզ որպէս ի Գիլան և ի Մազանդարան, նոյնպէս և ի Բաքու և կամ յայլ տեղիս, յորս ով որ ի ձէնչ յայն տեղն գալոց իցեն, ոչ թէ միայն ընկալնուցուն այլ և վասն բնակութեան և կենցաղավարութեան զպատշաճաւոր տեղիս տայցեն և ըստ ամենայնի յողորմութիւնս և ի յապահովութիւնս պահեսցեն, և զի Դուք զայս ի մեզոյ ամէն ողորմ կամացն հաւատարիմք, և մանաւանդ քաջ յուսացեալս և հաւատացեալս կարողանասցէք։ Ուստի մեր ոչ թէ միայն զայս մեր կայսերական թուղթն առ ձեզ առաքեցաք, այլ և զառաքեցեալսն ձեր զվերոյ յիշեցեալքն առ ձեզ յետս թուլլատրեցաք, որք վասն ի մերոյ առ Ձեզ ունեցեալ ողորմութիւնս բերանով զՁեզ յուսադրելոց հրաման ունին, որով Դուք զայն լի հաւատալ ունիցիք և լինիցիմք առ Ձեզ, մերով կայսերական ողորմութեամբն բարեհաճոյացեալ։

Գրեցաւ ի Սանկթ-Պետերբուրգ
ի նոյեմբերի 10, 1724 թուին*)

Բացի այս հրովարտակից, Պետրոս Մեծը իր մահվան պահին անգամ չի մոռացել իր հոգատարությունը հայերի նկատմամբ. նրա կտակի 15-րդ կետում հայերի մասին ասված է.—

«Ժ. Աշխատել միշտ ի Հայաստանէ գաղթել զհայ ժողովուրդն ի Ռուսաստան, զի նոքա են քաջ վաճառական և օգտաւէտ տէրութեանս։**)

Պետրոս Մեծից հետո հայ-ռուսական հարաբերությունների համար նոր փուլ է բացվում Եկատերինա Բ կայսրուհու օրոք։ 1761 թվին Ռուսաստան է գալիս Հովսեփ Էմինը և բանակցում ռուսաց արքունիքի հետ։ 1766 թվին Սիմեոն կաթողիկոսը հատուկ պատվիրակություն է ուղարկում Եկատերինա կայսրուհու մոտ։ 1768 թվի հունիս 30 թվակիր հրովարտակում Եկատերինա Բ կայսրուհին հետևյալն է գրում Սիմեոն կաթողիկոսին։

«... Արդ որպէս յառաջ քան զայս բարձրագոյն նախնիքն մեր և յափտենական փառացն արժանաւորք՝ մեծն Պետրոս կայսր և կայսերուհի Եկատերինէ Ալեքսանդրեան յոժարեցան պահել զպատուելի ազգս Հայոց վասն Քրիստոնէութեան առանձին շնորհօք կայսերական ողորմութեան իրեանց (զոր ցուցանեն և թուղթքն առաքեցեալք ի նոցունց յամի Տեառն 1724 և 1726։ առ Պատրիարքն այնր ժամանակաց՝ Եսայի և Ներսէս, և առ Հարիւրապետս և առ տանուտեարս և առ պ-

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ. ֆոնդ № 56, եկեղեցական բաժին, գործ № 114, էջ 7։

**) Նույն տեղ. ֆոնդ № 57, գործ № 157, էջ 116։

մեծայն պատուելի Հայկազունս)։ Նոյնպէս և մեր ընթացեալ զհետ հիշատակեալ բարձրագոյն նախնեաց մերոց հաւատարապէս շնորհեցաք որպէս գերապատիւ Սիմէոն հաստատուն պարիսարին, այնպէս և յաջորդելոցն յետ նորա յաթոռ Պատրիարքութեան, և հարիւրապետաց և տասնուակրանց և ամենայն պատուելի Հայ,կազանց՝ պահել ընդ խնամքով շնորհաց մերոյս Կայսերական ողորմութեան, որպէսզի և ազգ Հայկազանց, բնակեալք յերկրի Ռուսաց Կայսերութեան մերոյ, կալցին զդաւանութիւն իւրեանց հոգևորական կանոնօք և եկեղեցական կարգոք ընդ կարգաւորութեան նորա (այսինքն պատրիարքի)»*)։

Շարունակելով իր բանակցությունները Ռուսաց արքունիքի հետ, Սիմեոն կաթողիկոսը 1778 թվի մայիսի 14-ին մի կոնդակ էլ հղում է Մոսկվայի Պատոն արքեպիսկոպոսին, աղերսելով մոռացության չմատնել քրիստոնյա մի ժողովրդի, որը շրջապատված է մարգակերպ պատատուող դայլերով և կրում է տանջանքի զրկանքներ։

Այդ կոնդակում նա գրում է.—

«...Տաճար Սրբոյն էջմիածնի պարտաւորի աղօթել առ Աստուած զառողջութենէ և զարբեկենդանութենէ Աստուածապահ գլխոյ սիրելագոյն մօրն և գորովագութ հավանաւորի օգոստափառ կայսերուհւոյ ամենառզորմած թագուհւոյ Եկատերինա Ալեքսէէնային, նոյպէս և ամենասիրելի որդւոյ նորա, սրբոյ խաչի օգնականութեամբ ծաղկազարդելոյն անգին ժառանգի Պաւվել Պետրովիչի և բարէօրհնեալ զուգակցի նորա բարեպաշտ թագուհւոյն և մեծ իշխանուհւոյ Մարիա Ֆեօդորովնայի, այլ և բարեպաշտ և մեծ իշխան Աղեքսանդր Պաւլովիչին և ամենայն զօրաց և զօրականաց Նորա, զԱստուածահաստատ թագաւորութենէն, զաթոռոյ և զԱրքունական ժառանգութենէն Թագաւորն թագաւորաց Քրիստոս պահեսցէ զնա ի բազում ամս ընդ սիրագոյն որդւոյ նորա և ժառանգի փառաւոր յաղթաթեր ի վերայ ամենայն թշնամեաց նոցա ի փառս և ի պատիւս անուան սրբոյ խաչի Փրկչին մերոյ, ի հաստատութիւն սրբոյ եկեղեցւոյ նորա և ի փառս ամենայն հաւատացելոց ի նա ի մանաւանդ մեր հարբստահարելոցս։ Այսու ազագաւ խնդրեմ ի բարեծնունդ սիրոյ ձերմէ, զի Աստուածապատակ և մեծ Կայսերուհին ևս առատութեամբ և ողորմութեամբ առ մեզ, առ սուրբ Աթոռս և համայն եկեղեցիս մեր գերազանց ողորմութեամբ, բարեհաճութեամբ և յուսադրանօք կոչելով ի բարձրագոյնն իւր հովանաւորութիւն, և ընկալեալ իբրև դիւրս հաճեսցի պարգևել զողորմածագոյն իւր հրամանատակ. զնոյն և դուք, բարեծնունդ եղբայր մեր, մի՝ արհամարհեսջիք գործել, իսկ զմեզ դանկար և յաւուր վճռեցեալ եղբայր ձեր մի՝ տայիք մոռացման, այլ երբեմն ախորժագոյն գրով ձերով մի՝ անտես առնէք մխիթարել զմեզ իբրև զայնպիսիս՝ որ ի միջոյ մարգակերպ գայլոց պատատողաց գտանին յանգագար ծարաւածութեան և յայլ բազում նեղութիւնս։»)

Մոսկվայի Պատոն արքեպիսկոպոսը 1779 թվի ապրիլի 10-ին, ի պատասխան Սիմեոն կաթողիկոսի կոնդակի, հետևյալն է գրում.—

«...Ուրեմն որքան ևս առաւել ընդ անձն ձեր՝ պատուեալ հովութեամբ . եկեղեցւոյ Քրիստոսի, և առ ազգ Հայոց՝ որ բաց ի պատուոյ քրիստոնէականութեան, փառօք քաջութեան, ևս բարի կառավարութեան ի նախկին ժամանակս բարգաւաճեալն էր. վասն զի չէ ինձ անյայտ, թէ քանի հուլակեալք են ի պատմութեան անուանք Հայկայ, Տիգրանայ, Արշակայ և Տրդատայ, յորոց հիմնադիր էգն և փառաւորեցաւ աշխարհ Հայաստանի։ Որքան առաւել մտախոհ լինիմ զայնոցիկ ծաղկեալ ժամանակեացն Հայաստանի, այնքան առաւել զայժմեան ծառայեցուցեալն ի բարբարոսաց զրութենէ նորա կարեկցութեամբ հարուածիմ, իրաւունք Տեառն անքննին են, և ամենայն գործք նորա արդարք. բայց զի ընդ արդարութեան և բարութիւն նորա անրաժան է, ուրեմն ևս ի որոշ ի իրրև քրիստոնեայ ցանկամ ե աղօթեմ առ բարեգթածն Աստուած, զի թեթևացուսցէ և ի սպառ եղծցէ զծանրացեալ ի վերայ ձեր լուծ բանութեան, և ազգին Հայոց զարձուսցէ զնախկին փառս իւր. զվշտացեալն քրիստոնէականութիւն ուրախացուսցէ ազատութեամբ։»**)

Ղուկաս կաթողիկոսի օրոք հայ-ռուսական հարաբերությունները նոր հունի մեջ մտան։ Ռուսաստանի թեմի հայոց առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Երիտասարդուկ—Արղությանը մտերիմ կապեր ստեղծելով ռուսաց

*) Սեր Մագիստրոս Մաերեանց, Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի, 1876 թ. Մոսկուա, էջ 161—162.

*) Սեր Մագիստրոս Մաերեանց, Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի, 1876 թ. Մոսկուա, էջ 157—158։

**) Նույնը, էջ 159—160։

արքունիքի հետ, եռանդուն կերպով աշխատում էր իրականացնել հայ ժողովրդի բաղձանքը — ռուսների օժանդակությամբ Հայաստանը ազատագրել պարսկական ու թրքական ծանր լծի տակից։ Հայաստանի զանազան վայրերից, հայ ազատագրական շարժման նվիրված անձից բազմաթիվ դիմումներ էին ուղղում Արղությանին, խնդրելով նրան արագացնել այդ հրատապ հարցի լուծումը ռուսաց արքունիքում։

1777 թվին արքեպիսկոպոս Արղությանը կազմում է 18 հոդվածից բաղկացած մի դաշնագիր, որը հետագայում խմբագրվում ու լրացվում է իշխան Պոտյոմկինի և Եկատերինա Բ կայսրուհու կողմից։ Այս դաշնագրում նախատեսվում էր հայկական պետականության վերականգնումը (որպես գահակալ նկատի էր առնվում իշխան Պոտյոմկինը), նշված էր թագավորանիստ քաղաքը, Հայաստանում պահվելիք ռուսական զորքերի քանակը, նրանց Հայաստանում մնալու ժամկետը, հայկական բանակի կազմակերպման. վարժեցման ու պահպանման խնդիրները և այլն։ Ստորև բերում ենք այդ դաշնագրից երեք հոդված, որոնք փայլուն օրինակ են հանդիսանում հայ-ռուսական մեծ ու վաղեմի բարեկամության։

Ը

Տումն Հայոց ծանիցէ զկայսերութիւն Ռուսաց զիւր ազատիչ ի գերութենէ, կալով մնասցէ բարեկամ ընդ բարեկամս և թշնամի ընդ թշնամիս կայսեր, և կայսրն սիրեսցէ զբարեկամս և ատեսցէ զթշնամիս Հայոց։

Ժ

Ամենայն ոք, թէ կարգատոր և թէ զինուոր, որ ընդ հովանաւորութեամբ կայսերն է, պատուեսցի ի Հայոց ազգէն, սոյնպէս և կարգատորս և զինուորս Հայոց պատուեսցեն Ռուսք, որպէս զազգս իւրեանց առանց խորութեան։

ԺԱ

Զկերպ Աստուածապաշտութեան Ռուսաց պատուեսցին Հայք, պաշտելով յեկեղեցւոյ իւրեանց ըստ ծիսի և կրօնի Հայաստանեայց — նմանապէս արասցեն և Ռուսք։*)

Բազմաթիվ վայրերից դիմումներ էին արվում Ղուկաս կաթողիկոսին, խնդրելով ու հորդորելով վերջինիս՝ հետամուտ լինելու այդ դաշնագրի կենսագործմանը։ Հետագայում թե ինչպիսի արդելարգիր հանգամանքներ ծագեցրին այդ դաշնագրի կենսագործման դեմ, մեր խոսքի սահմաններից դուրս է, և նրանով զբաղվելը մեզ շատ հեռու կտաներ։

Էջմիածնի կաթողիկոսների վարած քաղաքականությունը դանդաղ ռուսների պատասխան է հասցրեցնում, որպեսզի պարսիկները էլ ավելի խստացնեն իրենց բռնությունները հայերի և մասնավորապես Էջմիածնի նկատմամբ։ Կ. Պոլսի հայ ամիրաներին, իշխաններին ու ժողովրդին 1798 թվին ուղղված մի գրության մեջ հիշատակվում է, որ, չնայած պարսից խաների հանդեպ Էջմիածնի վարած հեզաբարո քաղաքականության, պարսից բռնավորների ասպատակությունները վերջ ու սահման չունեն.— «Թէ որպէս հեզաբարոյ քաղաքականութեամբ վարելով ընդ բարբարոսաբանութիւն բռնակալ խաներացն պարսից... եվ յարուցմունք պարսից բռնակալաց անդադար ալեծփեն զշրջապատս Արարատեան գաւառին...»։

Այնուհետև իրար են հաջորդում ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները, որոնց հետևանքով է՛լ ավելի վատթարանում է հայ ժողովրդի, առանց այն էլ անմխիթար, վիճակը։ Այս մասին Եփրեմ կաթողիկոսի մի կոնդակում, ուղղված Հնդկաստանի վիճակի նվիրակ Փիլիպոս արքեպիսկոպոսին, կարդում ենք.— «Ճատուր նեղութեան փորձի, քանզի յայս կողմանցս յաշխարհաց թէ օսմանեան տէրութեան և թէ ի պարսից եղեալ ժողովուրդքն մեր օրհնեալք՝ թէ ի կողմանէ պատերազմաց, թէ ի յանտանելի ժանտամահէն և թէ ի սղութենէ կերելեաց՝ յո՛յժ նեղութեան միջի կան խրոշաւիցն. վասն որոյ ի նոցունց չդտանեմք յօգնութիւն, բաց միայն նախ յԱստուած ունիմք յոյս՝ և ապա յայդ կողմի օրհնեալ ժողովրդացն (եթէ և դոքա իցեն ի յաջողութեան շնորհիւ Տեառն) և կամ ի պատրաստի եղեալ դրամացն ակնկալութիւն մերէ»**)։

Այսպես էր դրությունը Հայաստանում, երբ Ռուսաստանի քաղաքական հորիզոնի վրա նոր ամպեր էին կուտակվում. Նապոլեոնը նախապատրաստվում էր արշավելու Ռուսաստանի վրա։ Հայ ժողովուրդը, չնայած իր ծանր վիճակին, ուշի ուշով հետևում

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 57, գործ № 9, էջ 17—21։

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 57, գործ № 8, էջ 8։

**) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 57, գործ № 26, էջ 8։

էր հեռավոր հորիզոնների տակ արագորեն ծավալվող իրադարձություններին։ Հայ ժողովրդի համակրանքը Ռուսաստանի կողմն էր։ Դեռ նախքան Նապոլեոնի արշավելը Ռուսաստանի վրա, 1811 թվի ապրիլի 7-ին Իզմիրից Ներսես արքեպիսկոպոսին հասցեագրված մի նամակում խոսվում է Նապոլեոնի զորքերի Իսպանիայում կատարած վայրագությունների, Ֆրանսիայի առջև խոնարհվող գերմանական թուլամորթ թագավորի և հյուսիսային առյուծի՝ Ռուսաստանի մասին։

«...Երկու ամաց հետէ սաստիկ մարտ է կալլիացւոց ընդ տէրութեան Սպանիոյ. անյուսալին Սպանիա օգնականութեամբ կամ միաւորութեամբ արքային ծովու անյաղթելւոյն Անկլոյի ի դիմի հարեալ բազում արեան ճապաղիք գործեաց. և շարաշար կոտորմամբ ի փախուստ յաճախումն հանապազորդեաց զզօրս Կալլիոյ, յամօթ կայսերն Գերմանիոյ. և մինչ ցայսօր յար ի դիմի Հարման են պատրաստական բաւական ելն սպանիացւոց կարգաւորք և կանայք մարտնչիլ ընդ թշնամիսն սպարապետօք Անկլիոյ. արիական պատերազմողք դեռ ի հեռուստ զնեն. ո՛չ ընթանան յառաջ ունին զանցս իւրեանց ամրապա՛հեալ, գայ հանապազ Կալլիայ խուռն բազմութեամբ և դառնայ մնացորդովք խայտառակ, զայս առնէ զէնն վառօքն և կառավարութիւն Անկլիոյ։

Առիւծն հիւսիսային մերձեալ մինչ ի սպառուած վերջին Եվրոպիոյ դադար առեալ ի ուռուս ճուխ այժմ ի քունէ. թէպէտ սիրտ նորա արթուն»*)։

Դիվանագիտական հարաբերությունները Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև օրեցօր լարված բնույթ էին ընդունում. Աղեքսանդր կայսրը իր քրոջն այցելելու համար նույնիսկ անկարող էր մայրաքաղաքից հեռանալ. «Մենք այստեղ,—ասում է նա,—շարունակ սպասողական վիճակումն ենք. հանգամանքներն այնպես սուր են, ամեն ինչ այնպես լարված է, որ բոպե առ բոպե կարող են պատերազմական գործողությունները սկսվել։ Ինձ համար անկարելի է հեռանալ իմ վարչության և իմ գործունեության կենտրոնից։ Ես պետք է սպասեմ ավելի բարենպաստ մոմենտի և կամ պատերազմը բոլորովին կխանգարի ինձ»**)։

1812 թվի մայիսի 22-ին Բուխարեստում հաշտություն է կնքվում Ռուսաստանի և Թուրքիայի միջև՝ Ռուսաստանի համար բավականաչափ նպաստավոր պայմաններով։ Ռուսաստանի կողմից հաշտության բանակցությունները վարում էր ականավոր զորավար Կուտուզովը։ Այսպիսով դադարում է ռուս-թուրքական վեցամյա պատերազմը և ռուսական Դանուբյան բանակի համար հնարավորություններ են ստեղծվում Հայրենական պատերազմին մասնակցելու համար։

Ռուսաստանն իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել էր Նապոլեոնի սպասվող մոտալուտ արշավանքի վրա և բնականաբար չէր կարող առաջվա պես զբաղվել Կովկասյան գործերով։ Կովկասի ժամանակավոր կառավարչապետ նշանակված Մարքիզ Պաուլուչը չափազանց թույլ մարդ էր և անկարող երկիրը ղեկավարելու. դրա համար էլ Կովկասում Նապոլեոնի գործակալներն ու լրտեսները պարարտ հող էին գտնում՝ կովկասյան ժողովուրդներին Ռուսաստանի դեմ դրդռելու, ապստամբություններ կազմակերպելու, խռովություններ սերմանելու համար։ Նապոլեոնի գործակալները վխտում էին նաև Պարսկաստանում, Թուրքիայում ու բազմաթիվ այլ երկրներում։ Սակայն, ի պատիվ հայ ժողովրդի, պիտի ասել, որ նա թե՛ Թուրքիայում, թե՛ Պարսկաստանում և թե՛ մանավանդ Կովկասում անդրդվելի մնաց ռուսների հանդեպ ունեցած իր բարեկամական հարաբերությունների մեջ։ Կովկասի հայերը Ռուսաստանի մեծ փորձության տարիներին անդավաճան կերպով շարունակեցին իրենց ընտրած ուղին, նրանք ցուցաբերեցին մեծ անձնազոհություն ու հավատարմություն. իրենց կյանքը վտանգի տակ դնելով նրանք մեծամեծ զոհողություններ գնով Կովկասում անհրաժեշտ աջակցություն ու օժանդակություն ցույց տվին ռուսներին։

1812 թվականի Հայրենական պատերազմի օրերին հայ ժողովրդի ցուցաբերած հավատարմության մասին գոյություն ունի Կովկասի նոր կառավարչապետ Ռտիշչևի վկայությունը։ Վերջինս իր 1813 թվի մայիսի 13-ին կայսեր ուղարկած զեկուցագրում հետևյալն է գրում այդ մասին.— «...Հայոց ազգը, որ Վրաստանի ազգաբնակչության մի նշանավոր մասն է կազմում, ոգևորված ամենահաստատամտական հպատակության գոհությամբ այն բարձր հովանավորության և անճառելի ողորմածության համար, որ Ձերդ Կայսերական Մեծությունից թափվում էն այս ամբողջ ազգի վրայ, կայ և մնում է օրինակելի չերմեռանդությամբ և անվրդով

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 67, գործ № 22, էջ 6։

**) Ե. Տարլե, Նապոլեոնի արշավանքը Ռուսաստան 1812 թվին, 1939 թ. Երևան, էջ 30։

հաւատարմութեամբ առ կայսրութիւնն Ռուսաց։ Այն ժամանակից ի վեր, երբ հաստատվել է երկրիս մէջ ռուսական կառավարութիւնը, հայոց համայնքը միշտ օրինակելի կերպիւ հաւատարիմ է գտնուել դէպի նրան... Կառավարութիւնը հայերի մէջ միշտ գտել է հաւատարմութիւն, որ ոչինչ հրապուրանքներով խախտուել կարող չէր և տեսել է շարունակ ջերմեռանդ ծառայութիւն Ձերդ Մեծութեան։

Չեմ կարող նմանապէս չզեկուցանել Ձերդ Կայսերական Մեծութեան, որ Թիֆլիզի պատուաւոր քաղաքացիք, որոնք հայք են, երբ անցեալ տարուայ Վրաստանում եղած հացի պակասութեան պատճառաւ դադարած էին Թիֆլիզ հաց բերել և այստեղ գտնուող մեր զորքերին հացի պակասութիւն էր սպառնում, նոքա (Թիֆլիզի հայք) այն ժամանակների հանգամանքների վերաբերմամբ շատ մեծ ծառայութիւն ցոյց տուին, յանձն առնելով հասցնել Թիֆլիզի մթերանոցին մոտ 800 չէթուէրթ (5.600 փութ) հաց, որ և կատարեցին պետական գանձարանի համար շատ ձեռնտու պայմաններով, և այսպէս՝ մի առ ժամանակ ազատ պահեցին Թիֆլիզում գտնուող զորքերը հացի պակասութիւնից։ Բարձրագոյն բարեհաճութեամբ ինձ յանձնարարած բոլոր գործերում ուղիղ ունենալով ինձ որպէսզի ճշմարտութիւնը, ես հաստատուն պարտք անձինս ես համարում հասցնել Ձեր բարձրագոյն լսելեաց վրաստանաբնակ հայերի այդպիսի պատուական ջերմեռանդութիւնը. հաւատարմութիւնը և անձնուիրութիւնը առ Ձերդ Մեծութիւն։ Հաւատացած լինելով, թէ նոցա որևէ քաջալերութիւն ցոյց տալով աւելի ևս նշանաւոր օգուտներ պիտի լինի թէ (պետական) ծառայութեան և թէ երկրիս գործերի համար, նաև պիտի երկնապատկէ նոցա ջերմեռանդութիւնը և նոյնիսկ վրացի ազգերի մէջ էլ մրցումն յառաջացնէ, ես դիմում եմ Ձերդ Կայսերական Մեծութեան սրտի յատուկ ողորմածասիրութեան, ամենահպատակաբէն խնդրելով բախտաւորացնել վրաստանաբնակ բոլոր հայոցը Ձերդ Մեծութեան բարձրագոյն շնորհակալութեամբ, որ արտայայտուած լինի յանուն այս համայնքի տուած հրովարտակի մէջ»*)։

Աղեքսանդր կայսրը չի հապաղում խնդրված հրովարտակը տալու. ստորև բերում ենք այդ հրովարտակը.—

Աստուածային ողորմութեամբ
Մեք Աղեքսանդր Առաջին
Կայսր և ինքնակալ Համայն Ռուսաց
Եվ այլն, և այլն, և այլն։

Համօրէն սիրեցեալ և հաւատարիմ հպատակ Մեզ ազգին Հայոց, բնակելոց ի Վրաստան և ամենայն վիճակի անձանց, որք բաղկացուցանեն զայն Մերս Կայսերական ողորմութիւն։

Ճշմարիտ բաւականութեամբ տեսաք Մեք ի յայտարարութենէ գլխաւոր Հրամանատարին Մերոյ որ ի Վրաստան զախորժելին սրտի Մերոյ զնոր վկայութիւն այնոցիկ զգացմանց հաւատարիմ հպատակական գոհունակութեան, որովք բոլոր հասարակութիւնք Հայոց ի Վրաստան բնակելոց միշտ նկեալ են ոգևորեալ առ բարձր հովանաւորութիւն և առ Հայրական հոգատարութիւն Մեր զբարեբաղձութենէ նոցին և համօրէն ժողովրդեան այնր կողման։ Նոքա ապացուցեալ են զայսոսիկ զգացմունս ի բազմատեսակ փորձս հաստատուն հաւատարմութեան յամենայն դիպուածս։

Նոքա հանդիսացուցին զանձինս օրինակելի հաստատութեամբ և անձնընծայութեամբ յայնժամ, երբ թեթևամտութիւնն և չարակամութիւն ի նոսին չանային սասանեցուցանել զհաստատունն ի մէջս խաղաղութիւն ի Վրաստան, և ի միջի խռովայոյզ հանգամանաց կացին մնացին հաստատուն և անսասան ի ջերմեռանդութեան իւրեանց առ Մեզ և առ գահն Մեր, զոհելով զստացուածս իւրեանց և զամենայն միջոցս, նաև իսկ զկեանս իւրեանց յօգուտ Մերս ծառայութեան և ի բարօրութիւն հասարակաց։ Այս օրինակ ջերմեռանդութիւն բովանդակ Հայազգեաց Վրաստանու և ամենայն վիճակի անձանց սոյն ազգի, ծառայութիւնք և մեծագործութիւնք նոցա զնեն ի վերայ Մեր զախորժելի պարտաւորութիւն վկայել առաջի ընդհանուր տիեզերաց զՄերս առ նոսա արդարացի գոհունակութիւն և բարեհաճութիւն։ Պահեսցի այս վկայութիւն ի պատիւ և ի փառս նոցա ի յիշատակս սերնդոց։

Մնամք առ նոսա ամենեսին Մերս Կայսերական ողորմութեամբ բարեհաճ։

———

*) Ա. Երիցեանց, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, Ա մասն, 1894 թ. Թիֆլիզ, էջ 63—65։

Տուաւ ի գլխաւոր բանակի Մերում ի քաղաքն Տեպլից, որ ի Բոհեմիայ, ի 15 սեպտեմբերի յամի ի Մենդենէ Քրիստոսի 1813, և Մերս թագաւորութեան ի տասն և երեք։

Ի բնագրին իսկական ձեռամբ Նորին Կայսերական Մեծութիւնն ստորագրեալ է՝

ԱՂԵՔՍԱՆԴԻՐ

(Վավերացնել է թագաւորական կանց լեր գրաֆ Ռումիանցև*)

1812 թվի հունիսի 24-ի գիշերը Նապոլեոնը հրաման արձակեց իր բանակներին, անցնելու Նեման գետը։ Այսպես սկսվեց Հայրենական առաջին պատերազմը։

16 այլացեղ ժողովուրդներ, որոնք առաջադիմում էին Նապոլեոնի երկաթե կրնկի տակ, պատերազմի նետվեցին Ռուսաստանի դեմ։ Նապոլեոնը հույս ուներ շտապ կարճ ժամանակամիջոցում ավարտել Ռուսաստանի նվաճումը։ Սակայն, նա չարաչար սխալվեց իր խելահեղ հաշիվներում։ Անձայրածիր Ռուսաստանի ժողովուրդը հանուն հայրենիքի պաշտպանության ոտքի ելավ հայրենիքի սրբազան հողը օտարերկրյա զավթիչներից իր կրծքով պաշտպանելու համար։

Հայրենական առաջին պատերազմի օրերին, ինչպես հայտնի է, հայ ժողովուրդը ընկվում էր երեք պետությունների սահմաններում։ Հայ ժողովրդի գերակշռող մեծամասնությունը գտնվելով պարսկա-թուրքական դաժան լծի տակ, հնարավորություն չուներ բացահայտ կերպով եղբայրական օգնության ձեռք մեկնելու իր հյուսիսային մեծ բարեկամին՝ ռուս ժողովրդին։ Վաղուց Ռուսաստան ներքաշված ու այնտեղ պատսպարան գտած հայերը ռուս բարեկամ ժողովրդի հետ միասին մասնակցեցին պատերազմին, ինչպես տեսանք վերը բերած փաստաթղթերից։ Ռուսների ձեռքով տակավին դեռ նոր աղատագրված Կովկասի հայք ևս իրենց օժանդակությունը ցույց տվին։

Հայ ժողովրդի քաջարի ոգիներն իրենց ռուս եղբայրների հետ կողք կողքի Հայրենական պատերազմի ռազմաճակատներում կռվեցին Ռուսաստան ներխուժած օտարերկրյա զավթիչների դեմ։ Այդ պատերազմին մասնակից մի շարք հայ մարտիկներ տաղանդավոր զորավարների անուն վաստակեցին, անմահ փառապսակ հյուսելով թե իրենց և թե հայ ժողովրդի համար։ Հետևորդ սերունդները երախտագիտության ու հպարտության մի առանձին զգացմունքով են միշտ հիշում պատմության ոսկե էջերում առհավետ գրաված նրանց անմահ անունները, որպես հայ—ռուսական բարեկամության խիզախ մարտիկների։ Հիշենք դրանցից մի քանիսների անունները— Ղարաբաղի սիգապանծ լեռների զավակ գեներալ Մադաթովը, որը ռուսական երրորդ բանակի առաջապահ զորամասերի հրամանատար էր և մարտեր էր վարում Նապոլեոնի զորքերի դեմ Լուցկ ու Բրեստ քաղաքների շրջաններում։ Պատերազմի ընթացքում բարձր հրամանատարության կարգադրությամբ Մադաթովի զորամասերը թշնամու իսորը թիկունքում պարտիզանական կռիվներ մղելու և թիկունքը կազմալուծելու համար փոխադրվում են Վարշավայի շրջանը։ Մադաթովի զորամասերը փայլուն կերպով կատարելով բարձր հրամանատարության այդ առաջադրանքը 1812—1813 թ. թ. ձմռանը ծանր կորուստներ են պատճառում թշնամու նահանջող, ցախցախված բանակների մնացորդներին։ 1813 թվի հոկտեմբերին Մադաթովը մասնակցում է Լայպցիգի հռչակավոր ճակատամարտին և վիրավորվելով, մինչև մարտի վերջը չի թողնում ռազմի դաշտը։ Իսկ 1814 թվին ռուսական հաղթական բանակի հետ միասին Մադաթովը մտնում է Փարիզ։

Գեներալ Դավիթ Դելյանովը մասնակցել է Հայրենական պատերազմի ընթացքում մղված գրեթե բոլոր ճակատամարտերին, որոնց թվում Բորոդինոյի հռչակավոր ճակատամարտին։ Նա ևս ռուսական զորքերի հետ մտել է Փարիզ։ Սրա եղբայր մայոր Դելյանովը նույնպես մասնակցել է Բորոդինոյի ճակատամարտին։

Գեներալ Դավիթ Արա-Մելիքը, մի շարք ճակատամարտերի մասնակցելով, նույնպես Փարիզ է մտել ռուսական զորամասերի հետ միասին։ Իսկ հրեատաու գեներալ Հովհաննես Արա-Մելիքը մասնակցել է Բորոդինոյի ու Լայպցիգի ճակատամարտերին։

Գեներալ Պավել Մելիքովը մասնակցել է մի շարք ճակատամարտերի, որոնցից մեկում կորցրել է իր աջ ձեռքը։

1812—1814 թ. թ. պատերազմական ամբողջ կամպանիային մասնակցել է մայոր (հետագայում գեներալ) Լազար Հովակիմի Լազարյանը։ Խիզախ Տելյան եղբայրներից մեկը մասնակցել է Բորոդինոյի ճակատամարտին, իսկ մյուսը մահ գտել Վիտեբսկի

---

*) 2000 Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 57, գործ № 139, էջ 7։

տակ տեղի ունեցած ճակատամարտում։ Բազմաթիվ ճակատամարտերի է մասնակցել փոխգնդապետ Ավետ Խրիստաֆորովի։ Ռոմանովը, ինչպես նաև ադյուտանտ (հետագայում գեներալ) Բարսեղ Հովակիմի Բեյբությանը, Լեյբ-գվարդիայի գուսարական գնդի շտաբ-օֆիցեր, 22 տարեկան Հարութիւն Լազարյանը մասնակցել է քառասուն ճակատամարտի, աչքի ընկել իր խիզախությամբ ու արիաբար զոհվել Լայպցիգի ճակատամարտում։

Հայրենական առաջին պատերազմին մասնակցել են նաև գվարդիական սպաներ Գասպարյան եղբայրները, գվարդիական ռոտմիստրներ Արա-Մելիք եղբայրները, սպաներ Լալայանը, Հայրապետյանը, Սմբատյանը, մոլդավահայ գեներալ Միրզոյան Մանուկ պիյը, ռոտմիստրներ Գալստյանը, Դելյանովը և բազմաթիվ այլ անձինք։

Հայ ժողովրդի մասնակցությունը 1812 թվի առաջին հայրենական պատերազմին պատահական բնույթ չի կրում. հայ մարտիկների հանդես գալը ռուսական բանակի շարքերում ունի իր հնադարյան պատմությունը. դեռևս 11-րդ դարի կիսերին, 1062 թվին Կիևի ռուսական իշխանության վարած պատերազմական գործողություններին մասնակցում էր հայկական մի զորամաս. 1410 թվականին Գրյունվալդի նշանավոր ճակատամարտին մասնակցեցին հայկական երկու գնդեր, որոնք ռուսական, լեհ-լիտվական և չեխական զորքերի հետ միասին չախչախել հարվածներ հասցրին տևտոն ասպետների ավազակային բանակներին։ 1720-ական թվականներին Պետրոս Մեծի զորքերի մեջ էր մտնում հայկական մի զորամաս՝ հայազգի գեներալներ Եղիազար Քրիստափորյանի և Հովհաննես Յուզբաշյանի հրամանատարությամբ։ Ռուս մեծ զորավար Ա. Վ. Սուվորովի անմիջական ղեկավարությամբ ռուսական զորքերի շարքերում մարտնչում էին խիզախ, բազմաթիվ շքանշաններով պարգևատրված հայ ռազմիկներ Մանյանը, որը Իտալիայի բերդի գրավման պահին ընկավ հերոսաբար, Լալայանը և Հաստատյանը (հետագայում գեներալ)։ 1780-ական թվականներին իշխան Պոտյոմկինի գլխավորած բանակումն էր աշխատում գեներալ Ա. Լազարյանը։ 18-րդ դարի վերջերում ռուսական բանակում նշանավոր դեմքեր էին հանդիսանում Հարութիւն Արարատյանը, Վահանովը և ուրիշները։ 19-րդ դարի սկզբներին ռուսական բանակի շարքերում Հակոբ և Վանի Աթաբեկյանների ղեկավարությամբ հանդես եկան առաջին հայ կամավորական խմբերը։ Պավել կայսեր ժամանակ հայտնի էին ընդհանուր զորապետ Քուզանյանը, Արապետյան երկու եղբայրները, հեծելազորի զորապետ Մանուչարյան երկու եղբայրները և այլն, եվ այսպիսի շատ օրինակներ կարելի է բերել։*)

1812 թվի հայրենական պատերազմին իրենց մասնակցությունն են բերել նաև Բեսարաբիայի և Մոլդավիայի հայերը. սակայն այս մասին տարաբախտաբար քիչ տեղեկություններ են պահպանվել։ Պահպանվել է թեմի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսի 1817 թվի հունիս 2 թվակիր նամակը՝ ուղղված Եփրեմ կաթողիկոսին։ Այս նամակում նա համառոտակի տեղեկություններ է հաղորդում իր թեմի մասին, գլխավորապես կանգ առնելով Բեսարաբիայի նոր կառավարչապետ գեներալ Պահմետովի հայերի նկատմամբ ունեցած սիրալիր վերաբերմունքի վրա։ Նամակում հայտնում է, որ Պահմետովը օրենքներ է մշակել Բեսարաբիայում բնակվող ժողովուրդների համար ու օրենսդրքում մեծ գովեստներով է արտահայտվել հայերի մասին. «...եվ այս աւուրքս ժողով արարեալ բոլոր ազնուականաց, ընթերցաւ գիրքն այն ի լսելիս ամենեցուն, և մինչ էհաս բանն յաղագս ազգիս Հայոց, այնքան մեծ գովասանութիւն գրեալ էր վասն նոցա, մինչև ամենայն մօլտովանք հարկեցան նախանձու մահուան քրտունս երեսաց իջուցանել...**)։

Նամակից իմանում ենք, որ գեներալ Պահմետովը մասնակցել է հայրենական պատերազմին և զրկվել իր աջ ոտքից։ Չնայած նամակում չի խոսվում թե ի՞նչ առիթով է նա հայերին գովասանել, սակայն հավանական է, որ Պահմետովը ի նկատի առած լինի հայերի մասնակցությունը հայրենական պատերազմին։ Գրիգոր արքեպիսկոպոսը խնդրում է կաթողիկոսին Պահմետովի անունով օրհնության ու շնորհակալության կոնդակ հղել. «...ի ծունկս անկեալ աղաչեմ զարքազնասրբութիւն տէրութեանդ յատուկ շնորհակալական կոնդակ օրհնութեան առաքել աւ սա...»***)։

---

*) Ռուսական բանակում աչքի ընկած հայ դիվերսանտների մասին տես Մ. Ներսիսյան, «Հայերի մասնակցությունը 1812 թվականի հայրենական պատերազմին», «Սովետական Հայաստան» օրաթերթ, № 6455 և «Բազմավէպ», 1843 թ., թիւ 22, էջ 349։

**) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 57, գործ № 43, էջ 81—82։

***) Նույնը։

Սույն նամակում խնդրում է նաև օրհնության ու շնորհավորական կոնդակներ հղել Քիշինևի երկու հայ պետական աստիճանավորների անունով—դրանցից մեկը հայրենական պատերազմի մասնակից փոխգնդապետ Ավետ Երիստաֆորովիչ Թումանովը էր, որին ինչպես երևում է ծանոթ պետք է լիներ նաև Եփրեմ կաթողիկոսը՝ Ռուսաստանի թեմի առաջնորդ եղած ժամանակը. «Ցուսամ դուք ղսա տեսնալ իցէք ի տան հօրեղբօրն Պաւել Պետրովիչ Թումանովի ի Գրիգորիոպոլ, ի Պետերբուրգ*)։ Դժբախտաբար չի խոսում Թումանովի պատերազմին մասնակցած լինելու մասին, այլ թվում է նրա ստացած մոտ երկու տասնյակ շքանշանները։

Երկրորդը գեներալ Միրզոյան Մանուկ պեյն էր, որը մեծ ծառայություններ էր մատուցել ռուսներին Բուխարեստի հաշտության ժամանակ և հետո էլ ռուսական հպատակություն ընդունելով արժանացել էր գեներալի կոչման ու մեծ պարգևների։ Գրիգոր արքեպիսկոպոսը խնդրում է կոնդակ ուղարկել Մանուկ պեյին ավասն նոր կայսերապարգև ներալական աստիճանին, վասն ողջանդամ ընտանիս տեսանելոյ, վասն գիտղորայս առնելոյ ի Պեսարապիոյ և վասն հպատակ լինելոյ ողորմած Կայսերս Ռուսացն**)։ Նամակում որոշակի չի խոսվում հայրենական պատերազմին Մանուկ պեյի մասնակցելու մասին, սակայն, այն ակնարկից, որ նա ողջանդամ վերադարձել է իր տունը, պիտի ենթադրել, թե Մանուկ պեյը նա մասնակցել է այդ պատերազմին, արժանանալով ոչ միայն գեներալի կոչման, այլ և պարգևատրվելով մի շարք կալվածքներով Բեսարաբիայում։ Մանուկ պեյի մասին պահպանված մի այլ փաստաթղթից իմանում ենք, որ «Մանուկ պեյ Միրզոյեան մեծահռչակ իշխան ի Ռուսչուք քաղաքէ Մոլտավիոյ անցեալ ի Ռուսաստան միջնորդ եղև ընդ մէջ ռուսաց և օսմանեանց ի հաշտութեանն Պուքրեշի, և ապա վերաբնակելով ի Հնչեշտ գիւղաքաղաքի Բեսարապիոյ՝ պատուեցաւ յոյժ յԱ Աղեքսանդր կայսրէ Ռուսաց...»*)։

Մանուկ պեյի մասին հիշատակություն կա նաև «Բազմավէպ»-ի 1843 թվի թիվ 22-ում. թվելով ռուսական բանակում աչքի ընկած հայազգի զորավարների անունները, «Բազմավէպ»-ը գրում է. «Աղեքսանդր Ա կայսեր ժամանակը խիստ անուանի եղան Միրզոյեան Մանուկ պեյ քաջ իշխանը...»**)։ Եվ թվում է այնուհետև մյուսների անունները։

Ողբերգական է եղել Մանուկ պեյի վախճանը։ Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսի նամակը դեռ կաթողիկոսին չհասած, անակնկալ կերպով մահանում է նա. այս մասին իմանում ենք դարձյալ Գրիգոր արքեպիսկոպոսի մի նամակից, որը նա գրել է հունիսի 23-ին իր բարեկամ ոմն աղա Դանիել Թորոսին։

1817 թվի հունիսի 20-ին գլխավոր հրամանատար գրաֆ Բենիգսենը, Պահմետովը ու այլ բարձրաստիճան անձինք հյուր են գալիս Մանուկ պեյին։ Ճաշից առաջ գեներալներից մեկը ցանկություն է հայտնում տեսնել արաբական նժույգների խաղը. Մանուկ պեյը հրամայում է ախոռապետին խաղացնել նժույգը, սակայն նկատելով, որ ախոռապետը չի կարողանում երիվարը խաղացնել, իջեցնում է նրան ու ինքը հեծնում. այս ու այն կողմ քշելուց հետո Մանուկ պեյը երբ իջնում է երիվարից, ուշաթափ ընկնում է աստիճանների վրա և նույն երեկոյան էլ մահանում։ Ստորև բերում ենք Գրիգոր արքեպիսկոպոսի այդ նամակը.—

Գերազնիւ աղա Դանիէլ Թորոսին

Իմ սիրեցեալ բարեկամ

Ամսոյս 19-ին հրաման ի Նորին Կայսերական մեծութենէ ընկալեալ մեր պայծառ Մանուկ պեյն վասն քաղաքաշինութեան մեծ ուրախութիւն ունէր ի սրտի, և ընդ այնմ մինչ լուեալ էր թէ գոլովնիգոմանտուուշչի գրաֆ Պենիքսօնն հանդերձեալ է մերձ նորին գիւղովքն անցանելոյ, մեծահանդէս պատրաստութիւնս տեսանէր ընկալման ղնա, գրեալ էր և առ մեզ, թէ փութացուք երթալ անդր, զի մի՛ ամաչեսցուք ասէ յառաջի այսպիսի հիւրից, բայց իմ հիւանդագին և ի մահճի գոլոյն չկարելով երթալ, պատասխանեցի ցուցիս, որ չկարեմք հաղորդ լինիլ այնմ խրախճանութեանց։ Ուստի ամսոյս 20-ին ընդլուռաջ ելեալ գրաֆ Պենիքսօնին, Ռուզնիշին և Պահմետովին, բերեալ է ի տուն իւր արժանաւոր յարգմամբ։ Եվ յետ քանի

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 57, գործ № 45, էջ 81—83։

**) Նույնը։

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 57, գործ № 9, էջ 59։

**) «Բազմավէպ» 1843, թիվ 22, էջ 350։

ժամու մինչ պատրաստելեն կերակուրն տալ, ասացեալ է եներալ ոմն Մանուկ պեյին, թէ կարելի՞ է որ այդ արապի ձիանքն խաղացուցեն ըստ իւրեանց թալիմի, և Մանուկ պեյն հրամայեալ է ամիլախորի իւրում և մինչ տեսեալ է թէ ոչ կարէ արժանաւորապէս խաղացուցանել զերիվարսն, իշուցեալ է զնա և ինքն նստեալ, և քանիցս անգամ ի յայս կոյս և այն կոյս խաղացուցանելն երիվարին իշեալ է երիվարէն և իսկոյն յուշաթափ անկեալ ի վերայ աստիճանացն և իսկոյն եներալք յափշտակեալ, տարեալ են ի ներս և եդեալ ի վերայ տիւանի, ջուր ցանեալ երեսացն արթնացուցել են, որ և խնդրել է ջուր խմելոյ, և ասացեալ է թէ հարկ է իւր արիւն թողուլ, բայց ի յայնմ պահու չէ գտանեցեալ անդ ոչ իւր բժիշկն և ոչ գրաֆի, վասնորոյ մինչև քաղաքէն բժիշկ հասցանելն ումներորդ ժամու գիշերոյն աւանդեալ է զհոգին իւր առ Աստուած ի ներկայութեան բազմութեան իշխանաց, վասնորոյ ահա այսպէս պակասեցաւ յառաջարկութիւն և պատմութիւն Մանուկ պեյի։ Արդարև արդեամբը չունէր մէկ ստակի օգուտ, սակայն անուամբ և պատուով մեծ յոյժ վասն ազգի և եկեղեցւոյ, վասնորոյ զմնացել մատաղաւորունի յիշատակս պահեալ զօրացուցէ տէր զհոգին լուսաւորելով ի մխիթարութիւն յազգի։

Այսօր ի ներկայութեան բազմութեան իշխանաց ամենայն յազգաց, և՞ ինքեան իսկ դրաֆ Պենիքսօնի ամփոփեցաք զմարմինն մերձ յեկեղեցւոյ դրան սուրբ Աստուածածնի։ Ամենայն իշխանաւոր եղբարց ձերոց կարօտական զողջոյն նուիրելով մնամ վասն ձեր ազօթարար խոնարհ

Գրիգոր արքեպիսկոպոս Պ. Հայոց

յունիսի 23
1817
ի Քիշնով*)

Սույն նամակը ուղարկված է եղել Ռուսաստանի թեմի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսին, իսկ վերջինս էլ ուղարկել է այն Ներսես արքեպիսկոպոսին՝ իր կողմից հետևյալ բառերն ավելացնելով. «Ահա ապաբախտութիւն ազգի, որ արնպիսի հոյակապ իշխանէ գտաք զրկեցեալ»**)։

Թե ինչպիսի բարոյական ու նյութական օժանդակություն է ցույց տվել հայ ժողովուրդը Նապոլեոնի դեմ ռուսների վարած պատերազմի օրերին և պատերազմից հետո էլ ինչ մասնակցություն է ունեցել երկրի վերաշինման գործին, հայ պատմագրության կողմից տակավին լուսաբանված չէ։ Արխիվային նյութերի մեջ թռուցիկ ակնարկներ կան այն մասին, որ հայերը անմասն չեն մնացել երկրի վերաշինման գործում ու իրենց լման են ներդրել, արժանանալով շնորհակալության։ Այս տեսակետից որոշ հետաքրքրություն է ներկայացնում Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսի մի նամակը, գրված 1814 թվի սեպտեմբերի 2-ին և հասցեագրված Ներսես արքեպիսկոպոսին։

«Ի 15 ամսոյս յաղագս նորահաստատ տպարանին կայսերականի, որ ի Ս. Պետերբուրգ կոմիդէթին մեծ ժողով արար՝ որում էին դասք հոգևորաց և մարմնաւորաց, սրբազան արհեաց և դասք աւագ քահանայից և բնափն պատուելի մինիստրաց և բաւական աստիճանաւորաց, ազնուհեաց և գերազանցահեաց և այլոց, որում նախագահք էին սրբազան մետրոպոլիտն Ամբրոսիոս և մայծառափայլ կնեազ Ղալիցինն, հրաւիրեցաք և մեք առ այն ժողով հանդերձ մերովքն հոգևորականօք։ Գո՜հ եմ, գո՜հ եմ ի Տեառնէ, որ ի մէջ այնքանաց ազանց և դասուց վեհագունից զանուն ազգիս հայոց յատկապէս փայլեցաւ, հայեցեալ զգումար նուիրանաց և անհարստութեան ազգի և սակաւութեան ժողովրդականացս առ համեմատութեամբ ազգացն ռուսաց և միւսոց և աստուածապարգև հարստութեանց նոցին՝ մատուցին զշնորհակալութիւնս բազումս ի յազգէս մերմէ ի հոգևորականաց և ի մարմնաւորականաց և յատկապէս սրբազան մետրոպոլիտն և նորին պայծառափայլութիւն և այլք բազումք։ Քանզի իւրաքանչիւրոյ անձին և ազգի նուէր, որ ի կարեկցութիւն տպարանին, ի պարզ տօմարի յատկացեալ յիշատակի քաղում շնորհակալութեամբ առ յատեանն մեծի ինքնակալին ամենայն ամք մանաւանդ ի ժողովս կոմիդէթին։ Եվ սոյն այս յիշատակեալ նուէր՝ է, որ շարժեալ ի բարեսէր կամաց մատուցանէ միանգամայն զգումարս նուիրանաց և գրեալ ի ժուռնալի

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ. ֆոնդ № 57, գործ № 50, էջ 70։

**) Նույնը։

անդ յիշատակի շնորհակալութեամբ։ Արդ մինչ սոքա յառաջարկութիւն հասին առ մեզ՝ պարտաւոր զմեզ համարելով՝ առ յարգանս բարձրագոյն հրամանի ի յառաջարկութեան յետնեալ ածաք, ի ձեռս ի յանուն տպարանին, ի հոգևորականաց և ի մարմնաւորականաց ազգիս մերում գումարս իբր 23.000 ռուպլիս և այլ աւելի բայց կարի աշխատակցութեամբ»*)։

Հայրենական առաջին պատերազմին իր մասնակցությունն է բերել նաև հայ հոգևորականությունը։ Հայ հոգևորականները թե եկեղեցական արարողությունների և թե ժողովրդի մեջ շրջագայելու ընթացքում տնրնդհատ հորդորել, հուսադրել, հավատ ու եռանդ են ներշնչել ռուսական զենքի հաղթանակի նկատմամբ։ Այս տեսակետից հետաքրքրական է Մանվել վարդապետի (կարծում ենք, որ սա պիտք է լինի Մանվել վարդապետ Գյումուշխանեցին.—Գ. Հ.) մի հրամանագիրը, ուղղված Գրիգորիոպոլի հոգևոր կառավարչությանը։ Նա առաջարկում է քաղաքի երկու հայ եկեղեցիներում առավոտ երեկո ջերմեռանդությամբ աղոթել ամենաողորմած կայսեր հաջողության և թշնամու կորագլուխ պարտության համար։ Ահա այդ հրամանագիրը.—

Յաւորդ Մանուել վարդապետէ հրաման
Հոգևոր կառավարութեան Գրիգորիոպոլու

Յունիսի 26 և յուլիսի 7 դլեցիալն ձեր ստացեալ ամսոյս 25 զբարեօք կառավարութեանց միամտեցուցանէք զմեզ՝ յորում պարտիք միշտ զգուշ լինել. այսմ ժամանակի ամենեցուն մեր պարտաւորութիւն է ըստ կարեաց մերոյ ջերմեռանդ սրտիւ աղօթող լինիլ վասն յաջողութեան և զօրութեան նորին Կայսերական Մեծութեան, վասն հրամայեմ, երկու եկեղեցին տեղւոյդ երեկոյ յառաւօտ ջերմեռանդութեամբ և ծանուցմամբ տէր ողորմեա՝ ասասչիք, որով յաջողեսցէ ամենազօրն Աստուած քրիստոսասէր կայսերն մեր զթշնամիս նորա կորդուլս առնել։

... Խաղաղութիւն ընդ այլազգեացն լուաք մեք ես աստ. բայց Աստուած զմեծ խաղաղութիւն ի միւս կողմանէ շնորհեսցէ. վասն որոյ հրամայեալ եմ միշտ տէր ողորմեա ասել։

—

Մանուել վարդապետ և յաւորդ

1812 յուլիս 29
Ի Դարասու**)

Ժամանակի հայոց հայրապետ Եփրեմ կաթողիկոսը, ապրելով պարսկական բռնակալության պայմաններում, երբեք չի դադարել իր հայացքը բևեռած պահել հեռավոր հյուսիսում քարեկամ ռուս ժողովրդի մղած հերոսական պայքարին՝ օտարերկրյա զավթիչների դեմ։

Եփրեմ կաթողիկոսի 1814 թ. հուլիսի 20-ի թվակիր կոնդակից, հասցեագրված Քերովբե վարդապետին, իմանում ենք, որ նա շնորհավորել է կայսր Ալեքսանդր Ա-ին և նրա նախարարներին՝ ռուսների տարած փայլուն հաղթանակի համար.— «Մեք ևս,— գրում է Եփրեմ կաթողիկոսն իր այդ կոնդակում,— ահա ըստ պահանջման պարտաւորութեան գրեցաք զմուղթ շնորհաւորութեան տիեզերահռչակ յաղթութեան նորին կայսերական Մեծութեան և նախարարաց նորին, և այլոց մեծամեծաց, որոյ աթոռն հաստատուն պահեսցէ Տէր մինչև ի կատարած աշխարհի. ամէն»*)։

Նապոլեոնի պարտությունից հետո ռուսական քաջարի զորքերը հաղթարշավ ու կրնակոխ Փարիզ են մտնում։ Նապոլեոնը դաշնակից պետությունների կողմից աքսորվում է էլբա կղզին. սակայն 1815 թվին նա աքսորավայրից փախչելով նորից Ֆրանսիս է վերադառնում ու իշխանության գլուխ կանգնում։ Նոր արյունահեղությունների հետո կրկին անգամ պարտվելով աքսորվում է Ս. Հեղինեի կղզին։

Բեսարաբիայի թեմի հայոց առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսը շտապում է Եփրեմ կաթողիկոսին հաղորդել Նապոլեոնի կրկնակալանավորման ու աքսորման լուրը, որը անհուն հրճվանքով է համակում ծերունի

*) ՀՍՍՌ Գեղարվեստական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 57, գործ № 37, էջ 1։

**) ՀՍՍՌ Գեղարվեստական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 57, գործ № 14, էջ 4։

*) ՀՍՍՌ Գեղարվեստական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 57, գործ № 26, էջ 12։

հայրապետի սիրտը։ Պատասխան կոնդակում, գրված 1815 թ. սեպտեմբերի 25-ին, Եփրեմ կաթողիկոսը հայտնում է, որ հրճվանքով ու գոհունակությամբ էջմիածնի ողջ միաբանության հետ միասին ջերմ աղոթքներ են վերառաքում առ բարձրյալն, արնշատություն խնդրելով ռուսաց կայսեր և նրա զորքերի ու զորապետների համար։

«... Ցաղագս ծանուցանելոյդ զզանազան մեղապատկան որպէսութիւնս և մանաւանդ աւետելոյդ զկրկին կալանաւորութիւն բռնաւորին տիեզերաց և զառաւել գերազանցութեամբ բարձրանալն ամենաբարեպաշտ և ամենաողորմած ինքնակալ մեծ Կայսերն ամենայն Ռուսաց, թէ ո՞րքան անպատում հրճուանօք առյցեալ փառս և գոհութիւնս վերառաքեցաք առ Ամենաբարձրեալն Աստուած և զո՞րքան օրհնութիւնս և խնդրուածս մատուցաք նմա և մատուցանեմք բոլոր միաբանութեամբ վասն զօրութեան և վասն երկարութեան անգին կենաց Նորին Կայսերական Մեծութեան և ամենայն զօրաց և զօրապետաց Նորին, արդարև չէ՛ կարելի բովանդակել ընդ գրով. ուստի մեծապէս շնորհակալ եղեալ զձէնջ, օրհնեցաք և օրհնեմք զարժանաւորդ օրհնութիւն, որ պարգևեցեր զոսկերս մեր այնպիսի համբաւովք բարութեան։

Ուրախ եղաք նաև ո՛չ սակաւ վասն տարածման ի վերայ ձեր զանազան կերպիւ շնորհաց և ողորմութեանց Նորին Կայսերական Մեծութեան ոռճիկ կարգելոյն և այլն, ի ձեռն Նորին Պայծառափայլութեան կնիազ Գոլիցինի, բարերար Հօրն հոգևորականաց ամենայն ազգի, առ որ և բախտաւոր համարիմք զձեզ, ըստ որում ո՛չ միայն արժանի եղէք այնպիսի կայսերական շնորհացն և ողորմութեանցն, այլ և դուք եղէք սկիզբն և պատճառ ծավալման նոյնպիսի շնորհաց և ողորմութեանց և ի վերայ այլոց մերայնոցն, որպէս և զկնի ձեր՝ սրբազան Յովհաննէս արքեպիսկոպոսն Ռուսաստանու Հայոց ընկալնելով զայնպիսի շնորհս ողորմութեան յԱմենաողորմած Աթոռոյ Նորին Կայսերական Մեծութեան գրեալ ծանուցեալ էր մեզ, նոյնպէս և Վրաստանու Հայոց սրբազան Ներսէս արքեպիսկոպոսն ևս ընկալնելով զգեղեցիկ բարի առաջադրութիւնս ի Նորին Պայծառափայլութենէ յաղագս բարեկարգութեան վիճակի իւրոյ, յետ լրացուցանելոյ զնոյն, աներկբայ եմք, զի նա ևս ունի արժանանալ շնորհաց և ողորմութեանց ի Նորին Կայսերական Մեծութեան յամենաողորմած Աթոռոյ, զոր հաստատուն պահեսցէ Տէր մինչև ցկատարած յաշխարհի ի պարծանս սուրբ խաչին իւրոյ և ի հովանաւորութիւն ամենայն քրիստոնէից և յատկապէս անայցելու ազգիս մերոյ...»*)։

Եփրեմ կաթողիկոսը հնարավորություն չունենալով 1815 թվին Ռուսաստան այցելելու և անձամբ շնորհավորելու ռուսների տարած պատմական մեծ հաղթանակը, այդ գործը հանձնարարում է Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսին։ 1815 թվի օգոստոսի 4-ին վերջինս իր շքախմբով Սոսկվայից մեկնում է Պետերբուրգ և իջևանում լազարյանների տանը։ Հովհաննես արքեպիսկոպոսը նախքան կայսեր ներկայանալը այցելում է այլադավան եկեղեցիների գործերի տնօրեն իշխան Աղեքսանդր Նիկոլաևիչ Գոլիցինին։

Օգոստոսի 28-ին Հովհաննես արքեպիսկոպոսը իր շքախմբով ներկայանում է կայսեր, հայ ազգի ու հայ հոգևորականության անունից գոհունակություն հայտնելու պատմական մեծ հաղթանակի առթիվ։ Կայսրը սիրալիր ընդունելությունից հետո փոխադարձաբար իր գոհունակությունն է արտահայտում։

Օգոստոսի 30-ին կատարվում է կայսեր անվանակոչության տոնահանդեսը, ուր մեծամեծ պարգևների են արժանանում մի շարք նախարարներ ու բարձրաստիճան անձնավորություններ. դրանց թվում Ամենայն Հայոց Հայրապետ Եփրեմ կաթողիկոսին շնորհվում է սպասավորության կավալերի Աղեքսանդր Նևսկու առաջին աստիճանի շքանշանը, իսկ տոնահանդեսին ներկա եղող Հովհաննես արքեպիսկոպոսը պարգևատրվում է Ս. Աննայի առաջին աստիճանի շքանշանով։ Այս մասին տեղեկություն է հաղորդում Հովհաննես արքեպիսկոպոսը իր հետևյալ նամակում՝ ուղղված Ներսես արքեպիսկոպոսին.

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 57, գործ № 24, էջ 21—23։

Ի նկատի առնելով, որ սույն կոնդակում շոշափված են նաև մի շարք այլ խնդիրներ, որոնք վերաբերում են էջմիածնի Մայր Աթոռի անապահով ու աղքատիկ վիճակին պարսկական խանական բռնատիրության պայմաններում, հայ ժողովրդի ծանր կացությանը, Ծրուագեմի վանքի անմխիթար վիճակին ու Մայր Տաճարի վերանորոգության ձեռնամուխ լինելուն, և որոնք պատմական հետաքրքրություն են ներկայացնում, հոդվածի վերջում հավելվածի ձևով տալիս ենք կոնդակի լրիվ բնագիրը։

Բարձր Սրբազան Ներսէս արքեպիսկոպոս Գեղամեանց եղբայրն իմ ի Քրիստոս

Գահպանողական շնորհիւ Ամենաբարձրելոյն Աստուծոյ ի 4 յոգոստոսի ամսոյ ելեալ ի Մոսկովու ի 11 նորին մտաք ի Աստուածահաստատ մայրաքաղաքս ի Ս. Պետերբուրգ, և գտաք հանգիստ մեզ և օթարան օրհնեալ տունն Լազարեան և զյարգանս արժանաւորս ո՛չ սակաւ։

Ի 14 նորին գնացեալ առ Աղեքսանդր Նիկոլայիչ կենաց Գոլիցինին՝ գտաք զարժանաւոր յարգանս սիրոյ և մեծարանաց, և զոյս խնդութեան և շնորհ զեղութեան։

Որոյ մարդասիրական շնորհինն և չերմեռանդ վերապատուութեամբն ի 23 նոյնոյ ամսոյ, աւուր վերափոխեալ երկրորդ կիւրակէին ի երկրորդ ժամուն յետ փրկարար սուրբ պատարագին ներկայացաք արժանապէս առ յԱթոռոյ Նորին Սուրբ Կայսերութեան յերկրպագութեան՝ հանդերձ ընդ մեզ եղելովք վարդապետօք Ի. քահանայիւք, և գերամարձ վարդապետութեամբ ի խորհ խոնարհեալ մատուցաք զարժանաւոր մաղթանս երկրպագական համբուրեալ, ի դիմաց սրբոյ Աթոռոյն, Նորին Սրբազնութեան համայն հոգևորականաց՝ և ողջոյն ազգի հայոց մեզ յանձն եղելոց՝ և գտեալ զերեսս մեծի Արքային իբրև զերեսս հրեշտակի, և քանզ բերանոյ Նորին որ առ ազգ մեր և Աթոռն Արարատեան և Նորին Սրբութեան և իսկ առ մեզ լի քաղցրութեամբ՝ վասն որոյ լցաք անպատմելի խնդութեամբ և ընկալեալ զյուսալի բանս սրբութեան և ողորմութեան հաւատարիմ խոստմամբ արժանաւոր վերապատութեամբ շնորհակալեալ վերադարձաք ի տուն մեծաբերկրութեամբ օրհնելով զանգին կեանս Նորին Սուրբ Կայսերութեան։

Իսկ ի հետևեալ կիւրակէին, որ օր 30 էր ամսոյն ե տօն հրաշալի հանդէս վեհ աւուրանակոչութեան իւրոյ Կայսերապանի սուրբ թագաւորութեան։ Ընդ այլ վարձատրելի նախարարից և այլոց աստիճանաւորաց՝ պրսակեալ բարեհաճեցաւ Նորին Սուրբ Կայսերութիւն զսրբազնակատար գլուխն մեր երանելի հայրապետին, վասն որոյ շնորհակալ եղեալ Նորին Սրբութեան ի նորոյ զաստիճան և կաւալէր զասպետութեան Ալեքսանդր Նևսկի Առաջնոյ Աստիճանի, որ բարձր է քան զառաջինն, և այն ի պարծանս ազգի և ի վարձատրութիւն իւրոյ հաւատարմութեան։

Նոյնպէս և ի յանուն մերս նուաստութեան շնորհեալ եղև ի նոյն դրանէ, նշան զասպետութեան և կաւալէր սրբոյ Աննայի առաջնորդ աստիճանի ողորմածաբար։

...Արդ՝ որպէս մեզ, նոյնպէս և առհասարակ մեր օրհնեալ Տէրութիւնս գտանեցեալ ամենայն ազգ և ազգինք ունի ծառայել՝ սոյն ընդարձակ ողորմութեան կայսերական ի փոխարինութիւն հաւատարմական մտերմութեանց՝ առ որս գտանին ազգ մեր յաւելեալ ի նոյն ընթաց մտերմութեան քան զամենսն։

Եվ նոյն շնորհ ողորմութեան, զոր կայսերական բարձրագոյն հրամանաւ մանիֆեստիս տարածիլ հանդերձեցաւ ի ձեր ուրախութիւն և ազգի զնոյն մանիֆեստ առեալ առաքեցաւ առ ձեզ Սրբութիւն ի բերկրանս ընդ որ առաքի և զօրինակ նորոգ բարձրագոյն կաւալէրի կայսերական պարգևագրի որ առ նորին բարձր վեհապետութիւն։ Նոյնպէս և ցմեզ շնորհեցելոյն։ Ինքնակալ սուրբ կայսերութիւն յաղագս բարեկարգ և աշխարհօգուտ խաղաղարկութեանց, յանձն արարեալ զամենայն հարկաւոր տնօրէնութիւն իւրում պետութեան հաւատարիմ գործաւորաց և ինքն ընդ պատկանեալ իւրովքն, ի միս ամսոյս ելեալ աստի ուղղեաց զգնացս տէրամբ, յիսուսիդ՝ պ ի Փարէժ, ընդ թախանձանաց և ընդ բարի խորհրդոյ բարեխորհ յալ տէրութեանց համախոհից. յուսամ մինչև ցելն հոկտեմբերի բարեկարգեալ զամենայն ի դինութիւն աշխարհի՝ ուրախութեամբ վերադարձցի կրկին ի գիրկ հայրենեաց՝ յԱթոռ սուրբ Կայսերութեան իւրոյ՝ զոր Տէր հաստատուն արասցէ մինչև ցկատարած աշխարհի։

Եվ ի վերայ յայսմ կայսերական շնորհաց յաւելեալ եղեն ի վերայ մեր մանաւանդ անպատում շնորհ հայրական սորին բարձր սրբազնութեան Ամենապատիւ Ամբրոսիոս մետրապոլիտի և բարերարի հոր մերում և Տեառնս, նո՛յնպէս և մարդասիրական շնորհաստ գտանեցեալ սրբազանից արքեպիսկոպոսաց և համայն հոգևորականաց, քանզի սորին բարձր վեհափառութեան սրբութիւն ի յընկալնուլն մերս խոնարհ երկրպագութիւն և ողջոյն, և ի գիտելն զառատաձեռ խնամաց և ընդունելութեանց Նորին Աստուածապսակեալ մեծի ինքնակալի և Կայսեր, շարժեալ ի հոգւոյն սուրբ յորդորեալ եղև ի սէր, և ի վեր քան զարժանն մեր ընկալէր ի յարդանս սիրոյ՝ ընդ արձակեաց առ մեզ զմեծալանս և ընդ որում մերձեալ էին աւուրք հանդէսիս վեհ տօնախմբութեան շնորհաւոր Անուանակոչութեան մեծի ինքնակալին, որ ի 30 յոգոստոսի, և ինքն հան-

դերձեալ էր յայնմ աւուր մատուցանել զփրկարար պատարագն ի մայր եկեղեցին՝ որում գտանիլ հաղիւ կարելի է լինելն Կայսեր և Կայսերազանց՝ նո՛յնպէս և մեծարն Նախարարին նշանակրից, մինչև լի՛ իսկ լինել նոքօք ի եկեղեցին հրաւիրեցաք և մեք, ի Նորին Սրբութենէ ի նոյն հանդէս հոգևոր ի եկեղեցին սուրբ, զոր գնացեալ անդ ընդ այլովք մերովք յիրաւի հանդիսացաք ընդ հանդիսակցաց, զի ի թագաւորէն զսկսեալ մինչև ցրոլոր երևելիսն անդ ի եկեղեցին պարզապէս տեսանեաք, նոյնպէս և նոքին առ մեզ ի սեղանի անդ որոց ի ծանօթից ոմանք ևս յառաջ խաղացեալ գային ի ողջոյն ի երևելեաց անտի, թողում ասել Նորին պայծառափայլութեան Աղեքսանդր Նիկոլայիչ կենաց Գոլիցինի անհամեմատ բարերարութեանցն զեղանակ, որ զոլով առ սպառ Նորին սուրբ Կայսերութեան մի՛ր ընդ մի՛ր ի ցոյց հանդիսին յայնմիկ ի տեսանելն զմեզ ի սեղանի անդ առ ընթեր Նորին սրբազնասրբութեան արեգական պետութեան՝ յառաջեալ առ մեզ վաղվաղակի առ հիացումն սիրոյ և շնորհաւորեաց զմեզ սրբազան պատրիարգին մերոյ և հայրապետի զընկալեալն զԱսպետական նշանի և բարձր կաւալէրի Ալեքսանդր Նևսկի տուեալ Առաջին Աստիճանի բարեհաճութենէ Նորին Ամենաողորմ սուրբ Կայսերութեան, նոյնպէս և զմեզ շնորհեցելոյն սրբոյ Աննայի առաջին-երրորդ աստիճանի և կաւալէրի՝ մատոյց զշնորհաւորումն պատշաճապէս։

Յովհաննէս արքեպիսկոպոս Հայոց Ռուսաստանու

1815 թ.*)

Հայրենական պատերազմի հաղթական ավարտի կապակցությամբ պարգևների են արժանանում նաև Մոլդավիայի և Վրաստանի հայոց թեմերի առաջնորդներն ու այլ բազմաթիվ հայ հոգևորականներ՝ պատերազմի տևողության ընթացքում իրենց ցուցաբերած աջակցության համար։ Վրաստանի թեմի առաջնորդ Ներսես (Աշտարակեցի) արքեպիսկոպոսը պարգևատրվում է վեղարի խաչով, որի մասին նա, կաթողիկոսին գրած 1816 թ. սեպտեմբեր 20 թվակիր նամակում, հետևյալն է հաղորդում.— «...ես սուրբ օրհնությամբ ձեր ընկալայ ի 3 ամսոյս ուղղակի առ իս առաքմամբ կենդանի Գոլիցինէն զխաչ կրելի ի վերայ վեղարի, յորինեալ ըստ չափու լայնութեան բուն մատի, շրջանակն 70 հատ ալմաս, և ի մէջն ընդ երկայնքին 4 հատ կապոյտ մաքուր եաղութ պայծառադոյն՝ բաժանեալ ի միմեանց իւրաքանչիւրքն 212 հատ ալմազիւք, և ի թևսն յերկոսսին մի-մի նմանատիպ եաղութ՝ բաժանեալ ի միջակիտի եայութէն նոյնպէս՝ երկու երկու հատ ալմազիւք, ըստ որոյ երկայնութիւն խաչին կայանայ ի չափ միջամատի բարեյարմար ձեռաց, և թեքն ըստ այնմ բաղդատութեան բաւական հարուստ ձևով և նիւթով, զոր և ես ընդ ընկալեալս այն զի ուղղակի առ մեզ էր առաքեալ, առեալ տարաք զնա առ կուսակալն արկեղբ իւրով, ընդ որ և նա ուրախութեամբ բազմաւ յայտնեաց զյոյժ գոհունակութիւնս զի առանց իւր չէիք յօժարեալ այնպէս ի գործ դնել ըստ օրինի, և անդէն ինքն առեալ զվեղարն մեր խընդրեաց կնոջ իւրոյ իւրով ձեռամբ զայն կտրել, և ի լրմանն եղեալ ի գլուխ մեր՝ նախ ինքն շնորհաւորեաց համբուրիւ և այնպէս ապա արձակեաց յառանձնարանէ իւրմէ»։*)

1814 թվի օգոստոսի 30-ին հրատարակված բարձրագույն հրովարտակի 11-րդ պարբերության մեջ հոգևորականների նկատմամբ ասված է.— Մեր սրբազնագույն հոգևորականները, որոնք Ամենաբարձրյալի սեղանի առջև իրենց ջերմ արտասուքներով աստուածային օրհնություն էին մաղթում հանուր Ռուսաստանի զենքի հաղթանակի համար և հայրենիքի հանդեպ ջերմեռանդ հավատով ու սիրով լցված, իրենց բարեպաշտությամբ օրինակ հանդիսանալով քաջալերում էին ժողովրդին, անսասան կամք ու կուռ միասնականություն ներշնչելով նրան, այդպիսիները, ծայրագույն հովվապետից սկսած մինչև վերջին քահանան, արժանի են իրենց կրծքերի վրա կրելու սահմանված «1812 թ.» մակագրությամբ կրող խաչը։ Կայսրը հրամայում է այդպիսի խաչերով պարգևատրել նաև հայազգի հոգևորականներին։ Բարձրագույն հրամանի համաձայն այլազգի եկեղեցիների գործերի կառավարիչ Օսիպ Պետրովիչ Գեոզիդավլովն խաչեր է ուղարկում Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդին՝ հրահանգելով բաշխել համաձայն բարձրագույն հրովարտակով սահմանված կանոնների։

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 57, գործ № 37, էջ 3։

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 57, գործ № 41, էջ 41։

Ռուսաստանի թեմի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսը թարգմանելով Գեոդիդավլովից ստացված գրությունը՝ իր կից գրությամբ ուղարկում է այն, խաչիրի հետ միասին, Վրաստանի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսին։ Ստորև բերում ենք այդ թարգմանությունը և կից գրությունը։

Սրբազնագոյն պետ՝

ողորմած Տէր իմ

Բարձրագոյն հրովարտակի՝ հրատարակեցեալոյ ի 30-էն օգոստոսի 1814 թուականի՝ ի 11-րդ պարբերութեան կայ կերպագրեալ. «Սրբազնագոյն հոգևորականք մեր՝ որք առաջի սեղանոյ Ամենաբարձրելոյն վերակարդային չերմ արտասուօք իւրեանց զօրհնութիւնն Աստուածային ի վերայ զինու և զինորութեան Ամենայն Ռուսաստանեայց, և որք բարեպաշտութեան օրինակօք իւրեանց, ի նշան չերմեռանդութեան առ հաւատն, և սիրոյ՝ առ Հայրենիս, քաջալերէին զժողովուրդս ի միով հոգւով պնդապէս հաստատուն, կրեսցեն ի վերայ պարանոցի իւրեանց, սկսեալք ի ծայրագոյն հովուէն մինչև ցվերջին քահանայն, զյատկապէս սահմանեալն առ այս գործ, մակագրութեամբ 1812-րդ թուականին»։

Եվ ի նոյն օր՝ 30 օգոստոսի 1814 թուոյ, տուեալ եղև բարձրագոյն հրաման մինիստրին Հոգևոր գործոց և Ազգային լուսաւորութեանց, ընդ ներքոյ հետևեալ զօրութեան, «հրովարտակաւ մերով ի սոյն թուոյ հրատարակեցելով՝ սահմանեցաք մեք յազգս հոգևորականաց՝ զիաչ, առ ի նշանաւոր առնել զերևելի մեծագործութեան այն, որ ի 1812 թուականին, ձեզ առաջադրելով զձեզ այսր յատկութեան ի մերս վերահաստատութեան մատուցանել, հրամայեմք յայտնել որբազնագոյն կառավարիչ սինոդին զհաճութիւն մեր, զի յիշեալ նշանաւ յատկացեն այնոքիկ միայն հոգևորականք, որք ցմուտն 1813-րդ թուականին սրբազնագործողք էին»։

Նորին Կայսերական Մեծութիւնն բարձրագոյն բարեհաճեցաւ հրամայել, զի այնպիսեօք խաչիւք զարդարեալ լիցին և հոգևորականք Հայոց դաւանութեան։

Ի հետևումն որոյ, պատիւ ունիմ առաքել առ ձեր սրբազնութեան ընդ սմին, ի հաստատելոյ առ այժմ առ իս ի պ. մինիստրէն յառաջին նուագիս զ10 հատ խաչս ներքոյ հետևեալ բացահայտութեամբ։

1) Սրբազնութիւն ձեր ինքնին կրեսցիք ի վերայ ձեր զխաչն, որ ձեզ պատկանի։ 2) Միւսոց հոգևորականաց ի ձեզ հաւատացեալ վիճակի եղելոցն բաժանեսցիք զիաչս, հանդերձ թղթով՝ որոյ օրինակն ի սմին գնի, ձերովդ ստորագրութեամբ։ 3) Բաժանումն այսոցիկ խաչից՝ ոչ այլ ի հիմնապէս պարսի լինիլ, եթէ ոչ ի վերայ հիման վերոյ բարձրագոյն հրամանին, որ ի 30-էն օգոստոսի, 1814 ամին, տուեալ, թէ՝ այսու նշանաւս յատկացցին այնոքիկ միայն հոգևորականք, որք ցմուտն 1813 թուոյ սրբազնագործողք էին։ 4) Ի միջոյ հոգևորականացն ընդ դատաստանու եղելոց՝ ընդ բարձրագոյն հրամանին, այնոքիկ միայն ունին իրավունս զայն յատկութիւն ստանալոյ, որք գտեալ են զուղղութիւն ի դատաստանի։ 5) Զառ այժմ առաքեցեալ խաչս որոց ունիցիք յանուանէ բաժանել ձեր սրբազնութիւն, առաքեսցիք առ իս զյանուանէ գրեալ ցուցակս այնց, ծանուցանելով հանդերձ, թէ՝ ո՞րքան ևս հարկաւոր են խաչք վասն հոգևորականաց ձեր վիճակի։

Ունիմ պատիւ մնալ իմովս ճշմարիտ յարգութեամբ։ Ձերում սրբազնութեան ողորմած տեառնդ իմում խոնարհագոյն ծառայ

Օսիպ Գեոդիդավլով

1818 մարտ 4
№ 225*)

Ի 4-է՝ մարտի գրեցելովն ծանուցանեմ առ իս պայծառափայլ կնէազ Գոլիցինն՝ թէ ըստ առաջնոյ բարձրագոյն հրամանին՝ հոգևորական կառավարչութեան վերստին յանձնեցաւ Նորին բարձր գերազանցութեան պարոն Դեոդիդավլովին՝ ուրեմն յայնմիսա կարդաւորեսցիք յընթացս ձեզ պարգևեալ գործոյ՝ ցուցնելով թէ ինքն գնալոց իցէ ի Մոսկով կամ առ սպաս Նորին կայսերական մեծութեան, զոր Տէր առաջնորդեսցէ։ Եվ ի 5-է՝ յիշեալ ամսոյն պարոն Օսիպ Պետրովիչ Գեոդիդավլովն առաքելով առ իս զքանի խաչս ոսկեայ, պղնձեայ՝ մին յանուն մեր վերաբերեալ և միւսքն մերոց հոգևորականաց՝ թէ այսու բարձրագոյն հրամանաւ Նորին կայսերակա-

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ. ֆոնդ № 57, գործ № 28, էջ 17։

նի մեծութեան (զորոյ թարգմանութիւն թողում ըստ երկրբանութեան իրեն) առաքեցաւ առ ձեզ զքանի խաչս զի ըստ մտաց հրամանագրին, ի ծայրագոյն հովութեան ձերմէ մինչև ցյետին քահանայն ունիցին կրել ի պարանոցի ի վերայ նեղագոյն լենթի ընդ կարգին Վլադիմէրի՝ առաջինն դուք ունիցիք կրել օրինակ տալով միւսոցն, իսկ զմիւսքն որոյ արժան տեսցիք՝ այնու օրինակաւ դուք ստորագրեալ յանձնեսցիք ձերոց հոգևորականաց. առ յայնպիսիս՝ որք սրբազնագործողք էին ի 1812 թուականէ մինչ ցմուտն 1813 թվականին, և ի վերայ ա՛յսր ամենայնի բարեհաճեսցիք ևս ծանուցմամբ յայտնել թե ո՞րքան և՛ս հարկաւոր են խա՛չ ձերոց հոգևորականաց բաց այդցանէ։ Միւս և՛ս հրամայէ թէ որո՛ց տալ հարկաւորի զխա՛չս՝ նոքեն յետ տալոյն ձերոյ՝ ունիցիք յանուանէ յայտնել մեզ. ի հարկէ ցարդ առ ձեզ և՛ս են առաքեցեալ և կալէք գիտեալ ըստ ամենից հանդամանացն. մնք դրալով ձեզ ձանձրոյի թողաք ի լռութեան վասն ոչ ունելոյն մեր դժամանակ ընդ ամենից ոմանց գրելն։ Եվ ընդ որում լդտանի ընդ այդր պատշաճագոյն թարգման վասն որոյ ցմեզ հասեալ թարգմանութեան վերատին օրինակեալ ահա ընդ գրոյս առաքիմք ի ձեր ծանօթութիւն։

Յովհաննէս սարկեպիսկոպոս Հայոցս Իռուսաստանու

1818 թ. ապրիլի 30
Ի Ղզլար քաղաք)

Վրաստանի և Իմերեթիայի հայոց վիճակային կոնսիստորիայի գործերում պահպանվել են հոգևորականների ծառայության ցուցակները, որոնցից պարզվում է, որ բարձրագույն հրովարտակի հիման վրա բազմաթիվ քահանաներ պարգևատրվել են 1812 թվի հաղթանակի խաչերով։ Ստորև բերում ենք պարգևատրված մի շարք քահանաների անուն ազգանունները.—

Յակոբ քահանայ Տէր-Աբրահամեան Շահրուխեանց— Պօղոս Պետրոսի եկեղեցւոյ Շուլաւերու գեղ. 59 ամաց։ Համաձայն հրովարտակի նորին կայսերական մեծութեան վասն յաջողութեան պատերազմին, որ ի 1812 ամի ընդ գաղիացիս, ընկալեալ է պղնձեայ խաչ պարանոցի Վլադիմիրեան լենտիս։

Սիմէոն քահանայ Տէր-Անդէասեանց— Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ Դուշեթ գեղ. 85 ամաց։ Համաձայն... ընկալեալ է պղնձեայ խաչ պարանոցի Վլադիմիրեան լենտիս։

Յովհաննէս քահանայ Տէր-Առաքելեան Բերումեանց— Ս. Աստուածածին եկեղեցւոյ Վաղլովան գեղ. 54 ամաց։ Համաձայն... ընկալեալ է պղնձեայ խաչ պարանոցի Վլադիմիրեան լենտիս։**)։

Յուրաք սրբազնագործ հոգևորականաց Տփխիսայ և Հալաբարայ՝ վասն 1842 ամի.

Աստուածատուր քահանայ Տէր-Մելիքսէթեկեան Տէր-Աստուածատրեանց. 62 ամաց։ Վարձատրեալ է համաձայն հրովարտակի նորին կայսերական մեծութեան վասն յաջողութեան պատերազմի, որ ի 1812 ամի ընդ գաղղեացւոց, պղնձեայ խաչիւ պարանոցի Վլադիմէրի լենտիս։

Կաթուղիկէ եկեղեցւոյ Հայոց Տփխիսայ Յարութիւն աւագ քահանայ Տէր-Վարդանեան Վարդանեանց— 73 ամաց։

Վարձատրեալ է... խաչիւ պարանոցի Վլադիմէրի լենտիս։

Ղազար աւագ քահանայ Սարգսեան Սահակունի— 68 ամաց։

Վարձատրեալ է... խաչիւ պարանոցի Վլադիմէրի լենտիս։

Յակոբ քահանայ Տէր-Առաքելեան Դովլաթեանց— 66 ամաց։

Վարձատրեալ է... խաչիւ պարանոցի Վլադիմէրի լենտիս։

Նորաշէնի Ս. Աստուածածնի եկեղեցւոյ Յովհաննէս աւագ քահանայ Հայրապետեան Պարոնթեկեանց— 76 ամաց։

Վարձատրեալ է... խաչիւ պարանոցի Վլադիմէրի լենտիս։

Ս. Նշանի Եսայի աւագ քահանայ Մկրտումեան Զիալեանց—64 ամաց։

Վարձատրեալ է... խաչիւ պարանոցի Վլադիմէրի լենտիս։

Թեթղահէմայ Մելքիսեդեկ աւագ քահանայ Տէր-Դաւթեան Տէր-Սահակեանց—66 ամաց։

Վարձատրեալ է...խաչիւ պարանոցի Վլադիմէրի լենտիս։

Մովսէս քահանայ Մարգարեան Տէր-Յակոբեանց— 91 ամաց։

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 57, գործ № 38, էջ 15։

**) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 53, գործ № 2, էջ 346—364, ի 1843 ամի յուրաք ծառայությունն ի վիճակին Սոմխէթի։

Վարձատրեալ է... խաչիւ պարանոցի Վլադիմէրի լենտիս

Մեսրոբ Ֆահանայ Տէր-Գրիգորեան Տէր Յովհաննիսեանց— 66 ամաց։

Վարձատրեալ է... խաչիւ պարանոցի Վլադիմէրի լենտիւ։

Աւետեաց եկեղեցւոյ Նսայի աւագ քահանայ Մելքոյեան Դանդուրեանց— 64 ամաց։

Վարձատրեալ է... խաչիւ պարանոցի Վլադիմէրի լենտիւ։

Սասախլի Ս. Գէորգ եկեղեցւոյ Յարութիւն քահանայ Աստուածատրեան Մատուրեանց— 76 ամաց։

Վարձատրեալ է... խաչիւ պարանոցի Վլադիմէրի լենտիւ։

Էջմիածնեցւոց Ս. Գէորգ եկեղեցւոյ Հաւլաբարայ Յովհաննէս քահանայ Տէր-Ազարեան Տէր-Մարգսեանց— 66 ամաց։

Վարձատրեալ է... խաչիւ պարանոցի Վլադիմէրի լենտիւ։

Մարտիրոս Յոհաննեան Բաբայեանց— 69 ամաց։

Վարձատրեալ է... խաչիւ պարանոցի Վլադիմէրի լենտիւ։

Կուկիոյ Ս. Աստուածածնի եկեղեցւոյ Ներսէս քահանայ Տէր-Գրիգորեան Տէր-Ներսիսեանց— 82 ամաց։

Վարձատրեալ է... խաչիւ պարանոցի Վլադիմէրի լենտիւ։

Դանիէլ քահանայ Տէր-Զաքարեան Բէգիջանեանց— 61 ամաց։

Վարձատրեալ է... խաչիւ պարանոցի Վլադիմէրի լենտիւ*)

Ցուցակ ծառայութեանց սրբազնագործ պաշտօնէից Սղնախայ և մերձակայ գիւղօրէից, Թէլաւու և գիւղօրէից Նորա և Գօրւոյ՝ նահանգաւ հանգերձ.

Սղնախ Ս. Կարապետ եկեղեցւոյ Պօղոս աւագ քահանայ Տէր-Ստեփանեան— 80 ամաց։

Համաձայն Հրովարտակի Նորին Կայսերական Մեծութեան վասն յաջողութեան պատերազմին, որ ի 1812 ամի ընդ դաղղիացիս, ընկալեալ է զպղնձեայ խաչ պարանոցի Վլադիմիրեան լենթիւ

Գէորգ քահանայ Երալեան—84 ամաց։

Համաձայն Հրովարտակի... ընկալեալ է պղնձեայ խաչ պարանոցի։

Մարտիրոս քահանայ Տէր-Ստեփանեան— 59 ամաց։

Համաձայն Հրովարտակի... ընկալեալ է պղնձեայ խաչ պարանոցի Վլադիմիրեան լենթիւ։

Ս. Գէորգ եկեղեցւոյ Սղնախայ Աւետիս աւագ քահանայ Տէր-Բարսեղեան Խերոմեանց— 59 ամաց։

Համաձայն Հրովարտակի... ընկալեալ է պղնձեայ խաչ պարանոցի Վլադիմիրեան լենթիւ։

Ի Նասոմխար գեղջ Աւետիս քահանայ Յարութիւնեան— 67 ամաց։

Համաձայն Հրովարտակի... ընկալեալ է խաչ պարանոցի Վլադիմիրեան լենթիւ։

Վելիսցիխու Ս. Աստուածածին եկեղեցւոյ Յարութիւն քահանայ Ղազարեանց—67 ամաց։

Համաձայն Հրովարտակի... ընկալեալ է խաչ պարանոցի Վլադիմիրեան լենթիւ։

Ս. Աստուածածին եկեղեցւոյ Մովսիսեան գեղջ Տէր-Մարգիս քահանայ Մկրտումեանց — 73 ամաց։

Համաձայն Հրովարտակի... ընկալեալ է զպղնձեայ խաչ պարանոցի Վլադիմիրեան լենթիւ։

Քանդալ գեղջ Հրեշտակապետ եկեղեցւոյ Առաքել քահանայ Յակոբեանց— 69 ամաց։

Համաձայն Հրովարտակի... ընկալեալ է զպղնձեայ խաչ պարանոցի Վլադիմիրեան լենթիւ։

Ի վիճակին Թելաւու Բաղդասար աւագ քահանայ Տէր-Մարգսեան Տէր-Բաղդասարեանց— Ս. Գէորգ մայր եկեղեցւոյ Թելաւու։

Համաձայն Հրովարտակի... ընկալեալ է զպղնձեայ խաչ պարանոցի Վլադիմիրեան լենթիւ։

Թադէոս աւագ քահանայ Տէր-Սահակեանց Ս. Աստուածածնի մայր եկեղեցւոյ Գօրւոյ— 58 ամաց։

Համաձայն Հրովարտակի... ընկալեալ է զպղնձեայ խաչ պարանոցի Վլադիմիրեան լենթիւ։

Մովսէս աւագ քահանայ Տէր-Բարսեղեան Տէր-Բարսեղեանց— Ս. Ստեփանոս հնաշէն եկեղեցւոյ Գօրւոյ—63 ամաց։

Համաձայն Հրովարտակի.... ընկալեալ է

*) ՀՍՍՌ Գեղարքունեաց ազգագրական արխիվ, ֆոնդ № 58, գործ № 2, էջ 79—180։

զգղնձեայ խաչ պարանոցի Վլադիմիրեան լենթիւ։

Ցարութիւն քահանայ Աբրահամեան Անտոնեանց— ի Ս. Աստուածածնի եկեղեցւոյ Ցխեթալու— 71 ամաց։

Համաձայն... խաչ պարանոցի Վլադիմիրեան լենթիւ։

Գրիգոր քահանայ Տէր-Աբրահամեան Զանեանց—ի Ս. Աստուածածնի եկեղեցւոյ Ղարախաչու— 67 ամաց։

Համաձայն Հրովարտակի.... ընկալեալ է զգղնձեայ խաչ պարանոցի Վլադիմիրեան լենթիւ։

Տէր-Մովսէս Ցարութիւնեան ի ստրկական ցեղէ, ծնուած 1749 թ., ընկալեալ է ի կայսերէ զմի սեաւ խաչ լենթիւ։

Նահապետ քահանայ Տէր-Ղազարեան— ի ցեղէ քահանայական, ծն. 1754 թ., 80 ամաց. ընկալեալ է ի 1812 ամի ի կայսերէ զմի սեաւ խաչ լենթիւ։

... և այլն։*)

Հետագայում 1812 թվի հայրենական պատերազմից հետո հայ-ռուսական բարեկամական հարաբերությունները էլ ավելի սերտացան։ Հայ ժողովուրդը անկեղծորեն կերպով իր բախտը կապեց ռուս մեծ ժողովրդի բախտի հետ։ Ռուս ժողովրդի հանդեպ հայ ժողովրդի տածած համակրանքը փայլուն կերպով արտահայտված ենք գտնում հայ գրականության մեծ ռահվիրա Խաչատուր Աբովյանի անմահ «Վերք Հայաստանի» վեպի հետևյալ տողերում.—

«Օրհնվի էն սհաթը, որ ռուսի սրինած ստոր Հայոց լիս աշխարհը մտավ ու զզլբաշի անիծած չար շունչը մեր երկրիցը հալածեց։ Քանի որ մեր բերնոմը շունչ կա, պետք է գիշեր ցերեկ մեր քաշած օրերը մանքներս բերենք ու ռուսի երեսը տեսնելիս՝ երեսներիս խաչ հաննենք, Աստուծուն փառք տանք, որ մեր աղոթքը լսեց, մեզ ռուս թագավորի ղոր աստուածահաստատ ձեռի տակը բերեց։»

Հանրահայտ է, որ հայ ժողովրդի պարավոր իղձերն ու բաղձանքները իրականացան միայն ու միայն ռուս մեծ ժողովրդի եղբայրական աջակցության շնորհիվ՝ Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիայի կենսաշող արևի ներքո։

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 53, գործ № 187, էջ 1—34։

ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀԱՎԵԼՎԱԾ

ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԵՎ ՇՆՈՐՀԻՒ ՆՈՐԻՆ ՏԷՐ ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՎ ԾԱՅՐԱԴՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԳ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՎ ԹԱՐՔՐԱԳԱՀ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ։

Ողջոյն Քրիստոնէական նուիրեմք սիրով և օրհնութեամբ բաղմաւ Կերապատիւ սրբազան Կրիգոր սրբեպիսկոպոս սիրելեաւ հարազատդ սրբոյ Աթոռոյս և մեր ուրախ լինիլ ի Տէր։

Չերկոսին որպիսածանոյց դրութիւնսդ առ ընկալեալ ըստ ժամանակին, ուրախ լեալ եմք յոյժ վասն բարի առողջութեան ձերոյ և յաղագս օր քան զօր առաւելութեան շերմ սիրոյդ և հարազատութեանդ առ սուրբ Աթոռս, առ մեզ և առ բոլոր միաբանութիւն մեր՝ սրտագիր եղեալ և մխիթարեալ յամենայնի։

Որպէս յայտնի է և ձեզ գիարդութիւն կառավարութեան գահակալացն սրբոյ Աթոռոյս ընդ իշխողացն Երկրիս ըստ բերմանց ժամանակին, մեք ևս ի ներկայս վասն ինչ ինչ հարկաւորաց եկեալ էաք աստ յԵրևան ի տեսութիւն և ի խօսակցութիւն ընդ բարձրապատիւ դօվլաթլու սարտարին տեղւոյս, և յաջողութեամբ Տեառն Աստուծոյ, որ ի ձեռին ունի զսիրտս ամենայն իշխողաց. բարեպէս յաջողեալ ամենայն խնդիր մեր ի նմանէ, գտաք զապահովութիւն յամենայն դիմաց՝ թէ կողմանէ գիւղիցն մերոց և թէ այլոցն թէև զանազան զրաղմունք հոգևորականաց վասն կառավարութեան սրբոյ Տանն Աստուծոյ յայսմիկ պակասաւոր նեղ ժամանակի՝ ո՛չ թոյլ տան մեզ ունիլ բնաւ զյանդգրութիւն։

Ցիշեալ երկոքին գրութիւնքն ձեր մնացեալ դոյով անդ ի սուրբ Աթոռն, որ ինչ ի նշանաւոր բանից անտի եկն ի միտս, արժան վարկաք պատասխանել ձեզ ատէն համառօտիւ։

Ցաղագս ծանուցանելոյդ զզանազան մեղապատկան որպէսութիւնս և մանաւանդ աւետելոյդ զկրկին կալանաւորութիւն բռնաւորին տիեզերաց և զառաւել գերազանցութեամբ բարձրանալն ամենաբարեպաշտ և ամենաողորմած ինքնակալ մեծ Կայսերն ամենայն Ռուսաց, թե ո՞րքան անպատում հրճուանօք առցեալ փառս և գոհութիւնս վերառաքեցաք առ Ամենաբարձրեալն Աստուած և զո՞րքան օրհնութիւնս և խնդրուածս մատուցաք նմա և մատուցանեմք բոլոր միաբանութեամբ վասն զօրութեան և վասն երկարութեան անգին կենաց Նորին Կայսերական Մեծութեան և ամենայն զօրաց և զօրապետաց Նորին, արդարև չէ՛ կարելի բովանդակել ընդ դրով. ուստի մեծապէս շնորհակալ եղեալ զձէնջ, օրհնեցաք, և օրհնեմք զարժանաւորդ օրհնութիւն, որ պարարեցեր զոսկերս մեր այնպիսի համբաւովք բարութեան։

Ուրախ եղաք նաև ո՛չ սակաւ վասն տարածման ի վերայ ձեր զանազան կիրպիւ շնորհաց և ողորմութեանց Նորին Կայսերական Մեծութեան ոռճիկ կարդելոյն և այլն, ի ձեռն Նորին Պայծառափայլութեան կնիազ Գոլիցինի բարերար Հօրն հոգևորականաց ամենայն ազգի, առ որ և բախտաւոր համարիմք զձեզ, ըստ որում ո՛չ միայն արժանի եղէք այնպիսի կայսերական շնորհացն և ողորմութեանցն, այլ և դուք եղէք սկիզբն և պատճառ ծաւալման նոյնպիսի շնորհաց և ողորմութեանց և ի վերայ այլոց մերայնոցն, որպէս և զկնի ձեր՝ սրբազան Յովհաննէս արքեպիսկոպոսն Ռուսաստանու Հայոց ընկալելով զայնպիսի շնորհս ողորմութիւնն յԱ-

մենաոդորմած Աթոռոյ Նորին Կայսերական Մեծութեան գրեալ ծանուցեալ էր մեզ, նոյնպէս և Վրաստանու Հայոց սրբազան Ներսէս արքեպիսկոպոսն ևս ընկալնելով զդեղեցիկ բարի առաջադրութիւնս ի Նորին Պայծառափայլութենէ յաղագս բարեկարգութեան վիճակի իւրոյ, յետ լրացուցանելոյ զնոյն, աներկրայ եմք, զի նա ևս ունի արժանանալ շնորհաց և ողորմութեանց ի Նորին Կայսերական Մեծութեան յամենաողորմած Աթոռոյ, զոր հաստատուն պահեսցէ Տէր մինչև ցկատարած յաշխարհի ի պարծանս սուրբ խաչին իւրոյ և ի հովանաւորութիւն ամենայն Քրիստոնէից և յատկապէս անայրելու ազգիս մերոյ։

Սուրբ Երուսաղէմի նուիրակ կարապետ վարդապետի բարեմասնութիւնս գրեալ էիք զովութեամբ իրաւի՝ ուրախ եղաք ո՛չ սակաւ, երանի՝ եթէ բազումք ի վարդապետաց մերոց զարդարեալ լինէին նոյնպիսի բարեմասնութեամբք, ի միխիթարութիւն ազգին և յուրախութիւն մեր։

Անտի ի սուրբ Երուսաղէմայ յանցեալսն եկեալ էին ևս երեք եպիսկոպոսցուք ի սուրբ Աթոռս մին քան զմիւս զերազանցեալ բարեմասնութեամբք, որք էին սեղոյն աւագ լուսաւորաւր Սիմէոն վարդապետն, Հնդու նուիրակ Կարապետ վարդապետն, և մուսաւատի քաջ գիտնական և ճարտարարան Դիոնէսիոս վարդապետն. զորս ո՛չ անադան ձեռնադրեալ եպիսկոպոս և ուրաշահեալ ամենայն պարագայիւք մայրապարութեան ըստ արժանւոյ յարգութեան իւրեանց. զՍիմէոն ի Կարապետ եպիսկոպոսումն ուղևորեցաք դէպ ի մեծն Պօլիս, և զԴիոնէսիոս եպիսկոպոսն պահեցաք առ մեզ ի սուրբ Աթոռս. քանզի՝ անդ ի մեծն Պօլիս սրբազան Պատրիարգն և սուրբ Երուսաղէմայ վէրքիլ Պօղոս վարդապետն բոլոր խորհրդական ամիրայիւք ի խորհուրդ մտեալ վասն դտանելոյ զհնարս ազատութեան ի 3.000 քէսայ պարտուցն, որով նեղի մինչև ցայսօր սուրբ Աթոռն Երուսաղէմայ, արժանի էին համարեալ կոչել անդ առ ինքեանս առ ի խորհրդակցութիւն զերևելի միաբանսն նորին, թէ զեղեալսն ի սուրբ Աթոռն՝ անդ և թէ ի վիճակս նուիրակութեան. վասն որոյ որպէս ի Զմիւռնի և այլ վիճակս գրեալ էին առ երևելի նուիրակ վարդապետսն և եպիսկոպոսումն Ժողովիլ անդ ի մեծն Պօլիս, նոյնպէս յիշեալ սրբազան Պատրիարգն և վէրքիլ Պօղոս արքեպիսկոպոսն գրեալ էին մեզ վասն յիշեալ առ մեզ եկեալ եպիսկոպոսացն այնց, զի զնոցին երկուսն ուղևորեսցուք առ ինքեանս, և զմինն պահեսցուք առ մեզ մինչև ցմիւս անդամ գրութիւնս իւրեանց առ մեզ վասն նոյն մրնացողին ի սուրբ Աթոռս մեր։

Իրաւի իրաւի՝ ցաւիմք յամենայն սրտէ վասն այնպիսի նեղութեան սուրբ Աթոռոյն Երուսաղէմի, այլ զի՞նչ կարեմք առնել, եթէ ո՛չ խնդրել ամենաջերմեռանդ աղօթիւք, զի նա ինքն Աստուած այց արասցէ երկուց սուրբ աթոռոցն իւրոց՝ աղատելով ի պարտուց և յամենայն նեղութենէ. քանզի ահա սուրբ Աթոռ մայրս լուսոյ ևս՝ թէպէտ ի մասին հոգևորական վայելչութեանց վայելչացեալ է աւելի և վայելչանայ օր քան զօր գեր քան զառաջինն. այլ ի մասին մարմնական պիտոյից և հարկատրաց զրկեալ կայ, մինչ իսպառ մինչև հայիայթանօք և օր ըստ օրական պարտուք անցուցանել զաւուրս և զրկեանս մեր, և ազգ մեր ևս գոլով ընդ ամենայն տեղիս ի յանյաջողութեան թէ ի կողմանէ խափանման առիցն և տրիցն և թէ այլոցն պատճառաց, չի՛ք յուսատեքէ օգնականութիւն աղատութեան մեզ ի պարտուց, որ դիզեալ լինի օր քան զօր կուտակութեամբ ըստ պահանջման հարկին՝ մանաւանդ ի ներկայս, որ մեծ ծախուք սկզբնաւորեալ եմք նորոգել տալ զխախտեալ տանիսն աստուածակերտ սրբոյ Տաճարին. առ որ կարելի է թէպէտ. զի ասասցին ոմանք յազգէս մերմէ՝ թէ յայսպիսի նեղ ժամանակիս ի՞նչ հարկ էր այնպիսի մեծածախս գործառնութեան ձեռնամուխ լինել. որոց զայս տամք պատասխանի. զի՞նչ առնեաք սապա, զի եթէ ո՛չ փութացաք ձեռնամուխ լինել. յայնժամ օր քան զօր առաւել լինէր խախտումն, և մի ծախսն՝ բազմապատիկ յոյժ. մինչև դժուարին լինէր ազդուին ևս նորոգելն. և մեք լինէաք մեղադրելի յազգէն մերմէ. զայսպիսիս բառաբանելով նոցա առ մեզ՝ թո՛ղ դու պարտուք հոգ տանէիր նորոգութեան, յետոյ զհատուցումն պարտուց ի մէջ խնդրէիր, և այլն. զայսոսիկ ևս մտածեալ մեր. հարկ յանձին կալաք ձեռնամուխ լինել, յուսալով նախ յԱստուծոյ և ապա յօգնականութիւն ազգատ ժողովրդեանն մերոյ, որոյ վասն և ի կողմունս Հնդկաց յատկապէս իմտատիաճի առաքեցաք զյարգելի Վրթանէս արքեպիսկոպոսն, և մտադրեալ եմք առաքել ևս զոմանս ի քանի պատշաճաւոր տեղիս։ Ըստ որոյ ի դէպ յայդ փոքր միճակի քում ևս յորոց կարելի իցէ՝ ի զիմաց մերոց ողջոյնն և օրհնութիւն տուեալ սիրով, զկամաւոր իմտատիայս խնդրեսցես վասն նորոգութեան տանեացն սրբոյ Աթոռոյս. զի այժմ այնպիսի ժամանակ է, որ փոքր նուէրքն՝ մեծ է հանդիսանալոց առաջի

հոգևոր մայրութեան ոորին. որպէս և դու սիրեցիցես հարազատդ մեր մինչ առաքեալ էիր ընուէրս նուիրակութեան օրհնեալ վիճակիդ՝ որ է հարիւր պաճախլու ոսկի. թէպէտ և տակաւին չէ՛ հասեալ, այլ յանձնեցեալ է ի Մօղոկ ուրումն հարազատի առ ի հասուցանել, որպէս և գրեալ է մեզ ի հարկէ Տէր Մելիքսէթ ատագ քահանայն Ղամարեան, սակայն իբրև հասեալ համարելով, այժմէն իսկ մատուցանեմք ահա զշնորհակալութիւն, օրհնելով զքեզ և զբարեաւ ժողովուրդսդ, զորս Տէր օրհնեսցէ իւր անանցանելի օրհնութեամբն, վարձատրելով յամենայնի, նոցա՝ ըստ տրոցն, քեզ՝ ըստ աշխատանացն։

Իսկ վասն բաժանեալ վիճակին Ուռումէլուոյ, զոր գրեալ էիր՝ զայլ ոք նուիրակ առաքել անդ, Պօլսոյ սրբազան Պատրիարքն ևս գրեալ էր՝ կամ առաքել զոք, և կամ զկոնդակն և զսուրբ միւռոնն առ ինքն յղել, զի անտի վարդապետաց իւրոց զոմն առաքեսցէ անդ։

Մեք քանի ամսով յառաջ զայս՝ զկոնդակն և զսուրբ Միւռոնն առաքելով առ յիշեալ սրբազան Պատրիարգն, գրեցաք նմա, զի անդ հղեալ մեր դանձնակաց վերակացու Աստուածատուր արքեպիսկոպոսին պօլսեցւոյ՝ առաջադրեսցէ ի դիմաց մերոց. եթէ յանձնառու լիցի. դնա առաքեսցէ կոնդակաւ և սրբալոյս մեռոնաւ, իսկ եթէ նա ո՛չ յանձնառցէ, յայնժամ զայլ ոք առաքեսցէ։ Այժմ ակն ունիմք թէ մինչև ցարդ՝ կամ զյիշեալ արքեպիսկոպոսն առաքեալ իցէ անդ նուիրակ, և կամ զայլ ոք, զոր ի հարկէ լուեալ լինիք և դուք։ Որոյ վասն զրեմք սիրեցեալ հարազատիդ մերում, զի ով ոք և եկեալ իցէ. կամ սմիցի գալ, դու զքեզապատկան օգնականութիւնս մի՝ խնայեսցես ի նմանէ թէ դրով առ սրս արժանն է, և թէ այլով ամենայնիւ ի յօգուտ սրբոյ Տանս և ի բազմապատիւ քեզ շնորհաց մօրս լուսոյ և վարձուց անախտ փեսայի սորին, և շնորհակալութիւն և օրհնութիւն մեր հանդերձ արժանաւոր գովութեամբ։

Յաւել քան զայս յանձն առնելով զքեզ և զվիճակդ ի շնորհս խնամոց և պահպանութեան Տեառն Աստուծոյ, և ցանկանալով միշտ ախորժելի լրոյ բարի առողջութիւն ձերոյ և այլ մեղապատկան գիտելեաց ի ձէնջ։

Մնամք ի սրտէ ձեզ միշտ բարեացակամ

Կարողիկոս Ամենայն Հայոց ՍԵՓԵՌ

1815 սեպտեմբերի 25
Յանապատս մեր, սր Յերևան*)

*) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 57, գործ № 24, էջ 21—22։

Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Սեպտեմբերի 27-ին, Ս. Գևորգ տոնի ու Մայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի անվանակոչության տոնի օրը, Մայր Տաճարում հանդիսավոր պատարագ մատուցվեց:

Պատարագիչն էր Տ. Կարապետ Եպիսկոպոսը:

Պատարագից հետո Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ-ի անվանակոչության տոնի առթիվ հայրապետական մատրան կատարվեց ամբողջ Միաբանության մասնակցությամբ և հոծ բազմության ներկայությամբ: Մատրանից ետաջ պատշաճավոր խոսք ասաց Տ. Կարապետ Սրբազանը:

Միաբանությունը և ժողովուրդը Վեհափառ Հայրապետի աջն առնելով ցանկացան նրա օրհնությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Սեպտեմբերի 25-ին Հոգևոր ճեմարանում հանդիսավոր նիստ տեղի ունեցավ՝ երրորդ ուսումնական տարվա սկսվելու առթիվ։ Նիստին ներկա էին Ս. Էջմիածնի Միաբանության անդամները, ճեմարանի դասախոսական կազմը և սաները։

Նիստին ներկա էր նաև ՀՍՍՌ Մատենադարանում գիտական աշխատանք կատարելու համար Ռուսաց Ուղղափառ Եկեղեցու Պետ՝ Ալեքսի Պատրիարքի կողմից Սովետական Հայաստան գործուղված Նիկոլայ Պետրովիչ Դոկտոռովը։

Ճեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանը նիստը բաց անելով ողջունեց դասախոսական կազմին և հին ու նոր սաներին, հաջողություն ու եռանդ ցանկանալով նրանց՝ ուսման երրորդ տարում։

Ողջույնի խոսքով հանդես եկան նաև Գեր. Գլ. Սուրեն և Կարապետ եպիսկոպոսները, Սահակ վարդապետը, դասախոս Դիլոյանը և Մոսկվայից հյուր եկած Նիկոլայ Պետրովիչ Դոկտոռովը։

***

Սեպտեմբերի 28-ին Մայր Աթոռ այցելեցին վիրաբույժների երրորդ անդրկովկասյան համագումարի, որի նիստերը տեղի էին ունենում Երևանում, մի խումբ մասնակիցներ, դրանց թվում Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի մի շարք ականավոր պրոֆեսորներ ու բժիշկներ։ Հյուրերը Մայր Տաճարում ներկա եղան Ս. Պատարագին, դիտեցին թանգարանը և ապա թանգարանապետ Տ. Սահակ վարդապետի ուղեկցությամբ այցելեցին նաև Վեհարանը, ուր արժանացան Վեհափառ Հայրապետի ընդունելությանը։

***

Հոկտեմբերի 11-ին, Մ. Թարգմանչաց տոնի երը, Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի դահլիճում կազմակերպվել էր դրական-գեղարվեստական երեկույթ։

Տոնի նշանակության մասին արտահայտվեցին Գեր. Սուրեն եպիսկոպոսը և Տ. Սահակ վարդապետ Տեր-Հովհաննիսյանը։

Թարգմանչաց տոնի մասին հիմնական զեկուցում արեց ճեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանը։

Երեկույթին մասնակցում էր Հոգևոր ճեմարանի սաներից կազմված երգչական խումբը՝ Տեր Նիկողայոս ավագ քահանա Բովեյանի ղեկավարությամբ։

***

Հոկտեմբերի 12-ին Մայր Աթոռ այցելեցին Հայկական ՍՍՌ մուսուլմանների կրոնական պետ՝ Ղազի Շեյխ Ալասկյար Մահառլամովը և նրա տեղակալ Միրզա Ալակպեր Բայրամովը։ Նրանց ուղեկցում էին Երևանի Դամիր-Բուլաղի մզկիթի գործադիր օրգանի նախագահ Արաս Ֆարաջևը և Հաբիբ Ռզաբեկովը։

Հյուրերը թանգարանը դիտելուց հետո Մայր Տաճարում ներկա եղան Ս. Պատարագին։ Պատարագից հետո նրանց Տ. Սահակ վարդապետի ուղեկցությամբ այցելեցին նաև Վեհարանը, ուր արժանացան Վեհափառ Հայրապետի ընդունելությանն ու հյուրասիրությանը։

Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ խորը վշտով հայտնում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, Հոգևոր Ճեմարանի դասախոս և ,,Էջմիածին'' ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ

ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

մահը, որը տեղի ունեցավ սեպտեմբերի 21-ին։

ՀՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՑԱՎ ԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցու գործերի Խորհուրդը ցավակցություն է հայտնում Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ վաղաժամ մահվան առթիվ։

ՀՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

28 սեպտեմբեր 1947 թ.
Երևան

Գերագույն Հոգևոր Խորհուրդը խորը վշտով հայտնում է Խորհրդի անդամ, Հոգևոր Ճեմարանի դասախոս և «Էջմիածին» ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ

ԵՂԻԶԵ ՎՍՐԴՍՊԵՏ ՀՍՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

մահը, որը տեղի ունեցավ սեպտեմբերի 21-ին։

Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վարչությունը, դասախոսական կազմը և սաները խորը վշտով հայտնում են Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, Ճեմարանի դասախոս և «Էջմիածին» ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ

ԵՂԻԶԵ ՎՍՐԴՍՊԵՏ ՀՍՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

մահը, որը որը տեղի ունեցավ սեպտեմբերի 21-ին։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը խորը վշտով հայտնում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, Հոգևոր Ճեմարանի դասախոս և ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ

ԵՂԻԶԵ ՎՍՐԴՍՊԵՏ ՀՍՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

մահը, որը տեղի ունեցավ սեպտեմբերի 21-ին։

ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Սեպտեմբերի 21-ին, կարճատև հիվանդությունից հետո 56 տարեկան հասակում իր մահկանացուն կնքեց Ս. Էջմիածնի սիրված միաբան և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Տ. Եղիշե վարդապետ Հովհաննիսյանը։

Հանգուցյալ Եղիշե վարդապետը ծնվել է 1891 թվին, Նոր Նախիջևան քաղաքում, Միջնակարգ կրթությունն ստացել է Նոր Նախիջևանի Հայոց թեմական դպրոցում։ Թեմական դպրոցն ավարտելուց հետո 1908 թվականին նա մեկնում է Խարկով ու ընդունվում Անասնաբուժական ինստիտուտը, որը և ավարտում է 1912 թվին։ Անասնաբուժական ինստիտուտն ավարտելուց հետո, որպես անասնաբույժ, պաշտոնավարում է մի շարք քաղաքներում։ 1914 թվին, առաջին համաշխարհային պատերազմի օրերին, նա, որպես մասնագետ-անասնաբույժ, բանակ է կանչվում. պատերազմի ամբողջ տևողության ընթացքում ռուսական բանակի շարքերում նա պատվով կատարում է անասնաբույժի իր պարտականությունները։

1920 թվին նա տեղափոխվում է Երևան. այստեղ աշխատանքի է անցնում Անասնաբուժական ինստիտուտում, ուր դասախոսում էր անասնաբուժական օրենսդրություն, դեղաբանություն և այլն։ Նրա մանկավարժական գործունեությունը Երևանի Անասնաբուժական ինստիտուտում տևում է մինչև 1945 թվականը։ Հիշյալ ժամանակամիջոցում նա գրել է մի շարք դիտական աշխատություններ ու կազմել դասագրքեր։

Մանկությունից մեծ սեր ունենալով հայ եկեղեցու հանդեպ, 1945 թվին նա դիմում է Վեհափառ Հայրապետին (այն ժամանակ գեն Ազգընտիր Տեղակալ), խնդրելով իրեն ընդունել Ս. Էջմիածնի Միաբանության շարքը։ Վեհափառ Հայրապետը սիրով համաձայնում է Ս. Էջմիածնի Միաբանության շարքն ընդունել իր նախկին աշակերտ Տ. Եղիշեին, ձեռնադրելով վերջինիս սկզբում աբեղա և ապա վարդապետ։

1945 թվականին, Ազգային-եկեղեցական ժողովում Տ. Եղիշե վարդապետ Հովհաննիսյանը ընտրվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ։

Թեև նրա հոգևոր գործունեությունը Ս. Էջմիածնում շատ կարճատև եղավ, սակայն այդ կարճ ժամանակամիջոցում նա կարողացավ եռանդուն ու արդյունավետ աշխատանք ծավալել թե՛ Հոգևոր Ճեմարանում, ուր նա դասավանդում էր, թե՛ Գերագույն Հո-

գնոր Խորհրդում, որի անդամ-քարտուղարն էր նա և թե՛ վանքում, հանդիսանալով նրա գանձապահը։ Իր ուշիմ ու սիրալիր վերաբերմունքով նա վայելում էր թե Վեհափառ Հայրապետի և թե բոլոր միաբանների սերն ու համակրանքը։

Օծման և հուղարկավորության տխուր արարողությունը կատարվեց սեպտեմբերի 24-ին։ Օծման կարգը կատարեց Կարապետ Եպիսկոպոս Թումանյանը, որը նաև գգայացումը դամբանական ճառ ասաց, հակիրճ ներկով տալով հանգուցյալի կենսագրությունն և թվելով նրա կատարած գործերը։

Տաճարում արարողությանը ներկա էր Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ-ն։

Հուղարկավորության թափորը Ս. Էջմիածնի վանքից շարժվեց դեպի Գայանեի վանքը. դագաղին հետևում էին Էջմիածնի Միաբանության անդամները, Հոգևոր ճեմարանի ատենները, հանգուցյալի բարեկամները, մերձավորները, ընկերները, որոնք եկել էին Երևանից, և խուռն բազմություն։ Ճանապարհին դագաղը հինգ տեղ ցած դրվեց և ավետարան կարդացվեց։

Հանգուցյալի աճյունը ամփոփվեց Գայանեի վանքի բակի գերեզմանատանը, ուր դամբանական ճառերով հանդես եկան հանգուցյալի ընկերները, դրվատելով նրա արժանիքները։

Ս. Էջմիածնի Միաբանությունը, հանձինս Տ. Եղիշե վարդապետի, կորցրեց իր անձնվեր ու եռանդուն միաբաններից մեկին։

Հանգիստ նրա աճյունին։

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՄԵՋ

ՊՈԼՍՈ ՆԱԽԿԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ Տ. ԶԱՎԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ԵՂԻԱՅԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

«Արաս»-ը հաղորդում է.—

Հունիսի 4-ին Պաղտատեն ստացված հեռագիր մը կբերեր գույժը Պոլսո նախկին Պատրիարք Գեր. Տ. Զավեն Ս. Արք. Տեր-Եղիայանի մահվան, որ տեղի ունեցած էր տեղվույն մեջ նույն օրը, առավոտյան ժամը 9-ին, ավելացնելով թե մարմինը Երուսաղեմ պիտի բերվեր ամփոփվելու համար Ս. Հակոբյանց վանքի գերեզմանատան մեջ։ Այս տխուր առթիվ, Լիբանանեն Կաթողիկոսական նվիրակ կուգար Գեր. Տ. Փառեն Եպիսկոպոս։ Պատրիարք Հոր կարգադրությամբ մասնավոր պատվով ընդունվեցավ Սրբազանը և վարդապետներու ու դպիրներու թափորով Ս. Հակոբ եկեղեցի առաջնորդվեցավ, ուր իր ուխտը կատարելե վերջ Գլխադիրի սեղանին առջև, առաջնորդվեցավ Ավագ Խորան «Ուրախ լեր»-ով։ Այնտեղ է, որ Սրբազանը հայտնեց իր գալստյան պատճառը, նույն ատեն շնորհակալություն հայտնելով Միաբանության՝ իրեն ընձեռած այս պատիվին համար։

Մինչ այդ, հանգուցյալ Պատրիարքին դագաղը դեռ չէր ժամանած, ուշացած ըլլալով օդանավի արկածի մը պատճառով։ Վերջապես, շաբաթ օրը, կեսօրվա ժամը 1-ին լսվեցավ տխուր զողանջը եկեղեցվո զանգին, որ ժողովուրդին կիմացներ մոտալուտ գալուստը դագաղին։ Ժամը 1,15 ինքնաշարժը վանքին դրան առջև կանգ առավ, իր հետ բերելով նաև հանգուցյալին ազգականներն ու Պաղտատի Առաջնորդ Տեր-Հայրը։

Դագաղը դրան առջև զետեղվելե է և վանքին Միաբանության ուղեկցությամբ երեք տեղ վար գրվելե ու ավետարան կարդացվելե վերջ տարվեցավ եկեղեցի, ուր մնաց մինչև հաջորդ օրը։

Կիրակի առավոտ, պատարագիչն էր Տ. Փառեն, մինչ երգեցողությունները տպավորիչ կերպով տեղի կունենային ղեկավարությանը տակ Պ. Ներսես Խուտավերտյանի։ Ողջույնի ժամանակ Ամեն. Տ. Կյուրեղ Ս. Պատրիարք Հայրը խորան բարձրանալով մեծ հանդիսավորությամբ կատարեց օծման կարգը, որմե հետո Միաբանության անդամներն ու դպրաց դասը ողջույնի համբույրը օծյալի պագաղեն առին, նկատելով որ դագաղին բնրանը գոց էր։

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը հայտնապես հուզված, խոսեցավ նաև Հանգուցյալ Զավեն Արքեպիսկոպոսի մասին հոգեշունչ և ներկուտ դամբանական մը։

Ժամը 11-ին սկսավ 'հուղարկավորության տխուր արարողությունը։ Ներկա էին օտար բարձրաստիճան անձնավորություններ, Հ. Մ. Ը. Մ-ի և Բարեսիրաց Միության սկաուտները և ժողովրդյան հոգնախուռն բազմություն մը, որոնք հետևեցան դագաղին։ Ճամբու ընթացքին յոթը տեղ դագաղը գետին դրվելե ետք հանգուցյալին մարմինը ամփոփվեցավ Ս. Փրկիչ եկեղեցվո Պատրիարքներու հատուկ գերեզմաններու կողքին։

Հանգիստ իր երկարամյա և հոգնատանջ ոսկորներուն։

ՄԱՀ ԵՎ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԳԵՐ. ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ՋԱՆԱՋՅԱՆԻ

Շաբաթ, 5 Հուլիսի, առավոտյան ժամը 3-ին, ֆրանսիական հիվանդանոցին մեջ 77 տարեկան հասակին իր մահկանացուն կնքեց Ս. Հակոբյանց Միաբանության սիրված և գործունյա անդամներեն Գևորգ վարդապետ Ճանաջյան։ Պարտք կզգանք հակիրճ կերպով կենսագրականը տալ հանգուցյալին, որ իրապես հարգված անձնավորություն մըն էր։

Գևորգ վարդապետ ծնած է Մարաշ,

1871 թ. հունվար 10-ին և փոքր տարիքեն սիրած է եկեղեցականությունը։ 1889-ին եկած է Երուսաղեմ, որպես Ժառանգավորացի ուսանող։ 1896-ին եղած է սարկավագ և միևնոյն ատեն վարած լուսարարի պաշտոն Ս. տեղյաց զանազան եկեղեցիներուն մեջ։ 1902-ին վեց ընկերներով վարդապետ ձեռնադրված է հանգուցյալ Հարությունն պատրիարքեն։ 1905—1925 շարունակ տեսչական պաշտոններ ստանձնած է Սուրիա, Լիբանան և Պաղեստինի զանազան վայրերը, միևնույն ատեն վարելով դիվանատան, դանձապետության և ավագ թարգմանի զանազան կարևոր պաշտոններ։ Հանգուցյալ Թորգոմ Պատրիարքին մահեն ի վեր կվարեր պատրիարքական փոխանորդի պատասխանատու գործը։ Իր մահով Վանքը կկորսնցնե իր ամենեն անձնվեր և միմիայն Վանքին շահուն համար աշխատող անձնավորություն մը, ինչպես կվկայեր Ս. Պատրիարք հայրը իր դամբանականին մեջ։

Օծման և հուղարկավորության տխուր արարողությունը կատարվեցավ կիրակի օր։ Փակ էր Մարաշի Հայրենակցական Միության Ակումբը և դրան առջև կախված էր սև վարագույր մը իբրև հարգանք Միության նախագահին հիշատակին։ Օծումը կատարեց Ամենապատիվ Ս. Պատրիարք Հայրը, որմե հետո հուզումով և արտասվալից աչքերով խոսեցավ դամբանական մը, հակիրճ կերպով տալով անոր կատարած գործերը։

Օծումեն հետո, «Ողջույնէ»-ի ժամանակ, եկեղեցին գտնվող Միաբանության անդամներն ու ժողովուրդը ողջույնի համբույրը հանգուցյալին օծված աչեն առին։

Ժամը 11-ին լսվեցավ զանգակին տխուր ղողանջը և հուղարկավորության թափորը շարժվեցավ։ Եկեղեցվո դրան երկու կողմերը կկենային Ս. Թարգմանչաց վարժարանի երկսեռ սաները՝ հսկելու համար կարգապահության։ Ս. Պատրիարք Հայրը անձամբ կնախագահեր իր ամբողջ Միաբանական կազմով։ Դագաղին կհետևեին նաև օտարազգի կրոնականներ և բարձրաստիճան անձնավորություններ։

Ճամբու ընթացքին դագաղը հինգ անգամ վար դրվելե և ավետարան կարդացվելե ետք հասան վերջին հանգստարանը, ուր Մարաշի Հայրենակցական Միության կողմե խոսք առավ պ. Հարություն Ավագյան, դրվատելով հանգուցյալին արժանիքները, և դագաղը իջեցվեցավ սև հողը։

Հանգիստ իր հոգնաբեկ ոսկորներուն։

ԹՂԹԱԿԻՑ

(«Արամ» թ. 26 1947 թ.)

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՎՈ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փարիզի Հայ Առաքելական Լուսավորչական Եկեղեցվո Վարչության դադրած անդամներուն տեղ նորերու ընտրությունը կիրակի օր տեղի ունեցավ։

Մեր ստացած տեղեկությանց համաձայն ազգային ժողովրդական ցանկը չարչարիչ մեծամասնությամբ ընտրված է։ Սպասելով պաշտոնական զեկույցին, կուտանք առավելագույն քվեով ընտրվածներուն ցանկը.—

Հարություն Սարաֆյան, Գառնիկ Պախթիարյան, Պետրոս Պալըքճյան, Տոքտ. Ա. Տեր-Անդրեասյան, Լևոն Զորմիսյան, Պողոս Ասլանյան, Գեղամ Ֆենեբճյան, Գամեր Պաղտատլյան, Հակոբ Գարակյուլյան։

Այս ընտրությունը, Մարսեյլի ընտրություններեն հետո, կուգա հաստատելու հայ ժողովրդի միության և համագործակցության ձգտումը, որմե մղված անիկա կոնակ կդարձնե հասարակական կազմակերպություններու շուրջ պառակտում ստեղծողներուն։

Դաշնակցությունը, խրատված Մարսեյլի ընտրությանց արդյունքեն, ուր աղմկարար և գռեհիկ պայքար մը մղած էր, Փարիզի ընտրություններուն մասնակցեցավ առանց աղմուկի և իր ցանկին ու թեկնածուներուն վրա առանց իր ցուցանիշը դնելու։ Բայց քվեարկողները չխաբվեցան։ Իր ծանոթ թեկնածուն, Պ. Երվանդ Հարությունյան ստացավ... 55 քվե։ Իսկ ազգային ժողովրդական ցանկի թեկնածուներուն ստացած առավելագույն քվեն է 574, իսկ նվազագույնը՝ 470։

Պարզ քաղաքություն մը, որ բավական խոսուն է։

(«Ժողովուրդ» 29 հունիս 1947 թ.)

ՏԱՃԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒՐՖԱԼՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՓԱՐԻԶԻ „ԱՐԵՎՄՈՒՏՔ" ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԻՆ

Անթիլիաս, 4 մայիս 1947 թ.

Հարգելի խմբագիր «Արևմուտք» թերթի

Ձեր թերթի 21 թիվ ապրիլ 13 համարին մեջ «Օգնեցէ՛ Կիլիկիո Կաթողիկոսին» վերտառությամբ և Կիլիկեցի մը ստորագրությամբ հոդվածը Միաբանությունս և

Կաթողիկոսարանիս շուրջ համախմբված մտավորականությունը մեծապես ուրախացուց և խանդավառեց։ Այդ հոդվածը մեզ մտածել տվավ, թե մեր սիրելի Հայրապետը Զեր ևս մտածման և հետաքրքրության առարկան է և Անոր բարենպատակ ծրագիրները և անոնց իրականացումը, ինչպես մեզ, Զեզ ևս ուրախություն կպատճառեն, որպես հարազատ հայեր, մշակույթ և անցյալ գնահատող անհատներ։ Կիսափաքինք, որ հոդվածագրի միտքերը տարածվեին Զեր գաղութին մեջ, ղանազան շրջանակներեն ներս, և դրական արդյունքներ տային հոգուտ Կիլիկյան դարավոր և պանծալի Աթոռին, որը այժմ կապրի իր վերածընունդի շրջանը շնորհիվ Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի, որուն բարձր հովանիին տակ Լիբանանի այս խաղաղ մասին մեջ կաճի, կհառաջդիմե և ինքն իր մեջ զորանալով կդառնա արտասահմանի հայության տևականացման և պահպանման գլխավոր ազդակներեն մին, իր եկեղեցական և մշակութային ձեռնարկներովը։

Արդեն Զեզի ծանոթ է թե մեր Հայրապետի գեղեցիկ կարգադրությամբ հոկտեմբեր ամիսը Կիլիկյան թեմերու համար նշանակված է հայ մշակույթի պանծացման ամիս։ Հանդիսավոր պատարագներ կմատուցվին և մասնավոր քարոզներ կիսուվին մեր եկեղեցիներեն ներս և բանախոսություններ ու հանդեսներ կկազմակերպվին մշակութային հաստատություններեն և դպրոցներեն ներս։ Կոգեկոչվին մեր բյուրավոր ծանոթ ու անծանոթ մշակները, հայ ժողովուրդի մաքի և հոգիի ստեղծիչները։

Վեհը, մայիս ամսվա մեջ, օր մը նշանակած է որպես Կաթողիկոսարանիս օր։ Այդ օր մեր ժողովուրդին կհրամցվի գեղարվեստական բացառիկ արժեք ներկայացնող հայտագիր մը։ Անցյալ տարի առաջին անգամ ըլլալով ներկայացվեցավ Վահան Թեքեյանի «Եկեղեցին Հայկականը», օրաթորիոյի վերածված երաժիշտ Տիար Համբարձում Պերպերյանի կողմե։ Իսկ այս տարի մայիս 11-ին տեղի պիտի ունենա Կաթողիկոսարանի օրվան կապված մեծ նվագահանդես մը, ուր պիտի պանծացվի անմահն Կոմիտասի գործը՝ իր ծննդյան 75-ամյակի առթիվ։

Նույնպես Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ անցյալ ամառ սեպտեմբերին Կաթողիկոսարանիս մեջ տեղի ունեցավ Կիլիկյան թեմերու ազգային վարժարաններու ուսուցիչներուն համագումարը։ Կատարվելիք ծրագիրներու նույնացման աշխատանքներ և եղան մանկավարժական դասախոսություններ։

Վեհափառի նախաձեռնությամբ կազմված է նաև Մտավորականներու ժողովը, որը իր առաջին նիստը գումարեց Վեհափառ Հայրապետի նախագահությամբ Կաթողիկոսարանիս դահլիճին մեջ և որուն գեղարվեստական բաժնին իր մասնակցությունը բերավ Զեզի ծանոթ շուքակահար Տիար Ֆիլիպ Աղազարյան։

Շնորհիվ Վեհափառ Հայրապետի հոգածության Կիլիկյան Միաբանությունը իր ծաղկումի շրջանն է որ կապրի։ Ունեցանք Աթոռիս վարդապետ միաբաններեն հինգ նոր եպիսկոպոսներ, որոնք թեմերու մեջ և Կաթողիկոսարանեն ներս կարևոր պաշտոններ ունին։

Կիլիկյան Դպրեվանքը սկսավ իր արդյունքները տալ։ Մոտ պիտի ունենանք չորս նոր կուսակրոն քահանաներ (վարդապետ), երկու ավագ սարկավագներ և երկու շրջանավարտ քահանայացումներ։ Այս ձևով Աթոռիս Միաբանությունը պիտի լեցնե այն պակասն ու կարիքը, որ կնկատվի մեր եկեղեցիներեն ու թեմերեն ներս։

Ունինք Մատենադարան, ուր հավաքված են մոտ յոթ հազար հատոր գիրքեր, առանձին դարակներու մեջ։ Ունինք նաև ձեռագրաց բաժին մը և հնագիտական արժեք ներկայացնող հին դրամներ, որ նոր սկսած ենք հավաքել։ Սակայն այժմու Մատենադարանի շենքը անհարմար է որպես մատենադարանի շենք։ Մեր գիրքերուն համար արդիական շենքի մը պետք ունինք, ուր պիտի կարենանք գիտական մեթոդներով մեր նախնյաց ժառանգությունը պահել և անվթար փոխանցել հաջորդ սերունդներուն և օգտագործել հոգուտ գիտության։

Վեհափառ Հայրապետի անմիջական հսկողությամբ կկազմակերպվի և Կաթողիկոսարանիս տպարանը։ Ամեն ամիս կանոնավորապես կհրատարակենք մեր պաշտոնաթերթ «Հասկ»-ը։ Բացի սովորական «Հասկ»-են այս տարի պիտի հրատարակվի գիտական «Հասկ»-ը, որ տեսակ մը Կաթողիկոսարանիս տարեգիրքը պիտի ըլլա, գիտական, գեղարվեստական, գրական և բանասիրական ճոխ բովանդակությամբ։

Մոտերս տպարանը լույս ընծայեց Վեհափառ Հայրապետի «Ոյս և կեանք» վերնագրով, քարոզներու, ազգային-եկեղեցական և հայրենասիրական բովանդակությամբ, հոդվածներու շարքը։ Սկսավ տպագրվիլ «Ցիգրան Մեծ»-ի նվիրված աշխատություն մը, որ պատրաստած է ամերիկահայ բանասեր Հրանտ Արմենն։ Սակայն ավելի

մեծ համեմատությամբ մշակութային գործեր և երկեր ի լույս ընծայելու համար անհրաժեշտորեն պետք ունինք արագատիպ մամուլի մը, ինչպես նաև տողաշարի մը և տպագրական այլ կազմածներու։

Այս ձևով Վեհափառ Հայրապետի ունեցած հրաշքներն ու ծրագիրները սկսած են իրականանալ որոշ չափով։ Սակայն Վեհը ավելին կցանկանա։ Կուզե, որ Կիլիկյան Աթոռը բարձրանա, խոնարհ և վերակենդանանա։ Իր բառերով.— «Սիրելի՛, Մենք կկամենայինք, որ այս Աթոռը դառնա Հայոց եկեղեցվո հաստատության և հարատևության մեծ սյուներից մեկը։ Մեր Աթոռի գիտակցական և ստեղծագործական կյանքը, մեր Միաբանության և Աթոռի զարգացումը։ Այս բոլորը Աթոռի շուրջ է, բայց Ընդհանուր եկեղեցվո բարգավաճման նպաստող երևույթ պետք է դառնա»։ Ուրեմն նորին Վեհափառության ամբողջ ճիգն է, որ մեր Կիլիկյան դարավոր Աթոռը դառնա Հայոց եկեղեցվո հաստատության մեծ սյուներեն մեկը և այս հոգուտ ընդհանուր հայության և հոգուտ հայ արժեքներու պահպանման ի տեվականացման։

Մեր գիտնական և ծերունազարդ Հայրապետին այս դեկեցիկ և օգտավետ հրաշքներուն և ծրագիրներուն ամբողջական իրականացումը հայ ժողովուրդեն կախված է, ինչպես ինք Վեհափառը կըսե՝ «Իմ երազների իրականացումը Ձեզնից է կախված»։ «Պետք է օգնեք ինձ»։ «Մեկ սու իսկ գրպանս չի մտնցարդ իմ կողմե հավաքված գումարներիցս։ «Ցանեցեք, որ հնձեք»։

Երանի՜ թե մեր ժողովուրդը լսե՛ր իր Հայրապետին այսքան սրտառուչ կանչը՝ «Պետք է օգնեք ինձ»։ Ո՜ն գաղութահայություն, օգնե՛նք Վեհափառին նյութապես, որպեսզի կարենա իրագործել իր ա՛յնքան գեղեցիկ և օգտաշատ ծրագիրները Հայ Եկեղեցվո ն մշակույթի տևականացման ի խնդիր։ Օգնե՛նք Անոր, որպեսզի Կիլիկյան Վանքը տիպար վանքի մը վերածե, բարձրացնե Դպրեվանքի ուման մակարդակը, ճոխացնե Մատենադարանը, արդյունավոր դարձնե տպարանը ն բազմացնե Միաբանության Թիվը։

Նյութը անցողական է, իսկ աշխատանքը մնայուն և տևական։ «Ցանեցեք, որ հնձեք»։ Տվե՛ք Վեհափառ Հայրապետին բոլոր միջոցները ու հնարավորությունները, որպեսզի իր թանկագին վայրկյաններն ու երկվայրկյանները արդյունավորվին, ատոքանան, և իրենց բարերար արդյունքները տան, որ ծաղկեցնե, բարձրացնե և նախանձելի դիրքի հասցնե մեր Կիլիկյան դարավոր այս Աթոռը, մշակութային, կրոնական և եկեղեցական ձեռնարկներով։ Տա՛նք իրեն որ հնարավորություն ունենա ի լույս ընծայելու մեր նախնյաց թանկագին Հիշատակներն ու Հիշատակարանները, արժեքներն ու արժանիքները. մի՛շտ սա ի մտի ունենալով, թե ի՛նչ որ տանք Վեհափառին, նույնությամբ և՝ ավելիով պիտի վերադարձնե մեզ ն Ձեզի։

«Ցանեցեք որ հնձեք»։

Տե՛ր խմբագիր, կհուսամ մեր հայտնած միտքերն ու գաղափարները հանրության կփոխանցեք Ձեր օգտակար թերթի միջոցով, որով մնամ լավագույն հարգողության մաղթանքներով։

Աղոթարար ՏԱՃԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԻՐՖԱՆՅԱՆ
Միարան Ուխտին Կիլիկիո

(«Արևմուտք», հունիս 1, 1947 թ.)

ԳԵՐ. ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԸՆԴՈՒՆԻ ԳԵՐԱՊԱՏՎԱՌ ՈՒԼՈՒՀՈՋՅԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Վենետիկի Մխիթարյան Միաբանության Աբբահայր Ուլուհոջյան Արքեպիսկոպոս, ընկերակցությամբ Սևրի Մխիթարյան վարժարանի տնորեն Հայր Սահակ Վարդապետին, այցելեց Ամերիկայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի Հայրապետական նվիրակ Գեր. Արտավազդ Արքեպիսկոպոս Սյուրմեյանի. հյուրերը սիրալիր կերպով ընդունվեցան Հայրապետական պատվիրակին։

(«Ժողովուրդ», 13 հուլիս, 1947 թ.)

ԱՐՏԱՎԱԶԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՈԼԱՆՏԱՅԻ ՄԵՋ

Եվրոպայի Հայրապետական նվիրակ Տ. Արտավազդ Արքեպիսկոպոս հունիսի 20-ին ուրբաթ առավոտ Հոլանտա մեկնած է, հովվական այցելություն տալու համար Հոլանտայի հայ գաղութին։

(«Ժողովուրդ», 22 հունիս, 1947 թ.)

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻԱ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ԱԵԼՔՍԻ ՍՐԲԱԶԱՆԸ ՊՈՒՔՐԵՇԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԱՅՑԵԼԵ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻ
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

Ռումանիո թեմի Առաջնորդական Փոխանորդ Տ. Վազգեն վարդապետի, եկեղեցական իշխանության և Հայաստանյան Ճակատի հրավերով Մոսկվայի և Համայն Ռուսիո օրթոտոքս Պատրիարք Ամենապատիվ Աղեքսի Սրբազան հաճած է այցելել հայոց եկեղեցին, հունիս 8-ին, կիրակի օր։

Քանի մը հազարի հասնող հայեր եկեղեցի լեցված են, որուն դռնեն մինչև փողոցի դարպասը գորգեր կը փռվին։ Անոնց երկայնքով կազմված անցքին երկու կողմը աշակերտներն ու ուսուցիչները, յուրաքանչյուրը ծաղկեփունջ մը բռնած, կշարվին։ Վեցական ոտքեն և խորհրդային դրոշակներ ալ պարզված են երկու կողմերը։

Ս. Պատրիարքը կը հասնի ժամը 17-ին, և մուտքին առջև կը դիմավի առաջնորդական Փոխանորդ Տ. Վազգեն վարդապետին, թեմական խորհուրդին, Հայաստանյան Ճակատի կեդրոնական Մարմնին և եկեղեցական խորհուրդին կողմեր։

Այսպես կազմված թափորը դորգերու վրայեն կ'առաջանա դեպի եկեղեցի։ Աշակերտները անոր անցած ատեն ծաղկափունջերը կ'նետեն գետին։ Նորին Սրբազնության շքախմբին մաս կկազմեին Լենինկրատի և Նովկորոտի մետրոպոլիտը, Վիտալի Արքեպիսկոպոսը, սովետական դեսպանատան կողմե Ն. Էլչիբեկյան և Թեոդորով, ռումանական Դավանությանց Նախարարության քարտուղար Հայր Տոքտ. Վասքա, այլ անձնավորություններ և ռուս ու ռումեն հոգևորականներ։

«Հրաշափառ» շարականի երգեցողությամբ Նորին Սրբությունը կառաջնորդվի մինչև եկեղեցիին խորանը. վանդակներու զոլանջներուն մեջ։ Եկեղեցական արարողությունը կսկսի, որուն ավարտումեն հետո Առաջնորդական Փոխանորդ Տ. Վազգեն վարդապետ ավուր պատշաճի քարոզ մը կխոսի, ողջունելով ռուս օրթոտոքս եկեղեցվո Պետը։

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ Տ. ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏԻ ԽՈՍՔԸ

«Այս օր է զոր արար Տէր. եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի սմա» (Սաղմոս 117-23)։

Այս սաղմոսերգությամբ է, որ պետք է սկսինք այսօր մեր խոսքը, երբ Նորին Սրբություն Ալեքսի Ամենապատիվ Պատրիարքը Մոսկվայի և Համայն Ռուսիոյ, իրեն ընկերակցող Սրբազան Հայրերուն հետ միասին մեզ մոտ կուգա։ այս մեր սուրբ տաճարին մեջ, զմեզ ճանչնալու և մեզ հոգեպես մխիթարելու։

Աստուածառաք մեծ և սուրբ հուղումներ կալեկոծեն մեր հոգիներն այս պահուս, և մենք զՁեզ կդիմավորենք Ամենապատիվ Սրբազան Հայրեր, խոր երախտագիտական զգացումով լեցված։

Մեր երախտագիտության մտածումը կուղղվի նաև Նորին Սրբության Նիկոդիմ Պատրիարքին Ռումանիո և ռումեն Օրթոտոքս Ս. Եկեղեցվո, որոնք մեզ այս առիթը ընծայեցին, երբ մենք իրենց լուսավոր օրինակին հետևելով՝ կրնանք ահա մեր մեջ ընդունիլ և մեծարել Ռուս Օրթոտոքս Ս. Եկեղեցվո բարձր ներկայացուցիչները։

Հանուն Հայաստանյայց Ս. Եկեղեցվույն, հանուն Ռումանահայ Թեմական Խորհուրդին և Պուքրեշի Թաղականության և ամբողջ համայնքին՝ խոնարհաբար կխնդրենք Ն. Ս. Ալեքսի Պատրիարքեն, Լենինկրատի և Նովգորոդի Սրբազան մետրոպոլիտ Գրիգորիեն և Վիտալի Սրբազան Արքեպիսկոպոսեն, որ ընդունին բարի գալուստի մեր քրիստոնեական ողջույնը, ողջույն մը, որ կբխի մեր բոլորիս որդիական անխառն սիրո ամենաջերմ զգացումներեն։

Օրթոտոքս Եկեղեցվո և մեր Հայաստանյայց Եկեղեցվո միչև միշտ ալ եղած են ամենասերտ բարեկամական կապեր և միշտ ալ պիտի ըլլան։

Բայց մեր եկեղեցիներու միչև գոյություն ունեցող եղբայրական սիրոյ և ներդաշնակ գործակցության կապերը մենք տեսանք ու զգացինք մանավանդ Ս. Էջմիածնա մեջ, 1945-ի Հայ Ազգային-Եկեղեցական ժողովին առթիվ, Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Գևորգ Ջ Հայրապետի ոգվույն, խոսքին և գործքին մեջ։

Ամենապատիվ Պատրիարք Հայր, իրապես Ամենայն Հայոց Հայրապետը Ձեր ճշմարիտ եղբայրն է ի Քրիստոս և այն քաջ հովվապետը, որ Սովետական Հայրենիքի պաշտպանության համար մղված կռվի ծանր, բայց հերոսական օրերուն հանդես եկավ որպես Ձեզ մարտակից եղբայր, մարտե և հպարտանալի հրավեր կարդալով իր ժողովուրդին։ Ու այսօր ալ Ամենայն Հայոց Հայրապետը Ձերդ Սրբազնության կողքին միշտ արթուն և ապահով պահապան մրն է սովետական ժողովուրդներու եղբայրության, և Ձեզ միշտ աղոթակից ըլլալով. Ան, հանուն Հայաստանյայց Աստուածակառույց Եկեղեցվույն, կօրհնե մեծ և աղնիվ սուս ժողովուրդը, որոնց դլուխ կանգնած է իմաստուն ու քաջ Սպարապետ Ստալին։

Ս. Էջմիածինը միշտ պիտի աղոթե և պիտի գործե Սովետական Միության ժողովուրդներու եղբայրության, խաղաղության և ազատության, ու անոնց մեծ և միացյալ Հայրենիքին փառքին համար։

Ամենապատիվ Սրբազնագույն Պատրիարք Հայր, ծնկաչոք կաղաղենք առ Ամենակարողն Աստուած, որ պարգևե Ձեզ երկար ու արդյունավետ կյանք և երջանիկ հովվություն ի ծաղկումն Ռուս Օրթոտոքս Եկեղեցվույն և հուրախություն ռուս ժողովուրդին և անոր Ս. Եկեղեցվույն ճշմարիտ բարեկամներուն, որոնց շարքին կխնդրենք որ դասեք նաև զմեզ հայերս՝ ժողովուրդ և եկեղեցի։

Ամենապատիվ Պատրիարք Հայր, խոնարհաբար կխնդրենք Ձերդ Սրբությունեն՝ տվեք մեզ Ձեր սուրբ օրհնությունը։

Առաջնորդական Փոխանորդ Տ. Վազգեն վարդապետի բարի գալուստի խոսքը ողջե-

քին և ռումեն թարգմանությամբ կարդացվեցան Ռեմոական խորհուրդի անդամներ փոստատարան Գ. Ասվատուրովի և տոքթոր Ս. Փոսիադյանի կողմեն։

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽՈՍՔԸ

«Ես շատ ուրախ եմ, որ կայցելեմ Ձեր Եկեղեցին և հավայնեմ, որ այնքան սիրով կապված կմնանիմ իր եկեղեցիին։

Ես ձեր Կարողիկոսին, Նորին Սրբությունն Գեորգ Զ-ի հետ մշտապես նամակագրության մեջ եմ։ Ես կճանաչեմ ձեր եկեղեցվո բազմաթիվ հովիվները։ Անոնցմե շատերուն հետ ծանոթանալու առիթ եմ ունեցած նաև արտասահմանի մեջ, այսպես՝ Եգիպտոս, Երուսաղեմ, Պեյրութ, Անթիլիաս, Թեհրան և այլ վայրեր։

Ամեն տեղ վայելած եմ անոնց հյուրասիրությունը և սքանչացած եմ անոնց կրոնական ու ազգային հաստատություններուն վրա։ Ով որ եկեղեցական պատմությունը գիտե, անոր ծանոթ է թե հայ ժողովուրդը գտնվելով աղդային քաղաքական դժվարությունի պայմաններու մեջ, Հայ Եկեղեցին շիրցավ 451 թվին Քաղկեդոնի տիեզերական ժողովին դրկել իր ներկայացուցիչներ։ որմե հետո Հայ Եկեղեցին առանձնացավ։ Բայց և այնպես, մենք բոլոր Քրիստոնյաներս միևնույն Աստուածը կպաշտանք, ուստի և ես կկարծեմ, որ բաժնված եկեղեցիները նորեն կմիանան խաղաղության սուրբ գործին շուրջ և մենք բոլորս մեր լեզուներով կրնենք մեր պատարագները «տուպես յերկինս և յերկրի» *(այս վերջին բառերը Ն. Սրբությունը ըսավ հայերեն լեզվով)։*

Կաղաչեմ ձեզ բոլորդ և ձեր ամբողջ հավայնեը»։

Այնուհետև Ն. Սրբությունը թափորով առաջնորդվեցավ Մշակույթի Տան վերի սրահը, նախապես կարճ այցելություն մը տալով գրադարանին։

Վերի սրահին մեջ Հայաստանյան Ճակատի Կեդրոնական Կոմիտեի նախագահ Վահան Դանիելյանը, հանուն հիշյալ կազմակերպության և Ռումանահայ գաղութի, խոսեցավ հետևյալ ճառը, որուն ռուսերեն թարգմանությունը կարդաց Դ. Եգիդարյան։

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՃԱԿԱՏԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ՎԱՀԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն,

Ռումանահայ գաղութին համար պատմական օր մըն է այսօր և մեծ պատիվ մը Ձերդ Սրբության այս այցելությունը։

Մեզի կատարված այս բարձր պատիվը Ռուս Օրթոդոքս եկեղեցվո արժանավոր Պետին կողմե՝ մենք կնկատենք բարձր ուշադրության երաշխիք մը՝ իր 16 դարերու պատմական հնությամբ հպարտ Հայ եկեղեցվո հանդեպ։

Ձերդ Սրբության բարձր ներկայությունը մեր մեջ շատ բնական կերպով մեր միտքերը կտանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեվորգ Զ-ին, որովհետև մենք, Նորին Սրբության հոգևոր զավակներս, գիտենք թե՝ Ռուս Օրթոդոքս եկեղեցին և Հայ Լուսավորչական եկեղեցին մեր ընդհանուր Հայրենիքի մահու և կենաց ահավոր պայքարի ամբողջ ընթացքին, որ մղվեցավ Գեներալիսսիմուս Ստալինի հանճարեղ ղեկավարության ներքո, ձեռք ձեռքի տված լիովին կատարեցին իրենց պարտականությունը Սովետական Հայրենիքին և անոր բոլոր ժողովուրդներուն հանդեպ։

Եվ հայ ժողովուրդը իր Հայրենիքին մեջ, ինչպես և մենք ի սիրտս աշխարհի ցրված հայերս, արդար հպարտությամբ մը հետևվեցանք երկու եղբայրական եկեղեցիներու այդ հայրենանվեր ու անզուգական տոգորումներուն և գործերուն, ու ունեցանք այս զույգ եկեղեցիներու արժանավոր Պետերուն հանդեպ անհուն երախտագիտության զգացումներ։

Ձերդ Սրբություն,

Մեր այս որդիական ջերմ զգացումները կնորոգենք այսօր Ձեզի, և միաժամանակ կխնդրենք Ձերդ Սրբությունեն, որ հաճիք Ձեր հայրական օրհնությունը տալու Սովետական Հայրենիքի այս հեռավոր, բայց հայրենաբաղձ զավակներուն, որոնք Ձերդ Սրբության Բարձր անձին մեջ կտեսնեն այդ Հայրենիքի արժանավորագույն ներկայացուցիչներեն մին։

Հանուն Ռումանիո Հայաստանյան Ճակատ կազմակերպության և Ռումանահայ գաղութի թույլ տվեք ըսելու Ձերդ Սրբության.— Բարի եկաք։

Կցանկանք Ձերդ Սրբության կատարյալ առողջություն և կմաղթենք երկար կյանք։

Կեցցե մեր սիրելի Հայրենիքը՝ Սովետական հզոր ու միաձույլ Միությունը։

Կեցցեն սովետական ժողովուրդները։

Կեցցե հայ ժողովրդի ավագ եղբայր ռուս մեծ ժողովուրդը։

Կեցցե Սովետական Միության անզուգական Առաջնորդ Գեներալիսիմուս Ստալինը։

Կեցցե Ռուս Օրթոդոքս եղբայրական եկեղեցին։

Եվ կեցցե իր արժանավոր Պետը՝ Նորին Սրբություն Մոսկվայի և ամբողջ Ռուսիո Պատրիարք Ալեքսին։

Նորին Սրբություն Պատրիարք Հայրը հետևյալ հակիրճ, այլ սրտալից խոսքերով պատասխանեց.—

«Ես շատ ուրախ եմ և բախտավոր ձեր մեջ գտնվելուս, դժբախտաբար սակայն միայն կարճ ժամանակվա մը համար»։

Այնուհետև շամպայն հրամցվեցավ։ Նորին Սրբություն Պատրիարք Ալեքսին բաժակը բարձրացնելով ըսավ. «Այս առաջին բաժակս կխմեմ Ն. Ս. Գեորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կենացը։ Ապա երկրորդ բաժակս կխմեմ ձեր Առաջնորդական Փոխանդամները, Հայաստանյան Ճակատի և Թաղականության նախագահները ու բազմաթիվ ներկաներ։ Ապա Ն. Սրբության մատուցվեցավ Հայ Մշակույթի Տան Ոսկյա Մատյանը, որուն մեջ հաճեցավ գրել հետևյալ նշանակալից խոսքերը.

«Շատ ուրախ եկա այցելելուս համար հայոց շատ գեղեցիկ եկեղեցին և Մշակույ-

Ն. Ս. Ալեքսի Պատրիարքը Հայ Մշակույթի Տան Ոսկյա Մատյանի մեջ արձանագրում է իր այցելության մասին։

Նոր դար, հայ համայնքի և հայ եկեղեցականներու կենացը»։

Անմիջապես հետո Ն. Սրբության աչքը համբուրելու մոտեցան Թեմական Խորհուրդի

թի Տունը։ Կնայցեմ աստուածային օրհնությունը հոգևորականության և ամբողջ հավատացյալ համայնքին վրա»։

ԱԼԵՔՍԻ

Պատրիարք Մոսկվայի և համայն Ռուսիոյ

8 մարտ 1947 թ. Գուրեշ

Այնուհետև Ն. Սրբությանն և Վերկաներու միջև սկսավ սրտագին, ազատ ու անպաշտոնական խոսակցություն մը, որ տևեց շուրջ կես ժամ մը, մինչ մյուս կողմեն հյուրասիրությունը կշարունակվեր։ Այս ազատ խոսակցության ընթացքին, Առաջնորդական Փոխանորդ Հայրը կխնդրի Ն. Սրբությենեն, հարմար առիթով մը հաղորդելու Ամենայն Հայոց Կաթողիկոսին իր տպավորությունը։ Պատրիարք Հայրը այսպես կպատասխանե Տ. Վազգեն վարդապետի խրնդրանքին. «Մոսկվա հասնելուս, հեռագրով պիտի հաղորդեմ Գևորգ Չ Կաթողիկոսին իմ այս այցելությանս և Ձեր ընդունելությենեն ստացած զեղեցիկ տպավորությանս մասին»։

Ժամը 6,30-ին Նորին Սրբությունը անգամ մը ևս օրհնելով Ներկաները, իր շքախմբով հեռացավ Մշակույթի Տունեն։ Բակին մեջ հաղարավոր հայ բազմությունը դեռ կսպասեր Նորին Սրբության, որ ծափերու տեղատարափին տակ հեռացավ։

Ն. Ս. Պատրիարք Ալեքսիի այս այցելությունը իրրև հազվագյուտ իրադարձություն մը պիտի արձանագրվի մեր համայնքի պատմության մեջ։ Այս բարձր այցելությամբ, մեծ, շատ մեծ պատիվ մըն էր, որ տրվեցավ Ռումանահայ գաղութին, որ անշուշտ պիտի հասկնա, թե Ն. Սրբության այս հայրական ժեստը կատարվեցավ իրրև բնական հետևանք մեր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի ու Ամենայն Հայոց Կաթողիկոսության ունեցած համեստ, այլ իրավահավասար դիրքին Սովետական Միության մեջ և հոն գտնվող բազմաթիվ դավանությանց կողքին։

Հայ համայնքը կատարեց իր պարտականությունը գեղեցիկ կերպով. այս ալ իր վարիչներու բարեմասնությանց պիտի վերագրել, զոր և կարձանագրենք այսուհետ ամենայն հաճույքով։

Ա. Տ.

(«Հայաստանեաց Ձայնատ» թիվ 47, 1947 թ.)

Հ. ԱՐԱՄՅԱՆ

Ս. ՄԵՍՐՈՊԻ ՇԻՐՄԻՆ ԱՌՋԵՎ

Սո՜ւրբ ըստեղծիչ, Հայու հոգվույս ո՛վ հայր և մա՜յր,
Երբ ըզմեզ փնտռեցի ես այս քարին տակ,
Ու բերի հոս զով ծաղիկներ և համբույր տամ՝
Սոսկ բրնազդո՜վ էր ատիկա, անգիտաբար...

Ո՛չ, հոս չե՜ս դուն, այս կայքին մեջ մեռելական,
Ո՛չ, հոս չե՜ս դուն, ընդհատակյա քարին ներքև,
Դուն կյա՛նք ես բոբ, ո՛վ կենուցիչ, կենսապարգև,
Կյա՛նք տրոփուն՝ հավիտյանե՜ի հավիտյան...

Կը կարկաչե մեղրագետակ Հայոց լեզուն,
Այս լեռանց մեջ ու դաշտերուն հայրենական,
Ամենուրեք մեսրոպական լո՛ւյս տարեր կան,
Ամենուրեք Հայոց լեզվի բառե՜ր զեղուն...

Հավերժության դուն կապեցիր լեզուն Հայոց,
Հավերժակա՜ն դարձուց ըզմեզ ան իր կարգին,
Քեզ կը սիրենք ուղիաբար ու կարոգին,
Մեզ հետ ես դուն, միշտ ողջ, ինչպես լեզուն Հայոց...

Սո՜ւրբ ըստեղծիչ, Հայու հոգվույս ո՛վ հայր ու մա՜յր,
Երբ ըզմեզ փնտռեցի ես այս քարին տակ,
Ու բերի հոս զով ծաղիկներ և համբույր տամ՝
Սոսկ բրնազդո՜վ էր ատիկա, անգիտաբար:

Նշական
1915 թ.

ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ

ԻՄ ՀՈՒՇԵՐԻՑ

Ա.

ՍԱՇԵՆԱ ԴԱՎԻԹՈՎ

Էր ուսանողության օրերին, 1879—1882 թվականներին, Մոսկվայում մի հայ երիտասարդ էր ապրում, որ ուսանելու էր եկել։ Շնորհալի էր նա ու արևելյան գեղեցկության տեր.— բոյ-բուսաթ, սևաթույր մազեր, վառվռուն աչքեր, կամար ու թուխ հոնքեր, սիրուն ու կոկ կեցվածք, քաղցրահնչյուն ձայն ունեցող կրակ ու բոց երգիչ էր նա։ Մայրաքաղաքի բոմոնդի մեջ հոյակ ուներ նա, սիրուն աղջիկներին ու գեղանի կանանց խելքամուղ անել գիտեր... Ո՞րն ասեմ, ո՞րը, մի խոսքով սրտակեզ, սրտակեր մի երիտասարդ։

Մեկ անհայտ է, թե կոնսերվատորիան ավարտել էր նա, թե ոչ, բայց ձայնը մշակել էր։ Նա իր համար ստեղծել էր երգելու ինքնուրույն մի ժանր, որի համապատասխան էլ երգեր էր ընտրում, իսկ երբեմն էլ գրել պատվիրում... Նրա սիրած երգն էր «Очи черные, очи жгучие» երգը ու դրա հար ու նման այլ երգեր։

Երգելու պահերին քաղցր ժպիտը խաղում էր նրա դեմքին. նա երգում էր խորը զգացմունքով և երգի հմայիչ հնչյուններով ապրում ու ապրեցնում իր ունկնդիրներին։ Նրա ձայնը բարձր նոտաներում կարկաչում էր հորդահոս վտակի նման, իսկ ցածր նոտաներում՝ խոխոջում լեռնաղբյուրի նման։

Շատ ենք լսել նրա երգերը, սակայն, ո՞վ կարող է նկարագրել այն խովյանքն, այն համակ քաղցրությունը, որ պարուրում էին մեր սրտերը նրան ամեն անգամ ունկընդրելուց. նրա մելանուշ ձայնը մերթ գեղգեղում, ճախրում էր բարձր ոլորտներում, մերթ քաղցքաղուր դալլալում ու մերթ նվաղո՞ւմ, ծորո՞ւմ և թանձրորեն ծավալվելով սփռվում. ոչ մի կեղծ հնչյուն, ոչ մի արհեստականություն, նրա ջինջ ու վճիտ ձայնը խորապես հուզում էր ունկնդիրներին, պատմում նրանց կյանքի, գգվանքի ու երջանկության մասին։ Դահլիճի քար լռության մեջ նրա ձայնի ալիքները ծովի խայտացող ալիքների նման հեզաճկուն տարածվում էին ափերից դեպի հեռուները։ Բայց հենց որ օդում մարում էին նրա ձայնի վերջին հնչյունները, դահլիճի քար լռությունը վայրկենապես փոխարինվում էր խռովահույզ ծովի. որոտընդոստ կեցցեներ, խելահեղ ծափերի բուռն աղմուկը փոթորկում էր դահլիճը։

— Բռավո՞ Սաշկա, բռավո՞ Դավիդով։

Բեմը լցվում էր երիտասարդ ծաղկեփնջերով։

Երիտասարդ շնորհալի երգչի անունը Ալեքսանդր էր, ազգանունը Դավթյան։ Մոսկվայի հասարակայնությանը նա հենց այդ անունով էլ հայտնի էր, բայց ռուսական ձևի փոխված ու ժողովրդականացած—Սաշկա Դավիդով ձևով։

Ես նրա հետ ծանոթացել էի հորեղբորս՝ բանաստեղծ Սմբատ Շահազիզի տանը, ուր նա լինում էր երբեմն. հորեղբայրս ինձ նրա հետ ծանոթացնելով ասաց.

— Ծանոթացիր, սա մեր հայրենակիցն է, երգիչ Դավիդովը, անշուշտ լսած կլինես նրա անունը։

Շատ համեստ մարդու տպավորություն թողեց իմ վրա, այնինչ նրա համբավը անչափ մեծ էր ու տարածված. նրա հաջողությունների մասին հրաշքներ էին պատմում։

Որպես համբավավոր երգչի ես նրան լավ էի ճանաչում, բայց թե ո՞վ էր նա, ի՞նչպես էր մեր հայրենիքից Մոսկվա ընկել, այդ մասին ես շատ կցկտուր տեղեկություններ ունեի։ Հորեղբայրս էլ, կարծեմ, նրա մասին

շատ բան չգիտեր։ Շատ թե քիչ հավաստի աղբյուրներից տեղեկացել էի, որ նա վարդապետի էր. լավ ձայն ունենալով նա Հայրենի դյուղից հեռացել էր բախտ որոնելու Նպատակով ու առաջին անգամ ոնկել Թիֆլիս, ուր հայ եկեղեցիներից մեկում տիրացվի պաշտոն է վարել։ Մի օտարազգի հավանորեն տուրիստ, մտնում է եկեղեցի հայկական պատարագ լսելու համար. լսելով տիրացվի ախորժալուր ձայնը, օտարականն այնպես է հմայվում, որ մնում է եկեղեցում մինչև պատարագի վերջանալը. ծանոթանում շնորհալի տիրացվի հետ ու ապա նրան իր հետ Մոսկվա տանելով, հոգում նրա ձայնի մշակման մասին։

Իմ ծանոթությունը տաղանդավոր երգչի հետ հարևանցի էր ու դեռ երկար ժամանակ էլ այդպես հարևանցի մնաց։

Տարիներ անցան։

Ես նոր Նախիջևանի հայոց թեմական դրպրոցում տարիներ շարունակ արդեն ուսուցչի պաշտոն էի վարում, երբ մի վերջին անգամ էլ հանդիպեցի նրան նոր Նախիջևանում ու, բնականաբար, մեր ծանոթությունը նորոգվեց։ Ինչպես երևում էր, նա առաջին անգամը չէր, որ այցելում էր այլ շեն հայ դաղութը, որովհետև ծանոթ էր Նախիջևանցոց բարբառին, դիտեր ու ճաշակով երգում էր նրանց, իրենց հետ Ղրիմից բերած, երգերը, ինչպես օրինակ՝ Ալ գելինը, Ույին-հավան, Ղալմուխ-հավան, Ջալ ձիին-հավան, Պատին տակը, և այլն։

Նա վարձել էր քաղաքային պարտեզը, որը գտնվում էր հայոց Ս. Գևորգ եկեղեցու մոտ, Նոր Նախիջևանից Ռոստով տանող մեծ ճանապարհի վրա և հարմարություն ուներ երկու քաղաքների բնակիչների այցելության համար, ուրեմն և որոշ չափով գործն ապահովված էր եկամտի տեսակետից։

Նա իր հետ բերել էր երկու շատ վարպետ ջութակահար ու կազմակերպել ընտիր նվագախումբ, որը կարող էր բավարարել ամեն մի երաժշտասեր հասարակության պահանջներին։

Այսպիսով, գործի հաջողության համար ամեն ինչ լիակատար էր, և՛ ծառազարդ ու ծաղկազարդ պարտեզը, և՛ երկու անվանի ջութակահարները, և՛ լավագույն օրկեստրը, և՛ երգչի համբավը, սակայն պակասում էր այդ համբավի իսկական տերը, Սաշկա Դավիդովը, կրակ ու բոց երգիչ Դավիդովը, որի մրնացորդը, միայն ստվերն էր ներկա։ Անողոք ժամանակը, տարիները դրել էին նրա վրա իրենց անջնջելի կնիքը, շոշափելի դրոշմը։ Նա ծերացել էր, շարժվածքը դարձել էր դանդաղ, գեմքը թորշոմել, մազերն ալեխառնվել. բայց այդ բոլորը դեռ ոչինչ, փառավոր ստվերը, պատկառելի մնացորդն էլ դեռ մի բան արժեին։ Գլխավորն այդ չէր. գլխավորը, և մենք կասենք ողբերգականը. այն էր, որ նա կորցրել էր ընդմիշտ իր ունկընդիրներին թովող ու գերող ձայնը... Ո՞ւր էր այն կարկաչուն աղբյուրը. այն խոխոջյուն առվակը, ո՞ւր այն ծորուն ու ծավալուն քաղցր մեղեդին... Նա այլևս անկարող էր բարձր երգել, նա երգում էր ռեչիտատիվով...

Հիշում եմ այդ օրը. Նոր Նախիջևանի մայիսյան սիրուն, արևոտ օրերից մեկն էր. այդ օրը նշանակված էր պարտեզի բացումը և համբավավոր երգիչը իր առաջին ելույթը պիտի ունենար երկու քաղաքի ընտիր հասարակության առաջ։ Ժամը տասին արդեն այնքան մարդ էր հավաքվել, որ հանդիսատեսների համար շարված բազմաթիվ աթոռներն ու երկար նստարանները արդեն լրիվ զբաղեցված էին. սակայն մուտքի առաջ դեռ շարունակվում էր տոմսակների վաճառումը ու մարդկանց հոսանքը չէր դադարում։ Վերջապես հնչեց զանգը և նվագախումբը սկսեց ինչ որ մի ուրախ եղանակ նվագել. նստելու տեղ չունեցող մարդիկ խոնվեցին ու տեղավորվեցին, ով ուր կարող էր։ Ժամը 12-ն էր, որոտընդոստ ծափերը, «время, время» բացականչությունները գնալով խլացուցիչ էին դառնում։ Թեմի վրա, վերջապես, երևաց նա, որին սպասում էր հասարակությունը. նա ոտից ցգլուխ սպիտակ զգեստ ուներ վրան, իսկ երկար ճերմակ մազերը սանրված էին խնամքով։ Ծանոթ ժպիտը դեմքին, վարժ ձևերով նա մի քանի քայլ առաջ եկավ, կանգնեց նվագախմբի մեջտեղը, գլուխ խոնարհեց հասարակության ու սկսեց երգել իր սիրած երգերից մեկը, կարծեմ «Մեռրակ աշիրա»-ը։ Նա հրդում էր մեղմ, երգախառն ռեչիտատիվով, բայց այնպես քաղցր ու դուրեկան էր հնչում նրա երգը, որ հմայում էր ունկնդիրներին. երբ վերջացրեց երգը, դարձյալ առաջվա նման որոտընդոստ ծափահարությունների արժանացավ։ Նույն հաջողությամբ նա մի քանի երգ էլ երգեց. նա երգում էր մեջբնդմեջ. երգից հետո նվագախումբը ինչ որ եղանակ էր նվագում, ապա հանդես էին գալիս երկու վարպետ ջութակահարները և այնուհետև նորից ինքը որևէ երգ էր երգում ու այդպես շարունակ...

Նրա վերջին երգն էր «Ալ գելինը», որի բառերն արդեն մոռացված են և պահպանվել է միայն սիրուն, սրտառուչ եղանակը.— հարսին տանում են իր հոր տնից ու նա լալով բաժանվում է իր ծնողներից։ Այս երգը նա այնպես սրտահույզ էր երգում, որ ունկ-

կընդիրների աչքերից արտասուք էր քամում։ Այնուհետև, որպեսզի լալուց հետո նոր-նախիջևանցոց ուրախացնի, նա մի վերջին անգամ էլ երգեց «Օյին-հավանա», որը պարի եղանակ է. այդ պարերգը նա երգում էր շրվշրվացնելով, ու այնպիսի շարժումներով, որ թվում էր, թե ինքն էլ պարում էր... Եվ ի-հարկե ստացվում էր մի շատ զավեշտական պատկեր, որ ֆուրոր էր անում։

Նա ամեն օր չէր երգում, շաբաթը մեկ կամ երկու անգամ. մնացած օրերին նվագում էր նվագախումբը ու հանդես էին գալիս երկու չութակահարները. այդպիսի օրերին ձեռքերը դրպանը դրած նա կանգնում էր ռոտոնդի մոտ ու լսում երկու չութակահարների նվագը. ինչպես երևում էր, նա շատ էր սիրում չութակի նվագը։

Այսպես շարունակվեց մինչև օգոստոս, մինչև սեզոնի վերջը։ Հասարակությունը շատ գոհ էր։ Եկամուտը նույնպես գոհացուցիչ էր, այնպես որ ոչ միայն իր ծախսերը ծածկեց, այլև իրեն էլ որոշ գումար մնաց։ Սեզոնի փակումն էլ նույն հաջողությամբ տեղի ունեցավ, ինչ որ բացումը։ Երինեանց ծաղկեփնջերի հետ միասին նրան մի թանգարժեք ընծա էլ մատուցվեց։

Հիշում եմ, թե ինչպես հրաժեշտի ժամանակ խորոված էր պատրաստվել ու մի տասը մարդ էլ բոլորվել էինք մնաս բարովի սեղանի շուրջը։ Ինքը երգիչը շատ տխուր էր, նա ասաց, որ հավանորեն սա իր վերջին ելույթը կլինի, որ ինքը չի ցանկանում խզված ձայնով հանդես գալ իր սիրած Մոսկվայի հասարակության առաջ, այն Մոսկվայի, որն իրեն սովորեցրել, փայփայել, խրախուսել ու վարպետ երգչի համբավին էր արժանացրել։

— Ես իմ հայրենիքից կտրվել, հարազատացել եմ Մոսկվային. Մոսկվան իմ երկրորդ հարազատ հայրենիքն է դարձել, ես ընդմիշտ կմնամ այնտեղ. բայց խզված ձայնով այլևս հանդես չեմ գա իմ սիրելի մոսկվացիների առաջ,— ասում էր նա ռուսերեն լեզվով։

Նա թեև հայերեն չէր մոռացել, բայց սովորաբար ռուսերեն էր խոսում։

Ես այլևս դրանից հետո նրան չհանդիպեցի։ Լսեցի, որ նա վախճանվել է, ճիշտը չեմ հիշում, 1911 թե 1912 թվականին։

Բ.

ՌՈՓԱՑԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ԲԺԻՇԿ՝ ՊՐՈՖԵՍՈՐ ՂԱԶԱՐՈՍ ԹՈՄԱՍԸ

Պատկանյանի նամակներից մեզ հայտնի է, որ նա յուր մահվանից մի տարի առաջ, 1891 թվին ամրանը, բժիշկների խորհուրդով, մեկնել էր Սիթու-Ջուրա (Կիսլավոդսկ), իր քրոնիկական բրոնխիտից բուժվելու համար, մի հիվանդություն, որ այդ ժամանակները օրեցօր զարգանալով նրա օրգանիզմում արդեն լուրջ վտանգ էր սպառնում նրա կյանքին։

1891 թվականին Կիսլավոդսկում շատ հայեր կային. ես էլ այնտեղ էի։ Բոլորս էլ ճանաչում էինք Պատկանյանին. մեզնից շատերի հետ նա անձնական ծանոթություն ուներ. սակայն, նրա ծանոթների մեջ, անկասկած, ամենանշանավորը Վարշավայի համալսարանի ուսուցչապետ բժիշկ Ղազարոս Թոմասն էր, որը 1895 թվականին վախճանվեց Ցալտայում, հենց այդ նույն հիվանդությունից, որով տառապում էր Պատկանյանը և որից փրկել էր ուզում նրան ինքը։

Մեկ օր երեկոյան, երբ երաժշտախումբը նվագում էր պարկում ու կուրորտավորները պտտվում էին խռնվել, ես տեսա Պատկանյանին մի միջահասակ, բարակ-բարակ մարդու հետ զբոսնելիս։ Երբ նրանք հասան այն նստարանին, որի վրա ես էի նստած, Պատկանյանն ինձ ձեռքով հրավիրեց ու ծանոթացրեց յուր ընկերոջ հետ։ Այդ ինձ անծանոթը Թոմասն էր. որը նոր միայն ծանոթացել էր Պատկանյանի հետ հայտնի Ալեքսանդր Մանթաշյանի միջոցով։

Մենք սկսեցինք միասին զբոսնել. խոսում էր, ըստ սովորականին, Պատկանյանը, իսկ Թոմասը միայն պատասխանում էր նրա հարցումներին ու պարզաբանումներ անում։ Խոստովանում եմ, հենց առաջին հանդիպումից նա գրավեց իմ համակրությունը իր պարզությամբ, քաղցր վարվեցողությամբ, հստակ դատողությամբ ու վերին աստիճանի համեստությամբ։ Նա խոսում էր ժպիտը դեմքին ու ձայնի մի այնպիսի ախորժելի ելևէջներով, որը հատուկ է միայն իսկական գիտնական անձանց։ Թեև նա հայերեն լավ չէր խոսում, բայց և այնպես աշխատում էր, մեզ հետ միայն ու միայն հայերեն խոսել, և անդադար խնդրում էր, որ մենք իր սխալներն ուղղենք։ Պետք է ասեմ, որ երբեմն շատ զավեշտական պատկեր էր ստացվում, երբ նա աշխատելով գրական մաքուր լեզվով մի որևէ վերացական կամ գիտական միտք արտահայտել, դժվարանում էր, չէր կարողանում ու սկսում էր

իրեն ծանոթ և հարազատ Հաշտարխանի բառաբառ գործ ածել։

Այնուհետև ես նրան հաճախակի էի հանդիպում Պատկանյանի հետ միասին։ Թոմասը քիչ և այն էլ ի միջի այլոց էր գործնական բժշկությամբ զբաղվում. առաջին անգամն էր նա Հյուսիսային Կովկասի հանքային ջրերն այցելում. նա եկել էր այս անգամ տեղի պայմաններին ծանոթանալու համար միայն, որպեսզի հաջորդ տարում սեզոնի սկզբից հաստատվի էսսենտուկում ու գործնական բժշկությամբ զբաղվի։ Ամեն անգամ հանդիպելուց մենք երկար ժամանակ զրուցում էինք միմյանց հետ. ես նրա պես հայ մարդու շատ քիչ էի հանդիպել. մեր հայերից ոմանք պախարակելի սովորություն ունեն, բարձր դիրքի տիրանալուց գոռոզանալ, բարձրից նայել իրենց ազգակիցների վրա։ Սակայն Թոմասը դերծ էր այդ պախարակելի հատկությունից, նա իսկական, ազնիվ, մաքուր հայի տիպար էր. երկար տարիներ ապրելով օտարության մեջ ու օտարներով շրջապատված, նա իր սրտի ծալքերում անարատ պահել էր սերը դեպի հայ ժողովուրդը, հայ լեզուն, հայ գրականությունը։ Նա ուրախանում էր հայոց դպրոցների հաջողություններով և հրճվում հայ գրականության օր ավուր զարգացումը տեսնելով։

Ապշեցուցիչ էր նրա վերաբերմունքը, նրա բյուրեղային, անշահախնդիր սերը Պատկանյանի հանդեպ. նա այնպես էր գուրգուրում, այնպիսի սիրով ու նվիրվածությամբ բուժում և խնամում նրան, որ կարելի էր կարծել, թե Պատկանյանից զատ ավելի մտերիմ, ավելի հարազատ մարդ չուներ այլևս։ Նրանք միշտ անբաժան էին իրարից ու զբոսանքի էին ելնում իրար հետ թևանցուկ։ Կարծեմ նրանք մի հեռավոր ազգակցական կապ էլ ունեին միմյանց հետ, բայց նրանց այդ մտերմիկ հարաբերությունը, անկասկած, այդ հեռավոր ազգակցական կապի արդյունք չէր, այլ նախ և առաջ սիրո, համակրության ու հոգատարության, որ նա, իբրև բժիշկ, տածում էր յուր բոլոր հիվանդների հանդեպ առհասարակ, և երկրորդն ու ամենագլխավորը այն մեծ համարմունքի, որ նա ուներ Պատկանյանի մասին, իբրև հայ մտքի և գրականության ներկայացուցչի, իբրև առաջնակարգ բանաստեղծի, և վերջապես այն հուսահատ կացության, որի մեջ գտնվում էր մեր բանաստեղծը։

Ես հաճախ Պատկանյանից ծածուկ Թոմասին հարցնում էի նրա հիվանդության մասին. նա միշտ էլ հուսահատությամբ պատասխանում էր, որ հույս չկա և որևէ բան անել անհնար է. անգամ հիվանդությունն այնպես էր արմատավորվել նրա օրգանիզմում, որ բժշկականությունն անզոր էր նրա դեմ մաքառելու։ Թոմասն ասում էր, որ ձմեռը Նախիջևանում Պատկանյանին ապրել չի կարելի։ Նա Պատկանյանին խորհուրդ էր տալիս Եգիպտոս գնալ, իսկ եթե այդ անկարելի էր, գոնե Յալտա, Ղրիմի հարավային ափերը մեկնել. ու այս նպատակով էլ մի բժշկական վկայական էր տվել նրան «Արևելստավորաց դպրոց»-ի հոգաբարձության ներկայացնելու համար։

Եգիպտո՞ս, Գահիրե՞, Յալտա՞. բայց ի՞նչ նյութական միջոցներով, ո՞ւմ գումարներով. չէ՞ որ Պատկանյանի նյութական միջոցներն այնքան սուղ էին, որ նրա ընտանիքը Նոր-Նախիջևանում ապրում էր կարոտության մեջ, իսկ ինքն էլ բուժվում էր հանքային ջրերում «անենման» (ինչպես ինքն էր ասում) Գևորգի (Քանանյան), հազար մի «մունեաթներով» և վիրավորական ակնարկներով լի. արված չնչին օժանդակությամբ և մեկ էլ էսսենտուկում նրա համար հավաքած մի փոքրիկ գումարով։

***

Յուր սիրելի բարեկամ Պատկանյանի մահից հետո Թոմասը ապրել է ևս երեք տարի, որոնցից միայն մի տարին առողջ վիճակում. իսկ իր կյանքի վերջին երկու տարում տառապել է թոքախտից, որից բուժվելու համար մի տարին անց է կացրել արտասահմանում, իսկ վերջին տարին էլ Յալտայում։

Կիսալավոդսկուց հետո ես երկու անգամ էլ հանդիպեցի Թոմասին, մեկ անգամ Նոր-Նախիջևանում՝ ուրախ, առողջ վիճակում, մյուս անգամն էլ Յալտայում՝ հիվանդ, հուսահատ վիճակում։ Հիշում եմ թե ինչպես Նոր-Նախիջևան եկած ժամանակ նրա մոտ ծանոթներից ու բարեկամներից մի քանիսը ի պատիվ նրան Ս. Խաչ վանքի պարտեզում համեստ ճաշկերույթ էին սարքել։ Նա այն ժամանակ առլցված էր գործելու մեծ եռանդով, ապագայի վառվռուն հույսերով և պտտաքտաստ չէր նկատվում, որ նրա ներսում կամաց-կամաց զարգանում է հիվանդությունը, որը շուտով պետք է ստիպեր նրան դադարեցնել ոչ միայն հոանդուն գործունեությունը, այլև առհասարակ ամեն մի գործունեություն։

Ճաշկերույթն անցավ շատ ուրախ։ Ոգևորված ճառեր արտասանվեցին, փրփրադեղ բաժակներ դատարկվեցին այդ բարի ու մեծ ապագա խոստացող մարդու կենաց համար։ Երբեք չեմ մոռանա մի դեպք, որ պատահեց այդ ճաշկերույթի ժամանակ։ Օտարազգի հյուրերից մեկը բաժակ բարձրացրեց և քան-

կություն հայտնեց, որպեսզի ապագայում բոլոր ազգերը ձուլվեն ի մի և մարդկություն մի մեծ բնտանիք կազմեն, առանց ազգի, լեզվի ու կրոնի խտրության։ Թոմասը անվրդով, ժպիտն երեսին խմեց այդ կենաց բաժակը և ապա ինքն էլ իր կողմից առաջարկեց խմել կենաց բաժակ հանուն հայ ազգի զարգացման, բարգավաճման ու պայծառության։

Ցալտայում ես նրան տեսա իր կյանքի վերջին օրերին, Արդեն տարին լրանում էր, ինչ նա բուժվում էր Ցալտայում։ Ջարհուրեն հիվանդ էր, դեմքը սևացել, մաշկը կնճռոտվել, ալքերը փոս ընկել, կարելի է ասել, Թոմասից ոսկորն ու կաշին էր մնացել։ Սակայն անփոփոխ էր մնացել նրա մոտ մի բան,— դեմքի մշտապայծ քաղցր ժպիտը և հանգիստ ու անվրդով, ախորժելի խոսակցության ե-

Ռափայել Պատկանյանը և պրոֆ. Ղազարոս Թոմասը

դանակը։ Նա անդադար հազալով և ծանր շունչ քաշելով պատմում էր արտասահմանում իր բուժման, Ցալտայում քաշած նեղությունների, հիվանդության սաստկացման մասին. հաճախակի էլ հոգնելով շատ խոսելուց, նա նշաններով հասկացնում էր իր տիկնոջը, որպեսզի նա շարունակե պատմության թելը։ Ինչպես երևում էր, նա արդեն բժշկությունից ձեռք էր քաշել և հույսը դրել միայն երկնային բժշկի վրա. նրա սենյակում կախված էր Տիրամոր պատկերը, որի առաջ վառվում էր անշեջ կանթեղը. նա նույնիսկ հեռացրել էր Հայրիկին և նրա աղոթքն ու օրհնությունը խնդրել իր համար։

1895 թվականի օգոստոսի 6-ին ինձ մոտ եկավ Նոր-Նախիջևանցի բարեկրոն քահանա Տեր-Մկրտիչ Գանձապետյանը, որը բարեբախտաբար այդ ժամանակ Ցալտայումն էր գտնվում, և հայտնեց, որ ինքը գնում է Թոմասի տունը հանգստյան կարգը կատարելու, քանի որ նա գիշերը վախճանվել էր։ Նրա մահվան լուրը ինձ համար, հայտնի բան է, անսպասելի չէր. թեև նա մեկ-մեկ ման էր գալիս, ծովափ իջնում, կաթ խմելու համար նստում ծովի վրա կառուցված պավիլիոններից մեկում ու ասում էր, որ իրեն լավ է զգում և համարյա միշտ նստած էր լինում դուրսը՝ յուր բարձրաբարձ բնակարանի գեղատեսիլ պատշգամբում, բայց ամեն բանից երևում էր, որ նրա օրերը հաշված էին։ Հանգուցյալը հուպիսի շոգերից փախչելով իր կյանքի վերջին օրերին գնացել էր Ցալտայի շրջակայքում գտնվող լեռնային հովասուն ամառանոցներից մեկը— Իսարա։ Այստեղ էլ հենց նա մի փոքր մրսելով զգացել էր վերահաս մահը ու խնդրել իրեն ետ տանել շուտով իր տունը, կնոջ ու երեխաների մոտ։

Հեղ հասնելով հանգուցյալի դագաղը շրջապատված գտանք յուրայիններով ու օտարներով, Ո՞վ ասես, միայն, որ այդտեղ չիներ, և՛ օտարազգիներ, և՛ յալտաբնակ հայեր, և՛ Հայաստանի զանազան կողմերից եկած երգնկացի, սպերցի, խարբերդցի, խընուսցի, բոլորը, բոլորը հավաքվել էին օրհնյալ հայի հիշատակը հարգելու։ Ամեն ինչ կարգին էր. Ցալտայի փակված աղոթարանից բերվեցին հոգևոր տխուր արարողության համար անհրաժեշտ իրերը՝ խաչ, շուրջառ, բուրվառ, քահանա կար, իսկ տիրացություն էր անում տաճկական արհավիրքներից Ղրիմ փախած երզնկացի ուսուցիչը։

Իր ողջ կյանքը օտարության մեջ անցկացրած, հայ կյանքի, հայ լեզվի, հայ ժամասացության կարոտ հանգուցյալը գոնե մի բանով բախտավոր էր, որ նրա տխուր արարողությունը կատարվում էր իր սիրած հայրենակիցներով շրջապատված ու նրա վրա կարդացվող աղոթքները հայ եկեղեցու հոգեշունչ աղոթքներն ու մրմունջներն էին։

Մահվան երրորդ օրը հանգուցյալի դագաղը կնքվեց և մի երկրորդ մետաղյա դագաղի մեջ ամփոփվելուց հետո, ամրացվեց փայտյա արկղի մեջ ու ուղարկվեց Հաշտարխան, որովհետև հանգուցյալի այրին ցանկացավ նրա մարմինը հողին հանձնել հայրենի քաղաքում։ Շատ ծանր տպավորություն թողեց իմ վրա այն բոպեն, երբ նավի շղթաները շառաչելով դագաղի արկղը, իբրև ապրանքի հասարակ մի հակ, վեր քաշեցին։ Ես երկար ժամանակ կանգնած հետևում էի հեռացող նավի հետզհետե փոքրացող ճրագների մարող լույսին ու ինքս ինձ մտածում.— մահվանացուներիս կյանքն էլ մի ճրագ է, որ քանի դեռ զորություն ունի, վառվում ու բորբոքվում է, իսկ հենց որ վերջանում է զորությունը, կամաց կամաց պլպլում է ու մարում... Թոմասի կյանքի ճրագը սովորական ճանապարհով, սպառվելուց չհանգավ. նա մարեց այն հանկարծակի փոթորկից, որ անակնկալ կերպով տեղի ունեցավ նրա կյանքում— նա դեռ շատ ժամանակ ուներ հրաբորբոք վառվելու, պայծառ լույս տալու, նրա մարելու դեռ ժամանակը չէր։

Թոմասը մեռնելուց առաջ ինձ մի քանի գրքեր հիշատակ թողեց. դա մի ոչ անարժեք ուսանավոր էր, «Вечный вопрос» խորագրով, որ նա գրել էր Իսարում։ Այս ուսանավորի մեջ ամփոփված են նրա տառապալից կյանքի վերջին օրերի խոհերը ու մտորումները մահվան մասին։ Ստորև տալիս ենք այդ ուսանավորի ռուսերեն բնագիրը ու նրա հայերեն թարգմանությունը։

ВЕЧНЫЙ ВОПРОС

Поведай мудрый Дух Исара,
Сквозь завесу смерти ты,
Ужель есть жизнь еще за гробом?
Иль это—лишь одни мечты?

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Խոսի՛ր, իմաստուն ոգի Իսարի,
Բաց վարագույրը դու դաժան մահվան
Կա՞ արդյոք, ասա՛, կյանք անդրաշխարհի,
Թե՞ այդ մի դատարկ երազ է միայն։

Дух, молим мы, толпа больная,
Чья жизнь висит на волоске,
Чья интересы в жизни этой,
Как дом, стоящий на песке!...

Ведь все пропало, все исчезло
От нас, что радует людей,
Мы—часть испрошенной планеты,
Лишь зло—незримое на ней.

Ничто не вяжет нас с Землею
Холодны мы к ее судьбе...
Манят нас выси голубые
Влекут таинственно к себе!

Утешь нас, добрый Дух Исара,
Поведай тайну смерти нам,
Ведь здесь конец страданий наших
Начало вечной жизни там?...

Но Дух молчит, молчит упорно
Лишь ветерок в лесу шумит,
Да с неба месяц золотистый
На нас насмешливо глядит.

Как будто шепчет: тщетно ждете,
Миллионы лет пройдут... Но, ах!
Так и сойдут со сцены люди,
С вопросом вечным на устах!...

Л. Т.

«Исар», близь Ялты.

30 июля 1895 г.

Աղոթում է հիվանդ մի բազմություն,
Ում կյանքը միայն մազից է կախված,
Ով այս աշխարհում՝ ինչպես խարխուլ տուն,
Որ չոր ավազի վրա է շինված:

Չէ՞ որ բոլորը կորավ անհարկի,
Հեռացավ մեզնից ամեն ուրախ բան,
Մենք՝ մասն ենք անկոչ այս մոլորակի,
Անտես է այնտեղ չարիքը միայն:

Մեզ հողին արդեն ոչինչ չի կապում,
Նրա բախտի դեմ սառն ենք, անտարբեր,
Լուրբ բարձունքներն են մեզ հրապուրում
Ու խորհրդավոր գրավում վեր:

Սփոփի՛ր, բարի ոգի Իսարի,
ԲացաՀայտիր մեզ գաղտնիքը մահվան.
Չե՞ որ այստեղ վերջն է տանջանքների,
Այնտեղ նոր սկիզբ— կյանք հավերժական,

Բայց լուռ է ոգին: եվ լուռ համառ:
Աղմկում է լոկ քամին անտառում.
Եվ լուսինն է մեղմ, կարծես ծաղրաբար
Երկնի բարձունքից մեզ վրա նայում.

Նշնչում կամաց.— սպասում ես զուր,
Միլիոն տարիներ կանցնեն... ա՜խ... երկին
Կանցնեն այս բեմից մարդիկ ամենուր,
Հավերժական հարցն իրենց շրթունքին:

Վ. Թ.

Իսար, Յալտայի մոտ

Հուլիս 30, 1895 թ.

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ



Մանր կորուստ կրեց հայ բանասիրական գիտությունը։

Սեպտեմբերի 28-ին 76 տարեկան հասակում վախճանվեց հայ գրական անդաստանի անխոնջ մշակ, հայ կուլտուրայի ակնավոր ներկայացուցիչ, հայ արվեստի պատմության քաջատեղյակ մասնագետ, արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Գարեգին Լևոնյանը։

Բազմավաստակ գրական աշխատող Գարեգին Լևոնյանը ծնվել է 1872 թվին Ալեքսանդրոպոլ (Ներկայիս Լենինական) քաղաքում։ Նա որդին է հայ նշանավոր աշուղ Ջիվանու։ Տարրական ու միջնակարգ կրթություն Գ. Լևոնյանն ստացել է իր ծննդավայրի հայկական ու ռուսական դպրոցներում։ 1897 թվին նա ընդունվում է Պետերբուրգի Գեղարվեստից Ակադեմիան, որի դասընթացն ավարտում է 1902 թվին։ Գեղարվեստից Ակադեմիան ավարտելուց հետո նա վերադառնում է հայրենիք ու պաշտոնավարում Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որպես արվեստների պատմության դասատու։

Դեռ 20 տարեկան հասակից սկսած Գարեգին Լևոնյանը հայտնի է դառնում, որպես բանահավաք։ Նա իր մի շարք բանասիրական ուսումնասիրություններով հարստացնում է հայ բանասիրական գրականությունը։ Նրա առաջին աշխատությունը կրում է «Հայ աշուղներ» խորագիրը։ Այս աշխատությունը, Գ. Հախվերդյանի «Սայաթ-Նովա»-ից հետո, հայ գրական աշխարհում հանդիսանում էր երկրորդ երկասիրությունը՝ նվիրված հայ աշուղներին ու նրանց ստեղծագործությանը։

1894 թվին լույս է տեսնում Գ. Լևոնյանի «Հայ պարբերական մամուլը» աշխատությունը, որին հետևում են նրա այլ աշխատությունները։

Խոշոր են նրա մատուցած ծառայությունները հայ կուլտուրայի, գրականության ու արվեստի զարգացման։ Բազմաթիվ խոշընդոտներ հաղթահարելով և նյութական մեծ զոհողություններ գնով նա կարողանում է հրատարակել հանրածանոթ «Գեղարուեստ» հանդեսը, նրա շուրջը համախմբելով ժամանակի նշանավոր հայ գրողներին, գրականագետներին ու արվեստագետներին։

Սակայն Գ. Լևոնյանի գիտա-հետազոտական գործունեությունը ավելի մեծ թափ է ստանում և նրա գրիչն ավելի բեղմնավոր է դառնում Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո։ Ջերմ ու անկեղծ հայրենասեր Գ. Լևոնյանն իր ամբողջ գիտությունն ու եռանդը ի սպաս է դնում հարազատ Սովետական Հայրենիքի կուլտուրայի ու գիտության զարգացման գործին։ Այս ժամանակաշրջանում նա հայ կուլտուրայի, գրականության ու արվեստի զանազան խնդիրներին նվիրված մի շարք հոդվածներ ու ուսումնասիրություններ է գրում, որոնց թիվը մի քանի հարյուրի է հասնում։ Սովետա-

կան իշխանության տարիներին, բացի այդ հոդվածներից ու ուսումնասիրություններից, նա մի շարք աշխատություններ էլ է տպագրում, որոնցից հիշատակության արժանի են «Սայաթ Նովայի կյանքը և գործը» (1931 թ.), «Հայ պարբերական մամուլը սկզբից մինչև մեր օրերը» (1934 թ.), «Հայ կուլտուրան «Սասունցի Դավիթ» էպոսի ժամանակաշրջանում» (1939 թ.), «Հայ աշուղները և նրանց արվեստը» (1944 թ.), «Հայ գրքի և տպագրության արվեստը» (1946 թ.) «Թատրոնը հին Հայաստանում» և այլն։

Բազմաթիվ են Գ. Լևոնյանի հատկապես հայ արվեստի՝ նկարչության և երաժշտության խնդիրներին վերաբերող ուսումնասիրությունները։ Չնայած իր 76-ամյա հասակին ու հիվանդ վիճակին, նա աշխատում էր պատանու ջանասիրությամբ։ Իր կյանքի վերջին օրերին անգամ, անկողնում հիվանդ պառկած վիճակում նա չէր դադարում գրել։ Սովետական Միության փառապանծ մայրաքաղաք Մոսկվայի 800-ամյակի տոնակատարության օրերին Գ. Լևոնյանը արհամարհելով հիվանդությունը, անկողնում պառկած գրում է ջերմ զգացմունքներով տոգորված իր «Մոսկվան և հայ կուլտուրան» հոդվածը։

Սովետական իշխանության տարիներին Գ. Լևոնյանը շարունակել է զբաղվել նաև մանկավարժական գործունեությամբ։ Նա երկու տարի շարունակ դասախոսություններ է կարդացել Երևանի պետական համալսարանում և Մանկավարժական ինստիտուտում, վայելելով ուսանողության ջերմ սերն ու համակրանքը։

Գ. Լևոնյանը Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Լեզվի և գրականության ինստիտուտի ու Պետական պատմական թանգարանի գիտական խորհրդների անդամ էր։ Նա անդամ էր թե՛ Գրողների միության և թե՛ Նկարիչների միության։

Սովետական Հայաստանի կառավարությունը բարձր դնահատելով Գ. Լևոնյանի մատուցած խոշոր ծառայությունները հայ գրականությանն ու արվեստագիտությանը, 1942 թվին, նրա գրական-արվեստագիտական գործունեության 40-ամյակի կապակցությամբ, շնորհել է նրան արվեստի վաստակավոր գործչի կոչում։

***

Հոկտեմբերի 1-ին տեղի ունեցավ Գ. Լևոնյանի թաղումը։ Բազմաթիվ գրողներ, արվեստագետներ և կուլտուրայի աշխատողներ իրենց վերջին հրաժեշտը տվին հայ արվեստի, գրականության ու կուլտուրայի ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Գ. Լևոնյանի աճյունին։

Երևանի անատոմիկումի դահլիճում ծաղիկներով ու պսակներով ծածկված գիտնականի դաղաղի շուրջն էր հավաքվել մեծ հասարակություն, ինչպես և հանգուցյալի հարազատներն ու բարեկամները։ Հնչում է ցութակի սգո մելոդիկ նվագը։

— Այսօր մեզանից հեռանում է մեր գեղագիտության ջերմ պաշտպանն ու մշակը, մեր գիտական մտքի ու արվեստի անվանի ներկայացուցիչներից մեկը՝ սիրելի Գարեգին Լևոնյանը,— ասում է քանդակագործ Արա Սարգսյանը,— անվանի գիտնականը մեծ ծառայություն է մատուցել հայ ժողովրդին, հարստացրել է նրա բանասիրությունը, գեղարվեստի, թատրոնի ու կերպարվեստի պատմությունը։ Միշտ վառ կմնա նրա հիշատակը։

Հայաստանի սովետական գրողների անունից հրաժեշտի խոսք է ասում Նաիրի Զարյանը։

— Մեր ժողովուրդը կորցրեց իր անխոնջ մշակներից մեկին՝ Գարեգին Լևոնյանին, որ սովետական գրականության համար թողել է հարուստ ժառանգություն և մեծ ավանդ մտցրել հայ ժողովրդի կուլտուրայի մեջ։

Պանթեոնում հանդուցյալին հրաժեշտի վերջին խոսք են ասում Երևանի Կերպարվեստի թանգարանի դիրեկտոր Ռ. Դրամբյանը և Հր. Քոչարը։

Հանդուցյալի հարազատների ու բարեկամների վերջին հրաժեշտից հետո, նվագախմբի սգո հնչյունների տակ, հողին է հանձնվում արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Գարեգին Լևոնյանի աճյունը։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԸ

ՔՈՆԿՐԵՍԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐՈՒՆ

Համաշխարհային Հայկական Քոնկրեսը հուշագրով մը դիմեց Միացյալ Ազգերուն, առաջարկելով ազատագրել և Հայկական Սովետական Հայաստանին վերադարձնել՝ Ուիլսընի սահմանագծած հայապատկան հողամասը: Հուշագիրը պատրաստված է հայերեն և անգլերեն բնագրերով և երկու բնագիրներն ալ ընդունվեցան միաձայնությամբ և երկարատև օվսանճաներով:

Հետևյալը Համաշխարհային Հայկական Քոնկրեսի Միացյալ Ազգերուն կատարած զիմումնագրի հայերեն բնագիրն է.

Աշխարհի շատ մը երկրներեն և Միացյալ Նահանգներու ամեն մասերեն հայ ժողովրդի ներկայացուցիչներ, թվով 700, գումարելով Հայկական Համաշխարհային Քոնկրեսը Նյու-Յորքի Ուալտորֆ Աստորիա պանդոկին մեջ, ապրիլ 30-են մայիս 4, 1947, միաձայն որոշումով կդիմենք Միացյալ Ազգերու որդարակորով դատարանին, ի խնդիր վերջնական և ճիշտ լուծման հայկական հողային պահանջներու, հիմնավորված պատմական իրավունքներով և հանդիսավոր դաշնագրերով։

Հանրածանոթ և անվիճելի իրողություն է, որ Հայկական Հարցը միջազգայնորեն հանձնվեցավ Պերլինի Վեհաժողովեն (1878-ին) և վերջնականապես վճռվեցավ Սևրի դաշնագրով (1920-ին) հայկական պետության մը ստեղծման որոշմամբ, որուն սահմանները ճշտվեցան և դնվեցան երջանկահիշատակ նախագահ Ուուտրո Ուիլսընի կողմե, Դաշնակից Գերագույն Խորհուրդի խնդրանքով, և Հայոց այս իրավունքներ ավելի զորացան Ատլանտյան Հռովարտակի հռչակած վսեմ սկզբունքներով։

Երկրագնդային երկու բախումներու մեջ հայ ժողովուրդը կողմնորոշվեցավ Դաշնակիցներու և անոնց զինակիցներուն հետ, գիտակցելով, որ այդ պայքարները կմղվեին ոմանք վարությունի և տիեզերական արդարության համար։ Համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմներու ընթացքին հայ ժողովուրդը Դաշնակից բանակներուն տվավ մոտավորապես կես միլիոն զինվորներ և կամավորներ, որոնցմե շատերը ինքզինքին պանծացուցին հերոսական քաջագործությունմներով, մինչդեռ թուրքերը գործոն մասնակիցներն էին չար ուժերու համաշխարհային առաջին պատերազմին, որոնց նպատակն էր ոչնչացնել բարոյականության և մարդկային ազատության բարձր սկզբունքները, իսկ համաշխարհային երկրորդ պատերազմի միջոցին թուրքերը գաղտնապես օգնեցին նացիներուն՝ իբրև բարյացակամ չեզոք։

Համաշխարհային առաջին պատերազմին հայերու ենթարկված կազմակերպված ջարդերու և ցեղասպանական բռնագաղթի պատմությունը իր հավասարը չունի մարդկային ցեղի տարեգրության մեջ, երկուք ու կես միլիոն հայեր անգթորեն քշվեցան իրենց տուներեն դեպի Սուրիայի և Միջագետքի անապատները։ Այդ հսկա զանգվածեն մեկ ու կես միլիոն հոգի կորսվեցան իբր հետևանք ջարդերու, սովամահության, աքսանդումի և բազմաթիվ արկածներու։ Փչացան մեր եկեղեցական, կրթական և մշակութային անփոխարինելի դարավոր գանձերը։ Եվ միմիայն անհատական և հավաքական բռնագրավված նյութական հարստության հանրագումարը կհասնի երկիլիոնավոր տոլարներու։

Ապրելու կամքը սակայն հաղթանակեց, և հայ ցեղի բեկորները 1920-ին ողջունեցին հաստատումը Հայկական Սովետական Հանրապետության, պատմական Հայաստանի

մեկ տասներորդ և Ուիլսընի սահմանագծած երկրամասի մեկ չորրորդ մասին վրա։ Իր հայրենիքի ապահով մեկ փոքր մասին մեջ հաստատված՝ Հայաստանի աշխատասեր և ազատասեր ժողովուրդը, լծվելով վերաշինական աշխատանքի, ապացույցը տվավ իր ստեղծագործական ոգիին, և հաջորդող տարիներու միջոցին՝ հառաջդիմեց արդյունաբերությամբ, ծաղկեցավ երկրագործական տնտեսությունն, և հրաշալի նվաճումներ արձանագրեց մշակութային մարդի մեջ։ Այսպիսի փայլուն իրականություն մը և պայծառ ապագա մը իր այքին առջև, Հայաստանի ժողովուրդը սկսավ ավելի վառ հույսով նայիլ դեպի գալիքը և փորձեց ազդու միջոցներ ստեղծել վերջնական հայրենադարձի համար իր այն ազգակիցներուն, որոնք իրը արդյունք անգութ թրքական բռնագաղթի, ցրված են աշխարհի չորս ծագերը և որոնցմե շատերը երեսուն տարիե ի վեր տարագրության մեջ կապրին՝ մատնված հուսահատության և զուրկ կյանքի տարրական կարիքներեն և մարդկային իրավունքներեն։

Թրքական բարբարոսության այս աստանդական զոհերու թիվը կհասնի մոտավորապես մեկ ուկես միլիոնի։ Անոնց իրենց հայրենական տունը վերադառնալու հավերժական փափաքը ամբողջովին չի կրնար իրականացվիլ, մինչև որ Հայոց հողային պահանջները ճիշտ լուծում չգտնեն։

Հայկական Սովետական Հանրապետության հողային սահմանափակությունը արգելք կհանդիսանա տարագիր հայության հայրենադարձին և երկրի հետագա զարգացման։

Հետևաբար, հիմնված վերև հակիրճ կերպով ներկայացված տվյալներուն վրա, որոնք վավերացված են պատմական փաստաթուղթերով և հանդիսավոր դաշնագրերով, Համաշխարհային Հայկական Քոնկրեսը, հանուն աշխարհի բոլոր հայերուն, հարգանք կխնդրե Գերագույն Մարմնեն՝ Հայոց հողային պահանջները դնել Միացյալ Ազգերու օրակարգին վրա և արդար ու հաստատակամ վճռով մը՝ ազատագրել տակավին թրքական լուծին տակ գտնվող Ուիլսընի սահմանագծած Հայապատկան երկրամասը, և վերադարձնել զայն իր օրինավոր տիրոջ՝ Հայկական Հանրապետության։

Մարդկությունը և արդարությունը կպահանջեն այս իրավացի պահանջի իրագործումը ձեր վսեմ ատյանեն։

Համաշխարհային Հայկական Քոնկրեսի Դիվան

(«Ժողովուրդ», հունիս 13, 1947 թ.)

ՀԱՅԿԱԿԱՆ ՔՈՆԿՐԵՍԻ ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐՈՒՆ

Հունիս 5-ին, հինգշաբթի օր, Առաջնորդ Տ. Տիրան Եպիսկոպոսի գլխավորությամբ երեք հոգինոց պատգամավորություն մը Միացյալ Ազգերու Քարտուղարության ներկայացուց Համաշխարհային Հայկական Քոնկրեսի Դիմումնագիրը, որով կառաջարկվի Հայոց հողային պահանջը դնել Միացյալ Ազգերու օրակարգին վրա, և արդար ու հաստատակամ վճռով մը, Ուիլսընի սահմանագծած Հայապատկան հողամասը միացնել Հայկական Սովետական Հանրապետության։

Պատգամավորության մյուս անդամներն էին՝ Վերապատվելի Մ. Թ. Գալայճյան և Ազգային խորհուրդի Տնորեն Պետրոս Թերզյան։

Քարտուղար Թրիկվի Լիին Եվրոպա դացած ըլլալով, պատգամավորությունն ընդունեց անոր տեղակալներեն մեկը՝ Տոքտոր Փրոտիշ, յուդոսլավ։ Տեսակցությունը տևեց կես ժամ։

Պատգամավորությունը Տոքտոր Փրոտիշին հանձնեց Համաշխարհային Հայկական Քոնկրեսի Դիմումնագիրը Միացյալ Ազգերուն, Արտաքին Գործոց Նախարարներու խորհուրդին մատուցված Ազգային խորհուրդի Հուշագիրի պատճենը և մեկ օրինակ «Արմինիա Ռիպորտ» գիրքեն, որ Ազգային խորհուրդի հրատարակությունն է։

(«Լրաբեր», հունիս 7, 1947 թ.)

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՔՈՆԿՐԵՍԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՀԱՆՁՆՎԻ ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐՈՒ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ

Կանխորոք եղած ժամադրության համաձայն հունիս 5-ի առավոտուն Միացյալ Ազգաց Քարտուղարության ներկայացուցիչ Տոքտ. Փրոտիշի հանձնվեցավ Համաշխարհային Հայկական Քոնկրեսի այն որոշումնագիրը, որ կպահանջե Ուիլսընի գծած Հա-

յաստանի սահմաններուն որոշումին գործադրութիւնը։ Ներկայացված սույն որոշումնագրին լման պատճեներ արդեն երեցավ հայ մամուլին մեջ Համաշխարհային Հայկական Քոնկրեսի վերաբերմամբ։

Պատվիրակությունը կազմավորեր Առաջնորդ Սրբազան Տիրան Եպիսկոպոսը, որ պատվո նախագահն էր Հայկական Քոնկրեսին և որուն կընկերակցեին Վեր. Մ. Գալայճյան քարտուղարը և Պետրոս Կ. Թերզյան՝ տնօրենը Քոնկրեսին։ Այս մատուցված որոշումնագիրը մաս պիտի կազմե հայկական հարցի պաշտոնական թուղթերուն։ Ըստ Միացյալ Ազգերու Ջարթերին, ոչ նյութ օրակարգի հարց կազմելու համար պետք է առաջարկվի Միացյալ Ազգաց անդամ եղող կառավարության մը կողմեն։ Այս այցելության տեղեկագրությունը երեցավ «Նյու-Յորք Թայմզ»-ի հունիս 6-ի թվով։

Հունիս 6-ին նույն պատվիրակությունը կանխօրոք եղած կարգադրությամբ, ընդունվեցավ նաև Ամերիկայի Միացյալ Ազգաց ներկայացուցիչ Ուարրեն Օսթինի ներկայացուցիչին կողմե, որուն մատուցվեցավ որոշումնագրին մեկ պատճենը։

Այս այցելությունը շարունակությունն է մայիս 12-ի պատվիրակության, որ այցելեց Ուաշինկթընի Արտաքին Գործոց Նախարարի տեղակալ Էշիսընի։

Այս երկրորդ այցելության ընթացքին նաև տրվեցավ օրինակ մը այն նամակեն, որ Համաշխարհային Հայկական Քոնկրեսի վարչությունը ստացած էր Միացյալ Ազգաց քարտուղարի՝ Թրիկվի Լի գրասենյակեն, որուն մեջ կհանձնարարվեր դիմել Ամերիկայի ներկայացուցիչին՝ մասնավորապես նախաձեռնելու որոշումնագիրը Միացյալ Ազգաց օրակարգի վրա դնելու հարցը։

Այս այցելությունը, որ դրեթե ժամ մը տևվեց, եղավ շատ սիրալիր և հարգելի ներկայացուցիչը ուշով լսեց և քարտեզի վրա հետևեցավ Ուիլսընի գծած սահմաններու և ներկա Հայաստանի սահմաններու հարաբերություններուն։ Անիկա խոստացավ անմիջապես խնդիրը Ուաշինկթընի Արտաքին Գործոց Նախարարության ուսումնասիրության ենթարկել և մեզ տեղեկացնել մեր կառավարության դիրքը այս հարցին վերաբերմամբ։

Այս երկու այցելություններու ամբիվ հանձնվեցան պատվիրակության կողմե խնամքով պատրաստված ներածական նամակներ, Մոսկվա, մարտ 1947-ին գումարված Արտաքին Գործոց Նախարարներու ժողովին Ազգային Խորհուրդի մատուցած հուշագրեն օրինակներ և երկու հատ «Վերածնած Հայաստան» գրքեն, Տիրան Սրբազանի ներածական ստորագրությամբ, իրը հիշատակ մեր այցելության։

ՏՆՕՐԵՆ՝ ՊԵՏՐՈՍ Կ. ԹԵՐԶՅԱՆ

10 հունիս 1947

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՔՈՆԿՐԵՍԸ ՊԱՆԹԱԼԻ ՄԵԿ ԷՋԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

(Պաշտոնական տեղեկագրություն)

Համաշխարհային Հայկական Քոնկրեսը այլևս կկազմե պանթալի էջ մը Սփյուռքի հայության պատմության մեջ։ Ամերիկահայ Ազգային Խորհուրդի նախաձեռնությամբ սարքված այս մեծ հավաքույթը, իր տեսակին մեջ իրը պատմական և հզակի դեպք մը, պսակվեցավ մեծ հաջողությամբ, դիրապանցելով ամեն ակնկալություն։

Առաջին անգամն էր, որ այսքան հսկա և իսկապես ներկայացուցչական համաժողով մը տեղի կունենար հայոց մեջ։ Երբ նկատի առնվի երթևեկության դժվարությունները և արտասահմանի հայ գաղութներու տնտեսական աննպաստ պարագաները, իսկապես հանդուգն և խիզախ գործ մը նախաձեռնած էր Ամերիկահայ Ազգային Խորհուրդը։

Զարմանալի չէր, որ գոնվեցան կարևոր անհատներ, որ խորհուրդ տվին հետաձգել Համաշխարհային Քոնկրեսը։ Նկատելով հանկարծական վատթարացումը Միացյալ Նահանգաց և Խորհրդային Միության հարաբերություններուն, և աննպաստ քաղաքական պայմանները՝ իրեն արդյունք Թուրքիոյ հանդեպ Ամերիկայի բռնած բարեկամական դիրքին, վախ հայտնվեցավ թե մի գուցե ներկա պարագաներու տակ, այս տեսակ հայկական ձեռնարկ մը անհարիր թվի Ամերիկյան կառավարության և հանրության առջև վնաս բերե մեր դատին։

Ուրախ ենք ըսելու, սակայն, որ Քոնկրեսը

հանդիսացավ անհամբերությամբ հայկական մը ամեն տեսակետեն, և նույնիսկ ամենեն թերահավատները սիրահաճոր խոստովանեցան, թե իրենց դուշակումները և վախերը անտեղի էին։ Այսպես այլեւս բացորոշ է, որ Համաշխարհային Քոնկրեսը սարքված էր ճիշտ հոգեբանական ժամանակին, և պատեհ առիթի մը ընծայեց ամերիկյան հանրային կարծիքը մշակելու ի նպաստ հայ դատին, նույնպես Քոնկրեսի միջոցով կարելի դարձավ ամերիկյան կառավարության պարտականությունը և աղդեցությունը հիշեցնել, թե ինքը ըրած է հանձնառություններ հայոց հանդեպ, և թե հայոց հոգային պահանջները, հիմքն ունենալով նախագահ Ուիլսընի որոշումները այժմեական միջազգային հարց մըն է, որուն լուծումը կարևոր է տեսական խաղաղության հաստատելու համար Մերձավոր Արևելքի մեջ, քանի որ այդ երկրամասն մասնավոր շահագրգռության առարկա դարձած է ամերիկյան կառավարության համար։

ՃՇՇԿԵՐՈՒՅԹԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Ապրիլ 30-ի իրիկվան Ուաշինգթոնի Ամֆիթիատրոնի փառավոր ճաշկերույթի մասին ըսված հայ թերթերն ալ գրեցին մասնավորապես։ Այս ճաշկերույթը, որ 900-է ավելի անձինք ներկա էին, թե իր շքեղությամբ, թե իր բազմությամբ և թե իր քաղաքական և պատմական հանգամանքով ամենեն նշանակելի մեկ հավաքույթն է մեր ժամանակներեն հայ պատմության։ Հոն հայ դատի ի նպաստ զորավոր կերպով արտահայտվեցան մեր ամերիկացի բարեկամներեն Ջարլս Թոպի—նախ. Հեմշիրի ծերակուտական, Տոքթոր Բեյմրնա Ուայզ— բատիրի նշանավոր վերծանող և Խուրֆն Սմիթ— Հայ Իրավանց Ամերիկյան Հանձնախումբի առենապետ։ Ինչպես նաև Ամերիկահայ Առաջնորդ Տիրան Սպիսկոպոս Ներսոյան, զորավար Հայկ Շեքերճյան, փրոֆեսոր Հարություն Տատուրյան, և Նշան Շահինյան— առենապետ Ամերիկահայ Ազգային Խորհուրդի, և արտասահմանի ու Ամերիկայի կարգ մը պատգամավորներ։

Մայիս 4-ի Քարենեկի Հոլի հրապարակային ժողովը եղավ նույնքան ներշնչող և պատմական հավաքույթի մը ամերիկահայ տարեգրությանց մեջ։ 2,700-է ավելի խուռն բազմություն մը լեցված էր հսկա ժողովարահը, որոնց մեջ էին 700-է ավելի արտասահմանի և ամերիկահայ պատգամավորներ։ Ամերիկայի մեր ազդեցիկ բարեկամներեն Վեր. Բաղբրա Սրբլ, Ամերիկյան Եկեղեցիներու Հայոց ի նպաստ կազմված Հանձնախումբի առենապետը, Տոքթոր Ֆրենք Քինկտըն — բատիրի նշանավոր վերծանող, Մամբրե Արքեպիսկոպոս Գալֆայան՝ Ամենայն Հայոց Հայրապետի ներկայացուցիչը, Նշան Շահինյան, գնդապետ Սարգիս Ղարզարյան, Ավետիս Տերունյան և ուրիշներ։ Կարճ միջոցի մը մեջ գոյացավ 33.000 տոլարն ավելի գումար մը հայ դատի ի նպաստ։

Ժողովին ամենեն հուզիչ մասն էր, երբ տիկին Էլինոր Ուիլսըն Մեքատու, հայոց ջերմ բարեկամ նախագահ Ուիլսընի դուստրը, բեմին վրա եկավ և կարճ ուղերձ մը ըրավ ազդեցիկորեն իր հայրը և տնոր իտեալապաշտությունը և հայոց հանդեպ տածած իր մասնավոր համակրանքը։

Այդ պատմական սրահը բիչ անգամ հանդիսատես եղած է այսքան խոնդավառ և անդուլ հայրենասիրությամբ լեցված ներշնչող ժողովի մը, որը շարունակ վառ պիտի մնա ներկաներու հիշողության մեջ։

Հայկական Քոնկրեսի մեկ համառոտ, բայց ամբողջական, տեղեկատվությունը, որ պիտի բաղկանա մոտավորապես 40 էջերի, արդեն մամլո տակ է և քիչ առենեն լույս պիտի տեսնի։ Մրապիր կա նաև հրատարակելու ավելի մեծ և մանրամասն հատոր մը, այս պատմական համաժողովին կարևոր առենախոսություններով և պատկերներով, մոտավոր ապագային։ Մինչև առանց լույս տեսնելը հայ ժողովրդին տեղեկություն մը տված ըլլալու համար, կուտանք վիճակագրական ամփոփումը, որ թվանշաններով կցուցնե ժողովուրդին մեջ տրվածքս հետաքրքրությունը և զանգվածային մասնակցությունը այս Քոնկրեսին, ինչպես նաև անոր ոգեն ներկայացուցչական ըլլալու հանգամանքը։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԸ	715
Ներկա եղող կազմակերպությունների թիվը	70
Ներկայացված երկիրներու թիվը	22
Առասանմանը ներկայացնողներու թիվը	62
Առասանմանեն եկող պատգամավորներու թիվը	26
Առասանմանը ներկայացնող Ամերիկայի պատգամավորներու թիվը	36

Միացյալ Նահանգներու ներկայացված խաղաքներ	76
Ազգային խորհուրդի երեք կազմակերպություններու պատվիրակներ	262
Ազգային խորհուրդի երեք կազմակերպություններու մասնաճյուղերու թիվը	148
Հայրենակցականներեն եկած պատգամավորներու թիվը	219
Հայրենակցական Կեդրոնական Խորհուրդներու թիվը	46
Հայրենակցական Մասնաճյուղերու թիվը	117
Առաքելական և Ավետարանական եկեղեցիներու պատգամավորներու թիվը	60
Ներկայացված եկեղեցիներու թիվը	31
Կանանց Միություններու պատգամավորներու թիվը	37
Երիտասարդական Միություններու պատգամավորներու թիվը	48
Դաղութները ներկայացնող պատգամավորներու թիվը	34
Մասնավոր հրավերով պատգամավորներու թիվը	33
Հ. Բ. Ը. Մ. մասնաճյուղերե ընտրված պատգամավորներու թիվը	11
Հ. Բ. Ը. Մ. ներկայացուցած պատգամավորներու թիվը	9
Ճաշկերույթին ներկա եղողներու թիվը	900
Քոնկրեսի ժողովներուն ներկա եղողներու միջին թիվը	1000
Քարեզկի Հոլի ժողովին ներկա եղողներու թիվը	2700

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ներկա եղած և մասնակցած են այս համագումարին Հայ Առաքելական Եկեղեցին Արևելյան, Քալիֆորնիո և Միջին Նահանգներու թեմերու առաջնորդները իրենց կեդրոնական Վարչություններով և բոլոր բարձրաստիճան եկեղեցականներով, ինչպես նաև թեմերու դղերով և անոնց հոգաբարձական ներկայացուցիչներով։

2. Հայ Ավետարանական Միությունը իր Վարչությունով և շատ մը եկեղեցիներու հովիվներով և հոգաբարձուներով։

3. Ազգային խորհուրդը կազմող երեք կազմակերպությանց վարչությունները, իրենց բոլոր մասնաճյուղերով։

4. 46 Հայրենակցական Կեդրոնական Վարչություններ իրենց 117 մասնաճյուղերով։

5. Հ. Բ. Ը. Միության 11 մասնաճյուղեր։

6. 10 այլ և այլ կազմակերպություններ, կրթական, լեգեոնական, կանանց, երիտասարդաց, մտավորական, և օժանդակ կազմակերպություններ իրենց պատվիրակներով։

7. Շատ մը քաղաքներ ներկայացված են մասնավոր ընտրված պատգամավորներով։

8. Մասնավոր հրավերով ներկա եղած և մասնակցած են քոնկրեսին ականավոր ազգային դեմքեր, մտավորականներ, առևտրականներ, եկեղեցականներ, բժիշկներ, փաստաբաններ, թերթերու թղթակիցներ, հրապարակագիրներ և արվեստագետներ։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՔՈՆԿՐԵՍԻ ՍՏԱՑԱԾ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Քանի մը օր առաջ ստացանք Վեհափառ Հայրապետի Սրբատառ կոնդակը՝ ուղղված Համաշխարհային Հայկական Քոնկրեսին, որը ամբողջությամբ լույս պիտի տեսնե հայ մամուլի մեջ կարճ ատենեն։

Հայաստանեն եկած հեռագիրները արդեն լրացան հայ մամուլի մեջ։ Անկե զատ շնորհավորական և քաջալերական հեռագիրներ և պատգամներ ստացված են այս առթիվ հետևյալ երկրներե և տնձնավորություններե, որ գրական ապացույց են այս համագումարին վայելած ժողովրդականության և անոր ներկայացուցչական հանգամանքին։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԵ

Գարեգին *Ա Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ։*

Կյուրեղ *Ա Պատրիարք Երուսաղեմի։*

Արտավազդ Արքեպիսկոպոս Սուրմեյան— *Կաթողիկոսական Պատվիրակ Եվրոպայի։*

Շնորհք Վարդապետ Գալուստյան— *Հովիվ Լոնտոնի Ս. Սարգիս եկեղեցվ։*

Վազգեն Վարդապետ— *Առաջնորդական Փոխանորդ Ռումանիոյ։*

Գարեգին Արքեպիսկոպոս— *Կաթողիկոսական Պատվիրակ Հարավային Ամերիկա-Հայոց։*

ՊԱՅՔԱՆՆԵՐԵՆ. ԵՎՐՈՊԱՅԻՆ ԵՎ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻՆ

Ֆրանսա—*Փարիզեն՝* Ս. Ասատուրյան, *դաղութի կողմանե։*

Ռումանիա—*Պուքրեշեն՝* Դանիելյան և տոմտոր Թիրատյան, *եկեղեցվո հոգաբարձության կողմանե։*

Պաղեստին— *Հայֆայեն՝* Ճարճ Կարապետյան, *Հառաջդիմական Միության կողմանե,* Հակոբ Մարտիրոսյան, *խմբագիր «Միություն» թերթի։*

Եգիպտոս— *Գահիրեեն՝* Ա. Սարուխան, Սեանենեսյան, *Ազգային խորհուրդի կողմանե։*

Կիպրոս— *Նիկոսիա՝* Տեոդորեյան, Ս. Վերիլյան, *Հայ Բարեկամներու Միություն։*

Եգիպտոս— *Աղեքսանդրիայեն՝* Խալենյան, *Ազգային խորհրդի կողմանե։*

Պուլկարիա— *Սոֆիայեն՝* Դաբրիել Դարբիելյան, *Ընդհանուր պատգամավոր։*

Սուրիա— *Հալեպեն՝* Տոքտոր Խաչատուրյան, *Ազգային խորհրդի կողմանե։*

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿԻՍԱԳՈՒՆԴԵՆ ԵՎ ԽԱՂԱՂԱԿԱՆ ԿՂԶԻՆԵՐԵՆ

Պրազիլ—*Սան Փաուլո՝* «Հայաստանի Զայնս»

Տրչ Ինեիզ կղզիներեն—*Պաթավիայի Հայոց եկեղեցվո հոգաբարձութենեն։*

Ուրուկվայեն— *Մոնթեվիտեոյի Ազգային խորհուրդեն։*

Քուպա— *Հավանայեն՝ ընտրված պատգամավորներ* Հակոբ Յազճյան, Կարապետ Աղոյան, Մուշեղ Թերզյան։

Քուպա— *Հավանայեն՝ Հայ Հառաջդիմական Միութենեն։*

Արժանթին— *Պուենոս Այրեսեն՝* Հաճեռ Երիտասարդաց Միություն, *Հայ Երիտասարդաց Կեդրոն, «Հայ մամուլ», Բուենոս Միութենեն։*

Միացյալ Նահանգներու *ամեն կողմերեն այլ և այլ անհատներե և կազմակերպություններե ստացած ենք 25-ե ավելի շնորհավորական հեռագրեր։*

Իսկ հետևյալ ակնառավոր անձերեն ստացած ենք գրավոր շնորհավորականներ և մաղթանքներ.—

Հ. Բ. Ը. Մ. Կեդրոնական Վարչություն.

Ռուբեն Մամուլյան

Ալոե Սյուրմելյան

Էմանուել Վարանդյան

Ֆարիել Քուրի, *Սուրիո Միացյալ Ազգաց ներկայացուցիչ։*

Էտուարտ Խորոա, *Լիբանանի հյուպատոսի սեղակալ։*

Էոմեենքոս Բոզուատովամի, *Փոլանտայի հյուպատոս։*

Մեքրս ուէպրը

Բեյմրնետ Կրեհմ Սուիեկ, *ատոիոյի հռչակավոր խոսող։*

Մար Էսպի Շիմուն, *ասորիներու Կաթողիկոս և Պատրիարք Արևելքի։*

Փոլ Տոսրն Էտի, *Նախագահ Ատելֆի գոլեհի։*

Ֆիորելլո Լա Կուարդիա. *նախկին քաղաքապետ Նյու Յորքի։*

Ա. Ճ. Սեպեր, *Քոնկրեսմեն։*

Սենեթքր Քլոտ Փեփիքր

Սենեթքր Ի. Ս. Ճանսրն

Սենեթքր Ա. Սմիթ

Սենեթքր Ն. Ա. Լաճ

Սենեթքր Ի. Մ. Այվզ։



ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՀԱՅԵՐԻ 1947 ԹՎԻ ՔԱՐԱՎԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԻՔ

ԵՐԵՎԱՆ, 5 սեպտեմբերի.— Երկու հատուկ գնացքներով Բաթումիից Երևան ժամանեց արտասահմանից վերադարձող հայերի մի մեծ խումբ։

Հայրենադարձներին կայարանում դիմավորեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից արտասահմանյան հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի ու Երևանի քաղաքային Սովետի ներկայացուցիչները։

Ժամանած հայրենադարձների 174 ընտանիք տեղավորվեցին Երևանում, 90 ընտանիք էլ՝ Նոր Բայազետի, Կոտայքի և ռեսպուբլիկայի այլ շրջաններում։ (ՀՀԳ)

***

ԿԱՀԻՐԵ, 5 սեպտեմբերի (ՏԱՍՍ).— Ալեքսանդրիայից սովետական «Պոբեդա» շոգենավով Սովետական Հայաստան մեկնեց 1655 մարդուց բաղկացած հայերի մի խումբ։ Խմբի կազմում կան բանվորներ, արդյունաբերության գանազան ճյուղերի բարձրորակ մասնագետներ, բժիշկներ, դիտական աշխատողներ, ուսուցիչներ և այլ պրոֆեսիաների պատկանող անձինք։

Մեկնողներին ուղեկցում էին Կահիրեի և Ալեքսանդրիայի տասնյակ հազարավոր հայեր։

***

ՌԵՅՐՈՒԹ, 7 սեպտեմբերի (ՏԱՍՍ).— Երեկ Բեյրութի նավահանգստից սովետական «Պոբեդա» շոգենավով 2.500 հայեր Սիրիայից և Լիբանանից մեկնեցին Սովետական Հայաստան։

***

ՓԱՐԻԶ, 7 սեպտեմբերի (ՏԱՍՍ).— Ֆրանս-պրես գործակալության հաղորդագրությամբ սեպտեմբերի 5-ին 3.000 հայեր սովետական «Ռոսսիա» շոգենավով Մարսելից մեկնեցին ՍՍՌՄ։

ՀԱՅԵՐԻ ԵՎ ՎՐԱՑԻՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

ՄԱՐՍԵԼ, 8 սեպտեմբերի (ՏԱՍՍ).—«Ռոսսիա» էլեկտրանավով այստեղից հայրենիք մեկնեց 25 տարի Ֆրանսիայում ապրող հայերի ու վրացիների մի մեծ խումբ, թվով 3.202 մարդ։ Մեկնողների մեջ կան գիտության և ատվեստի աշխատողներ, ինժեներներ, բժիշկներ, տեխնիկներ, մեխանիկներ և արակյալ բանվորներ։ «Ռոսսիա» էլեկտրանավի մեկնումից առաջ տեղի ունեցավ միտինգ, որտեղ հանդես եկան էլեկտրանավի նավապետ Դոգիդիձեն, Ֆրանսիայում ՍՍՌՄ դեսպանատան խորհրդական Այդամովը, Հայկական ազգային ճակատի նախագահ Մարմարյանը։ Միտինգի մասնակիցները ողջույնի հեռագրեր ուղարկեցին ընկեր Ստալինին, ինչպես նաև Հայկական ու Վրացական ՍՍՌ Մինիստրների Սովետներին։

Մեկնողներին ուղեկցելու համար հավաքվել էին մոտ 30 հազար մարդիկ ու փարիզեցիներ։

***

ԲԱԹՈՒՄԻ, 12 սեպտեմբերի (ՀՀԳ-ի հատուկ թղթ.).— Բաթումիի նավահանգիստը մեկը մյուսի ետևից ժամանում են շոգենավեր՝ հայերի նոր խմբերով, որոնք վերադառնում են արտասահմանից հայրենիք՝ Սովետական Հայաստան։ Վերջին օրերս «Զուկոտկա», «Պոբեդա» և «Ռոսսիա» շոգենավերով այստեղ ժամանեցին մոտ 10 հազար հայեր՝

Հունաստանից, Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից, Ֆրանսիայից։ Ժամանածների մեջ կան զանազան մասնագիտության տեր բարձրակարգ շատ բանվորներ։ Ֆրանսիայից ժամանել է կաուցող բանվորների, դերձակների, կոշիկակարների, սակիրիչների և այլ մասնագետների մի մեծ խումբ։ Սիրիայից ժամանել են բազմաթիվ գյուղացիներ։ Բոլորամիում ժամանածներին ցույց տրվեց ջերմ ընդունելություն։ Կարճատև հանգստից հետո նրանք հատուկ գնացքներով կմեկնեն Սովետական Հայաստան։

***

ԵՐԵՎԱՆ, 19 սեպտեմբերի.— Սեպտեմբերի 18-ին հատուկ գնացքով Բաթումիից Երևան ժամանեց Հունաստանից Սովետական Հայաստան վերադարձող հայերի մի նոր խումբ։

Կայարանում եկվորներին դիմավորեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից արտասահմանյան հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի, Երևանի Քաղսովետի և այլ կազմակերպությունների ներկայացուցիչները։

Խումբը բաղկացած է 236 ընտանիքից։ Նրանց մեծ մասը բանվորներ, գյուղացիներ և արհեստավորներ են։ Եկվորներից 90 ընտանիք տեղավորվեցին Սևանում, մնացածները՝ Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Ապարանի, Աթաբեկի, Կոտայքի և Սևանի շրջաններում։

(229)

***

ԵՐԵՎԱՆ, 23 սեպտեմբերի.— Երեկ, սեպտեմբերի 22-ին, հատուկ գնացքով Երևան ժամանեց Ֆրանսիայում ապրող հայերի մի նոր խումբ։ Ժամանածների թվում կան մասնագիտանքյան ներկայացուցիչներ, զանազան մասնագիտությունների բանվորներ, արհեստավորներ և այլն։

Կայարանում ժամանածներին դիմավորեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Վերաբնակեցման վարչության ներկայացուցիչները, Երևանի Քաղսովետի գործկոմի պատասխանատու աշխատակիցները, պարտիական և սովետական կազմակերպությունների ներկայացուցիչները։

Ընդամենը ժամանել է 90 ընտանիք, որոնք հենց նույն օրը տեղավորվեցին իրենց համար հատկացված բնակարաններում։

(229)

***

ԵՐԵՎԱՆ, 25 սեպտեմբերի.— Սեպտեմբերի 24-ին հատուկ գնացքով Բաթումիից Երևան ժամանեց Ֆրանսիայից Սովետական Հայաստան վերադարձող հայերի երկրորդ խումբը։

Կայարանում եկվորներին դիմավորեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից արտասահմանյան հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի և Երևանի Քաղաքային Սովետի ներկայացուցիչները։

Եկվորների խումբը բաղկացած էր 137 ընտանիքից։ Նրանցից 101-ը տեղավորվեցին Երևանում, մնացածները՝ Բերիայի, Կոտայքի, Աթաբեկի և Սևանի շրջաններում։

(229)

***

ԱԹԵՆՔ, 30 սեպտեմբերի (ՏԱՍՍ).— Երեկ Պիրեից սովետական «Զուկոտկա» շոգենավով Հայաստան է մեկնել 2.700 հայ։ Նավահանգստում մեկնողներին ճանապարհ էին դնում մի քանի հազար հայեր, որոնց մեծ մասը նույնպես կուզեորվի Հայաստան հաջորդ նավերով։

(229)

***

ԵՐԵՎԱՆ, 4 հոկտեմբերի.— Հոկտեմբերի 3-ին հատուկ գնացքով Բաթումիից Երևան ժամանեց Ռեյրութից Սովետական Հայաստան վերադարձող հայերի չորրորդ քարավանի առաջին խումբը։

Կայարանում եկվորներին դիմավորեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից արտասահմանյան հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի և Երևանի Քաղաքային Սովետի ներկայացուցիչները։

Եկվորների մեծ մասը բանվորներ և արհեստավորներ են, կան նաև բժիշկներ, ատամնաբույժներ և ժուռնալիստներ։

(229)

***

ԲԱԹՈՒՄԻ, 3 հոկտեմբերի (ՀՀԳ-ի հատ. թղթ.).— Հոկտեմբերի 4-ին «Ջուկոտկա» շոգենավով Հունաստանից Բաթումի ժամանեց հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադարձող հայերի հերթական խումբը։ Ընդամենը ժամանել են 2.820 հոգի, որոնք վերջին ժամանակներս ապրում էին Աթենքում և Պիրեում։ Դրանք հիմնականում— բանվորներ և արհեստավորներ են։

***

ԵՐԵՎԱՆ, 11 հոկտեմբերի.— Հոկտեմբերի 10-ին հատուկ գնացքով Բաթումիից Երևան ժամանեց Եգիպտոսից Սովետական Հայաստան վերադարձող հայերի առաջին խումբը։

Կայարանում եկվորներին դիմավորեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից արտասահմանյան հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի ու Երևանի Քաղսովետի գործկոմի ներկայացուցիչները։

Եկվորների մեծ մասը բանվորներ և արհեստավորներ են։ Նրանցից 42 ընտանիք տեղավորվեցին Երևանում, մնացածները՝ Բերիայի, Սևանի, Կոտայքի և այլ շրջաններում։ (ՀՀԳ)

***

ԱԹԵՆՔ, 20 հոկտեմբերի (ՏԱՍՍ).— «Ջուկոտկա» շոգենավով Պիրեից Սովետական Հայաստան մեկնեց հայերի մի խումբ ևս, որոնց թիվն է 2.200 մարդ։

***

ԵՐԵՎԱՆ, 21 հոկտեմբերի.— Հոկտեմբերի 20-ին հատուկ գնացքով Երևան ժամանեց Հունաստանից Սովետական Հայաստան վերադարձող հայերի մի նոր խումբ։

Կայարանում եկվորներին դիմավորեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից արտասահմանյան հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի և Երևանի Քաղսովետի ներկայացուցիչները։

(ՀՀԳ)

***

ԲԱԹՈՒՄԻ, 24 հոկտեմբերի (ՀՀԳ-ի հատ. թղթ.).— Հոկտեմբերի 24-ին «Ջուկոտկա» շոգենավով ժամանեց Հունաստանից մեկնած հայերի հերթական խումբը։ Ընդամենը ժամանել են 2.112 մարդ, հիմնականում բանվորներ և արհեստավորներ։ Բաթումիում կարճատև հանգստից հետո ժամանածները կմեկնեն Սովետական Հայաստան։

***

ԲԵՅՐՈՒԹ, 27 հոկտեմբերի (ՏԱՍՍ).— Բեյրութի նավահանգստից դուրս եկավ սովետական «Պոբեդա» շոգենավը, որի վրա գտնվում են Սովետական Հայաստան ուղևորվող 2.660 հայեր. դրանցից 880-ը՝ Իրաքից, 785-ը՝ Սիրիայից և 1015-ը՝— Լիբանանից։

ՄԻ ԽՈՒՄԲ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ԽՈՍՔԸ

Եգիպտոսից, Լիբանանից և Սիրիայից Սովետական Հայաստան վերադարձող հայերի մի խումբ, բաղկացած 4.300 մարդուց, Բաթումիից ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար Գր. Հարությունյանին, ՀՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության նախագահ ընկ. Մ. Պապյանին և ՀՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ ընկ. Ս. Կարապետյանին ուղղված հեռագրում գրում են.—

«Մեծ ուրախությամբ ու ոգևորությամբ Եգիպտոսից, Լիբանանից ու Սիրիայից մենք վերադառնում ենք մեր սիրելի հայրենիքը՝ Սովետական Հայաստան։ Մենք՝ 4.300 հայեր, մի մարդու պես, խոստանում ենք մեր ամբողջ ուժն ու եռանդը նվիրաբերել մեր հայրենիքի հետագա բարգավաճմանը։

Կեցցե՞ բոլշևիկյան մեծ պարտիան։

Կեցցե՞ ժողովուրդների սիրելի հայր ու առաջնորդ Գեներալիսիմուս Ստալինը։»

Վերադարձողների անունից հեռագիրն ստորագրել են

ՀԱԿՈԲ ԱՐԱՄՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԶ ԲՈՅԱՋՅԱՆԸ։

(ՀՀԳ)

ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՆՈՐՎԵԳԱ-ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵԼԵԳԱՑԻԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

1947 թ. մայիսի 8-ին Երևան ժամանեց Նորվեգա-Սովետական բարեկամության ընկերության դելեգացիան հետևյալ կազմով՝ Խարալդ Խալո (ընկերության նախագահ, Օսլո քաղաքի գլխավոր ճարտարապետ), Կիրստեն Խանստեն (պառլամենտի անդամ), Խանս Յակոբ Նիլսեն (ռեժիսոր, Նորվեգական թատրոնի դիրեկտոր), Իոհան Բորգեն (գրող), Խրիստիան Խիլտ (ընկերության գլխավոր քարտուղար), Ուլավ Ռյուտտեր (Օսլոյի համալսարանի պրոֆեսոր), Ուլավ Դալգար (կինո-ռեժիսոր), Ակսել Նյո (ընկերության քարտուղար), Ավգուստ Լանդե (ՍՍՌՄ Նորվեգիական դեսպանության կից կուլտուրայի գծով կցորդ)։

Օդանավակայանում հյուրերին դիմավորեցին արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության վարչության նախագահի պաշտոնակատար Զ. Բաշինչաղյանը, Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրը Գ. Աղբալյանը, Երևանի Քաղսովետի Գործկոմի նախագահի տեղակալ Ա. Աբրահամյանը, Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Գ. Ջանիբեկյանը, և արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության պատասխանատու աշխատակիցները։

Երևանում գտնվելու օրերին հյուրերը ծանոթացան քաղաքի տեսարժան վայրերի հետ, կուլտուր-լուսավորական և գիտական հիմնարկությունների հետ, այցելեցին Մատենադարանը, Կերպարվեստի թանգարանը, ներկա եղան Սպենդիարովի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի և Սունդուկյանի անվան պետական դրամատիկ թատրոնի ներկայացումներին։ Հյուրերն այցելեցին նաև Կրուպսկայայի անվան դպրոցը և Դիմիտրովի անվան մանկամսուրը։

Նորվեգա-Սովետական բարեկամության ընկերության դելեգացիան մեկնեց Գեղարդ, Գառնի, Զվարթնոց, Էջմիածին, որտեղ ծանոթացավ Հայկական հնադարյան ճարտարապետության կոթողների հետ։ Էջմիածնում հյուրերը դիտեցին վանքը։ Դելեգացիան ընդունվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Չ-ի կողմից։

Մայիսի 11-ին արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության շենքում տեղի ունեցավ Նորվեգա-Սովետական բարեկամության ընկերության դելեգացիայի հանդիպումը Երևանի ինտելիգենցիայի ներկայացուցիչների, գիտության, գրականության ու արվեստի գործիչների հետ։

Զրույցի ժամանակ հյուրերը ծանոթացան հայ ժողովրդի պատմության, Սովետական Հայաստանի նվաճումների և Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման նոր հնգամյա պլանի հետ։

Դելեգացիան ընդունվեց նաև արտասահմանյան հայերին ընդունող և տեղավորող կոմիտեի նախագահ Բ. Աստվածատրյանի կողմից։

Մայիսի 13-ին արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության կողմից տեղի ունեցավ Նորվեգա-Սովետական բարեկամության ընկերության դելեգացիայի ընդունելությունը, որին ներկա էին Սովետական Հայաստանի կուլտուրայի ակտիվ գործիչները։

Մայիսի 14-ին Նորվեգա-Սովետական բարեկամության ընկերության դելեգացիան թռավ Մոսկվա։

***

Մեկնելուց առաջ դելեգացիայի ղեկավար Խարալդ Խալոն Հայկական Հեռագրական Գործակալության ներկայացուցչի հետ ունեցած զրույցի ժամանակ արեց հետևյալ հայտարարությունը. —

— Դժվար է, իհարկե, մի քանի խոսքով պատմել մի ամբողջ ռեսպուբլիկայի մասին, բայց արդեն ինքնաթիռից դիտելով Երևանը, ես որպես ճարտարապետ, կարող եմ նկատել, որ այս քաղաքն ունի ժամանակակից պլանավորում և եվրոպական տեսք։ Մեր այդ առաջին տպավորությունը ավելի ևս ամրապնդվեց, երբ մենք մոտիկից ծանոթացանք Երևանի հետ։

Մենք դիտեցինք պատմական ճարտարա-

պետական հիանալի, լափաղանց հետաքրքիր ու արժեքավոր հիշատակարանները՝ Գառնին, Գեղարդը, Զվարթնոցը, Էջմիածինը։ Ձեր ճարտարապետական հիշատակարանների մասին ես գիտեի նաև առաջ, մեզ հասած հրատարակություններից։

Ձեր ճարտարապետությունը բոլորովին այլ է, քան Նորվեգիայում, բայց ձերը, ինչպես նաև մերը հիմնվում են կլասիկ ժառանգության վրա, նրա հարուստ տրադիցիաները նկատելի են դեղեցիկ շատ շենքեր կառուցած սովետական նոր ճարտարապետների գործերում։

Մենք հետաքրքրվում ենք հայ ժողովրդի և Սովետական Միության բոլոր ժողովուրդների ճարտարապետությամբ, և ես տեսնում եմ, որ այստեղ հաջողությամբ ստեղծվում է մի նոր ոճ։

Մենք եղանք Քանաքեռի հիդրոկայանում, դիտեցինք օպերայի թատրոնում «Խանդուտ» բալետը, Հայկական դրամատիկ թատրոնում բեմադրվող «Հարազատ մարդիկ» պիեսը, տեսանք հայկական ժողովրդական երգի ու պարի գեղեցիկ անսամբլը, ծանոթացանք հայկական հետաքրքիր կինոֆիլմերի հետ։

Այն բոլորն, ինչ որ մենք տեսանք, ամեն անգամ մեզ առավել հետաքրքիր էր թվում, բայց ամեն անգամ պարզվում էր, որ մեզ սպասում են ավելի ևս հարուստ տպավորություններ։

Հայ ժողովրդի պատմության, նրա բազմադարյան կուլտուրայի մասին ես դիտեմ վաղուց, դեռևս այն ժամանակվանից, երբ սովորում էի դպրոցում։ Սովետական Հայաստանում, նրա մայրաքաղաքում մեր գտնվելու ժամանակ մենք հանդիպում ունեցանք և ղրուցեցինք դիտության, լուսավորության, արվեստի շատ գործիչների հետ և համոզվեցինք, որ հայ ժողովուրդը ապրում է կուլտուրական, բերկրալի կյանքով։

Մեր ամբողջ դելեգացիայի անունից կարող եմ ասել, որ Սովետական Հայաստանը սքանչելի ռեսպուբլիկա է և ես միանգամայն հասկանում եմ արտասահմանյան հայերի ջերմ ցանկությունն ու ձգտումը՝ վերադառնալ իրենց հայրենիքը, Սովետական Հայաստան, որտեղ նրանց սպասում է ապահովված կյանք և խաղաղ աշխատանք։

Վերջում պարոն Խալոն ցանկություն հայտնեց, որ էլ ավելի ամրապնդվեն կուլտուրական կապերը Նորվեգիայի և Սովետական Միության ու նրա կազմի մեջ մտնող Սովետական Հայաստանի միջև։



Նորվեգա-Սովետական բարեկամության ընկերության դելեգացիան Էջմիածնում

(ՀՀԳ)

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՆԱՅԻՆ ՍՈՎԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի Նախագահությունը որոշում է. —

Հայկական ՍՍՌ աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական և ավանային սովետների ընտրությունները նշանակել 1947 թվի դեկտեմբերի 21-ի կիրակի օրը։

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության նախագահ՝
Մ. ՊԱՊՅԱՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության քարտուղար՝
Ս. ՂԵՎՈՆԴՅԱՆ

24 սեպտեմբերի 1947 թ.
Քաղ. Երևան

ՄՈՍԿՎԱՅԻ 800-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երևանի աշխատավորությունը արժանավայել կերպով նշեց Սովետական Միության փառապանծ մայրաքաղաք Մոսկվայի 800-ամյա հոբելյանը։

Մայրաքաղաքի կուլտուրայի և հանգստի տոնականորեն զարդարված պարկերը սեպտեմբերի 7-ին, կիրակի օրը, լեփ-լեցուն էին քաղաքի աշխատավորներով, նրանց թվում նաև մեծ թվով հայրենադարձ հայերով։ 26 կոմունարների, կոմսոմոլի անվան կուլտուրայի և հանգստի պարկերում, Հայֆիլհարմոնիայի ամառային այգում, Ստալինյան ռայոնի հանգստի պարկում կազմակերպվել էին ճոխ զրոսանքներ։

Ի պատիվ Մոսկվայի 800-ամյակի մեծ ցուցահանդես բացվեց Երևանի Կերպարվեստի թանգարանի ընդարձակ սրահում։

Այցելուները մեծ հետաքրքրությամբ դիտեցին «Մոսկվան անցյալում», «Մոսկվան Սովետական Միության մայրաքաղաք» և «Մոսկվան ու հայկական կուլտուրան» բաժիններում ցուցադրված նկարները, փաստաթղթերն ու գրականությունը։ Առաջին օրը ցուցահանդեսը դիտեցին գիտության, արվեստի, գրականության բնագավառի աշխատողները և մոտ 1.500 աշխատավորներ։

Մայրաքաղաքի պիոներ-գրոցականների համար մեծ զրոսանք և սպորտ մի շարք ձևերի ընկերական հանդիպումներ կազմակերպվեցին Դրևանի մանկական երկաթուղում, Ֆուտբոլի ընկերական հանդիպումներ տեղի ունեցան Երևանի «Ապարտակիա» ստա-

դիոնում «Սպարտակ» ընկերության 2-րդ և Թբիլիսիի «Ռազմա-օդային ուժերդ» թիմերի միջև, իսկ օդանավակայանում «Դինամոդ» և «Սպարտակ» սպորտընկերությունների թիմերը ֆուտբոլի և վոլեյբոլի հանդիպումներ ունեցան օդաչուների հետ։

Նույն օրը երևկոյան աշխատավորների մեծ բազմություն էր հավաքվել Լենինի հրապարակում և օպերայի ու բալետի պետական թատրոնի շրջակա պուրակներում։

Ռադիո-բարձրախոսներն ամենուրեք ազդարարում են ՍՍՌ Միության Զինված Ուժերի Մինիստր բանակի գեներալ Ն. Բուլգանինի հրամանը։ Ճիշտ ժամը 9-ին սովետական հրետանին քսան համազարկով նշանավորում է Մոսկվայի 800-ամյակը։ Սկսվում է հրավառությունը, երկինքը լուսավորվում է հրթիռների դյուցազնական լույսերով։

Մայրաքաղաքի այգիներում, հրապարակներում և դիտավոր փողոցներում ժողովրդական զբոսանքը շարունակվում է մինչև ուշ գիշեր։

ԼԵՆԻՆԳՐԱԴՈՒՄ

Սեպտեմբերի 7-ին քաղաքի կուլտուրայի ու հանգստի պարկում և երկաթուղայինների այգում կազմակերպվեց ժողովրդական մեծ զբոսանք, նվիրված Մոսկվայի 800-ամյակին։ Այգիների գլխավոր մուտքերը և ծառուղիները զարդարված էին ժողովուրդների սիրելի առաջնորդ մեծ Ստալինի և նրա մերձավորագույն գինակիցների նկարներով, կարմիր դրոշներով և փառապանծ մայրաքաղաքին նվիրված լոզունգներով։

Քաղաքային այգում ելույթ ունեցան Հայֆիլհարմոնիայի պարի և երգի անսամբլը, ինչպես նաև գործարանային ինքնագործ խմբակները, ցուցադրվեցին կինոֆիլմեր։

«Դինամոյի» դաշտում տեղի ունեցան ֆիզկուլտ խաղեր և մրցումներ։

Մոսկվային նվիրված անկյուն-ցուցահանդես բացվեց քաղաքային գրադարանում։

Քաղաքի այգիներում և հրապարակներում ժողովրդական զբոսանքը շարունակվեց մինչև ուշ գիշեր։

ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մոսկվայի 800-ամյակը շերմորեն նշեցին Էջմիածնի շրջանի աշխատավորները։ Ի պատիվ տոնի Էջմիածնի Միկոյանի անվան Լենինի շքանշանակիր կոլխոզը սեպտեմբերի 7-ին 40 ցենտների դիմաց մթերակայան հանձնեց 70 ցենտներ բամբակ։ Մաղկունք գյուղի կոլխոզի միայն մեկ բրիգադայի աշխատողները մթերակայան հանձնեցին 2,15 տոննն առաջին տեսակի բամբակ, 1,5 տոննի փոխարեն։

Այդ օրը քաղաքում տեղի ունեցան ֆուտբոլային թիմերի և բասկետբոլի մրցումներ։

Մոսկվայի 800-ամյակը մեծ իսանդավառությամբ նշեցին Հայաստանի նաև մյուս բոլոր քաղաքների ու շրջանների աշխատավորները։

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՇՏԱՐԱԿ.— Նզվարդ գյուղի աշխատավորությունը թե անցյալ տարի և թե այս տարի գրկաբաց ընդունեց արտասահմանից Սովետական Հայաստան վերադարձած տարագիր հայ եղբայրներին ու քույրերին։

Ստալինի անվան կոլխոզը իր միջոցներով գյուղում առանձնացված հատուկ փողոցի վրա իրար կողքի կառուցել է 24 գեղեցիկ բնակարան և բոլորն էլ հատկացրել հայրենադարձ ընտանիքներին։

Նորեկ քաղաքացիները մեծ եռանդով աշխատում են կոլխոզային դաշտերում։ Շատ ընտանիքներ վաստակել են հարյուրից ավելի աշխօր։

ԲԵՐԻԱՅԻ ԱՆՎԱՆ ՇՐՋԱՆ.— Բերիայի անվան շրջանի Ստալինի անվան կոլխոզը բնակարաններ է կառուցում արտասահմանից հայրենիք վերադարձող հայերի համար։ Պլանով նախատեսված 100 տներից 85-ը իրենց բոլոր հարմարություններով լիովին պատրաստ են։ Կառուցողները խոսք են տվել Մեծ Հոկտեմբերի 30-ամյակին ավարտել մնացած 15 տների կառուցումը։

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՀԱՅԵՐԸ ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱԵՋ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ

Այժմ մենք մեր հայրենի տանն ենք, հայրենի օջախում և աշխատում ենք նրա բարօրության համար,— այսպես են ասում Նոր Բայազետի շրջանի Նորադուզ գյուղի Մոլոտովի անվան կոլխոզի հայրենադարձ անդամները։ Նրանք աշխատում են դաշտա-

վարության, անասնաբուծության և շինարարության բնագավառներում ու ամենուրեք ցուցաբերում անսահման եռանդ և ոգևորություն։

Հայրենադարձ Հովհաննես Հովհաննիսյանը որմնադիր է։ Նա կոլխոզի որմնադիրների հետ միասին այս տարի կառուցել է երեք անասնապահական շենք, որի դիմաց վաստակել է 153 աշխատանքային։

— Այստեղ ես կառուցում եմ և՛ ինձ և՛ բոլորիս համար,— ասում է Հովհաննիսյանը։

Եվ նա իր աշխատանքով օգնում է կոլխոզին, որպեսզի և՛ ինքը, և՛ բոլորը ավելի բարեկեցիկ ապրեն։

Հայրենադարձ Կարապետ Թադարյանը հովիվ է և արդեն վաստակել է 135 աշխատանքային։ Նա խնամում է 250 ոչխար, որոնցից ոչ մեկի կորուստ չի տվել։ Նա հոտն առջևն արած շրջում է ալպյան բուսականությամբ հարուստ դաշտերում և աշխուժ պահպանում հանրային անասունները։

Հայրենադարձներն իրենց աշխատանքով առանձնապես աչքի են ընկնում դաշտավարության բնագավառում։ Նրանց անչափ ոգևորել է այս տարվա առատ բերքը, որի համար իրենք ևս շատ աշխատանք են թափել։ Նրանք քայլում են հարազատ հայրենիքի շատ հաց տվող առաջավոր մարդկանց շարքերում։ Ահա Սարգիս Հովհաննիսյանը, որն աշխատելով դաշտավարության բնագավառում, արդեն վաստակել է 200-ից ավելի աշխատանքային։ Անրաս Սողոմոնյանը, Սմբատ Հովսեփյանը, Սամսոն Թադևոսյանը 80 օրվա ընթացքում վաստակել են 120—150-ական աշխատանքային և այժմ ճանաչվում են որպես լավագույն աշխատողներ։

Գյուղսովետը և կոլխոզի վարչությունը հոգատարությամբ են շրջապատել հայրենադարձներին, որոնց աշխատանքով, բնակարանով ապահովելու հետ միասին, ցույց են տալիս նաև նյութական մեծ օգնություն։ Այսպես, կոլխոզը օգնության կարգով հայրենադարձներին տվել է 9610 կիլոգրամ հացահատիկ, 8800 կիլոգրամ կարտոֆիլ, զգալի քանակությամբ վառելափայտ, դրամ և այլն։ Կոլխոզը իր այդ նոր անդամներին տրամադրել է նաև տնամերձ հողամասեր։ Եթե այս բոլորը ավելացնենք կոլխոզից ստացած նրանց հիմնական եկամուտներին, ապա կարելի է ասել, որ հայրենադարձ կոլխոզնիկներն ու կոլխոզնիկուհիները կարճ ժամանակամիջոցում ստացել են բարեկեցիկ կյանքի համար նյութական-կուլտուրական հնարավորություններ։

Անցյալ տարվանից կոլխոզը ձեռնարկել է հայրենադարձների համար 10 նոր բնակելի շենքերի կառուցումը։ Շինարարական աշխատանքների խոշոր մասը ավարտված է և շատ քիչ բան է մնում, որ այդ շենքերը շահագործման հանձնվեն։

ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ

Մայրաքաղաքից բավականին բարձր՝ Քանաքեռի սարահարթի վրա սկսվել են Հաղթանակի հուշարձանի կառուցման աշխատանքները։ Հուշարձանը մի հոյակապ կառուցում է նիրկայացնելու իրենից՝ պսակված ժողովրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինի 15 մետր բարձրություն ունեցող քանդակագործական ֆիգուրայով, պատրաստված պղնձից (հեղինակ քանդակագործ Ս. Դ. Սերկուլով)։

Հուշարձանի պատվանդանում տեղավորվելու են Հայրենական պատերազմի թանգարանի դահլիճները։ Հուշարձանի ճարտարապետական մասի նախագիծը կազմել է ճարտարապետ Ռ. Իսրայելյանը։ Հուշարձանի ընդհանուր բարձրությունը կազմելու է 40 մետր։ Պատվանդանը երեսպատվելու է տեղական, մաքուր հղկված, բազալտով։

Թանգարանի բաժիններից մեկն արտահայտելու է հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական պատերազմին։ Դեպի հուշարձանը տանող սանդուղքները երկու կողքերից զարդարված կլինեն մարտիկների քանդակագործական ֆիգուրաներով։ Հուշարձանի կողմնային պատերի վրա փորագրվելու են Սովետական Միության Հերոսի կոչման արժանացած հայերի անունները։ Մուտքի աջ և ձախ կողմերում կլինեն հաղթողների հանդիսավոր վերադարձն արտահայտող քանդակներ։

Շենքի ստորին՝ ընդերկրյա մասում ցուցադրվելու է փառապանծ 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիայի մարտական երթերի պատմությանը նվիրված մեծ պանորամա։

Ներկայումս կառուցման հրապարակում թափով ընթանում են հողային աշխատանքները։ Միաժամանակ նախապատրաստական աշխատանքներ են տարվում հիմքի կառուցման համար։

Կառուցումը կատարում է Հայկական ՍՍՌ Կոմունալ Տնտեսության Մինիստրության շինարարական դրասենյակը։

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆՎԵՐ

Օրերս Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան Պետական Հանրային գրադարանը Լենինգրադի կոնսերվատորիայի պրոֆեսոր, ականավոր յութակահար Նալբանդյանի այրուց՝ Աննա Նալբանդյանից ստացավ հինգ արկղ արժեքավոր գրականություն՝ հայերեն, ռուսերեն և եվրոպական լեզուներով, ինչպես նաև թե հայ գրականության նշանավոր գործիչների լուսանկարներ, և թե քարտեզներ, ընդ որում պատմական Հայաստանի քարտեզը և այլն։

Տարիներ առաջ գրադարանը ստացել էր նաև նրա հոր՝ հայտնի կոլեկցիոներ Ստեփան Սերեբրյակյանի գրադարանի մի մասը։ Ստացված այս վերջին հինգ արկղը լրացնում է այն և գրադարանում կազմում է առանձին «Սերեբրյակյանի ֆոնդ»։

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ „ԳԱՅԱՆԵ" ԲԱԼԵՏԻ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԵՎԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Թղթակից Գ. Հորդի նաղարենկոն գրում է.— Վերջերս Սովետական Ուկրաինայի մայրաքաղաքի հանդիսատեսները մեծ բավականությամբ դիտեցին Կիևի Տ. Գ. Շևչենկոյի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում բեմադրված «Գայանե» բալետը, որի երաժշտության հեղինակն է սովետական հայտնի կոմպոզիտորներից մեկը՝ Արամ Խաչատրյանը։

Թատրոնի բալետային տաղանդավոր կոլեկտիվը վառ կերպով դրսևորեց հեղափոխական Հայաստանի սովետական շրջանի կյանքից վերցրած բալետի կերպարները։

Խաչատրյանի երաժշտությունը իր մեջ զուգորդում է նուրբ ձևը իսկական ժողովրդայնության հետ, որը սակայն երբեք չի փոխվում սահմանափակ էտնոգրաֆիզմի։ Երաժշտության տեսակետից «Գայանե» բալետը թերևս սովետական կոմպոզիտորների փայլուն նվաճումներից մեկն է Հոկտեմբերի 30-ամյա հոբելյանի օրերին։

Կիևի թատրոնի ղեկավարության մատուցած ծառայությունն այն է, որ Սովետական Ուկրաինայի արվեստի գործիչները կարողացել են բեմադրության մեջ արտացոլել եղբայրական հայ ժողովրդի արվեստի յուրահատկությունը։ Նրանք կարողացել են հաղորդել Սովետական Միության գեղատեսիլ ռեսպուբլիկաներից մեկի կոլորիտը, շարժումների և պարերի մեջ բացահայտել են ինչպես հայկական կենցաղի և սովորությունների յուրահատկությունը, այնպես էլ այն, թե հայ կոլտնտեսները ինչպես են պայքարում հոյակապ ստալինյան պլանների կատարման համար։

Արամ Խաչատրյանի բալետի բեմադրությունը Կիևում մի անգամ ևս վկայում է Սովետական Միության ժողովրդների միջև շարունակ ամրապնդվող ստալինյան բարեկամությունը և հանդիսանում է եղբայրական ռեսպուբլիկաների միջև կուլտուրական արժեքների փոխանակության խիստ բեղմնավոր մի օրինակ։

„ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ" ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Սովետական գրողների միության կից կազմակերպվել է «Սովետական գրող» հրատարակչությունը, որը հրատարակելու է սովետական հայ գրողների երկերը, ինչպես նաև ռուս և եղբայրական մյուս ժողովրդների գրողների ժամանակակից լավագույն երկերի հայերեն թարգմանությունները։

Հրատարակչությունն արդեն գործի է անցել։ Պլանով նախատեսված է երկրորդ կիսամյակում հրատարակել 209 տպագրական մամուլ, որի մի մասն արդեն արտադրության է հանձնված։ Հրատարակվում են Գ. Սարյանի երկերի ժողովածուի մի հատորյակը, Գ. Սևունցի «Ազատության պողոտան» վեպը, Գ. Բեսի «Արաքս» խորագրով պատմվածքները, ինչպես նաև Մեծ Հայրենական պատերազմի ռազմադաշտերում զոհված 15 գրող-ճակատայիններ, որոնց թվում Ս. Հուրյանի, Դ. Զարխյանի, Զ. Մարգարյանի, Ա. Նալբանդյանի, Ա. Հովհաննիսյանի, Կ. Արտունու, երկերի «Պսակ» ժողովածուն։

Ժամանակակից ռուս գրականությունից տպագրության է պատրաստվում Վ. Նեկրասովի ստալինյան մրցանակի արժանացած, «Ստալինգրադի խրամատներում» վեպը։

ԼԵՈՅԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայել Լեոյի «Հայոց պատմություն» գրքի երկրորդ հատորը։

ՀԱՅ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Խ. Աբովյանի արձանը
Երևանի Աբովյան հրապարակում

Հայաստանի գրական հասարակայնությունը նախապատրաստվում է լայն կերպով նշելու հայ մեծագույն գրող-լուսավորիչ — Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակը, որը լրանում է 1948 թվի ապրիլի 14-ին։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի գրականության ինստիտուտը արդեն հրատարակել է Խաչատուր Աբովյանի երկերի վեցհատոր ժողովածուի չորրորդ հատորը։

Դատ օրերս արտադրության կհանձնվի երկերի լիակատար ժողովածուի երրորդ հատորը, որն ընդգրկում է նաև Աբովյանի հոշակավոր վեպը Հայաստանին վնաս. մինչև այս տարվա վերջը արտադրության կհանձնվեն ևս մյուս երկու՝ առաջին և երկրորդ հատորները, որոնք կընդգրկեն Խ. Աբովյանի պոեզիան։

Հայ գրականության կլասիկ Խ. Աբովյանի երկերի լիակատար ժողովածուի այդ հատորների ակադեմիական հրատարակչությամբ է զբաղված ներկայումս նշանավոր գրականագետների մի խումբ, որոնց թվում՝ ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր Երվանդ Շահազիզը։

Խ. Աբովյանի կյանքը, գրական-մանկավարժական ու հասարակական գործունեությունը արտացոլող մեծ ցուցահանդես է կազմակերպում Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գրականության ինստիտուտին կից գրական թանգարանը։ Վերակառուցվում ու ընդարձակվում է Խ. Աբովյանի հայրենի գյուղում՝ Քանաքեռում գտնվող տուն-թանգարանը։

ԵՐԳԻ ՈՒ ՊԱՐԻ ԱՆՍԱՄԲԼ

Ազատ Յափունջյանը վերջերս արտասահմանից Հայաստան վերադառնալով բնակարան և աշխատանք ստացավ Անաստասյանի գյուղում։ Նրա ձեռնարկությամբ գյուղում կազմակերպվել է երգի ու պարի անսամբլ, որը բաղկացած է 20 հոգուց, գլխավորապես հայրենադարձ հայերից։ Անսամբլն արդեն ելույթներ է ունեցել շրջանային կենտրոնի թատրոնում, Շահումյանի անվան և XVIII պարտիզանական դիվիզիայի անվան կոլխոզների ակումբներում ու այլ տեղերում։ Անսամբլը շնորհալի կերպով կատարում է «Երգ Ստալինի մասին» և մի շարք ժամանակակից ժողովրդական երգեր՝ կոլխոզային երջանիկ կյանքի մասին։

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԵՍՏԻՎԱԼ ՊՐԱԳԱՅՈՒՄ

Հուլիսի 20-ից մինչև օգոստոսի 17-ը Չեխոսլովակիայի մայրաքաղաք Պրագայում անցկացվեց երիտասարդության միջազգային ֆեստիվալ, որին մասնակցում էին 70 երկրների երիտասարդության պատվիրակությունները։ Ֆեստիվալին մասնակցում էին նաև հայ ժողովրդի զավակները։

Երիտասարդության Պրագայի միջազգային

Ֆեստիվալի լաուրեատի կոչում ստացողների մեջ են գտնվում և հետևյալ տաղանդավոր հայ երիտասարդները.—

Կոմպոզիտորներ Կարեն Խաչատրյանը (առաջին մրցանակ) և Արնո Բաբաջանյանը (երկրորդ մրցանակ).

Դաշնակահար Վիկտոր Մերժանովը.

Մենապարող Գեորգ Ցարմանյանցը.

ԼԱՏՎԻԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 1-ին Երևան ժամանեց Լատվիական ՍՍՌ գրողների պատվիրակությունը. Պատվիրակության կազմն է.— պոետ Վալդիս Լուքս (ղեկավար), Լատվիական ՍՍՌ կուլտուրայի վաստակավոր գործիչ, պոետ Յան Սուդրաբկալն, կին պոետ-թարգմանիչ Միրդզա Կեմպե, պոետ և ժուռնալիստ Յան Գրոտ, Լատվիայի սովետական գրողների Միության քարտուղարի տեղակալ, արձակագիր Աղոլֆ Տալցիս.

Եղբայրական Լատվիայի գրողները հետաքրքիր ուղևորություն են կատարել Սովետական Միությունում. Մոսկվայում նրանք մասնակցել են մայրաքաղաքի 800-ամյակի հոբելյանական առնակատարություններին. Ուկրաինայում ծանոթացել են վերածնված ռեսպուբլիկայի տնտեսական ու կուլտուրական կյանքին. Եղել են Կիևում, Խարկովում, Դնեպրոպետրովսկում, Դնեպրոդզերժինսկում, Դնեպրոգեսում, կոլխոզներում, սովխոզներում, մեքենա-տրակտորային կայաններում.

Լատվիական գրողները Բաքվում մասնակցել են ադրբեջանական մեծ պոետ Նիզամի Գյանջեվիի 800-ամյա հոբելյանական տոնակատարություններին.

Ադրբեջանում հյուրերը եղել են նավթահանքերում, ծանոթացել են Բաքվի ու Կիրովաբադի ուշադրության արժանի վայրերին և հետպատերազմյան ստալինյան հնգամյակի խոշորագույն նորակառույցներին.

Հյուրերը Հայաստանում մնալու են մի շաբաթ. Ուղևորության նպատակն է մոտիկից ծանոթանալ եղբայրական ռեսպուբլիկայի կյանքին.

— Այստեղ մենք կզրույցներ բանվորների, կոլխոզնիկների, ինտելիգենցիայի ներկայացուցիչների հետ,— հայտարարել է թերթի թղթակցին պատվիրակության ղեկավար Վալդիս Լուքսը,— մենք մեծ ցանկություն ունենք ծանոթանալու հայ կոլխոզնիկների կյանքին. Լատվիական ՍՍՌ սովետական երիտասարդ ռեսպուբլիկաներից մեկն է. Մենք ցանկանում ենք ավելի մոտ ու լավ ճանաչել ՍՍՌՄ ժողովուրդների միասնական ընտանիքի մեր եղբայրներին.

Լատվիայի աշխատավորները ծանոթ են հայ ժողովրդի անցյալի հետ, նրանք դիտեն, թե ինչպես անցյալում հետամնաց ու հարբստահարված Հայաստանը սովետական իշխանության օրոք դարձել է ծաղկող ու առաջավոր ռեսպուբլիկա. Լատվիա վերադառնալուց մենք մի շարք ակնարկներ, պատմվածքներ ու բանաստեղծություններ կգրենք Հայաստանի մասին. Հյուրասիրությունը, որ հանդիպում ենք ամենուրեք, սրտառուչ է. Միայն սոցիալիզմի երկրում իրականություն են դարձել ժողովրդների միջև խորը սերը և հարգանքը.

Լատվիական գրողների հետ Երևան է ժամանել Մոսկվայից նաև գրական քննադատ, ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Օ. Ռեզնիկը.

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՆԻԶԱՄԻ ԳՅԱՆՋԵՎԻԻ ԾՆՆԴՅԱՆ 800-ԱՄՅԱԿԸ

Սեպտեմբերի 22-ից 28-ը եղբայրական Ադրբեջանի ժողովուրդը, ինչպես նաև Սովետական Միության բոլոր ժողովուրդները նշեցին մեծագույն բանաստեղծ Նիզամի Գյանջեվիի ծննդյան 800-ամյակը.

12-րդ դարի Արևելքի այս մեծանուն հանճարի, աշխարհի մեծագույն բանաստեղծներից մեկի դիրքը տվել է արևելյան բանաստեղծական արվեստի բոլոր նմուշները— դաստաններ, քառյակներ, քասիդներ և լայնաշունչ պոեմներ. Գյանջեվիի գլուխ գործոցները հանդիսանում են նրա հինգ նշանավոր պոեմները — «Գաղտնիքների գանձարանը», «Խոսրով և Շիրին», «Ցոթ գեղեցկուհիներ», «Լեյլի և Մեջնուն» և «Իսքենդեր նամե».

Նիզամիի երկերը դարերի բովից անցնելով, այսօր, սովետական կարգերում, մատչելի են դարձել միլիոնավոր ընթերցողներին համար. նրա երկերը թարգմանվել են Միության ժողովուրդների լեզուներով.

Հոբելյանական օրերին Բաքվում տեղի ունեցավ ՍՍՌՄ Սովետական գրողների միության հանդիսավոր ընդլայնած նիստը Ադրբեջանի Սովետական գրողների միության վարչության պլենումի հետ միասին, որտեղ լսվեցին մի շարք զեկուցումներ.

Նիզամիի ծննդյան 800-ամյա հոբելյանական հանդեսներին և ՍՍՌՄ Սովետական գրողների միության պլենումին մասնակցելու համար սեպտեմբերի 19-ին Բաքու մեկնեց

նաև Հայաստանի Սովետական գրողների պատվիրակությունը, հետևյալ կազմով.— միությանը քարտուղար Հ. Սիրաս (պատվիրակության նախագահ), գրողներ Ստ. Զորյան, Գ. Սարյան, Ս. Տարոնցի, Մ. Վեսպեր, Գ.

Նիզամի Գյանջեվի
Ադրբեջանական մեծ բանաստեղծ

Սևունց, Ա. Երևանլի և «Սովետ էրմանիստան» թերթի պատասխանատու խմբագիր Ռ. Ալավերդիևը։

Հայաստանի մայրաքաղաքում, քաղաքներում, ավաններում, գյուղերում սեպտեմբերի 22—28-ը հանդիսավոր կերպով նշվեց հանճարեղ բանաստեղծ Նիզամիի ծննդյան 800-ամյակը։

Բաքվում Ազերնեշրի հրատարակությամբ հայերեն լեզվով լույս տեսավ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Գ. Անտոնյանի «Նիզամին և հայկական գրականությունը» գիրքը, որի մեջ հեղինակը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում ադրբեջանական ժողովրդի մեծ բանաստեղծի և հայ կուլտուրայի ականավոր դործիչների կապերի մասին։ Ըստ այդ տեղեկությունների Նիզամիին հայտնի էին Մովսես Խորենացու և Սեբեոս եպիսկոպոսի աշխատությունները. միաժամանակ Նիզամիի երկերը իրենց ազդեցությունն են ունեցել XIV—XV դարերի հայ բանաստեղծների պոեզիայի վրա։

ՀՍՍՌ Մատենադարանի ձեռագրերի մեջ կան նաև Նիզամիի պոեմների մի քանի մինիատյուրային ցուցակները. դրանցից մեկը վերաբերում է 1560 թվականին և պարունակում է «Խամսե»-ի (հնգյակի, այսինքն հինգ պոեմների ժողովածուի) լրիվ բնագիրը։

Նիզամիի պոեմների բնագիրը գրանցված է էջերի մեջ տեղում երեք սյունակներով, իսկ էջերի լուսանցքներում, նույն ձեռագրով, գրանցված է հնդիկ բանաստեղծ Խոջա Խոսրով Դահլևիի հնգյակը, գրված Նիզամիի «Խամսե»-ի ազդեցության տակ։

Ձեռագրի առիթը՝ Աբդուալլահ Սեյֆի որդի Աբու-Ալին իր դիտողություններում նշում է, որ գեղարվեստական տեսակետից Նիզամիի «Խամսե»-ն անհամեմատ բարձր է Խոջա Խոսրով Դահլևիի ստեղծագործությունից։ Դրա համար էլ,— ասում է Աբու-Ալին,— արտագրելով պոեմները, կենտրոնական տեղը հատկացրել է առաջինին, իսկ երկրորդին գետեղել է էջերի լուսանցքներում։

Ձեռագիրը բաղկացած է 261 թերթ թերթերից և ունի կաշվե կազմ 24×17 սմ չափով։ Երկուսի պոեմների բնագրերն էլ գրված են սև, իսկ վերնագրերը և ենթավերնագրերը՝ կարմիր թանաքով։

ԱՆՏԱՌԱՏՆԿՈՒՄԸ ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ

Կիրովականի անտառային փորձակայանում վերջին տարիներս աճեցվել են 170 տեսակ ծառեր ու թփեր, որոնք ստացվել են Կալիֆորնիայից, Լիվիայից, Հիմալայան լեռներից, Սիբիրից ու այլ տեղերից։

Բիոլոգիական գիտությունների թեկնա-

ծու է. Մախարաձեն հաջողությամբ աճեցնում է սիբիրական եղևնին։

Անտառային փորձակայանի գիտական աշխատողները «Վանաձոր» տեղամասում, քառասուն հեկտար տարածության վրա մի շարք փորձեր են կատարել, որոնց հետևանքով հասել են անտառի բարձր տարեկան աճի։

ԿԻՐՈՎԱԿԱՆԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻՆ

Կիրովականի բուսաբանական այգին ունի 14 հեկտար տարածություն։ Այստեղ գտնվում են 900-ից ավելի տեղական, ամերիկյան, կանադական, եվրոպական, սիբիրյան և այլ տեսակի բույսեր։

Մեծ ուշադրություն է դարձվում այգու դեկորատիվ ծաղկաբուծական բաժանմունքին։ 100 քառակուսի մետր տարածության վրա մշակվում են զանազան տեղերից բերված 200-ից ավելի ծաղկի տեսակներ։ Գեորգինա ծաղկի հետազոտական աշխատանքները ցույց են տալիս, որ այդ կուլտուրան մեծ ապագա է խոստանում Կիրովականի կլիմայական պայմաններում։

ՆՈՐ ՀՈՂԵՐԻ ՅՈՒՐԱՑՈՒՄ

Դեռ մոտիկ անցյալում հարյուրավոր հեկտար ճահճացած հողեր Բասարգեչարի շրջանում մնում էին չօգտագործված։ Կոլխոզնիկները ձգտելով ընդարձակել ցանքադաշտերի տարածությունը, 1944 թվին, չնայած պատերազմի ժամանակվա դժվարություններին, որոշեցին մշակելի դարձնել ճահճացած հողերը։

Համերաշխ կերպով աշխատանքի անցնելով, Կրբխբուլաղ գյուղի կոլխոզնիկները կարճ ժամանակամիջոցում փորեցին երկու կիսավոր խանդակներ, որանցից դեպի զանազան կողմեր տարածվող խանդակների մի ամբողջ ցանց ևս պատրաստեցին։ Հաջորդ երկու տարիներում կոլխոզնիկները սիստեմատիկաբար մաքրելով խանդակները գոհունակությամբ նկատեցին, որ ջրերը նվազում են, իսկ հողը դառնում է մշակման համար պիտանի։

Անցյալ տարի աշնանը տրակտորը անցավ այդ նոր հողերի վրայով, որ դեռ երեկ ճահճացած վիճակումն էր։ Մոտ 50 հեկտար տարածության վրա ցել կատարվեց։ Այս տարի գարնանը հերկելուց հետո այդտեղ գարի ցանվեց։ Նոր հողերից առատ բերք սպասող կոլխոզնիկների հույսերն արդարացան։ 47 հեկտար դաշտերի յուրաքանչյուր հեկտարից ստացվեց միջին հաշվով 18-ական ցենտներ գարի։

Ներկայումս կոլխոզնիկները ցել են կատարում յուրացված ողջ 120 հեկտար տարածության վրա։ Գարնանն այստեղ ցանվելու են հացահատիկներ, կարտոֆիլ, բանջրանոցային կուլտուրաներ։

Միայն Կրբխբուլաղ գյուղի կոլխոզնիկները չէ որ զբաղվում են ճահճացած հողերի յուրացմամբ։ Վերջին տարիներս Նորակերտ գյուղի կոլխոզնիկները յուրացրել են մոտ 170 հեկտար ճահճացած հողեր։ Նախկին տորֆային ճահիճների տեղում ցանված «էրիտացեում» տեսակի գարնանացորենի արտերից կոլխոզնիկները ստացել են հեկտարից միջին հաշվով 16-ական ցենտներ բերք։ 60 հեկտար յուրացված հողերից նույնպիսի լավ արդյունքներ են ստացել նաև Փոքր Մազրա գյուղի կոլխոզնիկները։

ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

Ախուրյանի, Աշտարակի, Կոտայքի, Ղափանի, Մեկոյանի և ռեսպուբլիկայի այլ շրջանների կոլխոզներում 100-ից ավելի մեծ ու փոքր ջրամբարներ ոռոգում են տեխնիկական կուլտուրաներով զբաղեցրած մեծ տարածություն։

Ընթացիկ տարում ռեսպուբլիկայի շրջաններում լայն կերպով ծավալվել են 39 նոր մեծ ու փոքր ջրամբարների շինարարության աշխատանքները։ Նոյեմբերյանի շրջանում կառուցվում են 11 ջրամբար, Ղափանի շրջանում — 12, Ալավերդու շրջանում — 5 և այլն։ Աշտարակի շրջանում կառուցվող նոր ջրամբարի ծավալն է 50.000 խորանարդ մետր։

Հայկական ՍՍՌ Ջրային և Գյուղատնտե-

ության մինիստրությունները կոլխոզների օժանդակություն են դուրս տալիս ջրամբարների կառուցման գործում։ Միայն Ղափանի շրջանին, 12 նոր ջրամբարների շինարարության ու եղածների վերանորոգության համար, բաց է թողնված 45 տոն ցեմենտ։

ՀԶՈՐ ՍԱՌՑԱՐԱՆ

Երևանում կառուցվելու է 10 միլիոն ռուբլի արժողությամբ հզոր սառցարան։ Սառցարանը նախատեսված է մսի, պտղի, յուղի և այլ մթերքների միաժամանակ պահպանման համար։ Սառցարանին կից գործելու է պաղպաղակ արտադրող ֆաբրիկան։

ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

Այս տարի շահագործման կհանձնվի Երևանի Հախճապակու գործարանը, որը արտադրելու է զանազան ամանեղեն և կենցաղային սանիտարական պարագաներ։

Գործարանին կից կառուցվում է նաև կաֆելի և երեսպատման աղյուսի ցեխ, որը տարեկան արտադրելու է երեք միլիոն հատ երեսպատման և 300 հազար հատ կաֆելի աղյուս։

***

Երևանի կոշիկի 3-րդ գործարանը, որը կառուցվել է Հայրենական պատերազմի տարիներին, այժմ ընդարձակվում է և լրիվ շահագործման հանձնվելուց հետո արտադրելու է տարեկան մեկ միլիոն զույգ կոշիկ։

***

Կահույքի նոր խոշոր գործարան է կառուցվում Երևանում, որի մի շարք ցեխեր արդեն տալիս են առաջին արտադրանքը։ Գործարանը լրիվ շահագործման է հանձնվելու 1948 թվականին և տարեկան տալու է մեկ միլիոն ռուբլու արտադրանք։

***

Լենինականում կառուցվում է մետաղամշակման, փայտամշակման և շափիլ գործիքների խոշոր գործարան, որի սարքավորումն արդեն ստացվել է տեղում։ Գործարանի որոշ ցեխեր արտադրանք կտան 1948 թվի ընթացքում, իսկ ամբողջ գործարանը շահագործման կհանձնվի 1950 թվականին։

***

Լենինականի տրիկոտաժ գործարանին կից կազմակերպվել է ժԿոտոնս տեսակի կանացի լավորակ գուլպաների ցեխ, որը տարեկան տալու է 600 հազար զույգ գուլպա։ Ցեխին արդեն հանձնված է փորձնական շահագործման և 1948 թվից կսկսի նորմալ աշխատանքը։

***

Ռերիայի շրջանում կառուցվում է գուլպայի խոշոր գործարան, որը տարեկան արտադրելու է երկու միլիոն 500 հազար զույգ գուլպա և տրիկոտաժ սպիտակեղեն։ Այս տարվա վերջին գործարանը կտա առաջին արտադրանքը, իսկ լրիվ կարողությամբ աշխատել կսկսի 1949 թվից։

***

Երևանի շրջակայքում կառուցվում է թղթի գործարան, որը շահագործման է հանձնվելու 1950 թվականին։ Գործարանն աշխատելու է տեղական հումքով։

***

Երևանում կառուցվում է մետաղյա ամանեղենի գործարան, որը շահագործման է հանձնվելու 1948 թվականին։ Գործարանը արտադրելու է այլումինի և էմալապատ ամանեղեն։

***

Երևանում կառուցվում է կաշվի նոր գործարան, որը արտադրելու է փափուկ կաշի և պագոշ։ Գործարանի մի շարք ցեխեր արդեն արտադրանք են տալիս։ Լրիվ կարողությամբ գործարանը շահագործման կհանձնվի 1948 թվականին։

***

Երևանում կառուցվում է չոր սոսնձի գործարան, տարեկան հարյուր տոննա չոր սոսնձի արտադրողականությամբ։ Գործարանը շահագործման է հանձնվելու 1948 թվականին։

***

Երևանում կառուցվում է մետաղյա լայն սպառման առարկաների գործարան, որը լրիվ կարողությամբ աշխատելու է այս տարվա վերջից։ Գործարանը տարեկան արտադրելու է տասը հազար մահճակալ և հիսուն հազար հատ ցինկապատ ու չուգունե ամանեղեն։

Գործարանին կից կազմակերպված է մետաղյա գեղեցիկ սպասքի (սերվիզ) արտադրման ցեխ, որտեղ աշխատում են նաև արտասահմանից հայրենիք վերադարձած մասնագետ բանվորներ։

ԽՈՇՈՐ ՏՊԱՐԱՆ

Երևանում կազմակերպվում է գրքերի ու ամսագրերի խոշոր տպարան, որը սարքավորվելու է նորագույն մեքենաներով։

Ընթացիկ տարվա վերջում, առաջին հերթի շահագործման հանձնելուց հետո, տպարանը տալու է տարեկան 80 միլիոն թերթ-օտիսկ։ Լրիվ կարողությամբ աշխատելու ժամանակ թերթ-օտիսկների քանակը հասնելու է 205 միլիոնի։

ԱՎՏՈՄԱՏ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՅԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երևանում սկսվել է ավտոմատ հեռախոսակայանի շինարարությունն ու մոնտաժը։

Ավտոմատ հեռախոսակայանի առաջին հերթի՝ 4-5 հազար համարի շահագործման հանձնումը նախատեսվում է գալիք տարվա առաջին եռամսյակում։

Ավտոմատ հեռախոսակայանի շինարարության ղուգընթաց նախատեսված է քաղաքի գործող հեռախոսացանցի լրիվ վերակառուցում՝ նրա կարողությունը մեծացնելու համար։ Դրա համար քաղաքի բոլոր գլխավոր փողոցներում անց են կացվում հեռախոսային նոր գլխավոր կաբելներ։

ՆՈՐ ՍԱՆԱՏՈՐԻԱՆԵՐ

Սևանի կղզում նախկին հանգստի տան շենքը հանձնվել է ՀԱՄԿԽ-ին՝ 1948 թվին, Արտեկի տիպի, մանկական սանատորիա-ճամբար բանալու համար։ ՀԱՄԿԽ-ին են հանձնվում նաև Մաղկաձոր ավանի տերիտորիայում գտնվող մի շարք շենքեր՝ եկող տարի մոր ու մանկան համար սանատորիա հիմնելու նպատակով։ Գոլովինոյում գտնվող մանկական սանատորիայի շենքը տրվում է մանկական տուբ-սանատորիայի համար։

Այս սանատորիաների շուրջը գտնվող տերիտորիաներում կտնկվեն ծառեր։

(ՀՀԳ)

ԳԱՂՈՒԹԱՀԱՑ ԿՑԱՆՔ

ԿԻԼԻԿԻՈ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿՕՐՇՆԵ ՀԱՅՐԵՆԻՔ ՄԵԿՆՈՂԵՐԸ

«Արաքս»-ը հաղորդում է.—

Ներգաղթի առաջին քարավանը Պեյրութեն ճամբա ելավ հուլիս 4-ին, սովետական «Պորեստա» շքեղ նավով։

«Պորեստա»-ի Պեյրութ ժամանումը ընդունված է աննկարագրելի խանդավառություններով, և բախտավորյալներուն ու մնացողներուն ուրախության արցունքներն ու ժպիտները իրար խառնված են մինչև նավուն մեկնումը, մինչ հայրենասիրական երգերը կթնդացնեին օդը օրերով։

Տասնյակներով հայ երիտասարդներ փորձած են կամ նավուն պատուհաններեն անցնելով և կամ իրը բեռնակիր ձևանալով թաքնվիլ շոգենավին մեջ, բայց երևան հանվելով վար առնված են։

Մեկնումի օրը նավ բարձրացած են Սովետ դեսպանատան գրեթե ամբողջ անձնակազմը, Պ. Պ. Բոտվիկին, Խանկուլով, Ահարոնով, Իսակուլով, ներգաղթի լիազորներ՝ Ջարչյան և Ատրյան, Տասսի ներկայացուցիչ Մերգեև և այլ անձնավորություններ, Լիբանանի թեմի Առաջնորդ Խադ Արք. Աջապահյան, ռուսերու Արխիմանդրիտ Դեր. Սիմեոն Սրբազանը, ներգաղթի կոմիտեի անդամները և այլն։ Ժամը 11 ու կեսին ատենները ժամանած է Վեհափառ Հայրապետը։ «Պորեստա»-ի նավապետ Իվան Ֆեոտորովիչ Իվանով իր հյուրերուն համար պատրաստած էր ճաշասեղանը, մինչ նավուն բարձրախոսները անդադար կհնչեցնեին ռուսական, հայկական և այլ եղանակներ։

Ժամը 12-ի մոտերը Վեհափառը կօրհնեի հայրենիք մեկնող իր զավակները և ողջերթի գացողները կիջնեն նավեն։ Ու ճիշտ կեսօրին «Պորեստա»-ն իր խարիսխը դքաշե, մինչ ներգաղթողներեն կազմված երդչախումբ-նվագախումբը անդադար լսելի կընե հայրենաշունչ եղանակներ։ «Ալ քարավան», «Երևան», «Գեղեցիկ ոստան», Լիբանանյան քայլերգը և Հայաստանի Հիմնը կհաջորդեին իրարու։ Դուրսը քարափին վրա մարդկային ծով է, իսկ հարյուրավոր նավակներ կպատրաստվին հետևելու «Պորեստա»-ին, դեպի նավահանգիստին բացերը։ Թաշկինակներ, ձեռքի շարժումներ ու նավը համրորեն կսկսի հեռանալ։

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶՎԻՑԵՐԻԱՅԻՑ

Անցյալ շաբաթ դեպի Զվիցերիա կատարած ճամբորդությունիցս և հինգ օր տևող կարճ այցելությունիցս հետո, իմ կրած տպավորությունները ուզում եմ տալ այս հակիրճ տողերում։

Ես ցանկանում եմ «Ժողովուրդ»-ի ընթերցողներին համար նկարել իմ տպավորությունները, որ քաղել եմ զվիցերահայ կյանքից։

Երբ վայրաշարժը կանգ առեց Ժնևի կայարանում, ես ինձ զգացի հայկական մի կենտրոնում, որովհետև եկել էին դիմավորելու ինձ գաղութից բազմաթիվ ներկայացուցիչներ, գլխավորաբար Զվիցերահայ Միության անդամներ, որ կազմակերպած հայրենասիրական մի հանդես՝ հրավիրել էին ինձ, որպեսզի, իբրև Ազգային Ճակատի նախագահ և Խորհրդային Հայաստանի կենցաղին ծանոթ անձ, խոսք վերցնեմ մեր սիրելի Հայրենի Աշխարհի մասին։

Գաղութի ընդունելությունը սրտաբուխ էր։ Խորհրդային Հայաստանից վերադարձած լինելու իմ հանգամանքս ստեղծում էր գաղութում մեծ հետաքրքրություն։ Զվիցերահայությունը իմ անձի վրա փնտրում էր Հայրենիքի բույրը և ընդունում էր ինձ իբրև մի տեսակ խորհրդանիշ մեր Հայրենի Աշխարհին, որի կարոտը սրտառուչ կերպով դրոշմվել է յուրաքանչյուր զվիցերահայի սրտին վրա։

Զվիցերահայ Միության հրավերով, բազմաթիվ եվրոպացի ընտրանի ժողովուրդի հետ, իրիկունն հայությունը փութացել

էր ժենևի շքեղ սրահներից մեկը՝ ժենևից, Լոզանից, Բազելից, Ցյուրիխից, Բերնից և ամեն անկյուններից, «Հայրենի երկիր» ժապավենի և իմ դասախոսության մեջ Հայրենիքը ոգեկոչելու և մի պահ նրա մթնոլորտում գտնվելու անզուսպ ցանկությամբ։

Հայրենասիրական խանդավառությունը մեծ է Զվիցերիայում, նա սրտառուչ է, մանավանդ նրա համար, որ այնտեղ ապրող մեր հարազատները որոշ ու զանազան դիրքերի տեր՝ միաձույլ կամքով նվիրվել են հայ ազգային գաղափարին, և նրանց սրտերը պարուրվում են մի հոգեզմայլ երազով.— Ներդաղթե՞լ, վերադառնա՞լ Հայրենիք, ապրե՞լ Հայ Աշխարհի երկնքի ներքև՝ Արարատի—Մասիսի փեշերին։

Այս ցանկությունը այնքան խոր կերպով արմատ է թողել զվիցերահայության մեջ, որ Եվրոպայի բոլոր շքեղություններն իսկ չեն առինքնում այլևս նրա հոգին ,որ պապակում է Հայաստանի աղբյուրներից հոսող զուլալ ջրերի ծարավից։

Կիներ, օրիորդներ, ամբողջ երիտասարդությունը, միահամուռ կերպով, նույն երազի հույսովն են ոգևորվում,

Նրանց սրտերում այդ ոգևորությունը ավելի ևս եռանդ ստացավ երեկույթի ընթացքում, որ երբ վերջացավ հայտարարվեց ժամը տասնմեկին, Հայրենիքի մասին անհամար հարցումներով, մնացին դահլիճում մինչև առավոտյան ժամը երեք, և որոնց խանդավառությունը, խորհրդային Հայաստանի կենդանի աղից բերած իմ վկայությունների առաջ, հասավ ծայրագույն աստիճանների։ Այնպես որ, ընդհանուր գնալով ժողովրդից շատերի փափաքին՝ նույն սրահում վերստին հավաքվեցինք հաջորդ առավոտ, ժամը 11-ին, գեռ ևս երկարորեն շարունակելով հայրենական երկրի հոգեպարար մեր ոգեկոչումը։

Սփյուռքում զվիցերահայությունը գրավում է ազգային ոգվո և հայրենասիրական զգացումների լավագույն տեղերից մին։ Նա զերծ է կուսակցական և քինախնդրական ամեն կիրքերից։ Ունի մի տենչ՝ բոլորանվեր ծառայել Հայրենիքին։

Ա՛յս է էական խորքը Զվիցերիայում իմ քաղած տպավորություններիս և ճիշտ պիտի լիներ, եթե գաղութների զանգվածներից շատեր զվիցերահայոց առողջ և ճշտագույն ուղիներին հետևեին։

Հ. ՄԱՐՄԱՐՅԱՆ

(«Ժողովուրդ» 7 հունիս 1947 թ.)

ՌՈՒՄԱՆԻՈ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

«Ժողովուրդ»-ը հաղորդում է.—

Ռումանիո «Հայաստանեան Ճակատ» քարտի պատասխանատու խմբագիր և նույնանուն հանգանակի կազմակերպության ընդհանուր քարտուղար Հարություն Պապոյան, որ կգլխավորեր Նյու-Յորքի Հայկական Համագումարի ռումանահայ պատգամավորությունը, ամերիկահայ առաջամարտիկ օրկան «Լրաքեր»-ին ըրած է հետագա գրավոր հայտարարությունները.

Երբ ըսեմ, որ ներկայիս ռումանահայ գաղութը կբաղկանա շուրջ 20.000 հոգիե, պետք է նկատի ունենալ, որ այդ թիվը կվերաբերի 1896-ի և 1922-ի գաղթականներուն, որոնք Թուրքիայեն հալածված՝ ապաստաներ են Ռումանիա. ատոնցմե դուրս կա նաև հոծ զանգված մը «տեղացիս» հայերու, կամ ինչպես մենք կըսենք «հին» ռումանահայերու, որոնց նախնիքը, 700 տարի առաջ, Անիին գաղթելով, նախ Խրիմ, ապա Փոլոնիա (Լեհաստան) անցած ու եկած հաստատված են Ռումանիո գլխավորաբար հյուսիսային կողմը՝ Մոլտավիո Ցաշ, Պոթոշան, Սուչավա, Ռոման, Պաքրու, Ֆոքշան և այլ քաղաքներուն մեջ։

Լեհաստանի հայոց մեկ մասը անցած է Հունգարիո նախկին Թրանսիլվանիայի (այժմ Ռումանիո պատկանող) շրջանները, ուր հիմնած են Արմենոպոլիս (այժմ Կեռլա) և Էլիզաբեթպոլ քաղաքները. ասոնք մկոչվին «Հունգարահայեր»,—բոլորովին մոռցած են իրենց մայրենի լեզուն. Հունգարերեն կխոսին ու բարքերով, ըմբռնումներով Հունգարացած են, թեև, երբ հարց տրվի իրենց, հաճույքով կպատասխանեն՝ թե ծագումով «էորմենո», այսինքն հայ են։ Կրոնքով կաթոլիկ են ու կհաճախեն Կեռլայի և Էլիզաբեթպոլի հայ կաթոլիկ եկեղեցիները։

Գաղթականներու ուրիշ ալիք մըն ալ, դարձյալ Թուրքիայեն հեռանալով, քանի մը հարյուր տարի առաջ, Պուկարիո հողերեն անցնելով, հաստատված է Ռումանիո հարավային շրջանները, գլխավորաբար Պուքրեշ, Փիթեշթ և այլն։

Այս «հին» ռումանահայերը, որոնք նախկին ռուման իշխանապետությանց կառավա-

ական, առևտրական ու մշակութային կյանքին մեջ աշքառու դեր ունեցած են, տալով եկեղեցի վարպետ արհեստավորներ, առևտրականներ, գիտնականներ, դիվանագետներ և իշխաններ, վայելած են առանձնաշնորհումներ, հիմնած են հոյակերտ եկեղեցիներ ու վարժարաններ,— դարերու ընթացքին, սակայն, ձուլված են ռոման զանգվածին հետ ու «ռոմանացած», մոռցած են իրենց մայրենի լեզուն ու փոխած իրենց անունը։ Անոնցմե շատեր կխոստովանին, որ ծագումով հայ են. իրենց այդ հանգամանքը կդրսևորեն հայ եկեղեցի այցելելով. թեև քարշեն իրենց տաճարները թափուր կմնան, իսկ վարժարանները... վարձու են տրված։

***

Ինչ որ պիտի ըսեմ հետագա տողերուն մեջ, կվերաբերի ուրեմն «նոր» ռոմանահայերուն, որոնք հիսուն տարվա կյանք մը ունին։ Ասոնք գլխավորապես ռոտոսթոցի, քեմախցի, երզնկացի, պարտիզակցի, կեսարացի, պոլսեցի և սերաստացիներ են։ Ունինք շուրջ հրեսուն հյուսվածեղենի գործարանատերեր, քանի մը տասնյակ հյուսվածեղենի և գորգի առևտրականներ, կոշկակարական մեծ և փոքր գործատերեր և բանվորներ, սակերիչներ, ղանդան արհեստավորներ, ազատ «փիրոֆեսսիոնիստներ»— բժիշկ, փաստաբան, արվեստագետ,— և ուսանողներ։

Բաղդատմամբ Սուրիո, Հունաստանի, և Պուլկարիո հայության՝ մեր գաղութը բարեկեցիկ և ինքնարավ էր, սակայն վերջին երկու տարվա ընթացքին, գլխավորաբար եղաշտին հետևանքով, տնտեսական ու պարենավորման բավական ծանր տագնապի ենթարկվեցավ։

***

Հայերը՝ հաստատված են գլխավորապես Պուքրեշ (շուրջ 12 հազար հոգի), Քոնսթանցա (4 հազար), Կալաց, Պոայիլա, Փլոեշտ, Քրայովա, Փիթեշթ, Ֆոքշան, Պաքրու, Ցաշ և Ռոման։

Պուքրեշի հայոց եկեղեցին, կառուցված էջմիածնա Մայր Տաճարի հատակագծով, ճարտարապետական կոթող մըն է ու մեծագույնը այլ գավառների պատկանող եկեղեցիներեն։ Ունինք երկու նորակերտ վարժարաններ՝ յոթնամյա դասընթացքով ու 16 հոգինոց ուսուցչական անձնակազմով։

Հառաջիկա ուսումնական տարեշրջանեն սկսյալ ռման պետությունը պիտի վճարե հայ ուսուցիչներու ռոճիկները։

Աշակերտության թիվը 400-են նվազեցավ 210-ի, վերջին 15 տարիներու ընթացքին։ Անցյալ ամառ ներգաղթեցին 70 աշակերտներ։

Երեկ ձուլումը կպարպեր մեր դպրոցները։ Ներկայիս սակայն մեր վարժարաններու աստիճանական պարպվիլը ուրախալի երեվույթ է, քանի որ մեր նորահաս սերունդը կերթա Սովետական Հայաստանի հայրենի, հարազատ ու միանգամայն բարձրորեն մշակութային ոստաններուն մեջ մարզելու իր միտքը։

Հայ վարժարան ունի նաև Քոնսթանցայի գաղութը, մնացյալ քաղաքներու հայկական ուսումնարանները փակ կմնան։

***

Ռոմանահայ ազգային-մշակութային կյանքի կեդրոնը Պուքրեշն է։ Ինչպես մայրաքաղաքի, նույնպես և Ռոմանիո հայաշատ գավառային քաղաքներուն մեջ կգործի պատերազմեն վերջ հիմնված մեկ ու միասնական կազմակերպություն մը,— «Հայաստանեան Ճակատ»-ը — որուն շուրջ համախմբված են Սովետական Հայաստանի բարեկամ բոլոր հայրենասերները, առանց կուսակցական, դավանական կամ դասակարգային իստրության։ Հայ քաղաքական կուսակցություններ չկան այլևս։

Հայաստանյան Ճակատը ունի իր երիտասարդական, աշխատավորական, առևտրական, կանանց, մարզական, նրաժշտական և թատերական բաժիններն ու իր օրկանը «Հայաստանեան Ճակատ» թերթը, մեկ էջ ռոմաներենով։ Սույն միասնական կազմակերպության հետ սերտորեն կգործակցին Առաջնորդարանը, Թեմական Խորհուրդը, Վարժարանի հոգաբարձությունը, Հայ մշակույթի Տուն—Մատենադարանը (որ իր ճոխությամբ Պալքաններու հայ մատենադարաններու շարքին առաջին տեղը կգրավե), Տեղւոյ հայկական բուժարանը, Անոնա Մելիք ծերանոցը, Ազգային Խնամատարությունը։

Բոլոր այս հաստատություններու վարչական մարմինները կենտրվին Հայաստանյան Ճակատի թեկնածուներեն։

Ազգային, մշակութային և հասարակական բոլոր ձեռնարկները,— միթինկներ, դասախոսություններ, համերգներ կամ թատերական ներկայացումներ,— որոնք անընդհատ կհաջորդեն իրարու, տեղի կունենան Հայաստանյան Ճակատի ղեկավարությամբ ու անվերապահ գործակցությամբը բոլորին, սկսյալ թեմի Առաջնորդական Փոխանորդ Վազգեն վարդապետ Պալճյանեն, ազգային-

եկեղեցական պաշտոնատարներեն մինչև մեծ ու մանր առևտրականները, մտավորականներն ու բանվորները։

Մեր կազմակերպության Կեդրոնական Կոմիտեն բաղկացած է մեծ գործարանատերերե, մտավորականներե և աշխատավորներե։ Նախագահն է շաքարեղենի և սուրճի գործարանատեր ընկ. Վահան Դանիելյան, որ գրեթե անտեսած իր առողջությունն ու սեփական գործը՝ մեր հանրային գործով տարված է։ Ուրիշ օրինակ մը կներկայացնե Թեմական խորհրդի և մեր Կեդրոնի անդամ՝ հյուսվածեղենի մեծ գործարանատեր ընկ. Արտաշես Սեֆերյան, որ իր անձնական քսակեն հոգաց ամբողջ ճանապարհածախսը ռոմանահայ երեք պատվիրակներուս (մեջն ըլլալով ինքն ալ), որ Նյու-Յորք եկան մասնակցելու Համաշխարհային Հայկական պատմական Քոնկրեսին։

***

Անցյալ ամառ Ռոմանիայեն հայրենիք մեկնեցան 1840 ներգաղթողներ, որոնց մեջ կային բազմաթիվ ուսնորներ, սեփական տունի և աշխատանոցի տերեր, որոնցմե կստանանք խանդավառ տրամադրությամբ շարադրված նամակներ։

Անցյալ տարվա հայրենադարձի կազմակերպման չորս ամիսները անօրինակ ոգևորության և տենդագին հավաքական աշխատանքի շրջան մը եղան Պուքրեշի և Քոնսթանցայի հայ համայնքներուն համար։

Հայաստանյան ճակատն ու ընդհանուր ռոմանահայությունը չբավականացան ներգաղթողներու զգեստավորումով, պարենավորումով ու ճանապարհածախսի հոգածությամբ։ Ներգաղթի քարավանի մեկնումեն առաջ, իբր նվեր, հայրենիք ուղարկեցինք 91 վագոն ատաղձ (3000 խորանարդ մետր) և 60 մահճակալով արդիական հիվանդանոցմը, վիրաբուժական գործիքներով, էլեքտրաբուժական կազմածներով և քաղնիքներով։

Համաշխարհային Հայկական Քոնկրեսի ռոմանահայ պատվիրակությունը դեպի Նյու-Յորք իր ճամբորդության ընթացքին, Չեխո-Սլովակիո մայրաքաղաքի գործարանատերերուն հետ բանակցեցավ՝ գնելու համար 60 բաղնիք, լրիվ կազմածներով և ջուրի եռացման էլեքտրական ապոյլերներով, որոնք այս տարի պիտի ղրկվին Սովետական Հայաստան, իբր նվեր հատկացվելու համար ներգաղթողներու նորակառույց շենքերուն։ Այդ բաղնիքներու փոխարժեքը սնձեռնմխելի գումար մըն էր, հանգանակված երկու տարի առաջ։

***

Այս տարի Հայաստան մեկնելու համար արձանագրված ռոմանահայերու թիվը պիտի հասնի 2.000-ի։ Մենք միշտ այս թիվին շուրջ կսահմանափակենք մեր ակնկալությունները, որովհետև գիտենք թե «ավելի բազմամարդ քարավաններ ուղարկելու առաջնությունը պետք է իյնա Հունաստանի, Սուրիո և Ֆրանսայի գաղութներուն բաժին։

Հայրենադարձի դեմ ոչ թշնամական վերաբերմունք չկա մեր գաղութին մեջ, ոչ ձևի տակ։

Տեղական բնակչությունը բարյացակամ դիրք ցույց տվավ մեր հայրենադարձի ձեռնարկին հանդեպ։ Ռոման դեմոկրատ կառավարությունը մեծ դյուրություններ ընծայեց ատաղձի և ներգաղթողներու գույքերու ազատ արտածումը արտոնելով, ատաղձի և ներգաղթողներու շոգեկառքով փոխադրության հիսուն առ հարյուր պակաս սակ նշանակելով և պետական դնով մեզի հայթայթելով մանած բամբակ՝ ներգաղթողներուն համար գործված կտավեղեններուն ծառայելու համար։

ՌՈՒՄԱՆԻՈ ԱՌՈՂՋԱՊԱՇԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒՀԻՆ ՀԱՑՈՒՀԻ ՄԸՆ Է

Ռումանիո վերջին ընտրությանց հետևանքով Փրոֆ. Բեթեր Կրոցա, ըստ օրինի, իր դահլիճեն հրաժարականը մատուցած է թագավորին, որ վերստին փրոֆեսորին հանձնած է նոր դահլիճը կազմելու պաշտոնը։ Փրոֆ. Կրոցա իր նոր դահլիճին մեջ Առողջապահական նախարարությունը հանձնած է բժշկուհի Ցլորիցա Պաղտասարի, որ հայուհի մըն է։

(«Արևմուտք» թիվ 24)

ՊԵԼՋԻՔԱՑԻ ՀԱՑ ԳԱՂՈՒԹԻՆ ԿՅԱՆՔԸ

Խորհրդային Հայաստանի Բարեկամներու Միությունը դասախոսություն մը կազմակերպած էր մայիս 24-ի իրիկունը Հայ Ակոմքի մեջ։ Օրվան դասախոսն էր դոկտոր Մուրատյան, Միության գնահատելի նախագահը, որ մասնակցած էր նույն Միության կողմե իբր պատգամավոր Նյու-Յորքի մեջ գումարված Համաշխարհային Հայկական Քոնկրեսին, որուն մասին խոսեցավ։

Դոկտոր Մուրատյան մեծ հույսերով և խանդավառությամբ վերադարձավ. խանդավառված նաև ամերիկահայ գաղութի տարած ազգային մեղվաջան աշխատանքներեն։

Դոկտոր Մուրատյան մաս կկազմեր Քոնկրեսի բանաձևային հանձնախումբին։ Մանրամասն տեղեկատվություն մը ըրավ այդ համագումարի կատարած և կատարելիք աշխատանքներուն մասին։ Անդրադարձավ Քոնկրեսի օրակարգին։ Վեր հանեց այդ Քոնկրեսի դերը, կարևորությունը և անոր հանձն առած պարտականությունն ու պատասխանատվությունը։ Հոն տիրող ոգին ու մտայնության միասնականությունը մեծապես տրպավորված էր զինք։ «Ճամբորդությանս ընթացքին կմտածեի և մտահոգ էի Քոնկրեսի հաջողության մասին։ Սակայն անոր վերջավորությունենեն ետք տպավորությունս բոլորովին տարբեր եղավ։ Այդ ատեն ըմբռնեցի թե ինչքա՞ն ճիգ թափված էր այդ համագումարը ի գլուխ հանելու համար։ Երախտապարտ ըլլանք Ամերիկահայ Ազգային Խորհուրդին, գնահատենք ու շնորհավորենք զինք։ 700—750 կդերական ու աշխարհական պատգամավորներ, ինչպես նաև հայ ծագումով բարձրաստիճան ամերիկյան սպաներ հարցերը կուսումնասիրեին և որոշումներ կուտային միաձայնությամբ։ Բոլորին ալ մտքի ու սրտի առարկան կկազմեր Սովետական Մայր Հայրենիքը, արտասահմանի հայությունը և ազգային գատի արդար լուծումը։

Ժողովուրդը երկար ծափահարությամբ գնահատեց Դոկտոր Մուրատյանի դասախոսությունը։

***

Սովետական Հյուպատոսը իմացուցած էր տեղվույս «Խորհրդային Հայաստանի բարեիամներ»-ու Միության քաղ. Հալապյանի Պրյուքսել գտնվիլը։ Այդ Միության վարչությունը, ցանկալով օգտագործել առիթը՝ ծանոթացնելու մեր հայրենակցին գաղութիս հայությունը, որոշեց կազմակերպել հավաքույթ մը և փութաց հրավիրագիրներ ղրկել գաղութիս անդամներուն՝ ներկա ըլլալու համար քաղ. Հալապյանի տրվելիք հյուրասիրության, որ ածի ունենալ մայիս 31-ին, Հայ Ակումբի մեջ։

Ժողովուրդը դեռ մասամբ հասած էր, երբ ներս մտան ՊՊ. Հալապյան և Բարանով ընկերակցությամբ Սովետ դեսպանատան առաջին քարտուղար և հյուպատոս Պ. Սքսբելի և հյուպատոսարանի քարտուղար Պ. Պոպովի։

Խորհրդային Հայաստանի Բարեկամների Միության նախագահ Մուրատյան բաժակաճառով մը բացավ սեղանը, բարի գալուստ մաղթեց մեր հարգելի հյուրերուն, ապիլի մեծ նվաճումներ մաղթեց իրենց շինարարական գործին մեջ և առաջարկեց խմել հյուրերուն կենացը։ Հետո հաջորդաբար խոսք առին ՊՊ. Մ. Միհրդատյանց (Գաղութային Վարչության նախագահը), Թ. Գարթունյան (Սրիտասարդաց Միության անունով), Վ. Դաքալյան և Հ. Ուղունյան, որոնք իրենց կարգին բարեգալուստ մաղթեցին հարգելի հյուրերուն, թվեցին Մայր Հայրենիքի կատարած հառաջդիմությունները ու նվաճումները, այտահայտեցին նվիրում Մայր Հայրենիքի հանդեպ և անմերազահ բարեկամություն Խորհրդային Միության մեծ ու պաշտպան ընտանիքին ընդհանրապես և ռուս բարեկամ ժողովուրդին մասնավորապես։

Խոսք առավ քաղ. Հալապյան. տն ուրախություն հայտնեց անակնկալորեն ինքզինք գտնելով հարենակիցներու մեջ, որոնց այսրան բազմաթիվ ըլլալը կանգիտանար։ Թվեց Հայաստանի վայելած բարիքները, անոր կատարած նվաճումները, ընդգծեց ռուս ժողովուրդի հայ ժողովուրդին հանդեպ ցույց տրված բարեկամությունն ու գուրգուրանքը։ Ընդգծեց Սովետական Հայաստանի զարգացումն ու հառաջդիմությունները և մաղթեց, որ մոտ ատենեն ոուոր հայերը համահամբվին Մայր Հայրենիքին մեջ և ապրին իրենց հոգնած վրա խաղաղ ու ապահով։ Այսպես բաժակ վերցուց խմելով նաև հայ գաղութի կենացը։

Քաղ. Հալապյանեն ետք խոսք առավ քաղ. Բարանով, որ ուրախություն հայտնեց ինքզինք գտնելով շրջապատված հայերով։ Մասնանշեց Հայաստանի ծաղկյալ դրությունը և հայ ժողովուրդի կատարած կարևոր գործերը։ օրինակ՝ Հալապյան, Խաչատրյան, Սրբելի եղբայրներ և տակավին քանիներ, որոնք առաջնակարգ դեմքեր են Խորհրդային Միության մեջ, ամեն հայ ազգի կենացը և մաղթեց, որ հայերը շուտով Մայր Հայրենիք վերադառնան։

Պ. Գարթունյան խնդրեց իմանալ Պ. Հալապյանեն թե՝ ի՞նչ տեղ կգրավի հայ ճարտարապետությունը յոթը հատորնոց այն գիրքին մեջ, որ կպատրաստվի այժմ Մոսկվայի մեջ և որ նվիրված է համաշխարհային ճարտարապետության պատմության, թե ի՞նչ է իր կարծիքը Սբրբժիկովսկիի և Շարլը Տիլի հայ ճարտարապետության շուրջ արտահայտած տեսությանց մասին, թե ի՞նչ են Երևանի քաղաքաշինության և ընդարձակման ծրագիրները։ Քաղ. Հալապյան պատասխա-

նեց, թե Մոսկվա պատրաստվող ճարտարապետության պատմության գիրքին մեջ պատվական տեղ կգրավե հայ ճարտարապետությունը և Հայաստանի մեջ մասնավոր գրքով ընդարձակ ու մանրաքննին կերպով կպատրաստվի հայ ճարտարապետության պատմությունը։ Հպարտություն արտահայտող ժպիտով մը ըսավ թե մեր ազգին մեջ ճարտարապետությունը ժառանգական ու ցեղային ձիրք մըն է։ Երևան քաղաքը այնքան ընդարձակ է, որ գած անցած է անոր տարածության համար պատրաստված նախագիծ հատակագիծը։ Այժմ ուսումնասիրության մեջ է նոր հատակագիծ մը, որ կարենա գոհացում տալ քաղաքի արագ զարգացման։

Գինեսեղանին վերջանալեն առաջ «Խորհրդային Հայաստանի Բարեկամներու Միության նախագահը խոսքը տվավ Սովետ Միության հյուպատոս Պ. Սքոպելևին, որ ըսավ. «Գիտեմ թե հայրենիքեն հեռու ըլլալով որքան մարդ կարոտով լեցված կըլլա անոր հանդեպ և այդ կարոտը ո՛րքան շերմություն կստեղծե մարդուս մեջ հայրենիքեն եկածներու հանդեպ։ Ատոր համար, ըմբռնելով ձեր այդ վիճակը, ուրախ եմ որ Պ. Հալապյան այսօր ձեր մեջ է, պատեհություն տալով ձեզի հաղորդվելու անոր միջոցով հայրենիքին հետ։ Այդ պատճառավ հպարտությամբ եկանք ներկայացնելու ձեզ մեր արժեքավոր հյուրերը, ըսելու նաև ահավասիկ մերիններ։ Կըսեմ մերիններ, առանց խտրության, բանզի մենք՝ Պ. Պ. Բարանով, Պոպով, և ես ռուս ենք, իսկ Պ. Հալապյան հայ՝ ձեր ազգեն։ Պ. Հալապյան հայ է և եկած Պ. Բարանովի հետ ներկայացնելու Խորհրդային Միությունը ճարտարագետներու միջազգային քոնկրեսին և ես հպարտ եմ իրմով։ Փափաքելի է, որ հայ գաղութը միասնականությամբ նվիրվի իր Մայր Հայրենիք Սովետական Հայաստանին, որ այսօր ունի բարգավաճ վիճակ և կարող ընդունելու արտասահմանյան հայությունը։ Այդ ցանկությամբ կվերցնեմ բաժակս։

Հետո խոսք առավ Խորհրդային Հայաստանի Բարեկամներու Միության նախագահ Մուրատյանը, որ առաջարկեց խմել հայ ժողովրդի թանկագին բարեկամ Մեծ Ստալինի կենացը։ Ներկաները հոտնկայս խմեցին և Մեծ Ստալինի անունը ողջունեցին տեղատարափ ու երկար ծափահարությամբ։

Գինեսեղանը վերջ գտնելե ետքը մեր հարգելի հյուրերու կառքը քալեց ղորավոր ծափերու տակ. ներկաները մեր ազնիվ հյուրերուն հետ ողջույններ կուղարկեին հայրենիքի իրենց եղբայրներուն, ողջույններ, ուր կդնեին ամբողջ իրենց սիրտը։

ԹՂԹԱԿԻՑ

(«Փաղավուրդ» 25 հունիս, 1947 թ.)

ՊՈՒՏԱԲԵՇՏԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Պուտաբեշտի հայ գաղութը գրեթե կես դարե ավելի անցյալ մը ունի։ Առաջին հայ գաղթողները եղած են կեսարացի երկու եղբայրներ՝ Հաճի Ղազար և Հարություն Հակոբյաններ, որոնք գրեթե առաջիններն են եղած արևելյան գորգերը տեղս ներածող, երրորդ անձը եղած է փրոֆեսոր Հակոբ Չիլինկիրյանը, որ դասախոս էր և օտար թերթերու թղթակից։ Իսկ բուն հայ գաղութը մասամբ 1911 թվին սկսած է կազմվիլ։

Ներկայիս 25—30 ընտանիք կա Պուտաբեշտի մեջ, Առանց բացառության, ամենքն ալ ամուսնացած են։ Ոմանք ամուսնություն կնքած են հունգարուհիներու հետ։ Մենամասնությունը կազմող արևելյան գորգերու վաճառականությամբ ու նորոգությամբ, մընացածները այլ և այլ գործերով։

Հոգևոր հովիվ չունինք. երբեմն միայն հոս կուգա Վիեննա գտնվող Տեր Եղիշե Յուրյուճյանը։ Բայց դժբախտաբար այդ կարող ու իսկապես կորովի հայ քահանան անցյալ քաղաքական շփոթությանց պատճառով միայն երկու անգամ կարողացավ Պուտաբեշտ այցելել։

Գաղութիս մեծամասնությունը կպատկանի Հայ Առաքելական Եկեղեցիին։ Կա մեկ բոլշևիկական, մաս մըն ալ հոմոմեականներ։

Հայ հոմոմեականները տեղվույս մեջ ունին մատուռ մը, ուր ամեն կիրակի հայկական ծեսով պատարագ կմատուցանեն։ Ասկիզ զատ հունգարահայությունը չունի իր ժողովրդապետարանը։ Ժողովրդապետները Վիեննայի միաբանության կարգեն կընտրվին։ Բայց ցավալիորեն մինչև օրս կարող հայ կաթոլիկ վարդապետ չտեսանք, որ ազգայնորեն կարողանար գաղութիս հայերու համակրությունը շահիլ։

Օր. Նոյեմի Փիշմիշյան և Լեոն Ազնավորյան մեր գաղութի փոքրաթիվ հայության պարծանքներն են. առաջինը տեղվույս երաժշտանոցը ավարտած է և իբր դաշնակահարուհի մեկ քանի փայլուն նվագահանդեսներ տված է. իսկ երկրորդը նկարիչ է և շատ լավ գնահատված են իր գործերը։

Մասնավորապես արժանի է հիշել Ֆան անունը քաջ հայ երիտասարդի մը՝ Արա Ս-րեցյանին, որ 1944 թվին, ֆաշիստներու ժամանակ վարիչն էր հիվանդանոցի մը, ուր կգտնվեին մոտ 350-ի չափ հրեաներ։ Այդ սոսկալի օրերուն, երբ հրեաները իրարու մըրջյուն կամ ճանճեր կսպանվեին, այդ հայ երիտասարդ տղան անվեհերեն դիմադրելով կարողացավ փրկել այս խեղճերուն կյանքը։

Անցյալ տարի կարելի եղավ կազմել «Հայասերներու Միություն»-ը, որ գրեթե առանց բացառության տեղացիներն կազմված է։ Միության հիմնադիրներն են՝ Գորոտա Միքլոշ և տոքթոր Նակիվանի Ջոլթան. վերջինը գրող և օրենսգետ, որ հեղինակություն մը հրատարակած է «Օտար լեզեոնեն մինչև Սովետական Միություն», ուր շատ նպաստավոր արտահայտված է հայոց մասին։ Քոլպուլի Տոմոքոշ, որ դրամատան պաշտոնյա է և նրմանապես ունի հեղինակություն մը՝ «Հայկական հարցը հունգարական հանրային կարծիքին առջև» անվամբ, 1942 թվին լույս տեսած։ Տեղվույս թուրք հյուպատոսին բնլաղրությամբ տեղական իշխանությունը դրքերը գրված է և հեղինակն ալ հետապրնդած։ Անդամ է նաև Լազար Միքլոշ, որ ոստիկանական գնդապետ է, և ստորագրելով՝ միակ հայ անդամը, որուն հանձնված է Միության Հայկական ճյուղի վարչությունը։

ՀՐԱՆՏ ՍԱՐԳԻՍ ՌՇՏՈՒՆԻ
«Հայաստանյան Ճակատ»

Վերջերս Պուտաբեշտի մեջ տեղի ունեցած է Հունգարահայ գաղութին համաժողովը և կազմված է Հունգարահայ Ազգային Միությունը, փրոֆեսոր տոքթոր Ավետիք Ցեյլիքսի (Հունգարահայ, նախագահ Պուտաբեշտի վճռաբեկ ատյանին) պատվո նախագահությամբ և նկարիչ Լ. Ազնավորյանի նախագահությամբ։ Քարտուղար և վարիչ ընտրված է Հրանտ Սարգիս Ռշտունի (արհեստավոր)։

(«Արևմուտք» հունիս 1, 1947 թ.)

ՊԵԼԿՐԱՏԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

«Ժողովուրդ»-ի թղթակիցը հաղորդում է.—

Վերածնվող Յուկոսլավիո մայրաքաղաքը իր մեջ կհյուրասիրե մոտավորապես 150 հայեր, որոնք վաղուց եկած և հաստատված են հոս։

Անոնց զբաղումը եղած է առևտրականությունը, սուրճի առևտուրը մասնավորապես։ Հոս կարելի է մատերի վրա համրել հայ աշխատավորները, եթե զանց ընելու ըլլանք 50-ի հասնող Հունաստանեն գաղթական հրիտասարդները, որոնք բոլորն ալ Յուկոսլավ Ժողովրդական Հանրապետության գործարաններուն մեջ հայու աշխույժ ոգիով կաշխատին և շատեր արդեն իսկ հարմածային են հանդիսացած, արժանանալով յուկոսլավ կառավարության և սենթիքաներու վկայականներուն և զանազան նվերներուն։

Պելկրատի հայությունը, չունի իր հաճախավայրը, գրադարանը, եկեղեցին, դպրոցը։ Ցանուցիր հոս ու հոն, հեռու հայկական շրջանակն և մթնոլորտն, անոնք կապրին լույծ ու անկազմակերպ կյանք մը։

Պելկրատի հայությունը իր մեջ կպահե հայրենասերներու խումբ մը, որոնք արդեն իսկ արձանագրված են ներգաղթելու համար։ Մեծ է անոնց մտատանջությունը այս տարի ալ, որովհետև Յուկոսլավիային որևէ կարավան պիտի չմեկնի դեպի հայրենիք։ Անոնք կստանան «Սովետական Հայաստան» ամսագիրը, շատ մը ուրիշ հրատարակություններ (Պետհրատի) և այսպիսով կհետևին իրենց հայրենիքի ճարտարարվեստին ու կուլտուրային բարձրացման։ Կստանան «Ժողովուրդ»-ը, «Վարար»-ը և «Երևան»-ը։

Նորահաս սերունդը, ավելի ճիշտը այս դժբախտ սերունդը, անծանոթ է հայ լեզվին։ Իրենց հայրենի լեզուն եղած է սերպերենը, նույնիսկ իրենց հայրերուն և մայրերուն հետ, որոնք Պոլսո երկրորդական վարժարաններու մեջ իրենց ուսումն են առած։

ՅՈՒԿՈՍԼԱՎՆԵՐՈՒՆ ՍԻՐԵԼԻ ՀԱՅ ՀԵՐՈՍԸ

Պելկրատեն «Երևան» թերթին ղրկված թղթակցության մը մեջ կկարդանք. «Պելկրատի ամենախոշոր հրապարակներուն մեկուն վրա անցորդը կնշմարե հինգ շիրմաքարեր, որոնց մեջ կհանգչին Պելկրատի ազատագրության համար գերման հրոսակներու դեմ կռվելով սպանվող հերոսներ։ Անոնց կենդրոնը կհանգչի մարմինը մայոր Լիլոյանի, այն հերոս հայուն, որ Յուկոսլավիայի ազատագրության ի խնդիր պայքարած և

զեն ի ձեռին գերմանացի մը հալածելն և զայն սպանելն վերջ ինքն ալ ինկած է՝ անկենդան։ Ցուկոսլավիո ժողովուրդին պաշտամունքին առարկան դարձած են այդ հինգ հերոսներու շիրիմները, ուր ամեն օր հազարավորներ հարգանքով կխոնարհին անոնց առջև, երբ կանցնին Քամինովիչ Տրապարսկեն։

(«Լուրեր» թիվ 80)

„ՔՆԱՐ"-Ի ՀԱՄԵՐԳԸ ՄԱՐՍԵՅԼԻ ՕՓԵՐԱՅԻՆ ՄԵՋ

Մենք, որ երկու տարիէ ի վեր շատ մոտեն կհետևինք Պոմոնի «Քնարս» երգչախումբին, անոր վարչության և ղեկավարին ոգևորյալ աշխատանքներուն, չէինք սխալած մեր նախատեսություններուն մեջ. նախատեսություններ, որոնք ոչ միայն իրականացան առավելագույն չափերով, այլև ազգային հրապարտության և մեր արժեքներու ստեղծագործ հմայիչ դեղեցկություններու լույս ավանդին մեջ մեր էությունը համակ խորասուզվեցավ, պայծառացավով մեր սրտերն ու հոգիները։ Հոգևոր այս ասասարան բարդավարտությունը և ասոր հետևով բազարտությունը, զոր զգացինք հունիս 10-ին, Սարսեյլը Օպերայոն մեջ, կուզար նաև այն բացառիկ տարբեր, որ Կոմիտասյան երգերու հետ առնչվեր, գաղութահայ իրականության մեջ առաջին անգամ ըլլալով մեզի կհրամցվեր հայ ժողովրդի մեկ հռչակավոր զավակին հայ երաժշտության իշխան Արամ Խաչատուրյանի ջութակի քոնսերթոն, ռատիոկայանի վաթսուն հոգինոց նվագախումբին կողմե, ղեկավարությամբ օփերայի առաջին վարիչ Ս. Պրուփաքի։ Հայ ժողովրդի փոլքլորիկ երաժշտության լուսապայծառ ակերեն մեզի հրամցված Կոմիտասյան երգերուն քով, տեսնել և ունկնդրել նույն այդ ակերուն շուրջ և ակերուն վրա զգալիորեն շրջագայող Արամ Խաչատուրյանը իր նկարչագեղ ու ներքահրաս ընդայնումներով, պայծառ մըն էր մեզի համար, և ինչո՞ւ չէ, վայելքներու գերագույնը, որուն ունկնդրության պատիվը կպարտինք ամեն բանե առաջ Երաժշտագետ Քյուրքճյանի, որուն թափած աշխատանքները այս ճամբուն վրան, մեծապես գնահատելի են։

Մենք, այս անգամ, օփերայի մեջ բոլորովին տարբեր տեսանք և՝ երգչախումբը և՝ իր հայտագիրը։ Ամբողջ երեք ժամ, հայտագիրը մեկ Դայրեն մյուսը մեզի տվավ հայ ստեղծագործության պտուղները։ Նույնիսկ, ժամանակի չգոյության հետևանքով, կարգ մը երգեր ալ կրճատվեցան հայտագրեն։ Գալով երգչախումբին, իր ընդհանուր գիծերուն մեջ շատ հաջող էր։ Եվ երգողներն ալ առհասարակ վարժ և համարձակ։ Ըսե՞նք այս առթիվ, որ երգված յուրաքանչյուր երգ, բայց Կոմիտասեն, Կանաչյանեն կամ Գ. Սյունիեն, կվայելեին բազմաղում նվագախումբի մը ընկերակցությունը, ընկերակցություն մը, որ հաճելի էր, տպավորիչ և հարազատ մեր ականջներուն և հոգիներուն։

Կոմիտաս վարդապետեն երգվեցան տասնինգ ժողովրդական երգեր, Գրիգոր Սյունիեն՝ չորս երգ. Մելիքյանեն՝ մեկ երգ։ Իսկ նվագախումբին կողմե նվագվեցան, ղեկավարությամբ Հ. Քյուրքճյանի, Սպենդիարյանի «Երևանի էջյուտներ»-ը և «Գայթարմաս»-ն։ Հայտագրի երկրորդ մասին մեջ էր, որ ներբարվեստ ջութակահարուհին՝ օր. Նիգոլ Քուլանժ նվագեց մեզի հայու հարազատ զգացումներով «Հոյ արեգ»-ը, «Քնչիր ցոլերս»-ը, «Ես սարեն կուգայիս»-ն, «Զինչ ու վինչ», ընկերակցությամբ տավիղի՝ Մասամ Մելիքի կողմե։

Միշնարարեն վերջ անմիջապես, հայտագրին հինգերորդ մասին մեջ, տեղ տրված էր Արամ Խաչատուրյանի հուշակավոր ջութակի քոնսերթոյին։ Որքան գիտեմ, Խաչատուրյանի այս հոյակապ գործը գրված է 1940 թվականին և արժանացած Ստալինյան մրցանակի։ Ամբողջ քառասուն վայրկյան բազմանդամ նվագախումբը ընկերակցությամբ Օր. Նիգոլ Քուլանժի (սոլիստ) և ղեկավարությամբ Մեթր Պրուփաքի, մեզի տվին այնպիսի բարձր հոգեկան վայելք մը, որ երբևիցե տեսած կամ զգացած ըլլալինք ուրիշ տոնիներով։ Խաչատուրյանի այս գործը, գերազանցապես հրաշակերտ ամբողջություն մըն է իր շքեղ կառուցվածքով, գույներու և ոճի բոլորովին ինքնատիպ և նոր ձևերով։ Բան մը, որ կիշխեն ունկնդրին վրա, ան ալ այն է, որ փոթորկաշունչ ու ահեղավազ վայրկյաններեն հետո հանկարծ կզգաս երևույթը հայ ժողովրդական երաժշտության հոգեպարար քաղցրության։ Մեր տոհմիկ երաժշտության ակերեն առնված մոթիվներուն վրան մեծ վարպետը՝ Ա. Խաչատուրյան կերտած է այս հրաշափառ գործը։ Ա. Խաչատուրյանի ջութակի այս քոնսերթոն իր ամբողջության մեջ ազգային է։ Նվագածության ամբողջ տևողության կզգաս նաև նոր աշխարհի հայտնաբերումը. այդ այն աշխարհն է, որուն մեջ ուռճացավ, զարգացավ և ստեղծագործեց Արամ Խաչատուրյան։

Օրիորդ Նիգոլ Քուլանժ,— աշակերտուհին

Պ. Հ. Քյուրքճյանի,—շատ հրուշիյամբ և արվեստագետի իրեն վայել շքեղությամբ նվագեց քոնսերթոյին սոլոները։ Եթե ավելի հաճելի պիտի ըլլար, եթե Պրուիաք քիչ մը ավելի մեղմությամբ նվագել տար բամբ ձայները, սուլիսին յուրաքանչիւր ելևէջները ավելի գեղեցիկ դարձնելու համար։ Ջվիցերական թերթ մը ժամանակին գրած էր, թե Խաչատուրյանի ջութակի քոնսերթոն կարծես շինված է սոլիսթը նեղ կացություն մը մատնելու համար։ Եվ սակայն, Քուանժ այդ ահռելի դժվարություններու առջևն հաղթանակորեն անցավ ընդհանուրի օվսանանաներու տեղատարափին տակ։ Նոր Ֆրանսայի արվեստագետներն ու քննադատները բեմին ետին կշնորհավորեին երգչախումբն ու իր վարիչը, օր. Քուանժն ու Մեթր Պրուիաքը, օտար երաժշտական շրջանակներու ներկայացուցիչներ անկաժըման ստորագրեցին տեղվուն վրա, որպեսզի Օր. Ն. Քուանժ՝ Խաչատուրյանի այս հոյակապ գործը նվագե Ջվիցերիա և Պելճիքայի մեջ։ Շնորհիվ Պ. Քյուրքճյանի և իր տաղանդավոր աշակերտուհիին, ուստեմն, հայ տաղանդին ստեղծագործությունը շրջան պիտի ընե եվրոպական ստատաններու մեջ, հայու անունն ու իր արժեքները տարածելու համար։ Համերգին հաջորդող շաբթվան ընթացքին Ֆրանսական կարգ մը թերթեր, որոնց կարգին Արրիսթիք-ը, դժվարահաճ Պաթալայի ստորագրությամբ մեծ գովեստներ կշռայլեին երգչախումբին ու իր վարիչին, Օր. Քուանժին և Մեթր Պրուիաքին։ Հիացումով արտահայտված է նաև Խաչատուրյանի գործի մասին։

Մենք անհուն հիացումով կշնորհավորենք Պ. Քյուրքճյանը և Ռենարդ-ի վարչության ժրաջան անդամները, մանավանդ ՊՊ. Սուրեն Ֆեսճյանը, Գեորգ Գալաֆյանը, Կարապետ Բիրյանը, Տեր և Տիկին Անդրեասյանները և Հարություն Քեչեյանը, որոնք բարոյական և նյութական մեծ զոհողություններով է, որ այս գեղեցիկ գործը հրապարակ հանեցին։ Կշնորհավորենք նմանապես երգչախումբի անդամներն ու անոնց ծնողները, որոնց շնորհիվ պատեհություն արվեցավ մեզի հայ երգով գինովնալու։

* * *

Երաժշտական դժվարահամ քննադատ և Մարսելի անվանի Ռոնսեր Բլասիֆ-ի հայտագիրներուն պաշտոնական վերծանող Լ. Ժ. Պաթալա, Արրիսթիք շաբաթաթերթին մեջ, հունիս 29-ի թիվով, ստորագրած է հոդված մը, զոր թարգմանաբար կներկայացնենք իր էական մասերուն մեջ։

«Այս երկրորդ մեծ նվագահանդեսը, որուն կմասնակցեին 110 գործադրողներ բաղկացած նվագախումբ մը և երգչախումբ մը, անսահման հաջողություն մը ունեցավ, կիրակի օր. օփերայի մեջ։ Մենք արդեն ըսած էինք, թե որքա՞ն լավ կարծիք ունենք այս կատարյալ երգչախումբի Պոսթին, որուն միատարրությունը ավելի քան կատարյալ է։ Անոր պարունակած ձայները գեղեցիկ են և երգեցողությունը անթերի։ Ճիշտ է, որ այս երգչախումբը, զոր հաճախ լսել պիտի փափաքենք, ունի ղեկավար մը, որ դործին վարպետն է և որուն գիտությունը կհավասարի իր համեստության։— Պ. Քյուրքճյան։

Ջութակի հայտնի վիրթիոզ, ներհուն ուսուցիչ, Պոսթինի նշանավոր երաժշտանոցին մեջ տիրացած ըլլալով գիտության մը, որ իր նմանը չունի, Պ. Քյուրքճյան պահանջված բոլոր հատկություններն ուներ ներկայացնելու հոյակապ հայտագիր մը, որ շքեղորեն մեկնաբանվեցավ։ Մենք լսեցինք հայկական ֆոլքլորեն բաղված խմբերգեր՝ իրենց մասնահատուկ երանգներով, ժողովրդային երգեր՝ իրենց քիչ մը վայրի կշռույթներով, մեղեդիներ և նույնիսկ տավիղի ընկերակցությամբ եղանակներ՝ ջութակի համար, մասնակցությամբ սքանչելի վիրթիոզի մը՝ Օր. Նիքոլ Քուլանժի, որուն անսահման տաղանդը քանիցս գնահատած ենք։

Սակայն եթե այս կտորները շատ լավ նրվագվեցան, մյուս կողմեն իրական հայտնություն մը եղավ Արամ Խաչատուրյանի քոնսերթոն, որուն առաջին հրապարակային ունկընդրությունն էր այս Ֆրանսայի մեջ։ Դասական ձևով գրված, բայց շատ մը կեսերու մեջ Ռիմսքի-Քորսաքովի դպրոցը հիշեցնող այս գործը տնսահմանորեն առինքնող է և մեր նվագահանդեսներուն մեջ վիրտին լրավելու բարձրորեն արժանի։ Օր. Նիքոլ Քուլանժ այս քոնսերթոն նվագից շուշտուն ոճով մը, որպես շատ մեծ արվեստագետ...» և այլն։

ՌՅՈՒԶԱՆԴ ՎԱՂԻՆԱԿ

(«Ժողովուրդ» հունիս 28 և հուլիս 4, 1947 թ.)

ՀԱՑԵՐՈՒ ԹԻՎԸ ԱՆԱՏՈԼՈՒԻ ՄԵՋ

Կնաարիս Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիի հոգևոր հովիվը՝ Հայկազուն քահանա Կարապետյան թիտա շահնկան տեղեկագիր մը պատրաստած է, որ թեև լիակատար կարելի չէ հաշվել, բայց կներկայացնե մոտալ պատկերը Անատոլուի խորքերը մնա-

ցած այդ խլյակներու կենցաղին ու ապրուստին, հին եգիպտոսի բուրգերը շինող դերիներուն իսկ մատ խածնել տալու աստիճան։

Այդ տխուր տեղեկագիրը հետևյալ թիվերով կներկայացնե գավառներու մեջ տարտրղնված հայ անհովիվ հոտը.

Կեսարիո մեջ 2250 անձ, Կեսարիո գյուղերուն մեջ 1091, Յոզկատի 18 գյուղերուն մեջ 1525. Սեբաստիո մեջ 1520, Սեբաստիո 7 գյուղերուն մեջ 2405, Թոգատի մեջ 350, Թոգատի 3 գյուղերուն մեջ 42, Ամասիո մեջ 500, Մարզվանի, Հաճի Քեոյի և շրջակայքի մեջ 41, Արաբկիրի մեջ 1250, Խարբերդի մեջ 750, Մեղրիի մեջ 700, Մալաթիո մեջ 500. Տիգրանակերտի մեջ 1005. Որտուի մեջ 200. Դոնիայի մեջ 100. Էրեյլիի մեջ 250. Անգարայի մեջ 1500. Այնթապի մեջ 150, Այնթապի կից 6 գյուղերու և Քիլիսի մեջ 357, ընդհանուր գումարը 16.486 անձ։

Այս հաշվին մեջ մտած չեն նաև Էսկիշեհիրի, Քեոթահիայի, Աֆիոն-Գարահիսարի, Մերսինի, Ատանայի, Թարսուսի և այլ վայրերու հայ խլյակները, որոնց թիվը 5000-են պակաս չէ։ Ուրեմն առնվազը 20.000 հայ ճորտեր, որոնք պետք է փրկել կորուստե, առաջին առթիվ։

(«Բարբեր» հուլիս 22, 1947 թ.)

„ԱՐԱՐԱՏ" ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

«Ալրամ»-ը հաղորդում է.—

Բրազիլիո Սան-Պաուլո քաղաքին մեջ երկու երիտասարդներու կողմե սկսած է հրատարակվիլ «Արարատ» անունով շաբաթաթերթ մը պորթուգալերեն լեզվով, պաշտպանելու համար հայկական իրավունքները և ծանոթացնելու Հայաստանի վերելքը տեղվույն ժողովրդին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

ՀՇՏՈՒՄ ՄԸ

«Էջմիածին» ամսագրի 1947 թ. հունվար—փետրվար համարին մեջ զետեղված «Մեսրոպ Թաղիադյան» հոդվածի հեղինակը, հիմնվելով Մ.Նալբանդյանի «Մեռելաճարցուկս»-ի մեջ գրած տողերուն վրա, «Տէր կեցո դու զՀայս» բանաստեղծության հեղինակը կներկայացներ զայն (էջ 56)։

«Հայաստանեայց եկեղեցի» (1947 թ. մայիս, էջ 140) նույն սխալը կկրկներ, ուշադրելով այս երգը։

Այս հին օրերեն փոխանցված սխալի մասին թեև անգամ մը արտահայտված եմ (Արմաւենի Տարեցիրք, 1938 թ., էջ 116), սակայն ինչպես կտեսնվի, ուշադրութենեն վրիպած է։ ուստի հարկ կդատեմ, հանուն ճշմարտության, այս երկտող բացատրությունը հասցնել խմբագրության։

«Տէր կեցո դու զՀայս» երգը հրատարակված է 1820-ին՝ Կալկաթա հրատարակվող «Հայելի Կալկաբեան» անուն հանդեսին մեջ։ 27 տարիներ վերջը՝ 1847-ին Մեսրոպ Թաղիադյանց, ձեռք անցնելով «Հայելի Կալկաբեան»-ի մի քանի թիվերը, իր հրատարակած «Ազգասէր»-ի մեջ (տես թ. 10?) կարտատպե երկու հատվածներ— որոնցմե մեկը «Տէր կեցո դու զՀայս» երգը, անոր տակը դնելով Հ. Կ. սկզբնատառերը, իրրև նշանակ «Հայելի Կալկաբեան»-ի։

Մ. Նալբանդյան ուշադրություն չէ ըրած նույնիսկ Թաղիադյանցի գրած տողերուն և այդ երգը վերագրած է անոր, որ երբեք չէր կրնար ըլլալ այս երգին հեղինակը, վասնզի.

ա) 1820-ին, երբ այս երգը կհրատարակվեր Կալկաթայի մեջ, Մեսրոպ Թաղիադյանց հազիվ 17 տարեկան պատանի մըն էր և կգտնվեր Էջմիածին ու ոչ մեկ հարաբերություն ուներ Հնդկաստանի հետ, ուր գացած էր 1823-ին, երգին հրատարակութենեն երեք տարի վերջը։

բ) Այս երգը վստահորեն կրնանք ըսել թե խմբագրված է հետևողականությամբ կամ նմանողությամբ անգլիական ազգային երգին «Տէր կեցո զթագավորը» սկզբնավորությամբ։

Արդ՝ զայն խմբագրողը պետք է անգլերենի գիտակ մեկը եղած ըլլար, մինչ 1820-ին Մեսրոպ Թաղիադյանց բնավ անգլերեն չէր գիտեր, և 1823-ին Հնդկաստան երթալով վերջն էր, որ անգլերենի ծանոթացավ։

Հետևաբար ամեն տարակուսե դուրս է, որ Մեսրոպ Թաղիադյանց չէր այս երգին հեղինակը։

Հարց է, թե ո՞վ էր անոր հեղինակը։

Այս մասին, առանց շատ վստահության, կրնանք ենթադրություն մը ընել։

Հավանորեն զայն խմբագրած է «Հայելի Կալկաբեան»-ի խմբագիրը՝ Հովհաննես Տեր-Հակոբյան, որ կթվի թե անգլերենի գիտակ մեկն էր, վասնզի իր թերթին մեջ բազմաթիվ թարգմանություններ կան այդ լեզվեն։

ԱՐՇԱԿ ԱԼՊՈՅԱՃՅԱՆ

30 հուլիս 1947 թ.
Դահիրե